491·542-5
F-15

Въ библіотеку Лазаревскаго
Института Восточныхъ Языковъ

Отъ Его Превосходительства
Г. Попечителя Ивана Екимовича
Лазарева.

12004

Изъ Императорской Публичной
Библіотеки.

160

# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1848 — ՌՄՂԷ

Bagratouni, Grammaire arménienne

8° 550

160

# ՏԱՐՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂԱՑ ՀԱՄԱՐ

91. 542-5 2401 № 17-3
Բ - 15
368-Հէ

# ՏԱՐԵՐՔ

ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂԱՅՑ ՀԱՄԱՐ

ՅՕՐԻՆԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

№ 160.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1848 — ՌՄՂԷ

491.99-5

ԱՌ ԱԶՆԻՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ

ԴԵՌԱԲՈՅՍ ՈՐԴԻ

# ՎԱՀՐԱՄԱՅ ՅԱԿՈԲԱՅ ՏԻՒԶԵԱՆ

ՆՈՒԷՐ

ՆՅԴԳԻՍԻՈՅ հօր պայազատ և նազելի շառաւիղ
Որ մըտաց և սըրտի մըտեր մարզից 'ի շաւիղ,
Նաստ մեծ եղէ յիս՝ գըթոյն թէ զոյգ հայրական
Ինձ տալըն տայի տարիք լինել փութոյց օգնական
Զըմըրոնել ըղձայկըն և զհայրենեացըդ լեզու,
Նըզուստ՝ ըղձմութեան պէսպէս ձայնից զող հասու,
Օ՜ի կեցցես միս պարծանք տան քում և հօր արժանի.
Թէ սիրով ընդունիցիս՝ լիցիմ իմիք պիտանի ։
Շնորհիւ քով փայլեսցեն 'ի սոյն մանկունք Թորգոմայ
Որ 'ի ՎՐԷՆ պարգեւառուք դաւանեսցին 'ի սըմայ ։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր օրերը ազգին իր լեզուն աղէկ սորվելու մեծ փոյթը տեսնելով մենք, աս համառօտ քերականութիւնս հանեցինք մեր նոր կարգով աւելի զարգացելոց համար շինած ընդարձակ գրաբառ քերականութենէն ։ Ասան զի տեսանք որ մինչեւ հիմայ ունեցած համառօտ քերականութիւններնիս կամ տղոց յարմար չէին, կամ հարկաւոր բաները պէտք եղածին չափ բաւական չէին սորվեցըներ ։

Անոնք յարմար չէին, ինչու որ գլուխին ու կարճ ճամբայ չունէին, լեզուին գիտելիքը խառնակ ու վայլած կարգով չէին սորվեցըներ, ու տղոց կարողութենէ վեր մանր մունր ու շատը փուճ կամ աւելորդ ու բառգրքի վայլելու բաներու կ'ըլլային, կամ պարզ ըլլանք ըսելով վարպետին ընելու երկայն ճղճղած մեկնութիւններն ալ իրենք կ'ընէին, որ քերականութեան գրողին պարտքը չէ, և շատ անգամ տղոց աւելի մութ կ'ըլլայ ։ Անոնք ալ համառօտ ըլլայ ըսելով, լեզուին խիստ պէտքի բաներն ալ ու կանոնը լուսաւորելու չափ պէտք

եղած օրինակներն ալ դուրս ձգեր էին , ու գրեթէ բո-
լոր երկրորդ կարգի գիտելիքները , որ թէ և տղուն իր
շարադրելուն համար ալ պէտք չըլլան նէ , գոնէ չափա-
ւոր պարզ ու ընտիր գրքերը հասկընալու հարկաւոր են ։
Թող որ տեղ տեղ քանի մը սխալ ալ մտեր էր , որ
շտկելու էր ։

Մենք աս նոր համառօտ քերականութեանս առջի
մասին մէջ՝ ութը մասանց բանին խիստ հարկաւոր գի-
տելիքը կարճ կարճ դրինք . քիչ մը խրթին կամ բար-
ձրագոյն բաները մանր գրով զատեցինք կարգին մէջ ,
որ վարժապետը տղոց ընդունակութեանը յարմար չը-
տեսնէ նէ առջի բերանը , երկրորդ անգամ դառնալուն
կարդացընէ ։

Իսկ շարադրութեան կանոնները երկու դասի բաժ-
նեցինք , ինչպէս որ սովորութիւն է ամէն կարգաւո-
րեալ դպրոցները ։ Երկրորդ մասին մէջ՝ պարզ շարա-
դրութեան խիստ պէտքի և առաջին կարգի գիտելիքը
միայն համառօտ ու յստակ ճամբով ու ընտիր օրինակ-
ներով դրինք առաջին դասի ուսանողաց համար ։

Երրորդ մասին մէջ՝ ձևաւոր շարադրութեան խիստ
շատ կամ երբեմն երբեմն պարզ ու միջակ շարադրու-
թեանց մէջ գործածուած բաները նոյնպէս համառօտ
ու յստակ ոճով ու ընտիր օրինակներով դրինք՝ երկրորդ
դասի ուսանողաց համար , որ առջի դասին մէջ աղէկ
մը վարժելէն ետքը պիտի կարդացընէ վարժապետը , ու
անոնց վրայ ալ կրթութիւն ընել տայ , թէ որ ինչուք
հոն երթալու միտք ու ատեն ունենան նէ ։ Թէ որ մէ-
կուն շատ երևնայ աս ձևաւոր շարադրութեան բանե-
րը , ընդարձակ քերականութիւննիս որ տեսնէ նէ՝ աս
անոր քովը ոչինչ պիտի երևնայ ։ Ու գիտնայ որ և ոչ

իսկ ամենէն յայտնի ու ընդունելի գրքին՝ Աստուածա-շունչին մէջ գտնուած ձեւերը ամէնը դրած ենք հոս․ ին-չու որ ամէն խրթին բաները դուրս ձգեցինք ։

Ուրիշ մանր մունր կարգի կամ բանի փոփոխութիւն որ ըրեր ենք նէ, շիտակութեան ու դիւրութեան հա-մար ըրեր ենք՝ տարիներով մտածելէն ու քննելէն ու փորձելէն ետքը, որ ընդարձակին մէջ բաւականապէս պատճառն ալ տուած ենք, ու հոս համառօտիս մէջն ալ կարճ ակնարկութեամբ մը իմացուցեր ենք ուզողին ու կրցողին հասկընալու չափ ։

Բայց միայն ուղղականին վրայ մինակ հինգ հոլով գտնելուս ու ինը չգտնելուս պատճառը՝ քիչ մը աւելի որոշ հասկցընել կ'ուզենք հոս տեղս ։ Հինգ գտնելուս պատճառն աս է, որ նշանակութեան դիէն ալ, շէնքի դիէն ալ հինգ հոլով միայն ունի հայու լեզուն, և ոչ աւելի ։ — Նշանակութեան դիէն, վասն զի հոլով ըսուած բանը՝ անանկ մէկ պարզ որոշ միտք մը միայն տալու է բառին ինքնիրեն իր մէջը, որ ալ ուրիշ կեր-պով չկարենայ զրուցուիլ, ու ալ ուրիշ կերպ կերպ մտքի չառնուի ։ Անանկ են միայն հինգ հոլովնին, որ ուրիշ կերպով մ' ալ չեն կրնար զրուցուիլ՝ ամենեւին նոյն մըտ-քով, և առանց աս հինգ հոլովին մէկուն կարօտ ըլլալու․ ու միշտ մէկ միտք մը միայն կուտան․ սեռականը միշտ որուն (օքմն) կը նշանակէ, տրականը որու (օքմ), գոր-ծիականը որով, բացառականը որմէ, հայցականը որու (օք-մ) ։ Կամ թէ և ուրիշ մտքով մ' ալ առնուին նէ, նոյն-պէս պարզ հոլովի մը մտքով է․ ինչպէս երբեմն բաց-առականը ու հայցականը գործիականի ու նախդրիւ տրականի մտքով․ ան ալ ուրիշ շատ կերպ մեկնութիւն ալ կը վերցընէ ։ — Իսկ շէնքի դիէն, վասն զի աս հինգ

հոլովը միայն զատ զատ վերջ ունին , պարզ վերջահոլով են ։ Իսկ թէպէտ անուանց մէկ երկու հոլովը նման են մէկմէկու կամ ուղղականին , բայց ես , դու գերանուանցը՝ հինգն ալ , ու միայն հինգը , զատ են իրարմէ ։ — Աս երկու պատճառի համար՝ հինգէն ոչ աւելի և ոչ ալ պակաս կրնար գրուիլ ։

Աս բանէս կը հասկցուի ինը չզննելուս պատճառն ալ ։ Նան զի մէկալ երեքը , գործիական , պատմական , ներգոյական բառածները՝ նշանակութեամբ գիրէն անանկ մէկ իրենք իրենց պարզ որոշ միտք մը չեն տար որ ուրիշ կերպով չկարենայ գրուցուիլ . առանց իրենց կարօտ ըլլալու՝ ուրիշ շատ կերպով ալ կը գրուցուին այլևայլ նախդրով ու հոլովառու բառերով . ինչպէս աշխարհաբառին մէջն ալ անանց հոլովը չունինք , Հօրն կամ հօր , ընդ տէր , Ձեզ ըսելով կը բացատրենք ։ Իսկ մէկ միտք մը միայն չեն տար , հապա զանազան մտքեր , ինչպէս կը տեսնես նախդրաց մէջ , մանաւանդ ընդարձակ քերականութեան ու բառգրքի մէջը ։ Շէնքի գիրէն ալ մէկ նոր վերջահոլով մը չեն . նոյն պարզ վերջահոլովներուն վրայ ը կամ 'ի գրուած է . գործիականին վրայ ը գրեր՝ պարառական են ըսեր , բացառականին վրայ ը գրեր՝ պատմական են ըսեր , եզակի վերջահոլով տրականին վրայ 'ի գրեր՝ ներգոյական են ըսեր ։ Իսկ թէ որ ամէն պարզ հոլովի վրայ նախդիր մը գրուելով միտքը փոխուիլը՝ զատ հոլով սեպելու ըլլանք նէ , ան ատենը չէ թէ ինը տասը , հապա քառասուն հոլովի երկան բարակ անհամանման շարոց մը շինելու կախելու է ։ Նան զի ամէն պարզ նախդիր ալ , զ , 'ի , յ , ց , առ , առ'ի , ընդ , ըստ , որ հոլովակերտ ալ բառեր են , ամէն հոլովի վրայ կը գրուի խիստ շատ անգամ, ու կերպ կերպ մտքեր կու-

տայ բառին, ինչպէս կը տեսնուի ընդարձակ քերակա-նութեան ու բառգրքի մէջ. բայց անով հոլով սեպուած ու հոլովի կարգ անցած չեն, նախդիրներուն կամ նա-խադրութիւններուն մէջ մնացեր են։ Ինչպէս առանք հոն պիտի սորվին նէ տղան, ան իրեքն ալ աւելի աղէկ ու լման կը սորվի հոն՝ իրենց այլեայլ նշանակութեան-քը։ Նիւթապէս սերտելը դիւրին է տղոց, կ'ըսուի. իրաւ է. բայց նախդիրներուն մէկալ առմունքներն ալ նիւթապէս օրինակներով կը սորվի տղան, և ոչ վերա-ցեալ վարդապետութեամբ։ Ինչուան հոլովի տեղ չդր-ուին նէ, միթէ նիւթական չեն ըլլար. անանկ է նէ, ըստոր ըսինք, մէկալ նախդիրներն ալ ամէնը առնենք չորենք հոլովի տեղ. ինչ կը մնայ, անոնց ալ մէյմէկ աղւոր աղւոր անուններ դնելը բա՛ն մըն է։ Ու տղաք-նիս անանկ առանց խելքերնին բանալու կրթելու՝ բո-լորովին նիւթապէս սորվեցընելն ալ աղէկ բա՛ն մըն է, թող իմաստունք մտածեն։

Իսկ ֆռանկին բռնած հոլովը՝ մեր յատուկ լեզուին մէջ ամէնեւին փոփոխութիւն մը չունի. ուղղականը ինչ է նէ, անանկ ալ կանչելու կը բանի, ինչպէս աշխար-հաբառին մէջն ալ։ Աւելին անանկ է նէ հոլով կ'ըլլայ։

Ու չորս հոլովի տեղ դրուածները՝ մեր բուն հին լե-զուագէտ նախնիքն ալ ամէնեւին չեն ճանչնար իրենց քերականութեան մէջ, ու կ'ըսեն ալ յայտնապէս՝ թէ հոլովները վեց են, ուղղականը մէկտեղ առնելով, ու անանկ ալ կը դնեն։ Նորերը տգիտութեան դարու մէջ օտարազգիներէն առեղծուած, ու առանց քննելու մեր գիտնոց քերականութեան մէջ ալ մտած են։ Ու օգուտ մը չունենալէն 'ի զատ, վնաս ունին. մէյմը՝ սխալ բան սորվեցընելով, մէյմ'ալ՝ հոլովմունքը երկնցընելովը մը-

գոյ սերտողութեան աշխատանքը աւելցընելով ու յի-
շողութիւննին ու բերաննին փուճ տեղը յոգնեցընելով ։

Ասանկ է նէ՝ հինգ հոլով միայն ընդունիլը բուն խելքի և մեր լեզուագէտ նախնեաց համաձայն է , ու տղոց դիւրութիւն ։ Աս երեկուան ասօրուան ալ բան չէ աս փոփոխութիւնս ․ 1815էն 'ի վեր եղած ու պատճառներն ալ համառօտ հասկըցուցած է մեր Աւետիքեան վարդապետին ընդարձակ քերականութեան մէջը ։ Բայց ինչ օգուտ որ դէշ սովորութեան նախապաշարումը ու աչառութիւնը միտքերը կապեր են , թող չեն տար որ շիտակը , աղէկը , օգտակարը տիրէ ։ Բայց այսուհետև ով որ շիտակին , աղէկին ու օգտակարին ազգային նախանձով անաչառ փոյթ և սէր ունի նէ , ինչ ընելուքին տարակուսելու չէ ։

Ամէն կտոր մը նոր բան աղջի բերանը քիչ մը գըժուար կուգայ , մանաւանդ վարժապետաց ․ վասն զի տղան դեռ բան մը չգիտէ որ ընտրէ ․ Ճերմակ թուղթ մըն է , ինչ որ գրես՝ ան կ'առնէ ։ Կը մնայ որ անանկ է նէ վարժապետները նոր բան մը տեսածնուն պէս՝ մէկէն չարհամարհեն ․ խելքով քննեն բանին իրաւունքը ու յարգը , փորձով ալ աղէկ մը հասկընալ ուզեն դիւրութիւնն ու օգուտը ․ անկէ ետքը կ'ուզեն նէ թող մէկդի նետեն ․ չէ նէ ծուռ հինը ձգեն , շիտակ նորին հետևին ու սովորութիւն ընեն ։ Մէկն որ իրաւացի պատճառներէ ետքը՝ գիտցածէն չուզեր շարժիլ ու նոր բան մը ընդունիլ նէ , ոչ երբեք կը լուսաւորուի , ոչ երբեք առաջ կ'երթայ ։

Բայց մէկ բանին օգուտն ալ տեսնելու համար՝ պէտք է սրտով ու գործքով փոյթ ու ջանք ունենալ աղէկ առաջնորդելու տղոց , ու չափաւոր երկայնամիտ ալ ըլ-

լալ՝ պտուղը տեսնելու ։ Ապա թէ ոչ, տղոց յարմար քերականութիւն ընելը՝ մէկ երեւակայութիւն մը կ'ըլլայ ․ ու ինչ քերականութիւն որ չինուի տղոց, անկարելի է որ ամենեւին ու կատարեալ յարմար ըլլայ անոնց մտքին ու հասկացողութեանը, որ դեռ ոչինչ է, ու աս դռնէն պիտի մտնէ խելքի ու մտածութեան ճամբան, ու հասնի իմաստութեան տաճարը ։ Սէրն ու ջանքը ամէն բան կը դիւրացընէ, ու առանց անոնց բան մը չըլլար ։ Ազգիս լեզուին կատարելութեան ու տղոցը օգտին փոյթը չըլլար սրտերնուս մէջը նէ, բան չունէինք որ այնչափ քերականութիւններէն ետեւ ելլէինք նորէն տղոց համար սիրտ ու գրիչ մաշեցընելու ։

Գրաբառը դիմացը մեկնել պէտք եղած տեղերը՝ աշխարհաբառ միայն մեկնեցինք, տաճկերէն չըրինք՝ բաց 'ի քանի մը բառէ ։ Սան զի չեմ հասկընար թէ աշխարհաբառ քերականութիւն գրողները տաճկերէն որ կը դնեն՝ ինչ կ'ուզեն ընել ։ Թէ որ բոլոր աշխարհաբառ գրուած քերականութիւնը կարդացողը կը հասկընայ նէ, ան աշխարհաբառ մեկնութիւններն ալ կը հասկընայ ․ չէ՝ թէ որ ան մեկնութիւնները չհասկընար նէ, քերականութիւնը ինչպէս պիտի հասկընայ, ու ինչո՞ն պէտք է ան առնելը ան քերականութիւնը ։

# ԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ


| | | |
|---|---|---|
| ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ | | 1 |
| ԳԼՈՒԽ Ա. | *Անուն* | 3 |
| | *Անուններուն հոլովմունքը* | 5 |
| | *Զարտուղի հոլովմունք* | 19 |
| | *Հոլովներու վրայ դիտելիք* | 23 |
| | *Միջակ անուններուն հոլովմունքը* | 28 |
| ԳԼՈՒԽ Բ. | *Դերանուն* | 38 |
| | *Էական կամ գոյական դերանուններ* | — |
| | *Ածական դերանուններ* | 41 |
| ԳԼՈՒԽ Գ. | *Նախդիր* | 47 |
| ԳԼՈՒԽ Դ. | *Բայ* | 56 |
| | *Էական բայերուն խոնարհումը* | 59 |
| | *Առաջին Լծորդութիւն, ամ* | 65 |
| | *Երկրորդ Լծորդութիւն, եմ* | 73 |
| | *Երրորդ Լծորդութիւն, իմ* | 79 |
| | *Չորրորդ Լծորդութիւն, ում* | 88 |
| | *Արտուղի բայեր* | 94 |
| | *Պակասաւոր բայեր* | 102 |
| | *Անդէմ բայեր* | 107 |
| | *Խոնարհումներու վրայ դիտելիք* | 108 |
| ԳԼՈՒԽ Ե. | *Դերբայ* | 111 |
| ԳԼՈՒԽ Զ. | *Մակբայ* | 121 |
| ԳԼՈՒԽ Է. | *Շաղկապ* | 124 |
| ԳԼՈՒԽ Ը. | *Ձայնարկութիւն* | 125 |

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՐԶ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ . . . . . . 127

ԳԼՈՒԽ Ա. Անուն բայի ու բայ . . . . . 131
ԳԼՈՒԽ Բ. Բայերու և անուններու խնդիրներ . . 137
ԳԼՈՒԽ Գ. Յատկացուցիչ ու Բացայայտիչ . . . 154
ԳԼՈՒԽ Դ. Ածական անուն գոյականի հետ . . . 158
ԳԼՈՒԽ Ե. Յարաբերական դերանուն «որ» . . . 173
ԳԼՈՒԽ Զ. Դիմորոշ յօդեր «ս, դ, ն» . . . . 177
ԳԼՈՒԽ Է. Նախդիրներ . . . . . . . 194
ԳԼՈՒԽ Ը. Ուղղագրութիւն . . . . . . 202

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՁԵՒԱՒՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ . . . . . . 207

ԳԼՈՒԽ Ա. Զեղչում . . . . . . . 208
ԳԼՈՒԽ Բ. Աւելադրութիւն . . . . . . 223
ԳԼՈՒԽ Գ. Բակառութիւն . . . . . . 237
ԳԼՈՒԽ Դ. Փոխադրութիւն . . . . . . 253
ԳԼՈՒԽ Ե. Աղաւաղութիւն . . . . . . 283

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . . . . . 302

# ՏԱՐՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ շիտակ խօսելու և գրելու արուեստն ու կանոնն է ։

2. Խօսքը, որ բան ալ կ՚ըսուի, բառերով կ՚ըլլայ, բառը վանկով, վանկը տառով՝ որ գրով կը գրուի ։ Տէր, որդեակ, խրատս հօր քոյ. հինգ բառով խօսք մըն է. Տէր, հօր, քոյ, մէկմէկ վանկ ու բառ են. որդեակ, խրատս, երկու վանկով բառեր են ։

3. Գիրերէն ութը հատը, ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ, ձայնաւոր են, ինքիրեն ձայն կը հանեն. մնացած երսունը բաղաձայն են, ձայնաւորի մը հետ ձայն կը հանեն. գոնէ ը ձայնաւորը դնելու է քովերնին որ ձայն հանեն. ինչպէս բը, գը, դը կամ ըղ, ըթ ։

4. Օ գիրը ետքէն մտած է, որ հիները աւ երկբարբառ կը գրէին ։ Երկբարբառ կ՚ըսուի երկու ձայնաւոր մէկ ձայն՝ մէկ վանկ որ ըլլայ. ինչպէս աւ, եա, եւ, իւ, ոյ ։

5 . Բառը ութը տեսակ է . Անուն , Դերանուն , Նախդիր , Բայ , Դերբայ , Մակբայ , Շաղկապ , Ձայնարկութիւն , որ կ՚ըսուին մասունք բանի :

6 . Շիտակ խօսելու համար՝ առաջ ասոնց ինչ ըլլալը ու պէտք եղածին պէս կերպ կերպ փոխուիլը սորվելու է , ետքն ալ ասոնք կարգով շարելը , որ խօսք ըլլայ :

7 . Ասոնցմէ չորսը միայն կը փոփոխի . անունը , դերանունը , բայը , դերբայը . մէկալ չորսը ամենեւին չեն փոխուիր :

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ

8. Անունը կամ յատուկ է մարդու մը, տեղի մը, ինչպէս Հայկ, Աթէնք. կամ հասարակ անուն է բանի մը, ու կը նշանակէ ինչ ըլլալը կամ ինչպիսի ըլլալը։

9. Ինչ ըլլալը նշանակող անունը՝ գոյական կ'ըսուի, ինչպիսի ըլլալը նշանակողը՝ ածական. Բան, մարդ, ծառ գոյական են. բարի, չար, մեծ ածական են. վասն զի կ'ըսուի բան բարի, մարդ չար, մեծ ծառ։

10. Անունը մէկու մը վրայ ըսուի նէ, եզակի կ'ըսուի. շատի վրայ ըսուի նէ, յոգնակի կ'ըսուի. մէկ մարդ մը ուզենանք ըսել նէ, կ'ըսենք մարդ. շատ մարդ որ ուզենք ըսել, ք կամ ն կը դնենք ծայրը, կ'ըսենք մարդիք, մարդն։ Աս եզակի ու յոգնակի ըլլալը՝ անունին Թիւ կ'ըսուի։

11. Բայց կայ անուն որ եզակի չունի. ինչպէս աչք, ջանք, որ եզակի աչ, ջան չըլլար։ Կայ ալ որ յոգնակի չունի. ինչպէս խաւար, հաւատ, որ յոգնակի խաւարք, հաւատք չըլլար։

12. Անունը՝ խօսքին մտքին նայելով կը փոխուի իր վերջը եզակի ու յոգնակի. ինչպէս մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով, 'ի մարդոյ. մարդք՝ մարդոց, մարդովք, 'ի մարդոց։ Աս փոփոխմունքս կ'ըսուի անունին հոլովք կամ վերջահոլովութիւնք. ու հինգ են, որ անուններուն ու իրենց պարզ և որոշ՝ վերջահոլովի շէնքին կարգովը վարը կը տեսնես։

---

1 Պարզ ըսելով կը հասկընանք առանց նախդրի ըլլալը ու նոյն առանով ձեւերը. ինչպէս են ամէն պարզ հոլովմանց մէջ միայն սեռականները, տրականը ու գործիականը։ Իսկ որոշ ըսելով կ'իմանանք որ անով մէկէն որոշուի բառը մէկալ հոլովմունքներէն. ինչպէս են դարձեալ ամէն հոլովմանց համար սեռական կամ տրական ու գործիականը։ Զոր օրինակ, Բան, բանի, 'ի բանէ, կամ Բանք, բանից, 'ի բանից

13. Կայ հոլով ալ որ սկիզբը տառ մը կամ վանկ մը կ'առնէ, որ նախդիր կ'ըսուի. ինչպէս, զմարդ, 'ի մարդ: Նաեւ ձայնաւորով սկսի նէ՝ ինին տեղը յ կամ 'ի յ կ'առնէ. ինչպէս յաղթ, յերես, 'ի յերեսն:

14. Բայց կայ անուն որ վերջահոլով չունի եզակին. ինչպէս, արտօսր, երկինք. կայ ալ որ յոգնակին չունի վերջահոլով. ինչպէս, ոսկր, գառն: Ասոնք նախդրով հոլով միայն ունին կ'ըսուի. այսինքն եզակին՝ կամ քեզ սեռ յոգնակինին կը բանի միայն՝ նախդիրով. ինչպէս, զարտօսր, յերկինս, զոսկրս, 'ի մէջս:

15. Ամէն անուն մէկ կերպ չհոլովիր. Հայր՝ կ'ըլլայ հայրոյ, հայրեաւ. մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով: Ու այլ եւ այլ կերպս կ'ըսուի անուանին հոլովմունքը:

16. Հոլովմունքը եօթն են. Հինգը պարզ, որ կարգաւ ա, ե, է, ո, ու ձայնաւորներուն մէկովը միայն կ'ըլլան. երկուքը խառն, որ է եւ ա, ո եւ ա ձայնաւորներով կ'ըլլան: Պարզ՝ ա, ու, եւ խառն՝ է եւ ա ձայնաւորներով եղողները՝ երկերկու կերպ են. ուստի հոլովմունքներու օրինակն է տասը: Ասածներս բոլոր կը տեսնես վարը օրինակներուն վրայ:

Ու ձայնաւորներուն կանոնն որ բռնես նէ, շուտով կը սորվիս հոլովները, ու չես սխալիր, չես ալ մոռնար:

17. Միայն աս ալ գիտնալու է շիտակ հոլովելու համար, որ բառին ետքի բաղաձայնէն առաջ եղած ձայնաւորներուն ու երկբարբառներուն մէկ քանին կը փոխուի հոլովելու ատեն, ալ այնուհետեւ վերջին վանկ չըլլալուն համար:

| | |
|---|---|
| Է | կը փոխուի Ի, Ե. Սէր, սիրոյ. էգ, իգի. եղէգն, եղեգան. |
| Ի, ՈՒ | կը փոխուին Ը, չգրուած. Գիր, գրոյ. Ջուր, ջրոյ. |

---

լսես նէ, չես իմանար մէկէն թէ որ հոլովման տակ կ'երթայ, երրորդին թէ վեցերորդին. իսկ բառ, բառի, բառիւ. քաղաք, քաղաքի, քաղաքա-լսածիդ պէս կ'իմանաս որը որ հոլովման տակ կ'երթայ: Ահա աս պատճառներուն համար աս կարգով պէտք է շարել վերջահոլովները: Ուղղականը հոլով չէ. իսկ հայցականը վերջահոլով չունի, ու նախդրիւ հոլովներուն առաջինն ու գլխաւորն է:

| | | | |
|---|---|---|---|
| ԻՒ միայն, | կը փոխուի | ՈՒ, ԸՒ. | հովիւ, հովուի. Թիւ, Թուոյ կամ Թըւոյ. |
| ԵԱ | կը փոխուի | Ե, Է. | Կեանք, կենաց. հրեայ, հրէի. |
| ՈՅ | կը փոխուի | ՈՒ. | Լոյս, լուսոյ. կոյր, կուրի ։ |

18. Իսկ ա, է, ո, օ, ու՝ բաղաձայնով մը[1], չեն փոխուիր սովորաբար ։

## ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

### 19. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

*պարզ ա.*

ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտան. | Տիտան. |
| Սեռական, | Տիտանայ. | Տիտանին. |
| Տրական, | Տիտանայ, 'ի Տիտան. | Տիտանին. |
| Գործիական, | Տիտանաւ. | Տիտանով. |
| Բացառական, 'ի | Տիտանայ. | Տիտանէն. |
| Հայցական, | զՏիտան. | Տիտանը. |

**Յոգնակի**

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտանք. | Տիտաններ. |
| Սեռական, | Տիտանաց. | Տիտաններուն. |
| Տրական, | Տիտանաց, 'ի Տիտանս. | Տիտաններուն. |
| Գործիական, | Տիտանօք[2]. | Տիտաններով. |
| Բացառական, 'ի | Տիտանաց. | Տիտաններէն. |
| Հայցական, | զՏիտանս. | Տիտանները ։ |

1 Այս եզակի բաղաձայնէ մը առաջ Իւն՝ հիները շատ տեղ Եւ կը գրէին, ու կը փոխուէր Իւ. ինչպէս, Եւղ, Իւղոյ. Բեւր, Բիւրոյ. Ձեւ, Ձիւոյ. հիմայ կը գրուի Իւղ, Բիւր, Ձեւ, ու չփոխուիր ։ Միայն երկրորդ հոլովման տակ Իւր կ'ըլլայ Եր. ուԻւր, ուԷր. ուղԻւր, ուղԷր ։
2 Հիները օք չէին գրեր, աւք կը գրէին. որով հոլովին ա գիրը կը պահուի (4. 16) ։

20. Այսպէս կը հոլովին յատուկ անունները (8), ու սովորաբար յոգնակի չունին.

Հայկ, Հայկայ, Հայկաւ, 'ի Հայկայ. — Հայկ, Տէր ազգին նախահայրը։

Արարատ, այրարատայ, այրարատաւ, յայրարատայ. — Այրարատ գաւառը։

Նանէ, նանեայ, նանեաւ, 'ի նանեայ. — Նանէ, Հայոց չաստուածը։

Տիգրանուհի, տիգրանուհեայ, տիգրանուհեաւ. — Տիգրանայ քոյրը։

Մարիամ, մարիամայ կամ մարեմայ, մարեմաւ. — Մարիամ։

Աթէնք, աթենայ, աթենաւ, յաթենս. — Աթէնք քաղաքը։

Գուրգէն, գուրգենայ կմ գուրգինայ. — Գուրգէն։

Անահիտ, անահտայ, անահտաւ, յանահտայ. — Անահիտ, Հայոց չաստուածը։

Գամիրք, գամրաց, գամրօք, 'ի գամրաց. — Գամիրներու երկիրը։

Յուդա կամ Յուդաս, յուդայ, 'ի յուդայ. — Յուդա։

Սափիրա, սափիրայ, սափիրաւ. — Սափիրա։

Աքղիսս, աքղիայ, աքղիաւ. — Աքդիսս։

Սամարիա, սամարիայ կամ սամարեայ. — Սամարիա գաւառը։

Սին կամ Սինա, սինայ կամ սինեայ. — Սինա անապատը կամ լեռը։

Յասոն, յասոնեայ. — Յասոն։

Անդրէաս, անդրեայ. — Անդրէաս։

Զաքարիա, զաքարիայ կամ զաքարեայ. — Զաքարիա։

Սոկրատէս, սոկրատեայ կմ սոկրատայ. — Սոկրատէս։

Դվին, դվնայ, դվնաւ. — Դվին քաղաք կամ բերդ։

---

1 Ի ու Է վերջացած բառերուն ան է ու Է տառերը այլին քով է կը փոխուին հոլովին նէ։ Ասկից մեկը է երբեմն անանկ առու չունեցողներուն ալ։

Ուգոստոս, ուգոստեայ, ուգոստեաւ. Օգոստոս կայսրը :
Կոռնելիոս, կոռնելեայ, կոռնելեաւ. Կոռնելիոս :

21. Յատուկ անունները երբեմն ուրիշ հոլովմանց պէս ալ կը հոլովին. Հայկ, հայկի. Մովսէս, մովսէսի կամ մովսիսի. Գաբրիէլ կամ Գաբրիէլեայ, գաբրիէլի. Աբրահամ, աբրահամայ կամ աբրահամու. Սամարիա, սամարիոյ կամ սամարւոյ. Մարիամ, մարիամու. Արգիոս, արգիու. Կոռնելիոս, կոռնելիու :

22. Ոմանք ալ ոս, ոս վերջացածներէն՝ կանչուելով զրուցուին նէ, հռոմի կերպով երբեմն է, ա կը վերջանան. Պետրոս, պետրէ. Կոռնելիոս, կոռնելիէ. Ագրիպպաս, ագրիպպա :

23. Խօսք բուն հայերէն, ամէն անուն՝ ուղղականը ինչ է նէ՝ կանչուելու ալ անանկ կը մնայ, ով գրիչ եւ չէս գրիչ. Պետրոս կամ ով Պետրոս. Գրիգորիոս կամ ով Գրիգորիոս. Ագրիպպաս կամ ով Ագրիպպաս :

## 24. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմն, սերմ. | հունտ. |
| Սեռ. | Սերման. | հունտի. |
| Տրա. | Սերման, 'ի սերմն. | հունտի. |
| Գործ. | Սերմամբ. | հունտով. |
| Բաց. | 'ի Սերմանէ. | հունտէ. |
| Հայց. | զՍերմն. | հունտը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմանք, սերմունք. | հունտեր. |
| Սեռ. | Սերմանց. | հունտերու. |
| Տրա. | Սերմանց, 'ի սերմանս. | հունտերու. |
| Գործ. | Սերմամբք. | հունտերով. |
| Բաց. | 'ի Սերմանց. | հունտերէ. |
| Հայց. | զՍերմանս. | հունտերը : |

25. Այսպէս կը հոլովին ըն, ուն վերջացած բառերը՝ նոյն տառը առնելով ա, եւ քանի մը ուրիշ ալ.

Ակն, ական, ականք, ակունք. — Աչք. Ջրի աղբիւր. ազնիւ քար :

| | |
|---|---|
| Կողմն, կողմ, կողման, մանք, մունք. | տէ, կողմ: |
| Ամառն, ամառան, ամառունք. | ամառ: |
| Ձմեռն, ձմեռան, ձմեռունք. | ձմեռ: |
| Գեղարդն, գեղարդան կամ գեղար-դեան, գեղարդունք. | տէգ, նիզակ: |
| Անուն, անուան, անուանք, անունք, անուանց. | անուն: |
| Ձեղուն, ձեղուան, ձեղունք, ձե-ղուանց. | տան ծածք, առաէք: |
| Մահ, մահուան, մահուանք, մահունք. | մահ: |
| Պաշտօն, պաշտաման, պաշտամունք, պաշտօնք. | պաշտօն, ծառայու-թիւն: |
| Ձիւն, ձեան, ՚ի ձեանէ, ձիւնք. | ձիւն: |
| Սիւն, սեան, ՚ի սեանէ, սիւնք. | սիւն, տիրէկ: |
| Արիւն, արեան, յարենէ՛, արիւնք. | արիւն: |
| Զօրութիւն, զօրութեան, ՚ի զօրու-թենէ, զօրութիւնք. | ույժ, զօրութիւն: |
| Ստին, ստեան, ՚ի ստենէ, ստինք. | ծիծ: |
| Ագամանք, ագամանց, ագամամբք. | Աչքին մէջ մար-դիկը: |
| Խրատունք, խրատուանց, խրատուամբք. | խրատանք: |
| Սրունք, սրուանց կամ սրանց. | ձաներ, պաճախներ: |
| Եղէգն, եղեգան, եղեգունք. | եղէգ, խամիշ: |
| Սկիզբն, սկզբան, սկզբունք. | սկիզբ, ծայր: |
| Դուռն, դրան, դրունք. կամ դուրք, դրաց (39). | դուռ: |
| Նուռն, նռան, նռունք. | նուռ: |
| Պաշտումն, պաշտման, պաշտմունք. | ծառայութիւն, պաշ-տելը: |
| Եղեամն, եղեման, եղեմունք. | եղեմ, խռաւը: |

1 Սեռական ու տրականը նոյն եղող բառերը թէ որ մէկ վանկով բառեր են՝ նէ՝ բացառականը նոյնէ կ'ըլլայ. իսկ աւելի վանկովներունը սովորաբար ենէ կ'ըլլայ, նա փոխուելով ՚ի է ըստ 17. ու աս մէկ վերջ-ւոյ բառերս զատ հոլովում չեն ըլլար:

| | |
|---|---|
| *Աղջիկ, աղջկան, աղջկունք, աղջկանց կամ աղջկաց ·* | աղջիկ : |
| *Մարդիկ, մարդկան, մարդկամբ կամ մարդկաւ*[1] · | մարդեր, մարդիկ : |
| *Մանուկ, մանկան, մանկունք ·* | տղայ, մանչ : |
| *Գարուն, գարնան, գարունք ·* | գարուն, առջի ամառ : |
| *Տուն, տան, տունք ·* | տուն : |
| *Տեսիլ, տեսլեան, տեսիլք ·* | տեսիլ : |
| *Հանգիստ, հանգստեան, հանգիստք ·* | հանգիստ : |
| *Գալուստ, գալստեան, գալուստք ·* | գալուստ, գալը : |
| *Ժողովուրդ, ժողովրդեան, ժողովուրդք, ժողովրդոց ·* | ժողովուրդ : |
| *Ծնունդ, ծննդեան, ծնունդք, ծննդոց ·* | ծնունդ, ծնանիլը : |
| *Վաղիւ, վաղուեան, 'ի վաղուենէ ·* | վաղը, վաղուան օրը : |
| *Տիւ, տուընջեան, տուընջեամբ, տիւք ·* | ցորեկ : |

## 26 · ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

*պարզ է ·*

### Նշանէ

| | | |
|---|---|---|
| Ուղ · | *Ջամբ ·* | կռանջ, ուտելիք · |
| Սեռ · | *Ջամբու ·* | կռանջի · |
| Տրա · | *Ջամբու, 'ի ջամբ ·* | կռանջի · |
| Գործ · | *Ջամբուք ·* | կռանջով · |
| Բաց · | *'ի Ջամբուէ ·* | կռանջէ · |
| Հայց · | *զՋամբ ·* | կռանջը · |

---

1 Զայնով յոգնակի չունի սովորաբար · բայց կը գտուի մարդկօք, մարդկամբք, եղած մարդկնե :

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Համերք · | համանջեր · |
| Սեռ. | Համերց · | համանջերու · |
| Տրա. | Համերց, 'ի համերս · | համանջերու · |
| Գործ. | Համերբք · | համանջերով · |
| Բաց. | 'ի Համերց · | համանջերէ · |
| Հայց. | զՀամերս · | համանջերը : |

27 · Նման կը հոլովին եր, եղ վերջացած բառերը՝ ըէէն ու զատէն առաջ առնելով է, ու մէկ քանի էլ ·

| | | |
|---|---|---|
| Տարր, | տարեր, տարերց · | մանր մասնունք, սկզբունք : |
| Ոսկր, | ոսկեր, ոսկերց · | ոսկոր : |
| Ուստր, | ուստեր, ուստերց · | մանչ զաւակ, որդի : |
| Դուստր, | դստեր, դստերց · | աղջիկ զաւակ : |
| Ալիւր, | ալեր · | ալյուր : |
| Աղբիւր, | աղբեր, աղբերց · | աղբյուր : |
| Եղջիւր, | եղջեր, եղջերց · | եղջյուր, պոյնուզ : |
| Աստղ, | աստեղ, աստեղց · | աստղ, եըլտըզ : |
| Տեղ, | եանեղ · | տեղ : |
| Շիղ, | շեղ · | պատառայ շերտ մը : |

28 · Եզակի գործիականը ու յոգնակի հոլովները շատ անգամ կ'ըլլայ նաև Համերաւ, համերաց, համերօք · ոսկերաց, ոսկերօք · ուստերաց, ուստերօք · աղբերաց կամ աղբիւրաց, աղբերօք, զաղբիւրս · աստեղաց, աստեղօք : Նման է սովորաբար՝ անեզականը

Տիեզերք, տիեզերաց, տիեզերօք · աշխարհք, բոլոր աշխարհք :

## 29 · ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ է ·

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | *Այր* · | քարայր , մաղարա · |
| Սեռ · | *Այրի* · | քարայրի · |
| Տր · | *Այրի , յայր* · | քարայրի · |
| Գործ · | *Այրիւ* · | քարայրով · |
| Բաց · | *յԱյրէ* · | քարայրէ · |
| Հայց · | *զԱյր* · | քարայրը · |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | *Այրք* · | քարայրներ · |
| Սեռ · | *Այրից* · | քարայրներու · |
| Տր · | *Այրից , յայրս* · | քարայրներու · |
| Գործ · | *Այրիւք* · | քարայրներով · |
| Բաց · | *յԱյրից* · | քարայրներէ · |
| Հայց · | *զԱյրս* · | քարայրները · |

30 · *Այսպէս կը հոլովին շատ անուններ* ·

| | | | |
|---|---|---|---|
| *Արքայ* , | *արքայի* , | *արքայիւ* · | արքայ , թագաւոր · |
| *Մայր* , | *մայրի* , | *մայրիւ* · | մայր ծառ , չամ · |
| *Իժ* , | *իժի* , | *իժիւ* · | իժ օձ , էնկերէք · |
| *Ուխտ* , | *ուխտի* , | *ուխտիւ* · | ուխտ · |
| *Մարգարէ* , | *մարգարէի* , | *մարգարէիւ* · | մարգարէ · |
| *Աղօթք* , | *աղօթից* , | *աղօթիւք* · | աղօթք · |
| *Ինչք* , | *ընչից* , | *ընչիւք* · | ստացուածք , ըռզաք · |
| *Սիրտ* , | *սրտի* , | *սրտիւ* · | սիրտ · |
| *Շէն* , | *շինի* , | *շինիւ* · | շէնք , գեղ · |
| *Խուլ* , | *խլի* , | *խլիւ* · | խուլ · |
| *Ատեան* , | *ատենի* , | *ատենիւ* · | ատեան , տիվան · |
| *Հրեայ* , | *հրէի* , | *հրէիւ* · | հրեայ · |
| *Համբոյր* , | *համբուրի* , | *համբուրիւ* · | պագնելը , պաչիկ · |
| *Վաղիւ* , | *վաղուի* , | *'ի վաղուէ* · | վաղը , վաղուան օրը · |

## 31 · ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ ու ·

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Մարդ · | մարդ · |
| Սեռ · | Մարդոյ · | մարդու · |
| Տր · | Մարդոյ , 'ի մարդ · | մարդու · |
| Գործ · | Մարդով · | մարդով · |
| Բաց · | 'ի Մարդոյ · | մարդէ · |
| Հայց · | զՄարդ · | մարդը · |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Մարդք · | մարդեր , մարդիկ · |
| Սեռ · | Մարդոց · | մարդերու · |
| Տր · | Մարդոց , 'ի մարդս · | մարդերու · |
| Գործ · | Մարդովք , մարդօք · | մարդերով · |
| Բաց · | 'ի Մարդոց · | մարդերէ · |
| Հայց · | զՄարդս · | մարդերը : |

32 · Այսպէս կը հոլովին շատ անուններ ·

| | | | |
|---|---|---|---|
| Աստուած , | աստուծոյ , | աստուծով · | ճշմարիտ աստուած : |
| Աստուած , | աստուածոյ , | աստուածով · | սուտ ած , չաստուած : |
| Հարաւ , | հարաւոյ , | հարաւով · | հարաւ , լօտօս : |
| Ծեր , | ծերոյ , | ծերով · | ծեր , հալուոր : |
| Ձի , | ձիոյ , | ձիով · | ձի : |
| Ուս , | ուսոյ , | ուսով · | ուս , օմուզ : |
| Ձու , | ձուոյ , | ձուով · | հաւկիթ : |
| Պահք , | պահոց , | պահովք · | պաս : |
| Դժոխք , | դժոխոց , | դժոխովք · | դժոխք : |
| Սէր , | սիրոյ , | սիրով · | սէր : |
| Վէրմն , | վէրմնոյ , | վէրմնով · | վէրք : |
| Ջուր , | ջրոյ , | ջրով · | ջուր : |
| Հուր , | հրոյ | հրով · | կրակ : |
| Սեաւ , | սեւոյ , | սեւով · | սեւ : |

| | | | |
|---|---|---|---|
| Թիւ, | թուոյ, | թուով. | Թիւ, համրանք : |
| Լոյս, | լուսոյ, | լուսով. | Լոյս : |

33. Այս հոլովման բառերը երբեմն ում ալ կ'ըլլան եզակի սեռականը ու մանաւանդ տրականը, ու անկէց մէկ քանիին բացառականն ալ մէ կ'ըլլայ : Սովորականները ասոնք են .

| | | |
|---|---|---|
| Մարդ, | մարդում. | մարդ : |
| Սուրբ, | սրբում. | սուրբ : |
| Պիղծ, | պղծում. | պիղծ, ժէռ : |
| Հին, | հնում. | հին : |
| Նոր, | նորում. | նոր : |
| Անցեալ, | անցելում. | անցած : |
| Առաջին, | առաջնում, յառաջնմէ. | առաջի : |
| Աջ, | աջում, յաջմէ. | աջ, աղ : |
| Ձախ, | ձախում, 'ի ձախմէ. | ձախ, սօլ : |

34. Քիչ անգամ ուրիշ հոլովմանցն ալ կ'ըլլայ ասանկ, աւելի եօթներորդինը՝ որ ասոր նման է :

## 35. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

պարզ ա.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Զարդ. | զարդ. |
| Սեռ. | Զարդու. | զարդի. |
| Տր. | Զարդու, 'ի զարդ. | զարդի. |
| Գործ. | Զարդու. | զարդով. |
| Բաց. | 'ի Զարդուէ, 'ի զարդէ, 'ի զարդոյ. | զարդէ. |
| Հայց. | զԶարդ. | զարդը. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Զարդք. | զարդեր. |
| Սեռ. | Զարդուց. | զարդերու. |
| Տր. | Զարդուց, 'ի զարդս. | զարդերու. |
| Գործ. | Զարդուք. | զարդերով. |
| Բաց. | 'ի Զարդուց. | զարդերէ. |
| Հայց. | զԶարդս. | զարդերը. |

36 · Ընդնկ կը հոլովին ·

Այգ , այգու , յայգուէ · — առաւօտ , վաղը առաւօտ ։
Գանձ , գանձու , 'ի գանձուէ , 'ի գանձէ · — գանձ ։
Գաւ , գաւու , 'ի գաւուէ , 'ի գաւէ · — թաս , խուռամէ , չարք ։
Զգեստ , զգեստու , 'ի զգեստուէ ,
'ի զգեստէ · — հագուստ , լաթ ։
Զօր , զօրու , 'ի զօրուէ , 'ի զօրէ · — զօրք ։
Առաւօտ , առաւօտու , յառաւօտէ · — առաւօտ ։
Արև , արևու , յարևէ · — արև ։
Ժամ , ժամու , 'ի ժամէ · — ժամ , սահաթ ։
Ծով , ծովու , 'ի ծովէ · — ծով ։
Մահ , մահու , մահու · — մահ ։
Վարք , վարուց , վարուք · — վարք ։
Պարտք , պարտուց , պարտուք · — պարտք ։
Զէն , զինու , 'ի զինէ , 'ի զինուէ · — զէնք , սիլահ ։
Ցուլ , ցլու , 'ի ցլէ · — ցուլ , պուղա ։

## 37 · ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | փոքր · | պզտիկ · |
| Սեռ · | փոքու · | պզտիկին · |
| Տրա · | փոքու , 'ի փոքր · | պզտիկին · |
| Գործ · | փոքումբ , փոքու · | պզտիկով · |
| Բաց · | 'ի փոքուէ , 'ի փոքու · | պզտիկէ · |
| Հայց · | զփոքր · | պզտիկը · |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | փոքունք · | պզտիկներ · |
| Սեռ · | փոքունց · | պզտիկներուն · |
| Տրա · | փոքունց , 'ի փոքունս · | պզտիկներուն · |
| Գործ · | փոքումբք , փոքուք · | պզտիկներով · |
| Բաց · | 'ի փոքունց · | պզտիկներէ · |
| Հայց · | զփոքունս · | պզտիկները · |

38. Ասանկ կը հոլովին քանի մը ըր վերջացած բառեր, մէկ երկու ուրիշ ալ. ու տեղ տեղ կը խոտորին քիչ մը.

| | | | |
|---|---|---|---|
| Այր, | առն, | յառնէ. | էրիկ: |
| Ծաղր, | ծաղու, | 'ի ծաղուէ. | ծիծաղ, խնդալը: |
| Մեղր, | մեղու, | 'ի մեղուէ. | մեղր, պալ: |

Թանձր, թանձու, ձունք, ձունց. — թանձր, հաստ:
Ծանր, ծանու, նունք, նունց, նուք. — ծանր:
Մանր, մանու, նունք, նունց, նումբք. — մանր:
Քաղցր, քաղցու, ցունք, ցունց, ցուք. — անուշ:
Բարձր, բարձու, բարձու կամ բարձամբ, ձունք, ձանց, ձամբք. — բարձր:
Յոգն, յոգունք, յոգունց, յոգումբք. — շատ:
Երէց, երիցու, երիցու կամ երիցամբ, երիցունք, երիցանց, երիցամբք. — տարէօք մեծ, կարգով մեծ:

## 39. ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

խառն է և ա.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգ. | ազգ. |
| Սեռ. | Ազգի. | ազգի. |
| Տր. | Ազգի, յազգ. | ազգի. |
| Գործ. | Ազգաւ. | ազգով. |
| Բաց. | յԱզգէ. | ազգէ. |
| Հայց. | զԱզգ. | ազգը. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգք. | ազգեր. |
| Սեռ. | Ազգաց. | ազգերու. |
| Տր. | Ազգաց, յազգս. | ազգերու. |
| Գործ. | Ազգօք, ազգովք. | ազգերով. |
| Բաց. | յԱզգաց. | ազգերէ. |
| Հայց. | զԱզգս. | ազգերը: |

40 · Ըսանկ կը հոլովին շատ մը բառեր ·

Կարգ , կարգի , կարգաւ · կարգ ·
Քաղաք , քաղաքի , քաղաքաւ · քաղաք ·
Իր , իրի , իրաւ · բան , եղած բան մը ·
Լեզու , լեզուի , լեզուաւ · լեզու ·
Խաւար , խաւարի , խաւարաւ · մութ ·
Աչք , աչաց , աչօք · աչք ·
Փառք , փառաց , փառօք · փառք ·
Աղաչանք , աղաչանաց , աղաչանօք · աղաչանք ·
Էշ , իշի , իշաւ · էշ , [illegible] ·
Բժիշկ , բժշկի , բժշկաւ · բժիշկ , հէքիմ ·
Բազում , բազմի , բազմաւ · շատ ·
Կեանք , կենաց , կենօք · կեանք ·
Հովիւ , հովուի , հովուաւ · հովիւ , չոպան ·
Վարագոյր , վարագուրի , վարագուրաւ · վարագոյր , փերտէ ·

## 41 · ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Անձն · | անձ , հոգի , ինք · |
| Սեռ · | Անձին · | անձի · |
| Տրա · | Անձին , յանձն · | անձի · |
| Գործ · | Անձամբ · | անձով · |
| Բաց · | յԱնձնէ · | անձէ · |
| Հայց · | զԱնձն · | անձը · |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Անձինք · | անձեր · |
| Սեռ · | Անձանց · | անձերու · |
| Տրա · | Անձանց , յանձինս · | անձերու · |
| Գործ · | Անձամբք · | անձերով · |
| Բաց · | յԱնձանց · | անձերէ · |
| Հայց · | զԱնձինս · | անձերը · |

42. Ասանկ կը հոլովին ն վերջացած բառերուն մէկ քանին. Ուրեմն ասոր գաս հոլովները՝ առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կ'ըլլան, անոնց ալ ասոր պէս.

| | |
|---|---|
| Ազն, ազին, յազնէ, ազինք. | ազգ, ցեղ: |
| Դաշն, դաշին, 'ի դաշնէ, դաշինք. | դաշն, դայման, խառնը: |
| Դառն, դառին, 'ի դառնէ, դառինք. | լեղի: |
| Բեռն, բեռին, 'ի բեռանէ, 'ի բեռնէ, բեռինք. | բեռ: |
| Գառն, գառին, 'ի գառանէ, 'ի գառնէ, գառինք. | գառ, խուզի: |
| Թոռն, թոռին, 'ի թոռնէ, 'ի թոռանէ, թոռունք. | թոռ: |
| Հարսն, հարսին, 'ի հարսնէ, 'ի հարսանէ, հարսունք. | հարս: |
| Մասն, մասին, 'ի մասնէ, 'ի մասանէ, մասունք. | մաս, բաժին: |
| Մատն, մատին, 'ի մատանէ, 'ի մատնէ, մատունք. | մատ: |
| Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերինք. | լեռ: |
| Ձեռն, ձեռին, 'ի ձեռանէ, ձեռք, ձեռաց, ձեռօք. | ձեռք: |
| Ոտն, ոտին, յոտանէ, ոտք, ոտից, ոտիւք. | ոտք: |

## 43. ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

խառն ե ա.

### Եզակ.

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Բարի. | աղէկ. |
| Սեռ. | Բարւոյ՝. | աղէկի. |
| Տր. | Բարւոյ, 'ի բարի. | աղէկի. |
| Գործ. | Բարեաւ. | աղէկով. |
| Բաց. | 'ի Բարւոյ. | աղէկէ. |
| Հայց. | զԲարի. | աղէկը. |

1 Ուղղականին ենին ոյն քամը - կը փոխուի, այրին քամը՝ է:

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Դստերք. | աղջիկներ. |
| Սեռ. | Դստերաց. | աղջիկներուն. |
| Տր. | Դստերաց, 'ի դստերս. | աղջիկներուն. |
| Գործ. | Դստերօք. | աղջիկներով. |
| Բաց. | 'ի Դստերաց. | աղջիկներէ. |
| Հայց. | զԴստերս. | աղջիկները։ |

44. Նման կը հոլովին մէկ վանկէն աւելի ի վերջացող բառերը։ Ասոնց եզակի գործիականը ու բոլոր յոգնակին՝ աւելի չորրորդ հոլովման պէս կ'ըլլայ. երբեմն մէկալոնցն ալ անանկ կ'ըլլայ.

| | | | |
|---|---|---|---|
| Այգի, | այգւոյ, | այգեաւ. | էգի։ |
| Գինի, | գինւոյ, | գինեաւ. | գինի։ |
| Եկեղեցի, | եկեղեցւոյ, | եկեղեցեաւ. | էկէղէցի, ժամ։ |
| Սիրելի, | սիրելւոյ, | սիրելեաւ. | սիրէլի։ |
| Տարի, | տարւոյ, | տարեաւ. | տարի։ |
| Տեղի, | տեղւոյ, | տեղեաւ. | տեղ։ |
| Ոսկի, | ոսկւոյ, | ոսկւով. | ոսկի։ |
| Փոշի, | փոշւոյ, | փոշւով. | փոշի, տօզ։ |
| Որդի, | որդւոյ, | որդւով, որդւոց. | որդի։ |
| Հոգի, | հոգւոյ, | հոգւով, հոգւոց. | հոգի։ |
| Աւետիք, | աւետեաց, | աւետեօք. | աւէտիս, մուժտէ։ |
| Կարծիք, | կարծեաց, | կարծեօք. | կարծիք։ |

45. Ասոր հոլովները շատ տեղ առանց փոխելու ալ կ'ըլլան. Բարւոյ, բարւով կամ բարով, 'ի բարւոյ. Գինւոյ, գինւով. կամ գինով. Սիրելւոյ, սիրելւով կամ սիրելով. Ոսկւոյ, ոսկով. Որդւոյ, որդւով, որդւոց, որդովք։

46. Աս հոլովման բառերը երբեմն ոջ ալ կ'ըլլան եզակի սեռականն ու տրականը, ու անկից մէկ քանիին բացառականն ալ ոջէ կ'ըլլայ.

| | | |
|---|---|---|
| Բարի, | բարւոջ. | բարի, աղէկ։ |
| Այգի, | այգւոջ. | էգի։ |
| Գինի, | գինւոջ. | գինի։ |
| Եկեղեցի, | եկեղեցւոջ. | էկէղէցի, ժամ։ |
| Տարի, | տարւոջ, 'ի տարւոջէ. | տարի։ |
| Տեղի, | տեղւոջ, 'ի տեղւոջէ. | տեղ։ |

47 · Քիչ անգամ ուրիշ հոլովմանցն ալ կ'ըլլայ ասանկ, աւելի չորրորդինը՝ որ ասոր նման է ։

## ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

48 · Քանի մը բառ կայ որ հոլովմունքնին եօթը հոլովմունքէն դուրս է, թէպէտ տեղ տեղ կը նմանի մէկուն կամ մէկալին · ու ասոնք են ·

### 49 · Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այր · | էրիկ մարդ, էրիկ, մարդ · |
| Սեռ. | Առն՛ · | էրիկ մարդու · |
| Տր. | Առն, յայր · | էրիկ մարդու · |
| Գործ. | Արամբ · | էրիկ մարդով · |
| Բաց. | յԱռնէ · | էրիկ մարդէ · |
| Հայց. | զԱյր · | էրիկ մարդը · |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Արք · | էրիկ մարդիկ · |
| Սեռ. | Արանց · | էրիկ մարդոց · |
| Տր. | Արանց, յարս · | էրիկ մարդոց · |
| Գործ. | Արամբք · | էրիկ մարդերով · |
| Բաց. | յԱրանց · | էրիկ մարդերէ · |
| Հայց. | զԱրս · | էրիկ մարդերը ։ |

Նմանակ կը հոլովի Տէր, որ է տէ այր, այս ինքն մեծ կամ հզօր այր, տէր ·

Տէր, տեառն, տեառն, 'ի տէր, տերամբ, 'ի տեառնէ կամ 'ի տեռնէ, զտէր ·

---

1 Մեր լեզուին մէջ՝ բառին բնական եզող նուէ առաջ՝ ամենևին չ կայ · անոր համար աս բառիս ու Տէր բառին մէջն ալ ըէն – կը փոխուի երբոր քովը ն գայ ։ Ընդ հակառակն ասոր քովէն նուէն հոլովով որ հետամնայ նէ, երբեմն ան չ կը փոխուի · ինչպէս տեսանք տէան, Յէան, Տէան, Ճէան բառերուն վրայ (25 . 42) ։ Աս երկու բանս բայերուն վրայ ալ կ'երևնայ ։

*Տեարք, տերանց կամ տեարց, 'ի տեարս, տերամբք, 'ի տերանց կամ 'ի տեարց, զտեարս:*

## 50 · Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ· | Հայր· | հար· |
| Սեռ· | Հօր[1]· | հօր· |
| Տր· | Հօր, 'ի հայր· | հօր· |
| Գործ· | Հարբ, հարամբ· | հարով· |
| Բաց· | 'ի Հօրէ· | հօրմէ· |
| Կոչ· | զՀայր· | հարը· |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ· | Հարք· | հարեր· |
| Սեռ· | Հարց, հարանց· | հարերու· |
| Տր· | Հարց, հարանց, 'ի հարս· | հարերու· |
| Գործ· | Հարբք, հարամբք· | հարերով· |
| Բաց· | 'ի Հարց, 'ի հարանց· | հարերէ· |
| Կոչ· | զՀարս· | հարերը: |

Մայր, մօր, մարբ, մարք, մարց· մար:
Եղբայր, եղբօր, եղբարբ, եղբարք, եղբարց· եղբար, աղբար:

## 51 · Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ· | Կին· | կնիկ· |
| Սեռ· | Կնոջ· | կնկան |
| Տր· | Կնոջ, 'ի կին· | կնկան· |
| Գործ· | Կնաւ, կանամբ, | կնիկով· |
| Բաց· | 'ի Կնոջէ· | կնիկէ· |
| Կոչ· | զԿին· | կնիկը· |

---

1 Հիներուն գրուածքումը Հայր, հաւր, 'ի հաւրէ (4):

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Կանայք . | կնիկներ , կնկտիք . |
| Սեռ . | Կանանց . | կնիկներու . |
| Տր . | Կանանց , 'ի կանայս . | կնիկներու . |
| Գործ . | Կանամբք . | կնիկներով . |
| Բաց . | 'ի Կանանց . | կնիկներէ . |
| Հայց . | զԿանայս . | կնիկները : |

Տիկին , տիկնոջ , տիկնաւ կամ տիկնամբ , 'ի տիկնոջէ , զտիկին .

Տիկնայք , տիկնանց կամ տիկնայց , տիկնօք կամ տիկնամբք , 'ի տիկնանց կամ 'ի տիկնայց , զտիկնայս . Ռմ կին , խաթուն :

52 . Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյր . | քոյր . |
| Սեռ . | Քեռ . | քրոջ . |
| Տր . | Քեռ , 'ի քոյր . | քրոջ . |
| Գործ . | Քերբ , քեռբ : | քոյրով . |
| Բաց . | 'ի Քեռէ . | քոյրէ . |
| Հայց . | զՔոյր . | քոյրը . |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քորք . | քոյրեր . |
| Սեռ . | Քերց , քեռց . | քոյրերու . |
| Տր . | Քերց , քեռց , 'ի քորս . | քոյրերու . |
| Գործ . | Քերբք , քեռբք . | քոյրերով . |
| Բաց . | 'ի Քերց , 'ի քեռց . | քոյրերէ . |
| Հայց . | զՔորս . | քոյրերը : |

## 53 · Եզական

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Գիւղ, գեօղ · | [illegible] |
| Սեռ · | Գեղջ · | [illegible] |
| Տրա · | Գեղջ, 'ի գիւղ · | [illegible] |
| Գործ · | Գիւղիւ · | [illegible] |
| Բաց · | 'ի Գեղջէ · | [illegible] |
| Հայց · | զԳիւղ, զգեօղ · | [illegible] |

## Յոգնական

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Գիւղք, գեօղք · | [illegible] |
| Սեռ · | Գիւղից, գեօղից · | [illegible] |
| Տրա · | Գիւղից, գեօղից, 'ի գիւղս · | [illegible] |
| Գործ · | Գիւղիւք, գեօղիւք, գիւղօք · | [illegible] |
| Բաց · | 'ի Գիւղից, 'ի գեօղից · | [illegible] |
| Հայց · | զԳիւղս, զգեօղս · | [illegible] |

## 54 · Եզական

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Օր [1] · | [illegible] |
| Սեռ · | Աւուր · | [illegible] |
| Տրա · | Աւուր, յօր · | [illegible] |
| Գործ · | Աւուրբ · | [illegible] |
| Բաց · | յՕրէ · | [illegible] |
| Հայց · | զՕր · | [illegible] |

## Յոգնական

| | | |
|---|---|---|
| Ուղ · | Աւուրք · | [illegible] |
| Սեռ · | Աւուրց · | [illegible] |
| Տրա · | Աւուրց, յաւուրս · | [illegible] |
| Գործ · | Աւուրբք · | [illegible] |
| Բաց · | յԱւուրց · | [illegible] |
| Հայց · | զԱւուրս · | [illegible] |

---

1 Հնկրան գրուածքովը Աւր, [illegible], [illegible], [illegible] (4) ։

## ՀՈԼՈՎՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԴԻՏԵԼԻՔ

55. Ձայնաւորով մը՝ , ր վերջացած բառերը՝ գործիական կ'ըլլան երբեմն միայն բ մը առնելով ծայրը . ու ն՝ նոյն բին քով մ կը փոխուի . ինչպէս ,

| | | | |
|---|---|---|---|
| Վեցթեւեան , | վեցթեւեամբ , | վեցթեւեամբք . | Վեց թեւ ունեցող : |
| Բնաւին , | բնաւիմբ . | | բոլոր , բոլորովին : |
| Սուսեր , | սուսերբ , | սուսերբք . | Թուր : |
| Հուր , | հուրբ . | | կրակ : |
| Ջուր , | ջուրբ , | ջուրբք . | ջուր : |
| Հանուր , | հանուրբ , | հանուրբք . | ամէն , բոլոր : |

56. Բացառական հոլով կ'ըլլայ երբեմն ուստ վերջով ալ . ինչպէս ,

| | | |
|---|---|---|
| Երկինք , | յերկնուստ . | երկինքէն : |
| Ամէն , | յամենուստ , յամենուստ ծառայութենէ . | ամենէն , ամէն տեղէն , ամէն ծառայութենէ : |
| Աստուած , | յաստուածուստ . | աստուծմէ : |
| Բուն , | ՚ի բնուստ . | ՚ի բնէ , ասլընտան : |
| Արքունիք , | յարքունուստ , յարքունուստ հրամանէ . | արքունիքէն , դրէն , արքունի հրամանէն : |

Երբեմն առանց նախդիրի ալ , Այլուստ կողմանէ , ուրիշ տեղէն . մօտուստ , մօտէն :

57. Ընձայն ; , կամ որ նոյն է՝ պարզ ձայնաւոր վերջացած , ու ձայնաւորով մը՝ , ր վերջացած բառերը յոգնակի սեռական կ'ըլլան երբեմն միայն ց առնելով ծայրը . ու անկէց բացառական ալ կ'ըլլան բառերնին . ինչպէս ,

| | |
|---|---|
| Արեւելեայ , արեւելեայք , արեւելեայց կամ արեւելեաց , արեւելեօք , (եօթներորդ հոլովման պէս) . | արեւելցի : |
| Դուզնաքեայ , դուզնաքեայք , դուզնաքեայց կամ դուզնաքեաց , դուզնաքեօք . | պզտիկ , քիչ , չնչին : |
| Հայաստանեայ , հայաստանեայք , հայաստանեայց կամ հայաստանեաց , հայաստանեօք . | հայաստանցի : |
| Հայկազնեայ , հայկազնեայք , հայկազնեայց կամ հայկազնեաց , հայկազնեօք . | հայկայ ազգէն , հայ : |
| Առհաւատչեայ , առհաւատչեայք , առհաւատչեայց կամ առհաւատչեաց , առհաւատչեօք . | գրաւ , քէյ : |
| Աղախնեայք , աղախնեայց կամ աղախնեաց , աղախնեօք . / Աղախնայք , աղախնայց կամ աղախնաց , աղախնօք . | աղախիններ , հարճեր : |
| Կանայք , կանայց կամ կանանց . | կիներ : |
| Սարոյ , սարոյք , սարոյց . | չամ ծառեր : |
| Արտասոյ , արտասոյք , արտասոյց . | գինք , խործր : |

Դիպուածոյ, դիպուածոյք, դիպուածոյց · դիպուածական:
Գրեան, գրեանք, գրեանց · գրքեր:
Յաւիտեան, յաւիտեանք, յաւիտեանց · երկար ատեն, շատ դար:
Վեցթևեան, վեցթևեանք, վեցթևեանց · վեց թեւ ունեցող:
Արամեան, արամեանք, արամեանց · Արամայ ազգէն, հայ:
Աղախին, աղախնանք, աղախնանց · աղախին, հարայրը:
Ամենայն, ամենայնք, ամենայնց · ամէն:
Դուռն, դուռնք, դուռնց · դուռը:
Արքուն, արքունք, արքունց · [illegible]:
Պատկեր, պատկերք, պատկերց · պատկեր:
Ջուր, ջուրք, ջուրց · ջուր:
Հանուր, հանուրք, հանուրց · ամէն, բոլոր:
Քոյր, քորք, քորց · քոյր:

58 · Երբեմն ալ սեռականի մը նման վերջ ունեցող ուղղական անուններըն՝ ան հոլովին սեռականը կամ տրականը կը սեպուին, ու բառ այնմ ուրիշ հոլովն ալ կը չինուի · ինչպէս, Հրաշէայ, տարեստանեայ, չորեքօրեայ · Սատեր, սկաեղ կամ սկուտեղ · Շամանի, Սեմէի, Նելոժի, տարի, Նամականի, ամէնի, յոռի, ամարանի · Բրդիճոյ, այժմու, հինաւուրց, որ ուղղական են, իբրաքանչիւր իրեն նման սեռականի կամ տրականի տեղ ալ առնուած կան գրոց մէջ: Եւ անկէց ան վերջին նմանութեանը գործիական չինուած է · Եղջերեայ, եղջերեաւ · Եղենեայ, եղենեաւ · Սկաեղ, սկաեղբ · Նամականի, Նամականիւ · — Բացառական, Շափիղայ, 'ի շափիղայ · Երեկորեայ, յերեկորեայ · — Յոգնակի սեռական, Ամէնի, ամէնից · Յոռի, յոռից · Ամարանի, ամարանից · Այժմու, այժմուց: Վերի գրած (57) նայ, նայք, նան վերջացած բառերուն յոգնակի հոլովները՝ աս կերպիս ալ նման են, տար յոգնակիններն ալ՝ անոր:

59 · Յոգնակի ուղղականը երբեմն սեռով կ'ըլլայ՝ մանաւանդ անեզական անուններունը · ինչպէս, Ոչ գոյր ընդ նոսա աստուածս օտարս · փոխանակ ըսելու՝ աստուածք օտարք · չկար անոնց հետ օտար աստուածներ: Օրէնս արդարութեան բնութիւն մեր եղիցի · փոխանակ ըսելու օրէնք · արդարութեան օրէնք՝ մեր բնութը ըլլայ: Ոչ է ինձ պէտս և ոչինչ · փոխանակ ըսելու՝ պէտք · բան մը պէտք չէ ինծի: Տիեզերս լցաւ · փոխանակ ըսելու՝ տիեզերք լցաւ · բոլոր աշխարհքս լեցուեցաւ:

60 · Հայցականն ու ուրիշ նախդրիւ հոլովներն ալ երբեմն քեռով կ'ըլլան · ինչպէս, Զգեղջուք, զհրեշտակք, զերգն, զկեանքն, զգիրքն · փոխանակ ըսելու՝ զգեղջուս, զհրեշտակս, զերգս, զկեանսն, զգիրսն՝ Հեղին արտասուք · Եառուն նմա իրաւունք · փոխանակ ըսելու՝ հեղին արտասուս, եառուն իրաւունս: Ի գժոխքն, 'ի զօրքն, յարքունիքն, փոխանակ ըսելու՝ 'ի գժոխսն, 'ի զօրսն, յարքունիսն: Աստնկ գիտցիր ամէն տեսակ բառի համար:

61 · Յոգնակի ուղղական ու անկից հայցական ալ կ'ըլլայ երբեմն աս յոգնակի վերջերովս ալ ·

-ոյ, -եոյ ․ աղախին, աղախնայք կամ աղախնեայք ․ աղախիններ ։
-ու ․ նու, նուանք ․ հարսներ ․ աղախին, աղախնանք ․ աղախիններ ։
-ի, -եի ․ պարտք, պարտիք ․ պարտքեր ․ սերմանիք, սերմանիք ․ հունտեր ․
այծ, այծիք ․ այծեր ․ գաւառ, գաւառիք ․ գաւառներ ։
-ոյ ․ գահ, գահոյք ․ աթոռներ ․ բոլք, բոլոյք ․ բոլքեր ։
-ուն ․ հողմ, հողմունք ․ հովեր ․ ծրագ, ծրագունք ․ ճրագներ ․ անցք, անցուցունք ․ անցքներ ։

62 ․ Այսքի չորրորդ -ոյ կամ -եոյ, -ու, -ի, -ոյ վերջահոլովք ալ ունին, -ոյց կամ -եոյց, -ուց, -եաց, -ոյից կամ -ոյց ։ Իսկ -ուն չունի սովորաբար ․ զի չըլլար հողմունք, հողմանց ․ բայց 'ի քանի մը բառէ ․ ինչպես, պատառ, պատառունք, պատառանց ․ ձիրան, ձիրանունք, ձիրանանց, ձիրանանք ․ կոչունք, կոչնոց ։

63 ․ Երրորդ ալ յոգնակի ուղղական ու անկից հայցական կ'ըլլայ ան եզակի վերջերովս, որ սովորաբար՝ եզակի կը հոլովին ամէն հոլով ալ ․
-ան ․ էշ, իշան ․ էշեր ․ ձի, ձիան ․ ձիեր ։
-անի ․ աւագ, աւագանի ․ մեծեր ․ նամակ, նամականի ․ նամակներ ․ կանայք, կանանի ․ կիներ ։
-եան ․ գիրք, գրեան ․ գրքեր ․ խոզ, խոզեան ․ խոզեր ․ էշ, իշեան ․ էշեր ։
-եար, -եր ․ էշ, իշեար ․ էշեր ․ վանք, վանեար կամ վաներ ․ վանքեր ․ բան, բանեար կամ բաներ ․ բաներ, խօսքեր ։
-ան ․ զօր, զօրական ․ զօրք, զինուորներ ․ բազմական ․ նոպօցներ ։
-նեար ․ բարձիկ, բարձիկնեար ․ դարձ բարձեր, բարձիկներ ․ քաղաքիկ, քաղաքիկնեար ․ դարձ քաղաքներ, քաղաքիկներ ։
-որայ, -որեայ ․ կալ, կալորայ ․ կալեր, հարմաններ ․ արտ, արտորայ կամ արտորեայ ․ արտեր ․ վանք, վանորայ կամ վանորեայ, վանօրեայ ․ վանքեր ․ գեղ, գեղօրեայք կամ գեղօրէք ․ գեղեր ։
-ստան ․ անդ, անդաստան ․ արտեր ․ տունկ, տնկաստան ․ պարտէզներ ։
-տի, -ոտի ․ մանուկ, մանկտի ․ տղաներ ․ ռամիկ, ռամկօտի ․ ռամիկներ ։

64 ․ Աս եզակիներս երրորդ նորէն յոգնակի կ'ըլլան քեով ու ներով, ամենք վերջահոլովով ալ ․ ինչպես, գրեանք, զգրեանս, գրեանց, գրեանք (57) ․ արտորայք կամ արտորեայք, զարտորայս, արտորայից կամ արտորեից ․ անդաստանք, յանդաստանս, անդաստանաց ․ զմանկտիս, մանկտւոյ, մանկտւոյք կամ մանկտեաւք ։

65 ․ Շատ անգամ ալ յոգնակիի տեղ նոյն անունը կը կրկնուի ․ որ շատ տեղ ալ կ'նշանակէ մէկ մէկ, մէկ, շատ ․ ինչպես, ազգ ազգ, ազգեր ․ այր այր, տուն տուն, մէկ մէկ մարդ, մէկ մէկ տուն ․ քաղաքի քաղաքի ․ մէկ քաղաք ․ ասուր ասուր, մէկ օրուան ․ զբարի բարին, ընտիրները ․ յոյժ յուրին, գեղերը ․ զծանր ծանր, ծանրերը ․ ազգք ազգք, ազգեր, շատ ազգեր ․ լեզուք լեզուք, լեզուներ, շատ լեզուներ ․ ազգաց ազգաց, քաղաքաց քաղաքաց, շատ ազգերու, շատ քաղաքներու ․ 'ի տեղեաց տեղեաց, շատ տեղերէ ․ 'ի տանէ տանէ, շատ տուներու, շատ տներ կամ շատ տուներու մէջ ։

66 ․ Իսկ ածականն որ յայտնի գոյականի քով կրկնուի նէ, անոր

շատը կամ առաւելը կը նշանակէ . ինչպէս , ծանր ծանր երգմանքը , ըսել է չօք կամ խէյլի ծանր . մանր մանր մասունք , չօք կամ խէյլի մանր . ընտիր ընտիր երկիրն , խէյլի ընտիր . բազում բազում ինչ իրս , խէյլի չօք . նման նման , խէյլի նման :

Նաանկ ալ Վէյին յոգնակիին տեղը Մեծամեծ կ'ըսուի սովորաբար . մեծամեծ գաւառանոցք , քաղաքք մեծամեծք . — որ թէ որ եզակի հետ ըսուի նէ , խիստ մեծ կը նշանակէ . մեծամեծ տաղաւար , մեծամեծ մարմին :

67 . Եզակի յատուկ անունները յոգնակի չունին ըսինք սովորաբար (20) . բայց երբեմն նոյն անունը ունեցողները կամ նմանները ըսել ուզենք ըլլայ նէ , յոգնակի կ'ըլլան քէով , սէով , կամ էան վերջով (63) , ու կը հոլովին ալ . Տիգրանք , Բրիտոսք , Յուդայք , Յուդայից . Սիմոնք , Սիմոնից . Նեռոնք , Նեռոնից . Անտիոքոսք կամ Անտիոքք , Անտիոքոսք . երկուս Բրիտոսս : — Տիտանեանք , տիտանեանց , ... . Անտիոքեանք , ... . Գրիգորեանք , ... :

68 . Յոգնակիին +, - կը դրուի երբեմն մէկ բառին սեռականին , տրականին , բացառականին ու նախդրիւ հոլովներուն վրայ ալ , ու կը նշանակէ ... , ... , ... , և այլն . ու նորէն ալ կը հոլովին երբեմն . ինչպէս , Բրիտոսիք , զԲրիտոսիսն . Նստուծոյք , աստուծոյց , զաստուծոյսն . Մարմնոյք , զմարմնոյսն . Երկրիք , զերկրիսն . Սիրելեաց , սիրելեացքն : — Մարմնովքն , զմարմնովսն : — Իյարենէք , 'ի յարենէց . Յերկրէքս , յերկրէցս . Առ 'ի յերկրէք , զառ 'ի յերկրէսն : — Յերկրէքս . Առ 'ի Ներքոյք , զառ 'ի Ներքոյս . Առ 'ի սորեք , զառ 'ի սորեսն . Ընդ մէջքն , զընդ մէջսն . Ըստ մասինքն , ըստ մասինցն (57) . Մի ըստ միոջէքն , մի ըստ միոջէցն , զմի ըստ միոջէսն :

Նաանկ գերանուններուն ալ կ'ըլլայ , ուրիշ անսովոր հոլովներով ալ : Հոս գրածներուն մէջն ալ գիտէ բացառականին անսովոր հոլովումը , 'ի ... , ... , ... , որ ալ ուրիշ տեղ չկայ , ու կը նմանի 57 թուին :

69 . Մէկ հոլովման անունները երբեմն ուրիշ հոլովման պէս ալ կը հոլովին , մանաւանդ երրորդ , չորրորդ , հինգերորդ ու վեցերորդ հոլովումներունը մէկմէկու պէս . ամէն հոլովին պէս ալ չէ նէ , մէկ քանիին պէս : Աջևի օրինակներէդ' քիչէն շատը հասկցիր .

| | |
|---|---|
| Տաղիկ , ծաղկան . ծաղկի , ծաղկաւ . ծաղկոյ , ծաղկով . | ... : |
| Ընկեան , անկեան . անկիւնի , յանկիւնէ . | ... , ... : |
| Ժողովուրդ , ժողովրդեան . ժողովրդոյ , ժողովրդով . ժողովրդի , ժողովրդիւ . | ... . |
| Խորհուրդ , խորհրդոյ կամ խորհրդեան . խորհրդի , խորհրդիւ . | ... : |
| Սանձ , սանձի , սանձիւ , սանձից . սանձաւ , սանձաց , սանձուց . | ... , ... : |
| Լուսաւոր , լուսաւորի , լուսաւորիւ , լուսաւորից . լուսաւորաւ , լուսաւորաց . | ... , ... ... : |

Թուղթ, թղթոյ. թղթի, 'ի թղթէ. — թուղթ:
Թև, թևոյ. թևի, 'ի թևէ. — թև:
Չափ, չափոյ, չափոյ. չափու, չափուց. չափի, չափու, չափից. — չափ:
Զգեստ, զգեստու, զգեստուց, զգեստուք. զգեստի, զգեստիւ, զգեստից, զգեստիւք. — հագուստ. զգեստ.
Զէն, զինու, զինուց, զինուք. զինով, զինաւ, զինից, զինուք. — զէնք, զինուոր:
Սար, սառու. սարու, սարոյ, սարով, սաերք. — բարդ:
Մեղր, մեղու. մեղեր, մեղերք. մեղրոյ, մեղրով, մեղրի. — մեղր, մեղու:
Նաւ, նաւի, նաւաւ, նաւաց. նաւով, նաւու, նաւուց. — նաւ:
Վանք, վանաց. վանից, վանիւք, վանուց. — վանք, բնակարան:
Ամիս, ամսոյ. ամսեան. — ամիս:
Բաժին, բաժնի, բաժնից. բաժեան, բաժեանց. — մաս, բաժին:
Ժամանակ, ժամանակի. ժամանակեան. — ատեն:
Բազուկ, բազկի, բազկաւ. բազկամբ. — թև, բազուկ:
Կող, կողի, կողիւ, կողիւք. կողամբք. — կող:
Գօտի, գօտւոյ, գօտւով կամ գօտեաւ. գօտեամբ. — գօտի:
Բլուր, բլրոյ կամ բլրի. բլեր. բլերր. — բլուր. պզտիկ լեռ:
Ձեռն, ձեռին, ձեռամբ. ձեռք, ձեռաց, ձեռօք. ձերս կամ ձեռս, ձեռինս, ձեռամբք. — ձեռք:
Յեսան, յեսանի. յեսանայ. — սրելու քար:
Ճեփոր, ճեփորի. ճեփորայ. — քող, շղարշ:
Քրմուհի, քրմուհւոյ. քրմուհեաց. — քուրմ կին, կին քուրմ:
Աստուածուհի, աստուածուհւոյ. աստուածուհեաց. — իգական աստուած:

70. Ոմանց ալ եզակին մէկ կերպ, յոգնակին մէկալ կերպ կ'ըլլայ անկանոնաբար. ինչպէս,

Ժողովուրդ, ժողովրդեան. — ժողովուրդք, ժողովրդոց. — ժողովուրդ:
Խորհուրդ, խորհրդոյ կամ խորհրդեան. — խորհուրդք, խորհրդոց. — խորհուրդ:
Ծնունդ, ծննդեան կամ ծննդոյ. — ծնունդք, ծննդոց. — ծնունդ, ծնունդք:
Շնորհ, շնորհի, շնորհիւ. — շնորհք, շնորհաց, շնորհօք. — շնորհք:
Երկին, երկնի, երկնաւ. — երկինք, երկնից, երկնիւք. — երկինք:
Քար, քարի, քարիւ կամ քարամբ. — քարինք, քարանց, քարամբք կամ քարիւք. — քար:
Պատառ, պատառոյ. — պատառունք, պատառունց. — պատառ:
Աղախին, աղախնոյ կամ աղախնի, աղախնով, աղախնաւ, աղախնիւ. աղախնայք, և այլն (57, 61). քեր-տեղ, աղախինք, զաղախինս. — աղախին. հարճ:

71. Նոյն բառը ուրիշ ուրիշ բան որ նշանակէ նէ, հոլովը կը փոխուի անկանոնաբար. ինչպէս,

Այր. մաղարա. այրի, այրիւ. Այր. էրիկ մարդ. առն, արամբ:
Մայր. եղև ծառ. մայրի, մայրիւ. Մայր. մայր. մօր, մարբ:

| | |
|---|---|
| Գեղ. ԳԻՒՂ. գեղի, գեղիւ. | Գեղ. ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ. գեղոյ, գեղով: |
| Փող. ԴՐԱՄ. փողի, փողիւ. | Փող. ՓՈՂ, ՇԵՓՈՐ. փողոյ, փողով: |
| Օդ. ՈՏՔԻ ԱՄԱՆ. օդի, օդից. | Օդ. ՕԴ, ՀՈՎ. օդոյ, օդոց: |
| Որթ. ԱՅԳԻ. որթոյ, որթով. | Որթ. ՀՈՐԹ, ԵՐԻՆՋ. որթու, որթուց: |

72. Անուն մը մասնիկի մը հետ միացած կամ ուրիշ անուան հետ բարդած որ ըլլայ նէ, անեզականը եզական ալ կ'ըլլայ. վերջահոլով չունեցողը վերջահոլով ալ կ'առնէ, ու առհասարակ հոլովը կը փոխէ, մանաւանդ չորրորդ ու հինգերորդ հոլովմանց բառերը. ինչպէս,

| | |
|---|---|
| Միտք, մտաց. | Անմիտ, անմտի, անմտից կամ անմտաց: |
| Փառք, փառաց. | Վեհափառ, վեհափառի, վեհափառից: |
| Յոյս, յուսոյ. | Անյոյս, անյուսի, անյոյսք, անյուսից, անյուսոյ: |
| Սէր, սիրոյ. | Բարեսէր, բարեսիրի, բարեսէրք, բարեսիրաց: |
| Աստուած, աստուծոյ, աստուծոց. | Անաստուած, անաստուածի, անաստուածից: |
| Գործ, գործոյ, գործոց. | Այգեգործ, այգեգործի, այգեգործաց: |
| Զէն, զինու, զինուց. | Սպառազէն, սպառազինի, սպառազինաց: |
| Խրատ, խրատու, խրատուց. | Անխրատ, անխրատի, անխրատից: |
| Կիրք, կրից, կրիւք. | Զինակիր, զինակրի, զինակրաց, զինակրօք: |
| Սիրտ, սրտի, սրտից. | Խստասիրտ, խստասրտի, խստասրտաց: |

## ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

73. ՄԻՋԱԿ ու ԱՆՈՐՈՇ կ'ըսուին քանի մը գոյական ու ածական անուններ, որ որոշ բան մը կամ ինչութիւն մը չեն ցուցըներ, ու հասարակ անուան ու դերանուան մէջ տեղը կը սեպուին: Ասոնցմէ մէկ քանին ալ զատ հոլովում ունի, որ գիտնալու է:

74. Մի. միոյ կամ միոջ, միում, միով, ՚ի միոյ կամ ՚ի միոջէ, զմի. ՄԷԿ:
Երկու, երկուք. երկուց, երկուք, զերկուս. ԵՐԿՈՒ, ԵՐԿՈՒՔ:
Երեք. երից, երիւք, զերիս. ԵՐԵՔ:
Չորք. չորից, չորիւք, զչորս. ՉՈՐՍ:
Հինգ. հնգի, հնգիւ. հինգք, հնգից, հնգիւք. հնգաւ, հնգաց, հնգօք. ՀԻՆԳ:
Վեց. վեցի, վեցիւ. վեցք, վեցից, վեցիւք. ՎԵՑ:

Եօթն՝ . եօթան, եօթեան, եօթին, եօ-
թանք, եօթեանք, եօթունք . կամ
եօթնի, եօթնից . — եօթն ։
Ութ . ութի, ութիւ . ութք, ութից, ու-
թիւք . — ութն ։
Ինն . ըննի, ըննիւ . ինունք կամ իննունք,
ինունց, իննանց, իննամբք, իննուք . կամ
ըննից, ըննիւք . — ինն ։
Տասն . տասին, տասամբ . տասունք, տա-
սանց, տասամբք . կամ տասնից, տասնիւք . — տասն ։
Մետասան, երկոտասան, և այլն . մետա-
սանի, մետասանից . — տասնըմէկ, և այլն ։
Եօթն և տասն, եօթն և տասին . եօթն
և տասունք, եօթն և տասանց, եօթն
և տասնից կամ եօթանց և տասանց . — տասնըեօթն ։
Եօթնուտասն, եօթնուտասին . եօթնու-
տասանք, եօթնուտասանից, եօթնու-
տասնից . — տասնըեօթն ։
Քսան, երեսուն, և այլն . քսանի, քսա-
նից . երեսնի, երեսնից . — քսան, երեսուն, և այլն ։
Քսան և մի, քսան և երկու . քսան և
միոյ, քսան և երկուց . կամ քսանից և
միոյ, քսանից և երկուց . — քսանըմէկ, և այլն ։
Հարիւր, երկու հարիւր կամ երկերիւր,
Երեք հարիւր կամ երեքարիւր, չորեք
հարիւր կամ չորեքարիւր, հինգ հարիւր,
և այլն . հարիւրոյ, հարիւրոց . հարիւ-
րի, հարիւրից . երկու հարիւրոյ կամ եր-
կուց հարիւրոց, երեք հարիւրոյ կամ
երից հարիւրոց, չորեք հարիւրոյ կամ
չորից հարիւրոց . հինգ հարիւրոյ, հինգ

---

1 Հիներուն գրուածքովը եօթն, իօթան (18. ծան.) կամ եօթան . երբեմն ալ եաւթն ։

հարիւրոց է՞ հնգից հարիւրոց, և այլն · — հարուր, երեք-հարուր, և այլն։

կամ Հարիւրք երկու, հարիւրոց երկուց, և այլն · — երեք հարուր, և այլն։

Հարիւր և մի, հարիւր և երկու, հարիւր և տասն կամ հարիւր տասն · հարիւր և միոյ, հարիւր և երկուց, հարիւր և տասանց, հարիւր տասանց · կամ հարիւրոց և երկուց, հարիւրոց և տասանց · — հարուր մը, եւն։

Հազար, երկու հազար, և այլն · հազարի, հազարաւ, հազարաց · հազարիւ, հազարից · երկու հազարի կամ երկուց հազարաց · — հազար, երեք-հազար, և այլն։

կամ Հազարք երկու, հազարաց երկուց, և այլն · — երեք հազար, և այլն։

Հազար և մի, հազար և երկու, հազար և տասն, հազար և եօթն և տասն կամ հազար եօթն և տասն · հազար և միոյ, հազար և երկուց, հազար և տասանց · կամ հազարաց և երկուց, հազարաց և տասանց · — հազար մը, եւն ·

Բիւր, որ Տասն հազար ալ կ՚ըսուի · բիւրու, բիւրուց · բիւրոյ, բիւրոց · բիւրի, բիւրաւ, բիւրիւ · — Բիւր, տասը հազար։

Հարիւր բիւր, հազար հազարք կամ հազարք հազարաց · — մը միլիոն։

Բիւր բիւրք կամ բիւրք բիւրուց · — հարուր միլիոն։

75 · Երկոքեան կամ երկոքին, երեքեան կամ երեքին, չորեքեան կամ չորեքին, և այլն · երկուքն ալ, երկուքը, երեքն ալ, երեքը, չորսն ալ, չորսը, եւն · ասանկ կը հոլովին ·

76. Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Երկոքեան, երկոքին. | երկուքն ալ, երկուքը: |
| Սեռ. | Երկոցուն, երկոցունց. | երկուքին ալ, երկուքին: |
| Տր. | Երկոցուն, երկոցունց, | |
| | յերկոսեան, յերկոսին. | երկուքին ալ, երկուքին: |
| Գործ. | Երկոքումբք, երկոքումբքք. | երկուքովն ալ, երկուքովը: |
| Բաց. | յԵրկոցունց. | երկուքէն ալ, երկուքէն: |
| Հայց. | զԵրկոսեան, զերկոսին. | երկուքն ալ, երկուքը: |

77. Ասանկ կը հոլովին

| | |
|---|---|
| Ամենեքեան, ամենեքին, ամենեցուն. | ամէնքն ալ, ամէնը: |
| Բոլորեքեան, բոլորեքին, բոլորեցուն. | բոլորն ալ, բոլորը: |

78. Բացառականը գոյականի հետ կ'ըսուի եւ Յերկոցուն կողմանց. 'ի ձէնջ երկոցուն. Յայլոցն ամենեցուն. 'ի մէնջ ամենեցուն.

79. Երկաքանչիւր, (երկուքն ալ. կը հոլովի ըստ 21) երկաքանչիւրոյ, երկաքանչիւրում, երկաքանչիւրով, յերկաքանչիւրոյ կամ յերկաքանչիւրմէ, զերկաքանչիւր. — Երկաքանչիւրք, երկաքանչիւրոց կամ երկաքանչիւրց (57), երկաքանչիւրովք, յերկաքանչիւրոց, զերկաքանչիւրս:

80. Եղակի անյոգնական, գոյական ու ածական.

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Զի, զինչ, ինչ. | ինչ բան, ինչ, ինչ որ, որ. |
| Սեռ. | Իր, էր. | ինչ բանի, ինչու. |
| Տր. | Իմ, հիմ, էրում, երում, | |
| | յինչ. | ինչ բանի, ինչու. |
| Գործ. | Իւ. | ինչ բանով, ինչով, որով. |
| Բաց. առ | Իմէ. | ինչ բանէ, ինչէ. |
| Հայց. | Զի, զինչ, ինչ. | ինչ բան, ինչ, ինչ որ, որ: |

81. Նաեւ առանց հարցմունքի ալ կ'ըսուի, հարցմունքով ալ: Տրականը հիմ, էրում, ու բացառականը առ իմէ, ինչո՞ւ, աւելի հարցական

կը բանին [1] ։ Սովորաբար գոյական է․ զինչ, յինչ ածական ալ կը բանին շատ, մէկալ հոլովները խիստ քիչ․ ու իրաց կ'ըսուին աւելի սովորաբար։

82․ Նշակի անյօդնական, գոյական ու ածական․

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ․ | Իմն․ | Իք․ | Ինչ․ | բան մը, էջ մը, մը, մըն, քանի մը․ |
| Սեռ․ | | Իրիք․ | | բանի մը, մը․ |
| Տր․ | Իմեմն․ | Իմիք․ յԻնչ․ | | բանի մը, մը․ |
| Գործ․ | | Իւիք․ | | բանով մը, մը․ |
| Բաց․ | յԻմեմնէ․ | յԻմեքէ․ | | բանէ մը, մը․ |
| Հայց․ | Իմն․ | | Ինչ․ | բան մը, մը։ |

83․ Իք ուղղականը չգործածուիր։ Իմն բնաւ նախդիր չառներ, ոչ զ, ոչ յ․ մինակ ալ չբանիր հայցական, հապա ածականի կամ գոյականի հետ․ Այլ իմն աղաղակել․ Մի իմն շնորհել․ Մեծ իմն անուն փառաց ժառանգել։ — Ինչ կ'առնէ միայն յ նախդիր․ ամենեւին զ չառներ։ — Ածական՝ իրաց կ'ըսուին շատ, անձանց քիչ։

84․ Վերի զինչը աս ինչին հետ ալ կը բանի՝ հարցական ու առանց հարցականի, ու երկուքն ալ մէկտեղ կը հոլովին․

Օ ինչ ինչ, էր իրիք, իմ իմիք, իւ իւիք, ինչ բան, որ
զինչ ինչ, յինչ ինչ․ բան։

85․ Իմն, ինչ ինքիրեննուն կրկնած ալ կը բանին, ու կը հոլովի ասանկ․

Իմն իմն } իրիք իրիք, իմիք իմիք, իւիք   քանի մը բան,
Ինչ ինչ } իւիք, իմն իմն, ինչ ինչ․   քանի մը։

Ըս իմն իմն հայցական ալ կը բանի․ Իմն իմն խոստանան տալ։

86․ Ոչ ինչ, ոչ իրիք, ոչ իմիք, ոչ յիմեքէ, ոչ ինչ, ոչ յինչ․ ոչինչ, հիչ բան մը։ Ասոր նախդրիւ հոլովները

1 Ասոր զ նախդրով բացառականը ըլլալու է զմէ, որպէս թէ զինչ․ որ սովորաբար հարցական կը բանի զմէ, ու կը նշանակէ ինչու համար, ինչ բանի համար։

*չլսուիր ուրկէն, յուրկէն՝, հապա ընտիր տեսար ուրկէն, ուր կէն։*

### 87. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ո, ով. | որն, որն որ, որը. |
| Սեռ. | Ոյր. | որուն, որուն որ. |
| Տրա. | Ում, յո, յով. | որուն, որուն որ. |
| Գործ. | — | — — |
| Բաց. | յՈւմէ, յումմէ. | որմէ, որմէ որ. |
| Հայց. | զՈ, զով. | որն, որն որ, որը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ոյք. | որոնք, որոնք որ. |
| Սեռ. | Ոյց. | որոնց, որոնց որ. |
| Տրա. | Ոյց, յոյս. | որոնց, որոնց որ. |
| Գործ. | — | — — |
| Բաց. | յՈյց. | որոնցմէ, որոնցմէ որ. |
| Հայց. | զՈյս. | որոնք, որոնք որ։ |

88. Գործիականին տեղը կ՚ըսուի ով, որով, որովք։ — Սովորաբար գոյական է. հարցական ու առանց հարցականի ալ շատ կը բանի. ինչպէս,

Ով զայս արարեալ, քեզ բոլորէն նմանի. ով որ ալ ըլլայ, ինչ որ ըլլայ նման։

Ամենայն տուն կազմի՝ յումէ կազմի. ամէն տուն կը շինուի որմէ որ կը շինուի։

Զի զով սիրէ ոք՝ նմին և ողորմի. ով որ կը սիրէ զինք՝ անոր կ՚ողորմի ալ։

Քեզ տեղ ածական ալ կը բանի։

89. Եզակի ուղղականը յոգնակի ալ կը նշանակէ երբեմն. Ո՞վ են ժողովուրդս այս. ո՞վ են սոքա. ո՞վ էաք. ո՞վ էիք. ես և դու ո՞վ իցեմք. ո՞վ և ո՞վ իցեն՝ որ երթայցեն. ո՛ իցեն. ո՛ այնոքիկ իցեն։

90. Նախդրիւ տրականը յո, յով, որը ալ ըսել է. Յո՞վ երթամ. որու կ՚երթամ. Գնացին յո և գնացին. գացին ուր որ գացին նէ.

91. Ոք, ով որ, որն որ, ինչ որ, ինչ, որ, որը. ԾՈՐՈՐԴ հոլովման պէս կը հոլովի,

---

1 Իսկ Ուխնչ, ուխնչի, ուխնչք, ուխնչից, ուրիշ բառ է գոյական ու ածական, ու ըսել է [illegible], [illegible]. որ ըմն ամէն հոլովք ունի ըստ 29, ուստի ուրկէն, յուրկէն ալ կ՚ըլլայ։ Նման է հասարակ գոյական անուանէն ինչ, ընչի, ընչիւ, ինչք ընչից, որ [illegible] ըսել է։

Ո՛ր, որոյ, որում, որով, յորմէ կամ յորոյ, զոր, յոր.
Որք, որոց, որոց, որովք, յորոց, զորս, յորս։

Ասոր ալ առանց հարցմունքի ալ կը բանի՝ հարցմունքով ալ. ցուցական ու ածական։

92. Կրկնուած՝ [illegible] ալ ըսել է. Ինչպէս,

ժողովեցին որ շատ և որ սակաւ. [illegible]

Որ 'ի ներքս որ արտաքս Թօթափեցին. [illegible]

Կատարել զորս 'ի գաղտ զորս 'ի յայտնի. [illegible]

93. Ո՛ր ինչ, որ զինչ, ինչ որ, զինչ որ. [illegible]

Մէջինը միայն կը հոլովի, ու եզակի միայն.

Որոյ իրիք կամ ոյր իրիք, որում իմիք կամ ում իմիք, որով իւիք, յորմէ իմեքէ, որ ինչ, ինչ որ կամ ինչ զոր, զոր ինչ, որ զինչ, յոր ինչ։

Սովորաբար ցուցական է ու առանց հարցմունքի կը բանի. երբեմն ածական կամ հարցական։

## 94. Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Ոմն. | Ոք. | [illegible] |
| Սեռ. | Ուրումն, որումն. | Ուրուք. | [illegible] |
| Տրա. | Ումեմն, յումն. | Ումեք, յոք. | [illegible] |
| Գործ. | Ոմամբ. | — | [illegible] |
| Բաց. | յՈւմեմնէ. | յՈւմեքէ. | [illegible] |
| Հայց. | զՈմն. | զՈք. | [illegible] |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ոմանք, ոք. | [illegible] |
| Սեռ. | Ոմանց. | [illegible] |
| Տրա. | Ոմանց, յոմանս. | [illegible] |
| Գործ. | Ոմամբք. | [illegible] |
| Բաց. | յՈմանց. | [illegible] |
| Հայց. | զՈմանս. | [illegible] |

95. Գոյական է և ածական. մարդու ալ կ'ըսուի, իրաց ալ. Այր ոմն, այր մը. կանայք ոմանք. բերին ուրուք, կ'ըսեն ոմանք:

96. Ոք զատ յոգնական չունենալուն՝ յոգնակի ալ կը բանի տեղ տեղ. Ոք ախտանիք, ոք այլք անօրէնք, գաղտնաբերայք ոք, երկու ոք միաբանք. զերկուս ոք, զչարարս ոք. բազմաց ումեք:

97. Հոլովները կրկնելով ալ կ'ըսուի,
Ուրուք ուրուք, ումեք ումեք, ոմանք ոմանք, ոմանց ոմանց, զոմանս ոմանս. մէկ քանիներ, մէկ քանի:

98. Ոք ովին ու որին հետ ալ կը բանի, ու երկուքն ալ կը հոլովին.
Ո ոք, ով ոք, ոյր ուրուք, ում ումեք, յումէ կամ յումմէ ումեքէ, զո ոք, զով ոք.
Ո ոք կամ ոյք ոմանք, ոյց ոմանց, յոյց ոմանց, զոյս ոմանս.
ով, ով որ, որը, որ:

99. Որ ոք, որոյ ուրուք, որում ումեք, որով ոմամբ, յորմէ ումեքէ, զոր ոք.
Որ ոք, որոց ոմանց, որովք ոմամբք, յորոց ոմանց, զորս ոմանս. որն որ, ով որ:

100. Ոչ ոք, ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ յումեքէ, ոչ զոք, ոչ յոք. հիչ մէկը, մէկը չ. հիչ մէկ. — Ամենևին չըսուիր ոչով ոք, յոչով ոք. բայց ըսած կայ յոչ ումեքէ. — Սովորաբար գոյական է, երբեմն ածական. Ոչ ոք ծառայ:

101. Միմեանց, մէկ մէկու. եզակի չունի և ոչ ուղղական. կը հոլովի ըստ 24.
Միմեանց, 'ի միմեանս, միմեամբք, 'ի միմեանց, զմիմեանս. մէկմէկու, մէկմէկով, և այլն:

102. Իրերաց, իրարու. եզակի չունի և ոչ ուղղական. կը հոլովի ըստ 19 կամ 39.
Իրերաց, յիրեարս կամ յիրեար, յիրար, իրերօք, յիրերաց, զիրեարս կամ զիրեար, զիրար. իրարու, իրարով, իրարմէ, իրար:

103. Մի, մը. ածական է. Բան մի, բան մը. Այր մի,

մարդ մը · առն միոջ կամ միում, մարդու մը · կը հոլովի համ՝
բանքի Մէկին պէս (74) ըստ 31 ·

Մի, միոյ կամ միոջ, միում, միով, ՚ի միոյ կամ ՚ի միոջէ · մը ·

104 · Մի մի, Մէն մի · ամէն մէկը; մէյմէկ · առջինը միայն կը հոլովի երկուքն ալ ·

Մի մի, միոյ միոյ, միում միում, միով միով, ՚ի միոյ միոյ կամ ՚ի միոջէ միոջէ, զմի մի ·

105 · Միւս, մէկալ · կը հոլովի ըստ 31 ·

Միւս, միւսոյ, միւսում, միւսով, ՚ի միւսոյ կամ ՚ի միւսմէ, զմիւս ·

Միւսք (որ քիչ կը բանի), միւսոց, միւսովք, ՚ի միւսոց ·

106 · Այլ, ուրիշ, մէկալ, նոյնպէս կը հոլովի ·

Այլ, այլոյ, այլում, յայլ, այլով, յայլոյ կամ յայլմէ, զայլ ·

Այլք, այլոց, այլոց, յայլս, այլովք, յայլոց, զայլս ·

107 · Քանի, քանի · Այսքանի, այսչափ · կը հոլովին ըստ 43 ·

Քանի, քանւոյ կամ քանոյ, քանեաց · Այսքանի, այսքանւոյ կամ այսքանոյ, այսքանեաց ·

Իսկ Այսքան, Այսչափ, կը հոլովին ըստ 29 · այսքանի, այսքանիւ · այսչափի, այսչափիւ ·

108 · Իւրաքանչիւր, Ամենիւր կամ ամենիւր · ամէն մէկս, ամէն մէկդ, ամէն մէկը · ամէն մէկերնիս, ամէն մէկերնիդ, ամէն մէկերնին · կը հոլովին ըստ 31 ·

Իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ, իւրաքանչիւրում, իւրաքանչիւրով, յիւրաքանչիւրոյ կամ յիւրաքանչիւրմէ, զիւրաքանչիւր ·

Իւրաքանչիւրք, իւրաքանչիւրոց կամ իւրաքանչիւրց (57), իւրաքանչիւրովք, յիւրաքանչիւրոց, զիւրաքանչիւրս · — Ամենիւրոց, ամենիւրց կամ ամենեւրց (27) ·

109 · Բայց Իւրաքանչիւր, ամենիւր, ինչպէս Նչկաքանչիւրն ալ (79), անփոփոխ մնալով ալ սեռականի ու տրականի տեղ ալ կը բանին, եզակի և յոգնակի · — Յոգնակի ալ են ամէն դէմք · Մեք իւրաքանչիւր, դուք իւրաքանչիւր, նոքա իւրաքանչիւր ·

110 . Ամէն եւ Ամեն, Ամենայն, ամէն, ամէնը . կը հոլովին ըստ 29 .

Ամէն, ամենի, ամենի եւ ամենում (34), ամենիւ, յամենէ, զամէն .

Ամէնք, ամենից, ամենիւք, յամենից ։

Ամենայն, ամենայնի, ամենայնի եւ ամենայնում, ամենայնիւ, յամենայնէ, զամենայն .

Ամենայնք, ամենայնից եւ ամենայնց (57), ամենայնիւք, յամենայնից, զամենայնս ։ — Բայց ամէն քիչ կը բանի . յոգնակի ամէնայնք ըսելու տեղն ալ աւելի ամէնքեան կ՚ըսուի (77), երբեմն ալ ամէնայն ։

111 . Իմն, ինչ, ոմն, ոք, առ վերիններուն հետ ալ մէջտեղ կը բանին . Մի իմն, մի ինչ, այլ իմն, այլ ինչ, իւրաքանչիւր ինչ, ամենայն ինչ ։ — Մի ոմն, մի ոք, այլ ոմն, այլ ոք, իւրաքանչիւր ոք, ամենայն ոք ։

Մի, Այլ, սովորաբար իրենք ալ մէջտեղ կը հոլովին . Միոյ իրիք, միով իւիք, զմի ինչ . Այլում իմիք, այլով իւիք . Միոյ ուրումն եւ ուրուք, միում ումեք . Այլով ումամբ, յայլմէ ումեմնէ եւ ումեքէ, զայլ ոք . այլք ոմանք, այլոց ոմանց ։ — Քիչ տեղ միայն եզակին . Այլ իրիք, այլ իւիք . այլ ուրուք, այլ ումեք, յայլ ումեքէ . այլ ոմանք, այլ ոմանց ։

Իսկ Իւրաքանչիւր, ամենայն, սովորաբար չեն հոլովիր . Իւրաքանչիւր իրիք եւ իմիք . ամենայն իրիք եւ իմիք, ամենայն իւիք, յամենայն իմեքէ եւ յամենայնէ իմեքէ, զամենայն ինչ ։ Իւրաքանչիւր ուրուք եւ ումեք, յիւրաքանչիւր ումեքէ . Ամենայն ուրուք եւ ումեք, յամենայն ումեքէ ։ — Չըսուիր ամենայն ամէն . եւ ոչ յոգնակի կը բանի ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԴԵՐԱՆՈՒՆ

112. Դերանունը բառ մըն է որ դէմք մը կամ դէմքերուն համեմատ կարգ մը կը ցուցընէ. ու անունի տեղ կը դրուի չկրկնելու համար։ Որը գոյական է որը ածական։ Անունին պէս կը հոլովի, մէկ քանին ալ յատուկ հոլովում ունին։

### ԷԱԿԱՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

113. ԱՌԱՋԻՆ ԴԷՄՔ

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Ես. | էս. | Մենք. | մէնք. |
| Սեռ. | Իմ. | իմ. | Մեր. | մէր. |
| Տրա. | Ինձ, ինծի. | ինծի. | Մեզ,'ի մեզ. | մեզի. |
| Գործ. | Ինև. | ինծմով. | Մեւք'. | մեզմով. |
| Բաց. | յԻնէն. | ինծմէ. | 'ի Մէնջ. | մեզմէ. |
| Հայց. | զԻս. | էս. | զՄեզ. | մեզ։ |

---

1 Մեք, ձեք կը կարդանք հիմայ ռամկօրէն. բայց շիտակ գրուածքն է Մեւք, Ձեւք, և ոչ Մէօք, Ձէօք։

### 114. ԵՐԿՐՈՐԴ ԴԷՄՔ

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Դու. | դուն. | Դուք. | դուք. |
| Սեռ. | Քո. | քու. | Ձեր. | ձեր. |
| Տր. | Քեզ, 'ի քեզ. | քեզի. | Ձեզ, 'ի ձեզ. | ձեզի. |
| Գործ. | Քեւ. | քեզմով. | Ձեւք. | ձեզմով. |
| Բաց. | 'ի Քէն. | քեզմէ. | 'ի Ձէնջ. | ձեզմէ. |
| Հայց. | զՔեզ. | քեզ. | զՁեզ. | ձեզ: |

### ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ

115. *Ինքն, առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կը հոլովի.*

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքն. | ինք, ինքը. |
| Սեռ. | Ինքեան. | ինքիրեն. |
| Տր. | Ինքեան, յինքն. | ինքիրեն. |
| Գործ. | Ինքեամբ. | ինքիրմով. |
| Բաց. | յԻնքենէ. | ինքիրմէ. |
| Հայց. | զԻնքն. | ինքը, ինքզինք. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքեանք. | իրենք, ինքիրենք. |
| Սեռ. | Ինքեանց. | իրենց. |
| Տր. | Ինքեանց, յինքեանս. | իրենց. |
| Գործ. | Ինքեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յԻնքեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զԻնքեանս. | իրենք, ինքզիրենք: |

116. Ածականի պէս ալ կը բանի. Ինքն տէր. ինքն ինքը տէրը. Ինքն ամուսինն. ինքն ինքը էրիկը. Ինքն մարմինս. ինքն ինքը մարմինս. Թագաւորն ինքն. ինքն ինքը թագաւորը կամ թագաւորն ալ. Տեղին ինքն. ինքն ինքը տեղը:

117. Ասանկ մէկալներուն հետ ալ կ'ըսուի, Ես ինքն, իմ ինքեան, զիս ինքն. Դու ինքն, քեզ ինքեան, զքեզ ինքն. Մեք ինքեանք, մեզ ինքեանց, զմեզ ինքեանս. Դուք ինքեանք, ձեզ ինքեանց, 'ի ձեզ ինքեանս:

118. Երբեմն մինակ ու առջի կամ երկրորդ դէմք կը ցուցնէ բային հետ. Ինքեանք 'ի նմին կացայ եմք. ըսել է մեք ինքեանք։

119. Իւր, նոյնպէս կը հոլովի եզակին տեղ տեղ ու բոլոր յոգնակին։ Եզակի ուղղական ու հայցական չու-նի, անոնց տեղը ինքն կը բանի. բայց նախդրիւ տրական ունի յիւր, որ կը նշանակէ ինչպէս յինքն, իրեն. Յիւր վարել, իրեն տանիլ. Յիւր կերպարանել, իրեն նման-ցընել։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | — | — |
| Սեռ. | Իւր, իւրեան. | իրեն, իր. |
| Տրա. | Իւր, իւրեան, յիւր. | իրեն. |
| Գործ. | Իւրև, իւրեաւ, իւրեամբ. | իրմով. |
| Բաց. | յԻւրմէ. | իրմէ. |
| Հայց. | — | — |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Իւրեանք. | իրենք. |
| Սեռ. | Իւրեանց. | իրենց. |
| Տրա. | Իւրեանց, յիւրեանս. | իրենց. |
| Գործ. | Իւրեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յԻւրեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զԻւրեանս. | իրենք զիրենք։ |

120. Ինքն մէյ տեղ կ'ըսուի իր ինքեան, և այլն։

121. Սա, աս. Դա, ատ. Նա, ան։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նա. | ան. |
| Սեռ. | Նորա. | անոր. |
| Տրա. | Նմա, 'ի նա. | անոր. |
| Գործ. | Նովաւ. | անով. |
| Բաց. | 'ի Նմանէ, 'ի նմանէն. | անկէ. |
| Հայց. | զՆա. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոքա . | անոնք . |
| Սեռ. | Նոցա . | անոնց . |
| Տր. | Նոցա, 'ի նոսա . | անոնց . |
| Գործ. | Նոքօք . | անոնցմով . |
| Բաց. | 'ի Նոցանէ, 'ի նոցանէն . | անոնցմէ . |
| Հայց. | զՆոսա . | անոնք : |

122. Ասանկ կը հոլովին Սա, Դա : Յոգնակին երբեմն կ'ըլլայ Նայք . նայց . Սայք, սայց, 'ի սայց (57) : Կ'ըսուին մարդու ալ իրաց ալ :

123. Իրեն մէյմէկ կ'ըսուի Սա ինքն, դա ինքն, նա ինքն . սորա ինքեան, դոքա ինքեանք, նոցա ինքեանց, զնա ինքն կամ զնա զինքն :

124. Որ, ո . ոչ . յարաբերական դերանուն կ'ըսուի, որ անուն մը կամ դերանուն մը մէջ կը բերէ . Ես որ խօսիմ. դու որ լսես . Նա կամ ծառայ որ գործէ : Հոլովները նոյն է ոչ, ո միջակ անուններուն հետ որ տեսար վերը (87, 91) :

125. Երբոր ոչ, ո կը նշանակեն ով ոչ, ոյն ոչ, ան ոչ, յարաբերական դերանուն չեն, հապա միջակ անուն՝ որ վերը տեսար : Իսկ երբոր նշանակեն միայն ոչ, որ խօսքին մէջի եղած մէկ բանը յարաբերելով ու բան բանի հետ կապելով մը կ'ըլլայ, ան ատենը յարաբերական դերանուն են, ինչպէս օրինակներուդ մէջ տեսար :

## ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

126. Այս, աս . Այդ, ադ . Այն, ան :

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այն . | ան . |
| Սեռ. | Այնր, այնորիկ . | անոր . |
| Տր. | Այնմ, այնմիկ, յայն . | անոր . |
| Գործ. | Այնու, այնուիկ . | անով . |
| Բաց. | յԱյնմանէ . | անկէ . |
| Հայց. | զԱյն . | ան . |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյնք, այնոքիկ. | անոնք. |
| Սեռ. | Նոյնց, այնոցիկ. | անոնց. |
| Տրա. | Նոյնց, այնոցիկ, յայնս, յայնոսիկ. | անոնց. |
| Գործ. | Նոյնոքիւք, այնոքիմբք. | անոնցմով. |
| Բաց. | յՆոյնց, յայնցանէ, յայնոցիկ. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոյնս, զայնոսիկ. | անոնք։ |

127. Ասանկ կը հոլովին Ասոր, Ասդ. միայն ասոնք չեն ըսուիր զայսս, զայդս։ Գործիականը երբեմն կ'ըլլայ այսիւ, այդիւ, այնիւ։ Մէկալ հոլովներն ալ ուրիշ անսովոր կերպով կը գտուին։ Յոգնակին բացառականը մինակ ալ կայ, բայց աւելի գոյականի հետ կը բանի։ — Մարդու ալ կ'ըսուին՝ իրաց ալ, թէ գոյականի հետ և թէ առանձին։

128. Գոյականէ առաջ սովորաբար կարճ վերջահոլովները կը բանին, ու եզակի բացառականի հետ յայնմ ալ կ'ըսուի. Այնր բանի, այնմ բանի, այնու բանիւ, յայնմ բանէ. այնց բանից, յայնց բանից։ Գոյականէ ետև սովորաբար մէկալ հոլովները կը բանին. Բանին այնորիկ, բանին այնմիկ, բանիւն այնուիկ, 'ի բանէն յայնմանէ. բանից այնոցիկ, 'ի բանից յայնցանէ կամ յայնոցիկ։

129. Եզակի ձայնով շատ բան մէկտեղ ալ կը ցուցընեն իբրև Այս ամենայն, այդ ամենայն, այն ամենայն. ինչպէս. Այս են ծնունդք Նոյի. այս են բանք թղթոյն. որոց անուանքն են այս. այս որք ասացանս. քեզ լիցին այդ։ Հինգ նկանակ և երկուս ձկունս, այլ այն զինչ է, կամ բերէք այսր զայն. չարք են այն են. այն որ 'ի ներքս անդ էին. այն որ ընդ նմայն էին։ Ձեռն տեառն արար զայս. Զայդ վկայեմք. Զայն մի ուտիցէք որ որոճէն. զայն ահա 'ի լսելոյ գիտեմք։

130. Երրորդ դէմքի դերանուանց հետ կ'ըսուին, Այս ինքն, այդ ինքն, այն ինքն. Սա այս, դա այդ, նա այն. ու երկուքն ալ կը հոլովին։

131. Սոյն, սա. Դոյն, դա. Նոյն, նա.

## Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյն. | ան, նոյն. |
| Սեռ. | Նորին, նորուն. | անոր. |
| Տրա. | Նմին, 'ի նոյն. | անոր. |
| Գործ. | Նովին, նովիմբ. | անով. |
| Բաց. | — | — |
| Հայց. | զՆոյն. | ան. |

## Յոգնական

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյնք, նոքին. | անոնք. |
| Սեռ. | Նոցին, նոցուն, նոցունց. | անոնց. |
| Տրա. | Նոցին, նոցուն, նոցունց, 'ի նոյնս, 'ի նոսին. | անոնց. |
| Գործ. | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք. | անոնցմով. |
| Բաց. | 'ի Նոցունց. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոյնս, զնոսին. | անոնք ։ |

132. Այսպէս կը հոլովին Սոյն, Դոյն ։ Եզակի բացառականին տեղը 'ի սմանէ, 'ի դմանէ, 'ի նմանէ (121) կ'ըսուի սովորաբար մինակ. իսկ գոյականի հետ կ'ըսուի Ի սոյն օրէ կամ 'ի սմին տեղւոջէ, 'ի նմին բերանոյ. ինչպէս յոգնակին ալ՝ 'ի նոցին գաւառաց, 'ի նոցուն գաւառացն ։ — Քանի մը անսովոր հոլովներն ալ կը գտուին ։

133. Ինքն, ալ, այս սոցանց հետ մէկտեղ շատ կը բանին. Սոյն ինքն, դոյն ինքն, նոյն ինքն, նոյն ինքեան կամ նորին ինքեան, նմին ինքեան, զնոյն ինքն կամ զնոյն զինքն. նոյն ինքեանք կամ նոքին ինքեանք, զնոյն ինքեանս կամ զնոսին ինքեանս ։

Սոյն սա, դոյն դա, նոյն նա, նոյն սա. նախադրիւ կը հոլովին ։

Սոյն այս, դոյն այդ, նոյն այն, նոյն այս. երկուքն ալ կը հոլովին սովորաբար. երբեմն ալ մէկը միայն. սոյն այսր, սոյն այսմ ։

Երբեմն Սոյն ինքն այս կամ սա, դոյն ինքն այդ կամ դա, նոյն ինքն այն կամ նա ալ կ'ըսուին ։

134. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա, դերանուանական ածականներ են, որոնցմէ միայն Քո զատ կերպ հոլովում մը ունի ։

## 135. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քո. | քուկինդ. |
| Սեռ. | Քոյ, քում. | քուկինիդ. |
| Տրա. | Քոյ, քում, 'ի քո. | քուկինիդ. |
| Գործ. | Քով. | քուկինովդ. |
| Բաց. | 'ի Քոյ, 'ի քումմէ. | քուկինէդ. |
| Հայց. | զՔո. | քուկինդ. |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյք. | քուկիններդ. |
| Սեռ. | Քոյոց. | քուկիններուդ. |
| Տրա. | Քոյոց, 'ի քոյս. | քուկիններուդ. |
| Գործ. | Քոյովք. | քուկիններովդ. |
| Բաց. | 'ի Քոյոց. | քուկիններէդ. |
| Հայց. | զՔոյս. | քուկիններդ։ |

136. Ասոր վերջահոլովները սովորաբար գոյականի հետ կըբանին. Հրամանի քոյ եւ քում, քուկին հրամանէդ. ձեռամբ քով, քուկին ձեռքովդ. 'ի բանից քոց, քուկին խօսքերէդ։

137. Մեկակաները չորրորդ հոլովման պէս կը հոլովին.

Իմ. իմին. իմոյ, իմում, իմով, յիմոյ եւ յիմմէ. իմք, իմոց, իմովք։

Քո. քուկին. քոյոյ, քոյում, քոյով, 'ի քոյոյ եւ 'ի քումմէ. քոյք, քոյոց, քոյովք։

Մեր. մերին. մերոյ, մերում, մերով, 'ի մերոյ եւ 'ի մերմէ. մերք, մերոց, մերովք։

Ձեր. ձերին. ձերոյ, ձերում, ձերով, 'ի ձերոյ եւ 'ի ձերմէ. ձերք, ձերոց, ձերովք։

Իւր. իրեն. իւրոյ, իւրում, իւրով, յիւրոյ եւ յիւրմէ. իւրք, իւրոց, իւրովք։

Սորա. ասոր. սորայոյ, սորայում, սորայով, 'ի սորայոյ. սորայք, սորայոց եւ սորայց։

Սոցա. ասոնց. սոցայոյ, սոցայում, սոցայով, 'ի սոցայոյ. սոցայք, սոցայոց եւ սոցայց։

Դորա. ատոր. դորայոյ, դորայում, դորայով, 'ի դորայոյ. դորայք, դորայոց եւ դորայց։

Դոցա. ատոնց. դոցայոյ, դոցայում, դոցայով, 'ի դոցայոյ. դոցայք, դոցայոց եւ դոցայց։

Նորա. անոր. նորայոյ, նորայում, նորայով, 'ի նորայոյ. նորայք, նորայոց եւ նորայից, նորայց։

Նոցա. անոնց. նոցայոյ, նոցայում, նոցայով, 'ի նոցայոյ.

նոցայք, նոցայոց կամ նոցայից, նոցայց, նոցայովք կամ նոցայիւք, 'ի նոցայոց կամ 'ի նոցայց, զնոցայս ։

138 · Ասանկ կը հոլովին ասոնցմէ ՅՆ մասնիկով շինուածներն ալ · որ են ասոնք ·

Իմայն · իմին · իմայոյ կամ իմայնոյ[1], իմայով կամ իմայնով · իմայինք, իմայոց կամ իմայնոց, իմայովք կմ իմայնովք, իմայիւք ։

Մերայն · մերին · մերայոյ կամ մերայնոյ, մերայով կամ մերայնով · մերայինք ։

Ձերայն · ձերին · ձերայոյ կամ ձերայնոյ, ձերայով կամ ձերայնով · ձերայինք ։

Իւրայն · իրեն · իւրայոյ կամ իւրայնոյ, իւրայով կամ իւրայնով · իւրայինք ։

Իւրեանցայն · իրենց · իւրեանցայոյ կամ իւրեանցայնոյ · իւրեանցայինք ։

139 · Բայց իմոյն, իմովին · քոյն, քովին · մերոյն, մերովին · ձերոյն, ձերովին · իւրոյն, իւրովին, վերջահոլով չունին, նախդրիւ միայն կը բանին եզակի ու յոգնակի (14) ։

140 · Երեք պարզ դերանուններուն արմատ տառերը ս, դ, ն, դիմորոշ յօդ կ'ըսուին, որ շատ հեղ բառերու ծայրը փակչելով անոնց ուժը ունին · ինչպէս,

Տէրս՝ ըսել է ես տէրս, իմ տէրս, այս տէր կամ սա՝ տէրս ։

Տէրդ՝ ըսել է դու տէրդ, քո տէրդ, այդ տէր կամ դա՝ տէրդ ։

Տէրն՝ ըսել է ինքն տէրն, իւր տէրն, այն տէր կամ նա՝ տէրն · տէրը ։

Իմս, իմդ, իմն, իմինս, իմինդ, իմինը, կամ աս, ատ, ան որ իմս է ։

Քոյս, մերդ, ձերն, իւրն, աս որ քուկդ է, ատ որ մերն է, ան որ ձերն է, իրն է, իրենը ։

1 Աւելի առանց նուն կը բանի լաւ գրոց մէջ, իմայոյ քան իմայնոյ, և այլն · ինչպէս երբեմն ուրիշ բառերն ալ կ'ըլլան · Մեղացայն, մեղացայոյ, փոխանակ ըսելու մեղացայնոյ, ինչպէս երկնայն, երկնայնոյ ։

Սորայս, դորայդ, նորայն, աս որ ասորն է, ադ որ ատորն է, ան որ անորն է, անորը։

Սոցայս, դոցայդ, նոցայն, աս որ ասոնցն է, ադ որ ատոնցն է, ան որ անոնցն է, անոնցը։

141. Ինչպէս տեսար՝ ս վերջացած բառերը յետ կ'առնեն յօդը. որպէս. ասանկ գիտցիր ուրիշ ամէն բառի ալ. Շաղխտայս, Նժմեայն, սայս, դայդ, նայն, 'ի նըմայն, 'ի նոսայն։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՆԱԽԴԻՐ

142. Նախդիրը՝ անուան ու դերանուան մէկ կտորն է, որ միայն անոնց հետ կը բանի՝ անոնց հոլովները շինելու և ուրիշ այլ և այլ մտքեր տալու։

143. Ուրեմն նախդիր են զ, 'ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որ բառին ու անոր հոլովներուն առջևը դրուելով՝ տեսակ տեսակ նշանակութիւն կուտան, ինչպէս տեսանք որ ըրին զ և 'ի կամ յ նախդիրները։ Հիմայ տեսնենք օրինակի համար միացածներուն մէկ քանինին՝ գլխաւորները։

### 144. Ց.

| | |
|---|---|
| Ց քարի, ցգետնի (զարկանել). | Քարի, գետնի (զարնել)։ |
| Ց ահի զամօթի (հարկանել). | Ահի ամօթի մէջ (ինկնալ)։ |
| Ց տամբ, ցինն. | Տանը ըրա տէրն, ինձ ըրա տէ- կամ ինձ հրա։ |
| Ց գլխով, ցմինչև ...։ | Գլխուն վրայ, ... օրուան ...։ |
| Ց բանիւ, ցօրինօք, ցնո- վաւ (անցանել). | Խօսքէն անցնիլ, օրէնքը կոտ- րել, ան անցնիլ։ |
| Ց խելք, ցնովաւ (ծիծա- ղել). | Ուանէ մը վրայ, անոր վրայ (խնդալ)։ |
| Ց աստուծոյ (խօսել, գո- հանալ). | Աստուծոյ վրայ (խօսել), Աս- տուծոյ (շնորհակալ ըլլալ)։ |
| Ց ձեռամբ, ցլեզուէ (ու- նել). | Ձեռքէն, լեզուէն (բռնել)։ |

| | |
|---|---|
| Օ ծառոյն (կախել)· | Ծառուէն կամ ծառէն վար (կախել)։ |
| Օ ջրոյ, զումբէ (գալ)· | Ջուրի համար, մէկու մը համար (գալ)։ |
| Օ այս օրինակ (գրել, խօսել)· | Այս ձևով, այս կերպով (գրել, խօսել)։ |
| Օ տիւ և գիշեր (աշխատ լինել)· | Գիշերը ու ցորեկը, գիշեր ցորեկ (աշխատել)։ |

### 145 · Ի, Յ ·

| | |
|---|---|
| Ի սերման, 'ի տան, յաղբեր· | Սերմանի մէջ, տան մէջ, աղբիւրի մէջ։ |
| Յայրի, 'ի սրտի, 'ի ծովու· | Քարայրի մէջ, սրտի մէջ, ծովու մէջ։ |
| Յայգի, 'ի տաճարի, յերկրի· | Այգիի մէջ, տաճարի մէջ, երկրի մէջ կամ վրան։ |
| Յանձին իւրում, 'ի լերին, 'ի հօր իմում. | Անձ իր մէջ կամ վրան, լեռան վրան, հօրս մէջը կամ վրան։ |
| Ի թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի'· | Թուղթի մէջ, ծոցի մէջ, բերնի մէջ։ |
| Ի մարդում, 'ի սրբում, յառաջնում. | Մարդուն մէջ, սուրբին մէջ, առջինին մէջ։ |
| Ի համոյ քում, 'ի Ճշմարտի որդւոյ նորա· | Համով մէջ կամ վրան, անոր ճշմարիտ որդւոյն մէջ։ |
| Ի տեղւոջ, 'ի տարւոջ, 'ի բարւոջ, յոգւոջ· | Տեղի մէջ, տարուան մէջ, աղէկի մէջ, հոգիին մէջ։ |
| Յիս, 'ի քեզ, 'ի մեզ, 'ի ձեզ, 'ի նմա, յայնմ. | Իմ, քու, մեր, ձեր, անոր մէջը կամ վրան։ |

---

1 Ինչպէս տեսար 'ի 69 որ չորրորդ հոլովման բառերը երբեմն երրորդին պէս ալ կը հոլովին, գիտցիր որ երբոր վերջահոլով տրականին վրայ 'ի, չ պիտի առնեն նէ՝ ստորադասար երրորդին պէս կ'ըլլայ տրականնին, ինչպէս կը տեսնես ի թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի, որպէս գիրաբառականին որոշուի։ Բայց ամէն բառի ալ չըլլար. 'ի մարդոյ չասուիր։

| | |
|---|---|
| Յերկոցունց ձեռացն (աջա-ղակ). | Երկու ձեռքէն ալ (աջող). |
| Ի ցայց (շրջել), 'ի բա-նից (պատմել), յանձնէ (փոքր). | Պտըտըղնելով (ծուռ տալ), Խօսքով (պատմել), Մարմնով (պզտիկ). |
| Յաջմէ, 'ի ձախմէ, 'ի հիւ-սիսոյ. | Աջ դէն, ձախ դէն, հիւսիսէ դէն. |
| Յայգուէ, 'ի տուէ. | Առտուանց, ցորեկը. |
| Յամէ եւս. | Տարիէ մը ետքը, տարիէ մը. |
| Ի տուն, 'ի քաղաքս (դառ-նալ). | Տուն, քաղաքները (դառնալ). |
| Ի մարդն, 'ի ծով խոր, յո-գի խոր. | Մարդուն մէջ, ծովին մէջ, հո-գիին մէջ. |
| Ի տուն, յայր, 'ի սիրտ, 'ի տաճար, յանձն իւր. | Տան մէջ, քարայրի մէջ, սրտի մէջ, տաճարի մէջ, ինք իր մէջ կամ ներան. |
| Ի տունս, յայրս, 'ի սիրտս, 'ի տաճարս, յանձինս. | Տներուն մէջ, քարայրներուն մէջ, սրտերուն մէջ, տաճարներուն մէջ, իրենց մէջ. |
| Ի խրատ, 'ի փրկութիւն. | Խրատի համար կամ տեղ, փըր-կութեան համար. |
| Ի ձայն մեծ (աղաղակել). | Մեծ ձայնով (պոռալ). |
| Ի սուր (կոտորել). | Սրով (ջարդել). |

146. Յ նախդիրը երբեմն բաղաձայնով սկսող բառի ալ կը դրուի, որն որ ըթով կ'ըսուի նէ. ինչպէս, յսկիզբն, յշտեմարանս. որ կը կարդացուի յըսկիզբն, յըշտեմարանս.

147. Ց

| | |
|---|---|
| Ցարքայ, ցծերս, ցիս (ա-սել). | Արքային, ծերերուն, ինծի (ը-սել). |
| Ցայգ վայր, ցերեկոյ. | Ինչուան աս տեղ, ինչուան իրիկուան. |

| | |
|---|---|
| Ցաւուրս ցայսոսիկ · | Ինչուան ան օրերը ։ |
| Ցյագ (ուտել), յագե- նալ · | Կշտանալու չափ (ուտել)՝ խմե- լու գինովնալու չափ ։ |

## 148 · ԸՍՏ, ԸՍՏԻ

| | |
|---|---|
| Ըստ ահին, ըստ ամօթոյ · | Վախին համար կամ վախէն, ամօթի համար ։ |
| Ըստ արքայի, ըստ դատաւորին · | Արքային քովը, դատաւորին քովը կամ առջին ։ |
| Ըստ ժամանն, ըստ Նոյի · | Ժամանը քով կամ մօտ, Նոյին ատենը ։ |
| Ըստ նովաւ, ըստ ցորենոյ · | Անոր քով, ցորենին քով, այս ինքն՝ անոր կից ցորենին նայե- լով, բաղդատելով։ |
| Ըստ ճանապարհաւն · | Ճամբուն վրայ կամ մէջը ։ |
| Ըստ բարոյից · | Բարոյքը համար ։ |
| Ըստ երկիւղի, ըստ հարկի · | Վախի համար կամ վախէն, հարկի համար ։ |
| Ըստ առակի · | Խոստովանութեան համար ։ |
| Ըստ 'ի մարդկանէ, ըստ 'ի Աստուծոյ · | Մարդիկներէ, Աստուծմէ ։ |
| Ըստ 'ի վկայութենէ, ըստ 'ի չգոյէ · | Վկայութեան համար, չըլլա- լուն համար ։ |
| Ըստ արքայ, ըստ ոք (եր- թալ) · | Արքային, մէկու մը (երթալ) ։ |
| Ըստ իս, ըստ մեզ (գալ) · | Ինծի, մեզի, դէպ ինծի՝ մեզի (գալ) ։ |
| Ըստ սէր ընչից, ըստ 'ի խը- րատ · | Ստակին սիրուն համար, խրատի համար ։ |
| Ըստ օր, ըստ այր · | Ամէն մէկ օրուան, ամէն մէկ մար- դու կամ մարդ գլուխ ։ |
| Ըստ դուռն (հարկանել, կո- խել) · | Դռնէ դուռ (նետել, կոխել) ։ |

| | |
|---|---|
| *Որպէս լոյս առ խաւար.* | Ինչպէս լոյսը մթութեան հետ, մթութեան բաղդատելով։ |
| *Ըստ յարմարման, առ լաւս (ա-նել).* | Աղէկ տեղ, լաւ տեղ (դնել)։ |

## 149. ԸՆԴ.

| | |
|---|---|
| *Ընդ իմ և ընդ քո.* | Իմ ու քու տեղը, ինծի ու քե-զի համար։ |
| *Ընդ ամենայն զաւառին քանի (համարս տալ).* | Ամէն գաւառի համար (հա-մար տալ)։ |
| *Այն ընդ այնմ, սէր ընդ սիրոյ.* | Անոր տեղ այն, սիրոյ դէմ սէր։ |
| *Ընդ ում, ընդ նմա, ընդ մարդկան.* | Որու հետ, անոր հետ, մարդ-կանց հետ։ |
| *Ընդ զնա (առնել), ընդ բա-նին (խօսել), ընդ նմա (նախանձել).* | Զար (ընել), ան խօսքին կամ ան խօսքին վրայ (խօսիլ), անոր (նախանձիլ)։ |
| *Ընդ տնկոյն (նստել), ընդ թուով (մտանել), ընդ կարգաւ (նուաճիլ).* | Ծառին տակ (նստիլ), համ-րանքի տակ (մտնել), կարգե-րու տակ (իյնալ)։ |
| *Ընդ ծառով, ընդ հողով.* | Ծառի տակ, հողի տակ։ |
| *Ընդ իմն (կան).* | Իմ հետս (են, կան)։ |
| *Ընդ աջմէ, ընդ ձախմէ.* | Աջ դին, ձախ դին։ |
| *Ընդ երկիւղէն, ընդ կո-րստենէն.* | Վախէն, վախին համար, կորս-տին համար։ |
| *Ընդ կողմանէ քումմէ.* | Քու դիէդ։ |
| *Ընդ արքայ, ընդ մարդ (նայել).* | Արքային, մարդու (նայիլ)։ |
| *Ընդ իս, ընդ քեզ.* | Ինծի, քեզի, կամ ինձ՝ քու հետ։ |
| *Ընդ հրեշտակս, ընդ նոսա.* | Հրեշտակներու հետ, անոնց հետ։ |
| *Ընդ դուռն, ընդ բերան (անցանել, մտանել).* | Դռնէն, բերնէն ներս (անցնիլ, մտնել)։ |
| *Ընդ ճանապարհ (գնալ).* | Ճամբայ մը (երթալ)։ |

| | |
|---|---|
| *Ընդ քաղաքս, ընդ երկայնութեն գաւառին (շրջել).* | Քաղաքները (գաւառը), պտըտին երկայնքէն (ման գալ)։ |
| *Ընդ մէջ (կարել).* | Մէջքէն կամ մէջտեղայէն (կարել)։ |
| *Ընդ երկինս և ընդ երկիր.* | Երկնքի ու երկրի մէջ տեղը։ |
| *Ընդ իս և ընդ քեզ.* | Իմ ու քու մէջը։ |
| *Ընդ բազումս և ընդ սակաւս.* | Շատին ու քիչին մէջ։ |
| *Ընդ ամս տասն.* | Տասը տարուան մէջ։ |
| *Ընդ ամենն, ընդ ամենայն.* | Ամէնը մէյտեղ, ամէնը մէկէն առնելով։ |
| *Ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի.* | Էրիկ մարդ՝ կնիկ մարդ ու տղայ մէյտեղ առնելով։ |
| *Ընդ արևելս, ընդ երեկս.* | Արեւելքի դին, դէպ՚ի արեւելք, իրիկուան դէմ։ |
| *Ընդ խաղ, ընդ քէն.* | Խաղի (շախայի) համար, քէնի համար, քէնով։ |
| *Ընդ մի բերան (ասել, գովել).* | Մէկ բերան, մէկ բերնով (ըսել, գովել)։ |
| *Ընդ երևումն, ընդ անցանելն.* | Երեւնալուն պէս, անցնելուն պէս։ |

## 150. ԸՍՏ

| | |
|---|---|
| *Ըստ բանի քում.* | Քու խօսքիդ պէս, քու խօսքիդ նայելով։ |
| *Ըստ հրամանին, ըստ գործոց.* | Հրամանին պէս՝ նման, գործքին պէս, համեմատ։ |
| *Ըստ ինքեան.* | Ինք իրեն, ինք իրմէ, ինքիրմով։ |
| *Ըստ անձին (սիրել, բառնալ).* | Իրեն պէս, իրեն չափ (սիրել)։ Իր վրան (վերցընել)։ |
| *Ըստ յանցանաց, ըստ նախանձու.* | Յանցանքին համար, նախանձի համար։ |
| *Ըստ ճանապարհին.* | Ճամբուն վրայ։ |
| *Ըստ նմանէ, ըստ նոցանէ.* | Անոր ետեւէն, անոնց ետեւէն։ |

| | |
|---|---|
| *Մի ընդ միոջէ, այր ընդ առնէ.* | Մէկմէկու ետեւէ, մարդ մարդու ետեւէ։ |
| *Օր ընդ օրէ, ամ ընդ ամէ.* | Օրէ օր, տարուէ տարի։ |
| *Ընդ հիւսիսոյ.* | Հիւսիսի դին, դէպ 'ի հիւսիս, |
| *Ընդ գործս, ընդ միտս, ընդ պէտս.* | Գործերին վրա, մտքին յարմար, պէտքին չափ կամ համեմատ։ |
| *Ընդ կազդուրել մանկանց.* | Տղոց կրնալուն չափ։ |
| *Ընդ վարել հալածչաց.* | Հալածողներուն քշելուն չափ։ |
| *Ընդ աճել, ընդ պակասել.* | Աճելուն չափ, պակսելուն չափ։ |
| *Ընդ գլուխ, ընդ բերան, ընդ երդ.* | Մարդ գլուխ, տուն գլուխ։ |
| *Ընդ չափ, ընդ քաղաքն, ընդ դուռն, ընդ միտս (անցանել, ելանել).* | Չափէ դուրս, քաղքէն դուրս, դռնէն դուրս, մտքէ դուրս (անցնիլ, ելլել)։ |
| *Ընդ օրէնս, ընդ երդումն (անցանել).* | Օրէնքէ, երդումէ դուրս (ելլել)։ |

151. *Ընդ նախդիրներն ուրիշ հոլովներ ալ կ'առնեն, և ուրիշ մտքեր ալ կուտան, որ բառգրքէն սորվելու է։*

152. *Կան շատ* հոլովական *բառեր ալ՝ որ հոլովով մը կը բանին, ու բառին մէկ միտք մը կուտան. որը առաջ միայն՝ որ* նախադրութեան *ալ կ'ըսուին, որը ետքը, որն ալ առաջ ու ետքը. ինչպէս,*

153. ԱՌԱՋ

| | |
|---|---|
| *Իբրև կամ որպէս զմարդ, մարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ.* | Ինչպէս մարդ, մարդու, մարդով, մարդէ։ |
| *Առն զմարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ.* | Մարդէ ետեւ կամ վեր, առն մարդու, առն մարդով, առն մարդէ։ |
| *Առն զհատն մանանխոյ,* | Մանանեխի հատի չափ կամ դէս։ |
| *Մինչ 'ի գետին, մինչև յերկինս.* | Մինչև գետին, մինչև երկինք։ |

| | |
|---|---|
| Յետ մահու, յետ այսորիկ. | Մահուանէ ետքը, ասկէ ետքը: |
| Առանց խմ, առանց մեղաց. | Առանց խղճի, առանց մեղքի: |
| Բաց ՚ի քէն, բաց ՚ի սոցանէ. | Քեզմէ զատ, ասոնցմէ զատ: |

154. ԵՏՔԸ

| | |
|---|---|
| Ի սկզբանէ հետէ, յԱդամայ հետէ. | Առջևանց ՚ի վեր, Ադամէն ՚ի վեր: |
| Միջօրէք շատ, մահու շատ. | Մնալով մէջը, մնալով ՚ի մահ կամ մեռնելու շատ: |
| Սգաւոր շատ, ձեռք շատ. | Հոգիին շատ, ձեռքի շատ: |
| Ի կլենն կողմն, ՚ի թիկունս կոյս. | Դէմ ՚ի կողմը, ետև ՚ի կռնակը, ետևի դին: |

155. ԱՌԱՋ ՈՒ ԵՏՔԸ

| | |
|---|---|
| Վասն սիրոյ, օրինակի համար. | Սիրոյ համար, օրինակի համար: |
| Առաջս, ՚ի առաջս ձեր, ՚ի ձեր առաջս. | Ձեզի համար, ձեր պատճառաւ: |
| Հանդերձ մայրն, ամուսն հանդերձ. | Մօրը հետ միատեղ, ամուսինն ալ միատեղ: |
| Հանդերձ ամենայնիւ մտօք և ոգւով. | Յաւելեալ եկամուտով ալ աղբիւրով: |
| Առանց աչաց, խմ առանձին. | Առանց աչքի, ինձ առանձին: |
| Ի վերայ երկրի. | Գետնի կամ երկրի վրայ: |
| Ի ճշմարտութեան վերայ. | Ճշմարտութեան վրայ: |
| Յեր վերայ, յոր վերայ. | Ինչ բանի վրայ, որուն վրայ: |
| Ի վերայ բազմաց. | Շատերու վրայ, շատերու համար: |
| Զկնի մեր, չարին զկնի. | Մեր ետևէն, չարին ետևէն: |
| Զհետ նոցա, որոյ զհետ. | Անոր ետևէն, որուն ետևէն: |
| Ընթեր խաչին, որոյ ընթեր. | Խաչին քով, որուն քով: |
| Առ ընթեր սորին, առ որ ընթեր. | Ասոր քովը, որուն քովն որ: |
| Քո դէմ, գետոյ դէմ. | Քեզի դէմ, գետի դէմ: |

| | |
|---|---|
| Պէտ գանձուց Տրդատայ. | Տրդատին պէտ : |
| Դէմ ձեզ, հանդէպ տանն, իմ հանդէպ. | Դէմ 'ի ձեզ, տանը դիմացը, իմ դիմացս : |
| Յանդիման դրախտին, ինձ. | Դրախտին դիմացը, իմ դիմացս : |
| Յանդիման ձեր, ձեզ. | Ձեր դիմացը : |
| Արտաքոյ քաղաքին. | Քաղքէն դուրս : |
| Առաւօտուց կանոնացն արտաքոյ. | Առաւօտու ժամէն դուրս, առանց Առաւօտու ժամէն : |
| Յետոյ դրանն. | Դռանն ետին : |
| Երկոտասան աւուրբք յետոյ. | Տասներկու օր ետքը : |
| Ամաւ յառաջ, յառաջ երկու աւուրբք. | Տարիով կամ տարի մը առաջ, երկու օր առաջ : |
| Շուրջ զքաղաքաւն, զգետովն. | Քաղքին' գետին չորս դին : |
| Զօրահին շուրջ, զմեօք շուրջ. | Արահին' մեր չորս դին : |
| Շուրջ ծովուն, սեղանոյն շուրջ. | Ծովին' սեղանին' չորս դին : |
| Ներքոյ, 'ի ներքոյ իմ, քո, երկնից, կաթսային. նորա 'ի ներքոյ. | Իմ' քու' երկնքին' կաթսային տակը, անոր տակը : |
| Ներքոյ վարագուրին. | Վարագուրին տակը, ետին : |
| Ի ձեռն Մովսիսի, 'ի ձեռն հրեշտակաց (խօսել, տալ). | Մովսէսով, հրեշտակներով (խօսիլ, տալ) : |
| Ի ձեռն գաւազանի, 'ի ձեռն հաւատոց. | Գաւազանով, հաւատքով : |

156. Ասոնք ուրիշ կերպ կերպ մասեր ալ կուտան, և ուրիշ շատ ասանկ հոլովառու բառեր ալ կան, որ կարդալով ու բառգրքէ սորվելու է :

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԲԱՅ

157. Բայը բառ մըն է՝ որ կը նշանակէ ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ. ինչպէս, Ես եմ կամ լինիմ, ես եմ կամ կ'ըլլամ. գնամ, կ'երթամ. սիրեմ, կը սիրեմ. սիրիմ, կը սիրուիմ. քաղցնում, կ'անօթենամ.

158. Բային ալ նշանակութիւնը՝ դերանուան իրեք դէմքովը կ'ըլլայ, ես, դու, ինքն կամ նա. ուստի ալ իրեք դէմքը ունի բայը, ու ասոնց պէս երկու թիւ՝ եզակի ու յոգնակի. ինչպէս, ես եմ, դու ես, նա է. մեք եմք, դուք էք, նոքա են.

159. Եւ որովհետեւ բան մը ժամանակի մէջ կ'ըլլայ ու կ'ըլլուի, ու եղանակով մը, բային ալ իրեք ժամանակ ունի. — Ներկայ, որ հիմայ է. ինչպէս, սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ կոր. — Անցեալ, որ անցած բանի վրայ կը խօսի. որ եթէ չլմնցած է նէ՝ անկատար կ'ըսուի. ինչպէս, սիրէի, կը սիրէի, կը սիրէի կոր. լմնցած է նէ՝ կատարեալ կ'ըսուի. ինչպէս, սիրեցի, սիրեցի. — Ապառնի, որ դեռ ըլլալու է. ինչպէս, սիրեցից, սիրեմ, պիտի սիրեմ.

160. Եղանակն ալ իրեք կերպ է. — Սահմանական, որ բանը կը զրուցէ միայն. ինչպէս, գնամ, կ'երթամ, կ'երթամ կոր. — Հրամայական, որ կը հրամայէ կամ կ'արգելէ. ինչպէս, գնա, մի գնար, գնա, մ'երթար. — Ստորադասական, որ պայմանով մը ուրիշ եղանակի հետ կախուած կը յայտնէ բանը. ինչպէս, (զի, թէ) գնասցեմ; (որ, թէ որ) երթամ, երթամ (նէ).

161. Բայը ալ ամէն բանը կը ցուցնէ իր փոփոխմունքներովը, որ խոնարհում կ'ըսուին.

162. Կան երեք դերբայ ալ, այս ինքն բայի տեղ գրուածներ։

Անորոշ դերբայ, որ ինքնիրեն դէմք, ժամանակ կամ եղանակ չյայտներ, հապա միայն ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ մը կը ցուցնէ, ու բայի տեղ կը գրուի՝ ամէն ժամանակի ու եղանակի ու դէմքի յարմարուելով. ինչպէս, լինել, ըլլալ. գնալ, երթալ. սիրել, սիրել. սիրիլ, սիրուիլ. քաղցնուլ, անօթենալ։

Անցեալ դերբայ, որ եղած կամ ըրած անցածը կը ցուցնէ. ինչպէս, լեալ, եղած. գնացեալ, գացած. սիրեցեալ, սիրած կամ սիրուած։

Ապառնի դերբայ, որ ըլլալիքը կամ ընելիքը կը ցուցնէ. ինչպէս, լինելոց, ըլլալու. գնալոց, երթալու. սիրելոց, սիրելու կամ սիրուելու, որ պիտի սիրէ կամ պիտի սիրուի։

163. Նշանակութեան զինէն՝ չորս տեսակ բայ կայ.
Էական, որ ըլլալ կը նշանակէ. Ես եմ, լինիմ, ես եմ, կ'ըլլամ։
Ներգործական, որ ուրիշին բան մը ընել կը նշանակէ. Սիրեմ, կը սիրեմ։
Կրաւորական, որ ուրիշէ ըլլուիլ կը նշանակէ. Սիրիմ, կը սիրուիմ։
Աս երեք տեսակը զատ զատ խոնարհում ունի։

164. Չորրորդ տեսակ է Չէզոք բայերը, որ ընել մը ու ըլլալ մը ինքնիրեն միայն կը նշանակէն, առանց ուրիշին բան մը ընելու կամ ուրիշէ մը ըլլալու։ Դառնամ, կը դառնամ. ամաչեմ, կ'ամչնամ։ Ասոնք ներգործականներու կամ կրաւորականներու պէս կը խոնարհին, ուստի կ'ըսուին ներգործաձեւ կամ կրաւորաձեւ չէզոք։

165. Ամէն ներգործական ունի իր կրաւորականը. բայց կան բայեր ալ, որ մէկ ձայնով ընել ալ ըլլուիլ ալ կը նշանակէն, ներգործական են ու կրաւորական, ու անոր համար կ'ըսուին Հասարակ. ինչպէս, Ծնանիմ, կը ծնանիմ որդին ու կը ծնիմ մօրմէն. ընթեռնում, կը կար-

դամ ու կը կարդացուիմ։ Ասոնք ալ զատ խոնարհում չեն ըներ, կրաւորականներու պէս կը խոնարհին։

166. Բայց շատ ներգործական, կրաւորական ու հասարակ բայեր կան, որ չէզոք ալ կը բանին. ինչպէս, Լամ, լսեմ. — Կանգնիմ, շարժիմ. — Համարիմ, սկսանիմ։

167. Բայերուն խոնարհմունքը չորս կանոնաւոր լծորդութեան կը բաժնուի, բոլոր բայերուն չորս կերպ վերջին պէս, որ ձայնաւոր տառերուն կարգովը ասոնք են, ամ, եմ, իմ, ում. Աղամ, կ'աղամ. Սիրեմ, կը սիրեմ. Սիրիմ. կը սիրուիմ. Զենում, կը մորթեմ։ Ամէն տեսակ բայերէն կը գտնուի աս վերջերուն, միայն կրաւորական ու հասարակ չկայ ում վերջով։

168. Խոնարհմունքներուն մէկ մեծ զանազանութիւնն ալ իրենց կատարեալէն կ'առնուի, որ կամ աց, եաց, ոյց ածանցեալ արմատով կ'ըլլայ, կամ Սահմանականի ներկային պարզ արմատովը, ետքի ձայնաւորը փոխուելով միշտ հոլովներուն պէս (17), ու արմատին ու ամ, եմ, իմ, ում վերջերուն մէջ տեղը գտնուած ան, են, ն, չ, նչ ածանցական կտորները ձգուելով միշտ։ Եւ աս արմատները՝ ներգործական ու ներգործակերպ չէզոք բայերուն կատարեալին եզակի երրորդ դէմքն են. ու եզակի հրամայական ալ են՝ միայն բաղաձայնականներուն ետեւի ցն ձգուելով։

Առջի լծորդութեան ամ բայերուն կատարեալը՝ գրեթէ ամէն ալ՝ աց կամ եաց ածանցեալ արմատով կ'ըլլայ. Աղամ, աղացի, աղաց, աղա. Կեամ, կեցի, կեաց. Աղամ, աղացայ։ — Չորրորդ լծորդութեան ում բայերունը՝ բոլորն ալ պարզ արմատով. Զենում, զենի, զեն. Զենում, զենայ։

Իսկ երկրորդ ու երրորդ լծորդութեան եմ, իմ բայերունը՝ երկու կերպով կ'ըլլայ. կամ եաց ածանցեալ արմատով. Սիրեմ, սիրեցի, սիրեաց, սիրեա. Սիրիմ, սիրեցայ. կամ պարզ արմատով, ու անոր պէս ոյց արմատով ալ. Տեսանեմ, տեսի, տես. Տեսանիմ, տեսայ. Դարձուցանեմ, դարձուցի, դարձոյց, դարձո. Դարձուցանիմ, դարձուցայ։ Ասոր համար աս երկու լծորդութիւնը երկերկու օրինակ ունին. ուստի խոնարհումներու օրինակն է ութը։

Աս արմատներուն կանոնն որ բռնես, խոնարհմունքներուն շէնքը աղէկ կը հասկընաս, գլուխ միտք կ'առնես ու կը պահես, ու լծորդութեանց օրինակները շատցնելու հարկ չըլլար, և ոչ ալ անկանոն ըսուած այսինքն կանոնէ դուրս ելլող բայերը։

169. Ամէն բային Ապառնին ալ իր Կատարեալէն կ'ելլէ, բազմավանկ ածանցեալ արմատներուն եայի ցն սցի փոխելով. Ասացի, ասաց. Ասացից կամ ասասցեմ, ասասցես. Սիրեցի, սիրեաց. Սիրեցից կամ սիրեսցեմ, սիրեսցես։

170. Անցեալ դերբայներն ալ սովորաբար Կատարեալէն կ'ելլեն. Ասացի, ասացեալ. Սիրեցի, սիրեցեալ կամ սիրեալ. Տեսի, տեսեալ։

171. Իսկ բային մէկալ ամէն կարգերը, Անկատարը, Ստորադասականը, Անորոշ ու Ապառնի դերբայները՝ Սահմանականի Ներկայէն կ'ելլեն։

## ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

172. Եմ. արմատ է։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Եմ. | ես եմ, ես կամ. | Եմք. | մենք ենք, մենք կանք. |
| Ես. | դուն ես. | Էք. | դուք էք. |
| Է. | ան է. | Են. | անոնք են։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Էի. | ես էի. | Էաք. | մենք էինք. |
| Էիր. | դուն էիր. | Էիք. | դուք էիք. |
| Էր. | ան էր. | Էին. | անոնք էին։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Եր. | եղիր. | Էք, երուք. | եղէք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղէց. ես ըլլամ՝, պիտի ըլլամ. Եղիցուք. մենք ըլլանք, պիտի ըլլանք.
Եղիցես. դուն ըլլաս, պիտի ըլլաս. Եղիջիք. դուք ըլլաք, պիտի ըլլաք.
Եղիցի. ան ըլլայ, պիտի ըլլայ. Եղիցին. անոնք ըլլան, պիտի ըլլան։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Եղել. ըլլալ՝
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Եղեալ. եղած, ըլլած՝
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Եղելոց. ըլլալու, որ պիտի ըլլայ՝

173. Հրամայականները, մանաւանդ եւր, մինակ չեն գանուիր.
Ողջ բառին հետ կ՚ըսուին Ողջ եր, ողջ էք, ողջ երուք։
Ասոր դերբայներն ալ շատ չեն գանուիր։

174. ԵՂԱՆԻՄ. արմատ եղ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ. | կ՚ըլլամ. | Եղանիմք. | կ՚ըլլանք. |
| Եղանիս. | կ՚ըլլաս. | Եղանիք. | կ՚ըլլաք. |
| Եղանի. | կ՚ըլլայ. | Եղանին. | կ՚ըլլան։ |

1 Ստորադասականները ինքնիրենն մինակ չեն նշանակեր ըլլամ նէ, գամ նէ, ուտեմ նէ, խօսիմ նէ, մտնեմ նէ, եւ այլն. հապա՝ յորժամ, եթէ, ու չէնէ. - կամ -ն, որ բառերուն հետ, որոնց անհնուն մէջն ալ յորժամի, եթէի միտք կ՚իմացուի զօրութեամբ. ու նէն ալ ան կը նշանակէ. Յորժամ եղեմ, եթէ եղեմ, երբոր, թէ որ ըլլամ, ըլլամ նէ. Զինչ եղէ, զոր եղէ, որ եղէ, ինչ որ ըլլայ նէ, որուն որ ըլլայ նէ, որ կամ ով որ ըլլայ նէ, կ՚իմացուի միշտ երբոր կամ թէ որ ըլլայ։

### Անցեալ անկատար·

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի· | կ'ըլլայի· | Եղանէաք· | կ'ըլլայինք· |
| Եղանէիր· | կ'ըլլայիր· | Եղանէիք· | կ'ըլլայիք· |
| Եղանէր, եղանիւր· | կ'ըլլար· | Եղանէին· | կ'ըլլային։ |

### Անցեալ կատարեալ·

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ· | եղայ· | Եղաք· | եղանք· |
| Եղեր· | եղար· | Եղէք, եղերուք· | եղաք· |
| Եղեւ· | եղաւ· | Եղեն· | եղան։ |

### Առաջ անցեալ կատարեալ·

| | | | |
|---|---|---|---|
| Եղայ, եղեայ· | եղայ· | Եղաք, եղեաք· | եղանք· |
| Եղար· | եղար· | Եղայք, եղեայք· | եղաք· |
| Եղաւ· | եղաւ· | Եղան· | եղան։ |

### Ապառնի·

| | |
|---|---|
| Եղէց, եղիցիմ· | ըլլամ, պիտի ըլլամ· |
| Եղիցիս, եղիցես· | ըլլաս, պիտի ըլլաս· |
| Եղիցի· | ըլլայ, պիտի ըլլայ· |
| Եղիցուք, եղիցիմք· | ըլլանք, պիտի ըլլանք· |
| Եղիջիք, եղիցիք· | ըլլաք, պիտի ըլլաք· |
| Եղիցին· | ըլլան, պիտի ըլլան։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| — | | Եղերուք· | եղէք· |
| Եղիջիր, եղանիջիր· | եղիր, ըլլաս· | . . | . . |
| Մի եղանիր· | մ'ըլլար· | Մի եղանիք· | մ'ըլլաք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Եղանիցիմ. | ըլլամ, պիտի ըլլամ. |
| Եղանիցիս. | ըլլաս, պիտի ըլլաս. |
| Եղանիցի. | ըլլայ, պիտի ըլլայ. |
| Եղանիցուք. | ըլլանք, պիտի ըլլանք. |
| Եղանիցիք, եղանիջիք. | ըլլաք, պիտի ըլլաք. |
| Եղանիցին. | ըլլան, պիտի ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Եղանել, եղանիլ. ըլլալ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Եղեալ. եղած, ըլլալը։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Եղանելոց. ըլլալու, որ պիտի ըլլայ։

175. Եղանել հրամայական Եղէր որ կ՚ըսենք աշխարհաբառ, գրաբառ կը նմանի, բայց գրոց մէջ չկայ, անոր համար տեղը պարապ թողուած է։

176. Երկրորդ Եղիջիր, եղանիջիր հրամայականին յոգնակին՝ ապառնիէն ու ստորադասականէն կ՚առնէ. Եղիջիք, եղանիջիք։ Նմանն գիտցիր ամէն բայերուն ալ։

177. ՉԻՆԻՄ. արմատ չէ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Չինիմ. | չ՚ըլլամ. | Չինիմք. | չ՚ըլլանք. |
| Չինիս. | չ՚ըլլաս. | Չինիք. | չ՚ըլլաք. |
| Չինի. | չ՚ըլլայ. | Չինին. | չ՚ըլլան։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Չինէի. | չ՚ըլլայի. | Չինէաք. | չ՚ըլլայինք. |
| Չինէիր. | չ՚ըլլայիր. | Չինէիք. | չ՚ըլլայիք. |
| Չինէր. | չ՚ըլլար. | Չինէին. | չ՚ըլլային։ |

## Ապառնի·

| | |
|---|---|
| Լիցիմ· | ըլլամ, պիտի ըլլամ· |
| Լիցիս, լիցես· | ըլլաս, պիտի ըլլաս· |
| Լիցի· | ըլլայ, պիտի ըլլայ· |
| Լիցուք, լիցումք· | ըլլանք, պիտի ըլլանք· |
| Լիջիք, լիցիք· | ըլլաք, պիտի ըլլաք· |
| Լիցին· | ըլլան, պիտի ըլլան· |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Եր· | եղիր· | Երուք, եք· | եղէք· |
| Լիջիր, լինիջիր· | եղիր, ըլլաս· | · · · · | |
| Մի՛ լինիր· | մ'ըլլար· | Մի՛ լինիք· | մ'ըլլաք· |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Լինիցիմ· | ըլլամ, պիտի ըլլամ· |
| Լինիցիս· | ըլլաս, պիտի ըլլաս· |
| Լինիցի· | ըլլայ, պիտի ըլլայ· |
| Լինիցիմք· | ըլլանք, պիտի ըլլանք· |
| Լինիցիք, լինիջիք· | ըլլաք, պիտի ըլլաք· |
| Լինիցին· | ըլլան, պիտի ըլլան։ |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ· | Լինել· | ըլլալ։ |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· | Լեալ, լեալ· | եղած, ըլլալով։ |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· | Լինելոց· | ըլլալու, որ պիտի ըլլայ։ |

178· Անցեալ կատարեալը Աշխարհիկէն կ'առնէ· Եղէ, եղեր, եղև, և այլն։

## 179 . ԳՈԼ . *արմատ գոյ ։*

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ .

| | | | |
|---|---|---|---|
| *Գոմ .* | համ, եմ . | *Գոմք .* | հանք, ենք . |
| *Գոս .* | հաս, ես . | *Գոյք .* | հաք, էք . |
| *Գոյ .* | հայ, է . | *Գոն .* | հան, են ։ |

#### Անցեալ անկատար .

| | | | |
|---|---|---|---|
| *Գոյի .* | հայի, էի . | *Գոյաք .* | հայինք, էինք . |
| *Գոյիր .* | հայիր, էիր . | *Գոյիք .* | հայիք, էիք . |
| *Գոյր .* | հար, էր . | *Գոյին .* | հային, էին ։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| *Գուցեմ .* | լինեմ, ըլլամ . | *Գուցեմք .* | լինենք, ըլլանք . |
| *Գուցես .* | լինես, ըլլաս . | *Գուցէք .* | լինեք, ըլլաք . |
| *Գուցէ .* | լինի, ըլլայ . | *Գուցեն .* | լինին, ըլլան ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ . *Գոլ .* ըլլալ ։

180 . *Կայ եւ բայն ալ, երրորդ դէմք, որ ըսել է* կայ, է . *բայց հիմայ մինակ չըմնիր, հապա չ մակբայով .* *Չիք*, չկայ, չէ . *չիք հնար*, ճար չկայ . *չիք աստ*, հոս չըկայ, հոս չէ ։

## ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, ամ.

**181.** Ներգործական **ՄՆԱՄ**· արմատ մն, մնաց[1].

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մնամ· | կը կենամ, կը մընամ. | Մնամք· | կը կենանք· |
| Մնաս· | կը կենաս· | Մնայք· | կը կենաք· |
| Մնայ· | կը կենայ· | Մնան· | կը կենան: |

#### Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Մնայի· | կը կենայի· | Մնայաք· | կը կենայինք· |
| Մնայիր· | կը կենայիր· | Մնայիք· | կը կենայիք· |
| Մնայր· | կը կենար· | Մնային· | կը կենային: |

#### Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Մնացի· | կեցայ· | Մնացաք· | կեցանք· |
| Մնացեր· | կեցար· | Մնացէք, ամնացիք· | կեցաք· |
| Մնաց· | կեցաւ· | Մնացին· | կեցան: |

---

1 Այս պարզ արմատէն շինուած են ածանցեալ բառերը մնան, [illegible], [illegible], ու բարդը [illegible]: Իսկ մնաց ածանցեալ արմատէն շինուած է ծոմնաց: Աստանկ գիտցիր ուրիշ ամէն բայերուն արմատներուն համար ալ, որ թէ և առանձին չգտուին նէ ալ, ածանցմանց կամ բարդութեանց մէջ կան. ոմանք չգտուին նէ ալ, մէկալներէն պէտք կը սեպուի որ ըլլալու է: Աստանկ գիտցիր մէկալ լծորդութեանց վրայ ալ:

Մնալ.

| | |
|---|---|
| Մնացի, ամնացեմ. | ղաբէմ, դէյէ ղաբէմ. |
| Մնացեր. | ղաբէա, դէյէ ղաբէա. |
| Մնաց. | ղաբէ, դէյէ ղաբէ. |
| Մնացաք, ամնացեմք. | ղաբէնք, դէյէ ղաբէնք. |
| Մնացիք, ամնացէք. | ղաբէք, դէյէ ղաբէք. |
| Մնացին. | ղաբէն, դէյէ ղաբէն: |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Մնա. | ղաբէ. | Մնացէք. | ղաբէյէք. |
| Մնասջիր, ամնայջիր. | ղաբէ, ղաբէա. | . . . . | |
| Մի՛ ամնար. | դ ղաբէր. | Մի՛ ամնայք. | դ ղաբէք: |

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Մնայցեմ. | ղաբէմ, դէյէ ղաբէմ. |
| Մնայցես. | ղաբէա, դէյէ ղաբէա. |
| Մնայցէ. | ղաբէ, դէյէ ղաբէ. |
| Մնայցեմք. | ղաբէնք, դէյէ ղաբէնք. |
| Մնայցէք, ամնայջիք. | ղաբէք, դէյէ ղաբէք. |
| Մնայցեն. | ղաբէն, դէյէ ղաբէն: |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. | Մնալ. | ղաբէլ: |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Մնացեալ. | ղաբած, ղաբէլով: |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Մնալոց. | ղաբէլա, որ դէյէ ղաբէ: |

182. Նման կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Կորզամ, կորզացի, կորզաց, կորզա. չանչէմ, չորթամ:
Հաւատամ, հաւատացի, հաւատաց, հաւատա. հաւտամ:
Լուանամ, լուացի, լուաց, լուա. լուամ:

Լամ, լացի, լաց կամ ելաց, լաց. — լամ։
Բանամ, բացի, բաց կամ եբաց, բաց. — բանամ։
Բառնամ, բարձի՛, բարձ կամ եբարձ, բարձ. — վերցնեմ։

### 183. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Գնամ, գնացի, գնաց, գնա. — երթամ։
Խաղամ, խաղացի, խաղաց, խաղա. — խաղամ, շարժեմ։
Կամ, կացի, կաց կամ եկաց, կաց. — կենամ, կայնեմ։
Մնամ, մնացի, մնաց, մնա. — մնամ, սպասեմ։

184. Բայց տակն է Կեամ, որուն եա երբոր վերջի վանկ չէ նէ՝ ե կամ է կը փոխուի հոլովներուն պէս (17). ստորադասականը՝ երկու կերպ ալ կ'ըլլայ։ Ամբողջ գրենենք որ տեսնես.

| | | | |
|---|---|---|---|
| ՍՀՄ. | Ներկ. | Կեամ. կ'ապրիմ. | Կեամք. կ'ապրինք. |
| | | Կեաս. | Կեայք. |
| | | Կեայ. | Կեան. |
| | Անց. | Կէի. | Կէաք. |
| | | Կէիր. | Կէիք. |
| | | Կեայր. | Կէին. |
| | Կատ. | Կեցի. | Կեցաք. |
| | | Կեցեր. | Կեցէք, կեցիք. |
| | | Կեաց, եկեաց. | Կեցին. |
| | Ապա. | Կեցից, կեցցեմ. | Կեցցուք, կեցցեմք. |
| | | Կեցցես. | Կեցջիք, կեցցէք. |
| | | Կեցցէ. | Կեցցեն. |
| ՀՐԱՄ. | | Կեաց. | Կեցէք. |
| | | Կեցջիր. | . . . |
| | | Մի կեար. | Մի կեայք. |

1 Տես 49. ծանօթութիւն։

ՍՏՈՐ. Կեայցեմ, կեցեմ[1]. Կեայցեմք, կեցեմք.
Կեայցես, կեցես. Կեայցէք, կեցէք.
Կեայցէ, կեցէ. Կեայցեն, կեցեն.
ԴԵՐԲ. Կեալ.— Կեցեալ. — Կելոց:

185. Նման ալ Ատեամ, Ատեմ. ատէի, ատեցի, ատեցից կամ ատեսցեմ, ատեա, ատեսջիր. բայց ստորադասականն՝ ատիցեմ. Անորոշ դերբայ՝ ատեալ կամ ատել. վասն զի Ատեմ, ատեցի, ատել ալ կ'ըսուի, և Ատիմ, ատիլ, երկրորդ ու երրորդ լծորդութեանց պէս:

186. Տեսար որ Լամ, բանամ, բառնամ, կամ, կեամ բայերուն կատարեալ եղանակի երրորդ դէմքը, որ միավանկ արմատն է բային (168), ե առնու սկիզբը, ելաց, երաց, եբարձ, եկաց, եկեաց: Նման գիտցիր երկրորդ լծորդութեան երկրորդ օրինակին ու չորրորդ լծորդութեան համար ալ: — Եին տեղ՝ է ալ կ'ըլլայ բաղաձայններուն, էլաց, էրաց, էբարձ. իսկ ձայնաւորներուն՝ միայն այբին կը գրուի, ան ալ միշտ է. էարկ, էանց, էառ, որ վարը պիտի տեսնես:

## 187. Կրաւորական, ԸԼԼԱԼ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըլլամ. | կը վաթուիմ. | Ըլլանք. | կը վաթուինք. |
| Ըլլաս. | կը վաթուիս. | Ըլլայք. | կը վաթուիք. |
| Ըլլայ. | կը վաթուի. | Ըլլան. | կը վաթուին: |

---

1 Նման մէկ ցոյց կը գրուի ստորադասականը կեցէմ, ու անով կը զատուի ապառնիէն կեցցէմ:

### Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Մնայի. | կը կայնէի. | Մնայաք. | կը կայնէինք. |
| Մնայիր. | կը կայնէիր. | Մնայիք. | կը կայնէիք. |
| Մնայր. | կը կայնէր. | Մնային. | կը կայնէին: |

### Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Մնացայ. | կայնեցայ. |
| Մնացար. | կայնեցար. |
| Մնացաւ. | կայնեցաւ. |
| Մնացաք. | կայնեցանք. |
| Մնացայք, մնացարուք. | կայնեցաք. |
| Մնացան. | կայնեցան: |

### Ապառնի.

| | |
|---|---|
| Մնացայց, մնասցիմ. | կայնիմ, պիտի կայնիմ. |
| Մնասցես. | կայնիս, պիտի կայնիս. |
| Մնասցէ. | կայնի, պիտի կայնի. |
| Մնասցուք, մնասցիմք. | կայնինք, պիտի կայնինք. |
| Մնասջիք, մնասցիք. | կայնիք, պիտի կայնիք. |
| Մնասցեն. | կայնին, պիտի կայնին: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Մնացիր. | կայնէ. |
| Մնասջիր, մնայջիր. | կայնէ, կայնիս. |
| Մի մնար. | մի կայնիր. |
| Մնացարուք, մնացիք, մնացայք. | կայնեցէք. |
| . . . . | |
| Մի մնայք. | մի կայնիք: |

| | |
|---|---|
| Մնացիմ. | ղալայէմ, դէյէ ղալայէմ. |
| Մնացիս. | ղալայէս, դէյէ ղալայէս. |
| Մնացի. | ղալայէ, դէյէ ղալայէ. |
| Մնացինք. | ղալայէնք, դէյէ ղալայէնք. |
| Մնացիք, ամնացիք. | ղալայէք, դէյէ ղալայէք. |
| Մնացին. | ղալայէն, դէյէ ղալայէն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Մնալ. ղալայել։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Մնացեալ. ղալայած, ղալայէլըղ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Մնալոց. ղալայէլը, որ դէյէ ղալայէ։

188. Կը տեսնես որ կրաւորականին քանի մը անգը ներգործակա-նին պէս է։ Ասոնք աւելի որոշ հասկցուելու համար՝ անցեալ դեր-բայով ու իմ էականով կ'ըլլան. Մնացեալ ըլլամ, ըլլայի, եղայ, ըլլանք կամ եղիցուք, ըլլիք կամ եղիջիք, մնացեալ ըլլալ։ Ասանկ գիտցիր մէ-կալ ամէն ըստորոգութեանց եւ ուրիշ կրաւորական խոնարհմանց վրայ ալ։

189. Ոմանց ալ սահմանական ներկան ու ստորադասականը իմ կ'ըլլայ երբեմն՝ երրորդ ըստորոգութեան պէս. Լուանիմ, լուանիցիմ, լուանիլ. բանիմ, բանիլ. բառնիմ, բառնիլ. խմնիմ, խմնիլ. մտանիմ։

190. Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,

| | |
|---|---|
| Կարդամ, կարդացայ, կարդացիր. | ճանչուէմ, ճարդուցուէմ, |
| Հաւատամ, հաւատացայ, հաւատացիր. | հաւատացուէմ։ |
| Լուանամ, լուացայ, լուացիր. | լուացուէմ, |
| Լամ, լացայ, լացիր. | լացուէմ, |
| Բանամ, բացայ, բացիր. | բացուէմ, |
| Բառնամ, բարձայ, բարձիր. | վերցուէմ, չէ զօրաւոր՝ վերնամ, |

## ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

191. Հասարակ բայերն որ ներգործական մայով առնուին, ու կրաւորակերպ չէզոք բայերուն յատուկ տարբեր անցեալը, ինչպէս կատարեալը ու հրամայականը, երբեմն ներգործականին պէս ալ կ'ըլլան. Մոռանամ, մոռացայ [illegible] մոռցայ, մոռցիր [illegible] մոռա. Որսամ, որսացայ [illegible] որսացի, որսացիր [illegible] որսա. Խմանամ, խմեցիր [illegible] խմա, խմեց. — Ընթանամ, ընթացիր [illegible] ընթա, ընթաց. Զգենում, զգեմ, զգեցայ [illegible] զգեցի, զգեցիր [illegible] զգեա։ Ասոնք ալ Լուանամ կրաւորականը չէզոք բայեր առնելով (166), [illegible], կ'ըլլայ՝ լուացիր [illegible] լուա։

192. Նոյնպէս ներգործական մայով առնուած հասարակ բայերուն ու կրաւորակերպ չէզոք բայերուն ապառնիին ալ շատ հեղ ներգործականին պէս կ'ըլլայ [illegible]. Խմացես, խմացէ, խմացեն. Գոհացես, գոհացէ, գոհացեն։ Ասոնք գիտցիր երրորդ լծորդութեան նոյնպէս հասարակ ու չէզոք բայերուն ապառնիին համար ալ, ու ստորադասականին համար ալ, որ երբեմն ան ալ ներգործականին պէս [illegible] կը վերջանայ։

193. Աս լծորդութեան հասարակ բայերն երբոր ներգործաբար առնուին, ու չէզոք բայերուն ստորադասականը՝ ամենևին կրաւորականին պէս [illegible] չվերջանար, թէ և աս խոնարհմանը տակը կ'երթան, հապա միշտ ներգործականին պէս կ'ըլլայ [illegible], Օր. Խմանամ, խմանայցեմ. Մոռանամ, մոռանայցես. Գոհանամ, գոհանայցէ. Դառնամ, դառնայցեմք. Ընթանամ, ընթանայցէք. Յուսամ, յուսայցեն։ Ասոնք ալ Բառնամ, բառնամ, չէզոքաբար, [illegible], [illegible], կ'ըլլան՝ բառնայցեմ, բառնայցեմ, [illegible], [illegible]։

### 194. ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Ըմանամ, առնացայ, առնացիր. | [illegible] |
| Խմանամ, խմացայ, խմացիր [illegible] խմաց [illegible] խմա. | [illegible] |
| Մարգարէանամ, մարգարէացայ, մարգարէացիր [illegible] մարգա- | |

| | |
|---|---|
| բեաց կամ մարգարէա. | մարգարէանամ. մարգարէ-ցուէմ: |
| Մոռանամ, մոռացայ, մոռացար կամ մոռաց, մոռացիր կամ մոռա. | մոռնամ. մոռցուէմ: |
| Ստանամ, ստացայ, ստացիր. | ունենամ, ունեմ. ունե-ցուէմ: |
| Հոգամ, հոգացայ, հոգացիր. | հոգամ. հոգացուէմ: |
| Որսամ, որսացայ կամ որսացի, որսացիր կամ որսա. | որս բռնեմ. բռնուէմ: |

195. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Գոհանամ, գոհացայ, գոհացիր, գո-հանայցեմ. | շնորհակալ ըլլամ: |
| Դառնամ, դարձայ, դարձիր կամ դարձ, դառնայցեմ. | դառնամ: |
| Ընթանամ, ընթացայ, ընթացիր կամ ընթաց կամ ընթա, ընթանայցեմ. | քալեմ: |
| Զղջանամ } զղջացայ կ՛ զղջացի, զղջա-<br>Զղջամ } ցիր կ՛ զղջա, զղջանայցեմ. | զղջամ: |
| Հոգամ, հոգացայ կամ հոգացի, հոգա-ցիր կամ հոգա, հոգայցեմ. | հոգ ընեմ: |
| Յուսամ, յուսացայ կամ յուսացի, յու-սացիր կամ յուսա, յուսայցեմ. | յուսամ: |
| Ցնծամ, ցնծացայ կամ ցնծացի, ցնծա-ցիր կամ ցնծա, ցնծայցեմ. | ուրախանամ: |
| Արբենամ, արբեցայ, արբեցիր, ար-բենայցեմ. | գինովնամ: |
| Մերձենամ, մերձեցայ, մերձեցիր, մերձենայցեմ. | մօտենամ: |
| Յագենամ, յագեցայ, յագեցիր, յա-գենայցեմ. | կշտանամ: |
| Քաղցենամ, քաղցեցայ, քաղցեցիր, քաղցենայցեմ. | անօթենամ: |

## ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, ԷՄ.

### 196. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգործական ՍԻՐԵՄ. արմատ սէր, սիրեաց.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեմ. | կը սիրեմ. | Սիրեմք. | կը սիրենք. |
| Սիրես. | կը սիրես. | Սիրէք. | կը սիրէք. |
| Սիրէ. | կը սիրէ. | Սիրեն. | կը սիրեն. |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրէի. | կը սիրէի. | Սիրէաք. | կը սիրէինք. |
| Սիրէիր. | կը սիրէիր. | Սիրէիք. | կը սիրէիք. |
| Սիրէր. | կը սիրէր. | Սիրէին. | կը սիրէին. |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեցի. | սիրեցի. | Սիրեցաք. | սիրեցինք. |
| Սիրեցեր. | սիրեցիր. | Սիրեցէք, սիրեցիք. | սիրեցիք. |
| Սիրեաց. | սիրեց. | Սիրեցին. | սիրեցին. |

Ապառնի.

| | |
|---|---|
| Սիրեցից, սիրեսցեմ. | սիրեմ, պիտի սիրեմ. |
| Սիրեսցես. | սիրես, պիտի սիրես. |
| Սիրեսցէ. | սիրէ, պիտի սիրէ. |
| Սիրեսցուք, սիրեսցեմք. | սիրենք, պիտի սիրենք. |
| Սիրեսջիք, սիրեսցէք. | սիրէք, պիտի սիրէք. |
| Սիրեսցեն. | սիրեն, պիտի սիրեն. |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեա · | սիրէ · | Սիրեցէք · | սիրեցէք · |
| Սիրեսջիր, սիրիջիր · | սիրէ, սիրէ՛ · | . . . | |
| Մի՛ սիրեր · | մի՛ սիրեր · | Մի՛ սիրէք · | մի՛ սիրէք ։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Սիրիցեմ: | սիրեմ, պիտի սիրեմ · |
| Սիրիցես · | սիրես, պիտի սիրես · |
| Սիրիցէ · | սիրէ, պիտի սիրէ · |
| Սիրիցեմք · | սիրենք, պիտի սիրենք · |
| Սիրիցէք, սիրիջիք · | սիրէք, պիտի սիրէք · |
| Սիրիցեն · | սիրեն, պիտի սիրեն ։ |

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ · Սիրել · սիրել ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Սիրեցեալ, սիրեալ · սիրած, սիրելուն ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Սիրելոց · սիրելու, որ պիտի սիրէ ։

197 · Ուսանի կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Գրեմ, | գրեցի, | գրեա · | գրեմ ։ |
| Ըմբռնեմ, | ըմբռնեցի, | ըմբռնեա · | բռնեմ ։ |
| Կարեմ, | կարեցի, | կարեա · | կարեմ, կար կարեմ ։ |
| Շինեմ, | շինեցի, | շինեա · | շինեմ ։ |
| Փրկեմ, | փրկեցի, | փրկեա · | ազատեմ, փրկեմ ։ |
| Ամանեմ, | ամանեցի, | ամանեա · | ամանը լեցնեմ ։ |
| Սերմանեմ, | սերմանեցի, | սերմանեա · | ցանեմ ։ |
| Վանեմ, | վանեցի, | վանեա · | վռնտեմ ։ |

198 · Նաեւ չորս բային արմատը այ ըլլալուն (168), կատարեալը եւ ապառնին կ'ըլլայ այի, այէ ։

Ասեմ, ասացի, ասացից, ասա. — ըսէմ։
Գտանեմ, գտացի, գտացից, գտա կամ գտանեա. — գտնէմ։
Կարեմ, կարացի, կարացից, կարացիր. — կրնամ։
Մարթեմ, մարթացի, մարթացից, մարթացիր. — կրնամ։

### 199. ՉԻՉՈՔ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Ամաչեմ, | ամաչեցի, | ամաչեա. | ամչնամ։ |
| Դիմեմ, | դիմեցի, | դիմեա. | վազէմ։ |
| Թագաւորեմ, | թագաւորեցի, | թագաւորեա. | թագաւորէմ։ |
| Տիրեմ, | տիրեցի, | տիրեա. | տիրէմ։ |
| Ժամանեմ, | ժամանեցի, | ժամանեա. | հասնէմ։ |
| Մնչեմ, | մնչեցի, | մնչեա. | մռմռամ։ |

### 200. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգործական ՏԵՍԱՆԵՄ՝ արմատ տես։

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանեմ. | կը տեսնեմ. | Տեսանեմք. | կը տեսնենք. |
| Տեսանես. | կը տեսնես. | Տեսանէք. | կը տեսնէք. |
| Տեսանէ. | կը տեսնէ. | Տեսանեն. | կը տեսնեն։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանէի. | կը տեսնէի. | Տեսանէաք. | կը տեսնէինք. |
| Տեսանէիր. | կը տեսնէիր. | Տեսանէիք. | կը տեսնէիք. |
| Տեսանէր. | կը տեսնէր. | Տեսանէին. | կը տեսնէին։ |

### Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսի · | տեսայ · | Տեսաք, | տեսանք · |
| Տեսեր · | տեսար · | Տեսէք, տեսիք · | տեսաք · |
| Տես, ետես · | տեսաւ · | Տեսին · | տեսան ։ |

### Ապառնի.

| | |
|---|---|
| Տեսից, տեսցեմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսցես · | տեսնես, պիտի տեսնես · |
| Տեսցէ · | տեսնէ, պիտի տեսնէ · |
| Տեսցուք, տեսցեմք · | տեսնենք, պիտի տեսնենք · |
| Տեսջիք, տեսցէք · | տեսնէք, պիտի տեսնէք · |
| Տեսցեն · | տեսնեն, պիտի տեսնեն ։ |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Տես · տես · Տեսէք · տեսէք ·
Տեսջիր, տեսանիջիր · տես, տեսնես · . . .
Մի տեսաներ · մի տեսներ · Մի տեսանէք · մի տեսնէք ·

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսանիցեմ. | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| Տեսանիցես · | տեսնես, պիտի տեսնես · |
| Տեսանիցէ · | տեսնէ, պիտի տեսնէ · |
| Տեսանիցեմք · | տեսնենք, պիտի տեսնենք · |
| Տեսանիցէք, տեսանիջիք · | տեսնէք, պիտի տեսնէք · |
| Տեսանիցեն · | տեսնեն, պիտի տեսնեն ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Տեսանել · տեսնել ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Տեսեալ · տեսած, տեսնելով ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Տեսանելոց · տեսնելու, որ պիտի տեսնէ ։

201 · Ասանք կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Անիծանել, | անիծի, | անէծ. | անիծել։ |
| Արկանել, | արկի, | արկ, էարկ. | ձգել, նետել։ |
| Գտանել, | գտի, | գիտ, եգիտ. | գտնել։ |
| Դիզանել, | դիզի, | դէզ, եդէզ. | դիզել։ |
| Կլանել, | կլի, | կուլ, եկուլ. | կլլել։ |
| Հատանել, | հատի, | հատ, եհատ. | կտրել։ |
| Հարցանել, | հարցի, | հարց, եհարց. | հարցնել։ |
| Սպանանել, | սպանի, | սպան, եսպան. | սպաննել, մեռցնել։ |
| Ցուցանել, | ցուցի, | ցոյց, եցոյց. | ցուցնել։ |
| Հարկանել, | հարի, | հար, եհար. | զարնել։ |

202 · Ասանք կը խոնարհին ետեւի չորս բայն ալ պարզ արմատովը (168).

| | | | |
|---|---|---|---|
| Ածել, | ածի, | ած, էած. | բերել։ |
| Բերել, | բերի, | բեր, եբեր. | բերել։ |
| Հանել, | հանի, | հան, եհան. | հանել։ |
| Հեղուլ, | հեղուի, | հեղոյ. | թափել։ |

203 · Ասանք կը խոնարհին ցնել վերջացած ներգործական բայերն ալ՝ իրենց ոչ ածանցեալ արմատովը (168) ուսկից որ կ'ելլեն[1], որ ոյց, ոյշ ալ կ'ըլլայ.

Դարձուցանել, դարձուցի, դարձոյց,
դարձո։ դարձնել։
Զեկուցանել, զեկուցի, զեկոյց, զեկո. իմացնել, իմաց տալ։

---

1 Ասոնց ոյց վերջացած արմատէն շինուած ըլլալուն ապացոյցն է, մէկ մը՝ օրինակ ինչ Զեկուցանել բայը, որ ուրիշ մէկ բայէ մը չելլեր, հապա զեկոյց արմատէն. ասանկ ըսելու է մէկալներուն ամենուն համար ալ։ Մէկալ՝ ալ որ, նոյն արմատը կատարեալին եզակի երրորդ դէմքն է, ինչպէս ամէն ուրիշ բայերուն ալ։

Մատուցանել, մատուցի, մատոյց, մատո . տամ, մօտ բերեմ ։
Ամրացուցանել, ամրացուցի, ամրա-
ցոյց, ամրացո . ամրցընեմ ։
Ապրեցուցանել, ապրեցուցի, ապրե-
ցոյց, ապրեցո . ապրեցընեմ ։
Կորուսանել, կորուսի, կորոյս, կորո . կորսնցընեմ ։
Փլուզանել, փլուզի, փլոյզ, փլո . փլցընեմ ։

204 . Ուրիշներն այսպիսի բայերուն չափին նշանակութիւնը ընել տալ կամ ըլլալ տալ է, նոյն մտքով շատ անգամ Տամ ու Առնել բայերը կը բանին անձն պարզ բայի հետ . Իմացուցանել ըսելու տեղը՝ կ'ըսուի Տամ կամ Առնել քեզ իմանալ, առնել զքեզ՝ իմանալ, առնել՝ զի իմասցիս կամ իմանայցես . Գնացուցանել ըսելու տեղը՝ Տամ կամ Առնել գնալ, առնել զի գնասցես կամ գնայցես ։ Նմանն ալ կ'ըսուի Անցուցանել կամ Տամ անցանել . Խաղացուցանել կամ Տամ խաղալ . բայց -ցընեմ չունեցողներուն հետ՝ հարկաւ ըսելու է Տամ ածել, տամ բերել, տամ տանել, և այլն . Նմանապէս Տամ անցուցանել, տամ խաղացուցանել, ուրիշին մը անցընել տալ, ուրիշին մը խաղցընել տալ ։ Տամ կամ Առնել լինել, առնել զի լինիցիս . ըլլալ տալ, ընեմ որ ըլլայ ։ Առնել զի ընթերցցի . ընեմ որ կարդայ կամ կարդացուի ։

## 205 . ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Անցանել, | անցի, | անց, էանց . | անցնիմ ։ |
| Ելանել, | ելի, | ել . | ելլեմ ։ |
| Իջանել, | իջի, | էջ . | իջնամ ։ |
| Հասանել, | հասի, | հաս, եհաս . | հասնիմ ։ |
| Մտանել, | մտի, | մուտ, եմուտ . | մտնեմ ։ |
| Համբերել, | համբերի, | համբեր . | համբերեմ ։ |

206 . Այս երկքինը Համբերել, համբերեցի ալ կ'ըլլայ ասքի օրինակին պէս ։ Նմանապէս ուրիշ բայերը՝ որ մէջի ա-ն ձգուած է ներկային . Անտեսել, անտեսեցի . լռեսել, լռեսեցի . անիծել, անիծեցի . ձեռնարկել, ձեռնարկեցի . գիտել, գիտեցի . յուսահատել, յուսահատեցի . բռնահարել, բռնահարեցի ։ Նմանն ալ Երկիր պագանել, կ'ըլլայ երկիր պագի . իսկ Երկրպագել, երկրպագեցի . Վերածել կ'ըլլայ վերածեցի կամ վերածի . Ակնածել, ակնածեցի . ակն ածել, ակն ածի ։

## ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ, ԻՄ.

### 207. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

### Կրաւորական, ՍԻՐԻՄ.

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

**Ներկայ.**

| | | | |
|---|---|---|---|
| Սիրիմ. | կը սիրուիմ. | Սիրիմք. | կը սիրուինք. |
| Սիրիս. | կը սիրուիս. | Սիրիք. | կը սիրուիք. |
| Սիրի. | կը սիրուի. | Սիրին. | կը սիրուին: |

**Անցեալ անկատար.**

| | | | |
|---|---|---|---|
| Սիրէի. | կը սիրուէի. | Սիրէաք. | կը սիրուէինք. |
| Սիրէիր. | կը սիրուէիր. | Սիրէիք. | կը սիրուէիք. |
| Սիրէր, սիրիւր. | կը սիրուէր. | Սիրէին. | կը սիրուէին: |

**Անցեալ կատարեալ.**

| | |
|---|---|
| Սիրեցայ. | սիրուեցայ. |
| Սիրեցար. | սիրուեցար. |
| Սիրեցաւ. | սիրուեցաւ. |
| Սիրեցաք. | սիրուեցանք. |
| Սիրեցայք, սիրեցարուք. | սիրուեցաք. |
| Սիրեցան. | սիրուեցան: |

**Ապառնի.**

| | |
|---|---|
| Սիրեցայց, սիրեսցիմ. | սիրուիմ, պիտի սիրուիմ. |
| Սիրեսցիս. | սիրուիս, պիտի սիրուիս. |
| Սիրեսցի. | սիրուի, պիտի սիրուի. |

| | |
|---|---|
| Սիրեսցուք, սիրեսցինք · | սէր--էնք, դէոէ սէր--էնք · |
| Սիրեսջիք, սիրեսցիք · | սէր--էք, դէոէ սէր--էք · |
| Սիրեսցին · | սէր--էն, դէոէ սէր--էն ։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Սիրեաց, սիրեցիր · | սէր--է · |
| Սիրեսջիր, սիրիջիր · | սէր--է, սէր--էս · |
| Մ՛ի սիրիր · | Գ սէր--էր · |
| Սիրեցարուք, սիրեցայք · | սէր--էշէք · |
| . . . . | |
| Մ՛ի սիրէք · | Գ սէր--էք ։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Սիրիցիմ · | սէր--էմ, դէոէ սէր--էմ · |
| Սիրիցիս · | սէր--էս, դէոէ սէր--էս · |
| Սիրիցի · | սէր--է, դէոէ սէր--է · |
| Սիրիցիմք · | սէր--էնք, դէոէ սէր--էնք · |
| Սիրիցիք, սիրիջիք · | սէր--էք, դէոէ սէր--էք · |
| Սիրիցին · | սէր--էն, դէոէ սէր--էն ։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ · Սիրել, սիրիլ · սէր--էլ ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Սիրեցեալ, սիրեալ · սէր--ած, սէ-րո--էլւ ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Սիրելոց · սէրէլ--, որ դէոէ սէր--է ։

208 · Տես բաժնիս 'ի 188 ։ Նման կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները ,

| | | |
|---|---|---|
| Գրիմ, | գրեցայ · | գր--էմ ։ |
| Ընթեռնիմ, | ընթեռնեցայ · | բ-ն--էմ ։ |
| Կարիմ, | կարեցայ · | կար--էմ ։ |
| Շինիմ, | շինեցայ · | շէն--էմ ։ |

| | | |
|---|---|---|
| Փրկիմ, | փրկեցայ. | ազատուեմ, փրկուեմ, չէզոք՝ ազատեմ. |
| Ամաչիմ, | ամաչեցայ. | ամօթը քաշուեմ. |
| Սերմանիմ, | սերմանեցայ. | ցանուեմ. |
| Վանիմ, | վանեցայ. | հալածուեմ. |
| Ասիմ, | ասացայ. | ըսուեմ. |
| Գիտիմ, | գիտացայ. | գիտցուեմ. |

209. Կարեմ, Մարթեմ, կրաւորական չեն ըլլար, սովորաբար չէզոքի պէս բանեցնուն համար:

## ՀԱՄԱՐԱԿ ՈՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

210. Համարակ բայերն որ ներգործաբար առնուին, հրամայականին միայն եւ կ՚ըլլայ, շատ անգամ ալ ներգործականին պէս եա. Խօսեաց, Նայեաց, Ողորմեաց. Գտանեա, Խօսեա, Նայեա, Ողորմեա: Խօսեցիր, Նայեցիր, Ողորմեցիր չըլլար ներգործական մտքով:

211. Ասանկ եւի տեղ՝ ա կ՚ըլլայ երբեմն աս օրինակիս չէզոք բայերուն ու չէզոքաբար առնուած կրաւորականներուն հրամայականն ալ. Աշխատեա, երկեա, Ճնեա: — Յայտնեա, լուսաւորեա, քաջալերեա:

212. Ներգործաբար առնուած համարակ բայերուն ու կրաւորական չէզոք բայերուն անորոշ դերբայն աւելի էլ կ՚ըլլայ. Խօսել, նայել, ողորմել. — Աշխատել, երկել. որ իլ ալ կ՚ըլլան. բայց ասոնք միայն իլ կ՚ըլլան. Դառնել, կամել, Ճնել, փնչել: — Ասանկ ալ երկու օրինակին. Ծնանել կամ ծնանիլ. Մեռանել կամ մեռանիլ:

## 213. ՀԱՄԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | | |
|---|---|---|
| Բարբառիմ, | բարբառեցայ. | խօսեմ, ըսեմ. խօսուեմ, ըսուեմ. |
| Գտանիմ, | գտանեցայ. | գտնեմ. գտնուեմ. |
| Խոստովանիմ, | խոստովանեցայ. | խոստովանեմ. խոստովանուեմ. |
| Խօսիմ, | խօսեցայ. | խօսեմ. խօսուեմ. |

Կամիմ, կամեցայ. կամիմ, ուզեմ. կամեցուիմ, ուզուիմ։
Համարիմ, համարեցայ. սեպեմ, համրեմ. սեպուիմ, համրուիմ։
Նայիմ, նայեցայ. նայիմ. նայուիմ։
Ողորմիմ, ողորմեցայ. ողորմիմ. ողորմուիմ։

214. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Աշխատիմ, աշխատեցայ. աշխատիմ, յոգնիմ։
Երեւիմ, երեւեցայ. երեւնամ։
Կռուիմ, կռուեցայ. կռուեմ։
Ճեմիմ, ճեմեցայ. ճամբայ գամ, վեր վար քալեմ։
Մխծիմ, մխծեցայ. հաճախանձնութեան ընեմ։
Ապրիմ, ապրեցայ. ապրեմ։
Բնակիմ, բնակեցայ. բնակեմ։
Դադարիմ, դադարեցայ. դադրեմ, կենամ։

215. Հասարակ բայերէն մէկ քանին ներգործաբար, ու չէզոքներէն ալ ոմանք, եմ վերջը եմ կը փոխեն ու ներգործականի պէս կը խոնարհին երբեմն. Դատեմ, դատեցի. Խոստովանեմ, խոստովանեցի. Համարեմ, համարեցի։ — Ապրեմ, ապրեցի. Բնակեմ, բնակեցի. Դադարեմ, դադարեցի։

216. Բայց չէզոքներէն մէկ քանին ալ՝ եմ փոխուին նէ, ներգործական կ'ըլլան. ինչպէս, Աշխատեմ, աշխատցընեմ, յոգնեցընեմ ըսել է. Խոնարհեմ, խոնարհեցընեմ. Բերկրեմ, ուրախացընեմ. Հնազանդեմ, հնազանդեցընեմ. Ցնծարեմ, խնդըցընեմ։

### 217. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

## Կրաւորական, ՏԵՍԱՆԻՄ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանիմ. | կը տեսնուիմ. | Տեսանիմք. | կը տեսնուինք. |
| Տեսանիս. | կը տեսնուիս. | Տեսանիք. | կը տեսնուիք. |
| Տեսանի. | կը տեսնուի. | Տեսանին. | կը տեսնուին։ |

#### Անցեալ անկատար.

| | |
|---|---|
| Տեսանէի. | կը տեսնուէի. |
| Տեսանէիր. | կը տեսնուէիր. |
| Տեսանէր, տեսանիւր. | կը տեսնուէր. |
| Տեսանէաք. | կը տեսնուէինք. |
| Տեսանէիք. | կը տեսնուէիք. |
| Տեսանէին. | կը տեսնուէին։ |

#### Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Տեսայ. | տեսնուեցայ. |
| Տեսար. | տեսնուեցար. |
| Տեսաւ. | տեսնուեցաւ. |
| Տեսաք. | տեսնուեցանք. |
| Տեսայք, տեսարուք. | տեսնուեցաք. |
| Տեսան. | տեսնուեցան։ |

## Ապառնի·

| | |
|---|---|
| *Տեսայց, տեսցիմ·* | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| *Տեսցես·* | տեսնես, պիտի տեսնես. |
| *Տեսցէ·* | տեսնէ, պիտի տեսնէ. |
| *Տեսցուք, տեսցիմք·* | տեսնենք, պիտի տեսնենք. |
| *Տեսջիք, տեսցիք·* | տեսնէք, պիտի տեսնէք. |
| *Տեսցեն·* | տեսնեն, պիտի տեսնեն։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Տեսիր·* | տեսնէ· |
| *Տեսջիր, տեսանիջիր·* | տեսնէ, տեսնես· |
| *Մի՛ տեսանիր·* | մի տեսներ· |
| *Տեսարուք, տեսայք·* | տեսնեցէք· |
| . . . . | |
| *Մի՛ տեսանէք·* | մի տեսնէք։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Տեսանիցեմ·* | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| *Տեսանիցես·* | տեսնես, պիտի տեսնես. |
| *Տեսանիցէ·* | տեսնէ, պիտի տեսնէ. |
| *Տեսանիցեմք·* | տեսնենք, պիտի տեսնենք. |
| *Տեսանիցէք, տեսանիջիք·* | տեսնէք, պիտի տեսնէք. |
| *Տեսանիցեն·* | տեսնեն, պիտի տեսնեն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ· *Տեսանել, տեսանիլ·* տեսնել։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· *Տեսեալ·* տեսած, տեսնելով։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· *Տեսանելոց·* տեսնելու, որ պիտի տեսնէ։

218. Տես բաժնիս 'ի 188։ Ահա կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,

| | | |
|---|---|---|
| Անիծանիմ, | անիծայ. | անիծուիմ։ |
| Արկանիմ, | արկայ. | ձգուիմ, նետուիմ։ |
| Գտանիմ, | գտայ. | գտուիմ, գտնուիմ։ |
| Դիզանիմ, | դիզայ. | դիզուիմ։ |
| Կլանիմ, | կլայ. | կլլուիմ։ |
| Հատանիմ, | հատայ. | կտրուիմ, չէզոքաբար՝ փրթիմ։ |
| Հարցանիմ, | հարցայ. | հարցուիմ։ |
| Սպանանիմ, | սպանայ. | սպաննուիմ, մեռցուիմ։ |
| Ցուցանիմ, | ցուցայ. | ցուցուիմ։ |
| Հարկանիմ, | հարայ. | զարնուիմ։ |

| | | |
|---|---|---|
| Ածիմ, | ածայ. | բերուիմ։ |
| Բերիմ, | բերայ. | բերուիմ։ |
| Հանիմ, | հանայ. | հանուիմ (դուրս)։ |
| Հեղուսիմ, | հեղուսայ. | թափուիմ։ |

| | | |
|---|---|---|
| Դարձուցանիմ, | դարձուցայ. | դարձուիմ։ |
| Զեկուցանիմ, | զեկուցայ. | իմացուիմ, իմաց տրուիմ։ |
| Մատուցանիմ, | մատուցայ. | տրուիմ, մօտ բերուիմ։ |
| Կորուսանիմ, | կորուսայ. | կորսնցուիմ, կորուսուիմ, չէզոք՝ կորսուիմ։ |
| Փլուզանիմ, | փլուզայ. | փլցուիմ, չէզոքաբար՝ փլչիմ։ |

219. Աս ուցանեմ բայերուն երկանները, որ ուց ածանցեն 'ի զատ՝ ուց, եւս ալ ունին մէջերնին, բոլոր չեն կրաւորական ըլլալու. անոնց տեղը չէզոքները կը բանին. Ամրացուցանիմ, ապրեցուցանիմ ըսելու տեղը՝ ամրանամ, ապրիմ կ'ըսուի։

### 220. ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

Ագանիմ, ագայ, ագիր, ագուցեալ, ագեալ. — հագնիմ. հագնուիմ։

Ծնանիմ, ծնայ, ծնիր, ծնեալ. — ծնանիմ. ծնիմ կամ ծնուիմ։

Ուսանիմ, ուսայ, ուսիր, ուսարուք կամ ուսիք, ուսեալ. — սորվիմ. սորվուիմ։

Սկսանիմ, սկսայ, սկսիր, սկսարուք, սկսեալ. — սկսիմ. սկսուիմ։

Տանիմ, տարայ, տար՝ ներգործական. տարայք, տարերուք, տարեալ. — տանիմ. տարուիմ։

### 221. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Իջանիմ, իջայ, իջիր, իջարուք կամ ի- ջերուք, իջուցեալ. — տեղ մը իջնամ, գիշեր կենամ։

Անկանիմ, անկայ, անկիր, անկերուք, անկեալ. — իյնամ։

Հեծանիմ, հեծայ, հեծիր, հեծարուք, հեծեալ. — հեծնամ։

Մեռանիմ, մեռայ, մեռիր, մեռարուք, մեռեալ. — մեռնիմ։

Նստիմ, նստայ, նիստ (211), նստարուք, նստեալ. — նստիմ։

222. Ասանկ կը խոնարհին՝ չիմ, նչիմ ու մէկ երկու նչիմ, անիմ վերջացած չեզոք բայերն ալ։ Բայց քանի մը տեղ սովորաբար կտոր մը տարբերութիւն ունենալնուն՝ ամբողջ դնենք օրինակ մը.

223. ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Թաքչիմ. կը պահուըտիմ. | Թաքչիմք. կը պահուըտինք. |
| | Թաքչիս. | Թաքչիք. |
| | Թաքչի. | Թաքչին. |
| Անց. | Թաքչէի. | Թաքչէաք. |
| | Թաքչէիր. | Թաքչէիք. |
| | Թաքչէր. | Թաքչէին. |
| Կատ. | Թաքեայ. | Թաքեաք. |
| | Թաքեար. | Թաքեայք, Թաքերուք. |
| | Թաքեաւ. | Թաքեան. |
| Ապառ. | Թաքեայց, Թաքիցեմ. | Թաքիցուք, Թաքիցեմք. |
| | Թաքիցես. | Թաքիջիք, Թաքիցէք. |
| | Թաքիցէ. | Թաքիցեն. |
| ՀՐԱՄ. | Թաքիր. | Թաքերուք, Թաքեայք. |
| | Թաքիջիր, Թաքչիջիր. | . . . . |
| | Մի՛ Թաքչիր. | Մի՛ Թաքչիք. |
| ՍՏՈՐ. | Թաքչիցիմ. | Թաքչիցիմք. |
| | Թաքչիցիս. | Թաքչիցիք, Թաքչիջիք. |
| | Թաքչիցի. | Թաքչիցին. |

ԴԵՐԲ. Թաքչել. — Թաքուցեալ, երբեմն Թաքեալ. — Թաքչելոց:

| | |
|---|---|
| Թռչիմ, Թռեայ, Թռիր, Թռուցեալ. | Թռչիմ: |
| Հանգչիմ, Հանգեայ, Հանգիր, Հանգուցեալ. | Հանգչիմ: |
| Մատչիմ, մատեայ, մատիր, մատուցեալ. | Փրթանիմ, մօտենամ: |
| Փախչիմ, փախեայ, փախիր, փախուցեալ. | Փախչիմ: |
| Երկնչիմ, երկեայ, երկիր, երկուցեալ. | Վախնամ: |
| Կորնչիմ, կորեայ, կորիր, կորուսեալ. | Կորսուիմ: |
| Մարտնչիմ, մարտեայ, մարտիր, մարտուցեալ. | Կռուիմ: |
| Յառնչիմ, յառեայ, յառիր, յառուցեալ. | Ելլեմ, կանամ, յարմարեմ: |

Մեղանչեմ, մեղայ, մեղիր, մեղարուք, մե-
ղանչիցեմ, մեղուցեալ. մեղանչեմ,
Յանցանեմ, յանցեայ կամ յանցայ, յանցիր,
յանցանիցեմ, յանցուցեալ, յանցեալ. սխալեմ,
— Մարտնչիմ, մարտնչեցայ. Մեղանչեմ, մեղանչեցի
ալ կ'ըլլայ երբեմն։

## ՉՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

224. Ներգործական ԶԵՆՈՒՄ՝ արմատ զեն։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Զենում. | կը մորթեմ. | Զենումք. | կը մորթենք. |
| Զենուս. | կը մորթես. | Զենուք. | կը մորթէք. |
| Զենու. | կը մորթէ. | Զենուն. | կը մորթեն։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Զենուի[1]. | կը մորթէի. | Զենուաք. | կը մորթէինք. |
| Զենուիր. | կը մորթէիր. | Զենուիք. | կը մորթէիք. |
| Զենոյր. | կը մորթէր. | Զենուին. | կը մորթէին։ |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Զենի. | մորթեցի. | Զենաք. | մորթեցինք. |
| Զեներ. | մորթեցիր. | Զենէք, զենիք. | մորթեցիք. |
| Զեն, եզեն. | մորթեց. | Զենին. | մորթեցին։ |

---

1 Շատ տեղ Զենոյի, զենոյիր, զենոյաք, զենոյիք, զենոյին ալ կը գրուի։

## Ապառնի.

| | |
|---|---|
| Զենից, զենիցեմ. | մորթեմ, պիտի մորթեմ. |
| Զենցես. | մորթես, պիտի մորթես. |
| Զենցէ. | մորթէ, պիտի մորթէ. |
| Զենցուք, զենցեմք. | մորթենք, պիտի մորթենք. |
| Զենջիք, զենցէք. | մորթէք, պիտի մորթէք. |
| Զենցեն. | մորթեն, պիտի մորթեն: |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Զեն. | մորթէ. | Զենէք. | մորթեցէք. |
| Զենջիր. | մորթէ, մորթես. | . . . | |
| Մի զենուր. | մի մորթեր. | Մի զենուք. | մի մորթէք: |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Զենուցում. | մորթեմ, պիտի մորթեմ. |
| Զենուցուս. | մորթես, պիտի մորթես. |
| Զենուցու. | մորթէ, պիտի մորթէ. |
| Զենուցումք. | մորթենք, պիտի մորթենք. |
| Զենուցուք. | մորթէք, պիտի մորթէք. |
| Զենուցուն. | մորթեն, պիտի մորթեն: |

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. Զենուլ. մորթել:
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Զենեալ. մորթած, մորթելով:
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Զենլոց. մորթելու, որ պիտի մորթէ:

225. Ասանկ կը խոնարհին

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Արգելում, | արգելի, | արգել· | արգելեմ, թող չտամ. |
| Թողում, | թողի, | թող, եթող· | թողում, թող տամ. |
| Կիզում, | կիզի, | կէզ, եկէզ· | էրեմ. |
| Հեղում, | հեղի, | հեղ, եհեղ· | թափեմ. |
| Յաւելում, | յաւելի, | յաւել· | աւելցընեմ. |
| Առնում, | առի, | առ, էառ· | առնում, առնեմ. |
| Ընկենում, | ընկեցի, | ընկեաց կամ ընկէց· | նետեմ, ձգեմ. |
| Լնում, | լցի, | լից, ելից· | լեցնեմ. |
| Խնում, | խցի, | խից, եխից· | թխեմ, գոցեմ. |

226. Այս խոնարհմանս տակը չէզոք չկայ. բաւել է որ աս ըծորդութիւնս ներգործակաները չէզոք չունի.

227. Կրաւորական, ԶԵՆՈՒՄ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Զենում. | կը մորթուիմ. | Զենումք. | կը մորթուինք. |
| Զենուս. | կը մորթուիս. | Զենուք. | կը մորթուիք. |
| Զենու. | կը մորթուի. | Զենուն. | կը մորթուին. |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Զենուի. | կը մորթուէի. | Զենուաք. | կը մորթուէինք. |
| Զենուիր. | կը մորթուէիր. | Զենուիք. | կը մորթուէիք. |
| Զենոյր. | կը մորթուէր. | Զենուին. | կը մորթուէին. |

## Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Զենայ . | մորթուեցայ . |
| Զենար . | մորթուեցար . |
| Զենաւ . | մորթուեցաւ . |
| Զենաք . | մորթուեցանք . |
| Զենայք , զենարուք . | մորթուեցաք . |
| Զենան . | մորթուեցան : |

## Ապառնի .

| | |
|---|---|
| Զենայց , զենցիմ . | մորթուիմ , պիտի մորթուիմ . |
| Զենցիս . | մորթուիս , պիտի մորթուիս . |
| Զենցի . | մորթուի , պիտի մորթուի . |
| Զենցուք , զենցիմք . | մորթուինք , պիտի մորթուինք . |
| Զենջիք , զենցիք . | մորթուիք , պիտի մորթուիք . |
| Զենցին . | մորթուին , պիտի մորթուին : |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Զենիր . | մորթուէ . |
| Զենջիր . | մորթուէ , մորթուիս . |
| Մի զենուր . | մի մորթուիր . |
| Զենարուք , զենայք . | մորթուեցէք . |
| . . . . | |
| Մի զենուք . | մի մորթուիք : |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Զենուցում . | մորթուիմ , պիտի մորթուիմ . |
| Զենուցուս . | մորթուիս , պիտի մորթուիս . |
| Զենուցու . | մորթուի , պիտի մորթուի . |

Օծանուցումք · եաղլայալըմ, կէրէք եաղլայալըմ ·
Օծանուցուք · եաղլայասըզ, կէրէք եաղլայասըզ ·
Օծանուցուն · եաղլասընլար, կէրէք եաղլասընլար :

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ · Օծանել · եաղլամագ :
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ · Օծեալ · եաղլամըշ, եաղլայարագ :
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ · Օծելոց · եաղլայաճագ, որ կէրէք եաղ-լանա :

228 · Տես բաժնին ՚ի 188 : Ինչպէս կը տեսնես, աս լծորդութեան կատարեալը, ապառնին ու հրամայականը նոյն է ամէնուն երկրորդ ու երրորդ լծորդութեան երկրորդ օրինակներուն հետ :

229 · Ոմանց անհամանական ներկան ու ստորադասականը ին ալ կըլլայ երբեմն · Զենանիմ, զենանիցիմ, զենանիլ · Թողանիմ, թողանիլ · հեղանիմ, հեղանիլ · լնանիմ, լնանիլ :

230 · Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները,

Արգելում, արգելայ · ալըգօյտըմ :
Թողում, թողայ · պրագտըմ, չէզօք՝ գալտըմ :
Կիզում, կիզայ · եագտըմ, — եանտըմ :
Հեղում, հեղայ · տէօքտիւմ, — տէօքիւլտիւմ :
Յաւելում, յաւելայ · արթըրտըմ, — արթտըմ :
Առնում, առայ · ալտըմ :
Ընկենում, ընկեցայ · աթտըմ, տիւշիւրտիւմ, — տիւշտիւմ :
Լնում, լցայ · տօլտուրտում :
Խնում, խցայ · թըգատըմ, գափատըմ :

## 231 · ՀԱՄԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| *Զգենում, զգեցայ, զգեցիր ·* | հագնեմ. հագնուիմ. |
| *Ընթեռնում, ընթերցայ, ընթերցիր ·* | կարդամ. կարդացուիմ. |
| *Կալում / Կալնում* { *կալայ, կալ* կամ *կա, կա-լեր՝* ներգործական. *կա-լարուք, կալայք ·* | բռնեմ. բռնուիմ. |
| *Կլնում, կլայ, կլեր ·* | կլլեմ. կլլուիմ. |
| *Հանում, հանայ, հանիր ·* | հինեմ. հինուիմ. |

## 232 · ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐ

*Ասոնցմէ ոմանց կատարեալը* եայ *է,* կեմ *բայերուն պէս կը խոնարհին* (223), *շատը* կեմ *ալ կ՚ըլլան · մէկ քանին ալ տեղ տեղ քիչ մը կը խոտորին ·*

| | |
|---|---|
| *Զբօսնում, զբօսայ, զբօսեալ ·* | զբօսանք (սէյրա) ընեմ. |
| *Յենում, յեցայ, յեցեալ ·* | կռթընեմ. |
| *Ջեռնում, ջեռայ, ջեռեալ ·* | տաքնամ. |
| *Երդնում, երդուայ, երդուեալ ·* | երդում ընեմ. |
| *Քաղցնում, քաղցեայ, քաղցեալ ·* | անօթենամ. |
| *Զարթնում, զարթեայ, զար-թուցեալ ·* | արթըննամ. |
| *Թաքնում, թաքեայ, թաքուցեալ ·* | պահուըտիմ. |
| *Պակնում, պակեայ, պակուցեալ ·* | վախնամ. |
| *Ցածնում, ցածեայ, ցածուցեալ ·* | ցածնամ, իջնամ. |
| *Ցասնում, ցասեայ, ցասուցեալ ·* | սրդողիմ. |
| *Փախնում, փախեայ, փախուցեալ ·* | փախչիմ. |

## ԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

233. Քանի մը բայ կայ, որ տեղ տեղ կը խոտորին կանոնաւոր խոնարհմունքէ, կամ թէ բունք՝ երկու անկատար բայէ մէկ լման բայ մը կ՚ըլլան. ու ասոնք են ։

### ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

234. Ներգործական ՏԱԼ. արմատ տու, տուր ։

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Տամ. կուտամ. | Տանք. կուտանք. |
| | Տաս. | Տայք |
| | Տայ. | Տան. |
| անց. | Տայի. | Տայինք. |
| | Տայիր. | Տայիք. |
| | Տայր. | Տային. |
| կատ. | Ետու. | Տուաք. |
| | Ետուր. | Ետուք. |
| | Ետ. | Ետուն. |
| ապա. | Տաց, տացեմ. | Տացուք, տացեմք. |
| | Տացես. | Տաջիք, տացէք. |
| | Տացէ. | Տացեն. |
| ՀՐԱՄ. | Տուր. | Տուք. |
| | Տաջիր, տայջիր. | . . . |
| | Մի տար. | Մի տայք. |
| ՍՏՈՐ. | Տայցեմ. | Տայցեմք. |
| | Տայցես. | Տայցէք, տայջիք. |
| | Տայցէ. | Տայցեն. |

ԴԵՐԲ. Տալ. — Տուեալ. — Տալոց ։

### 235. Կրաւորական.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. կտր. | Տուայ. տրուեցայ. | Տուաք. տրուեցանք. |
| | Տուար. | Տուայք. |
| | Տուաւ. | Տուան. |
| ապռ. | Տացիմ, տուայց. | Տացիմք. |
| | Տացիս. | Տացիք. |
| | Տացի. | Տացին. |
| ՍՏՈՐ. | Տայցիմ. | Տայցիմք. |
| | Տայցիս. | Տայցիք, տայջիք. |
| | Տայցի. | Տայցին. |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Տուեալ, տուեցեալ։

236. Պակաս տեղերը սովորաբար կ'ըլլայ Տուեալ լինիմ, լինիս, լեր, լինել։ Բայց կայ ալ Տուիմ, տուիս, տուի. տուիմք, տուիք, տուին։

### 237. Չեզոք ԳԱԼ. անման է։

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ներկ. | Գամ. չուգամ. | Գամք. չուգամք. |
| | Գաս. | Գայք. |
| | Գայ. | Գան. |
| անց. | Գայի. | Գայաք. |
| | Գայիր. | Գայիք. |
| | Գայր. | Գային. |
| կտր. | Եկի. | Եկաք. |
| | Եկիր. | Եկիք'. |
| | Եկն. | Եկին. |

1 Եկեք կամ Եկայք ըսեր ամենեքին կատարեալին յոգնակի երկրորդ դէմքը։

| | | |
|---|---|---|
| ապա. | Եկից, եկեսցեմ. | Եկեսցուք, եկեսցեմք. |
| | Եկեսցես. | Եկեսջիք, եկեսցէք. |
| | Եկեսցէ. | Եկեսցեն. |
| ՀՐԱՄ. | Եկ. | Եկայք. |
| | Եկեսջիր, գայջիր. | . . . |
| | Մի՛ գար. | Մի՛ գայք. |
| ՍՏՈՐ. | Գայցեմ. | Գայցեմք. |
| | Գայցես. | Գայցէք, գայջիք. |
| | Գայցէ. | Գայցեն. |
| ԴԵՐԲ. | Գալ. — Եկեալ. — Գալոց: | |

238. Չէզոք ԵՐԹԱՄ. արմատ երթ, չոգ [1]:

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ներկ. | Երթամ. Չ'երթամ. | Երթամք. Չ'երթամք. |
| | Երթաս. | Երթայք. |
| | Երթայ. | Երթան. |
| անց. | Երթայի. | Երթայաք. |
| | Երթայիր. | Երթայիք. |
| | Երթայր. | Երթային. |
| կատ. | Չոգայ, չոքայ. | Չոգաք. |
| | Չոգար. | Չոգայք. |
| | Չոգաւ. | Չոգան. |
| ապա. | Երթայց, երթիցեմ. | Երթիցուք, երթիցեմք. |
| | Երթիցես. | Երթիջիք, երթիցէք. |
| | Երթիցէ. | Երթիցեն. |
| ՀՐԱՄ. | Երթ, չոգ. | Երթայք. |
| | Երթիջիր, երթայջիր | . . . |
| | Մի՛ երթար. | Մի՛ երթայք. |

---

1 Չոգ արմատէն կայ Չոգամ, չոգաս, չոգայ, չոգայի, չոգային, չոգալ. որ անսովոր են. միայն կատարեալը չոգայ սովորական եղեր է. ու չոգ հրամայականը լաւ գրոց մէջ կայ:

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Երթայցեմ. | Երթայցեմք. |
| | Երթայցես. | Երթայցէք, երթայջիք. |
| | Երթայցէ. | Երթայցեն. |

ԴԵՐԲ. Երթալ. — Երթեալ. — Երթալոց.

ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

239. Ներգործական ԱՌՆԵԼ. առնում, անել:

ՍԱՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Առնեմ. կ'ընեմ, կը շինեմ. | Առնեմք. կ'ընենք, կը շինենք. |
| | Առնես. | Առնէք. |
| | Առնէ. | Առնեն. |
| Անց. | Առնէի. | Առնէաք. |
| | Առնէիր. | Առնէիք. |
| | Առնէր. | Առնէին. |
| Կատ. | Արարի. | Արարաք. |
| | Արարեր. | Արարէք, արարիք. |
| | Արար. | Արարին. |
| Ապա. | Արարից, արասցեմ. | Արասցուք, արասցեմք. |
| | Արասցես. | Արասջիք, արասցէք. |
| | Արասցէ. | Արասցեն. |
| ՀՐԱՄ. | Արա. | Արարէք. |
| | Արասջիր, առնիջիր. | . . . |
| | Մի՛ առներ. | Մի՛ առնէք. |
| ՍՏՈՐ. | Առնիցեմ. | Առնիցեմք. |
| | Առնիցես. | Առնիցէք, առնիջիք. |
| | Առնիցէ. | Առնիցեն. |

ԴԵՐԲ. Առնել. — Արարեալ. — Առնելոց.

## 240. Կրաւորական, ԱՌՆԻՄ.

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Առնիմ: կ'ըլլուիմ, կ'ըլլամ. | Առնիմք. կ'ըլլուինք, կ'ըլլանք. |
| | Առնիս. | Առնիք. |
| | Առնի. | Առնին. |
| Անց. | Առնէի. | Առնէաք. |
| | Առնէիր. | Առնէիք. |
| | Առնէր. | Առնէին. |
| Կտր. | Արարայ. | Արարաք. |
| | Արարար. | Արարայք. |
| | Արարաւ. | Արարան. |
| Ապռ. | Արարայց, արասցիմ: | Արասցուք, առասցիմք. |
| | Արասցիս. | Արասջիք, արասցիք. |
| | Արասցի. | Արասցին. |
| ՀՐԱՄ. | —— | —— |
| | Արասջիր, առնիջիր. | . . . . |
| | Մի առնիր. | Մի առնիք. |
| ՍՏՈՐ. | Առնիցիմ. | Առնիցիմք. |
| | Առնիցիս. | Առնիցիք, առնիջիք. |
| | Առնիցի. | Առնիցին. |

ԴԵՐԲ. Առնել, առնուլ. — Արարեալ. — Առնելոց.

## 241. Ներգործական ԳՆԵՄ. ալմագ, գէր.

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Գնեմ. կը գնեմ. | Գնեմք. կը գնենք. |
| | Գնես. | Գնէք. |
| | Գնէ. | Գնեն. |
| Անց. | Գնէի. | Գնէաք. |
| | Գնէիր. | Գնէիք. |
| | Գնէր. | Գնէին. |

| | | |
|---|---|---|
| Կտր. | Եդի. | Եդաք. |
| | Եդիր, եդեր. | Եդիք. |
| | Եդ. | Եդին. |
| Ապռ. | Եդից, դիցեմ. | Դիցուք, դիցեմք. |
| | Դիցես. | Դիջիք, դիցէք. |
| | Դիցէ. | Դիցեն. |
| ՀՐԱՄ. | Դիր. | Դիք. |
| | Դիջիր, դնիջիր. | . . . |
| | Մի դներ. | Մի դնէք. |
| ՍՏՈՐ. | Դնիցեմ. | Դնիցեմք. |
| | Դնիցես. | Դնիցէք, դնիջիք. |
| | Դնիցէ. | Դնիցեն. |

ԴԵՐԲ. Դնել. — Եդեալ. — Դնելոց.

---

242. Կրաւորական, ԴՆԻՄ.

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Դնիմ. կը դրուիմ, կամ. | Դնիմք. կը դրուինք, կանք. |
| | Դնիս. | Դնիք. |
| | Դնի. | Դնին. |
| Անկ. | Դնէի. | Դնէաք. |
| | Դնէիր. | Դնէիք. |
| | Դնէր, դնիւր. | Դնէին. |
| Կտր. | Եդայ. | Եդաք. |
| | Եդար. | Եդայք, եդարուք. |
| | Եդաւ. | Եդան. |
| Ապռ. | Եդայց, դիցիմ. | Դիցուք, դիցիմք. |
| | Դիցիս. | Դիջիք, դիցիք. |
| | Դիցի. | Դիցին. |
| ՀՐԱՄ. | —— | Եդարուք, եդայք. |
| | Դիջիր, դնիջիր. | . . . |
| | Մի դնիր. | Մի դնիք. |

ՍՏՈՐ. Գնիցիմ. Գնիցիմք.
Գնիցիս. Գնիցիք, գնիջիք.
Գնիցի. Գնիցին.
ԴԵՐԲ. Գնել, գնիլ. — Լոգեալ. — Գնելոյ։

---

243. Ներգործական ՈՒՏԵՄ. անկանոն (պբ), կեր։

ՍՀՄ.
Ներկ. Ուտեմ. կ'ուտեմ. Ուտեմք. կ'ուտենք.
Ուտես. Ուտէք.
Ուտէ. Ուտեն.
Անց. Ուտէի. Ուտէաք.
Ուտէիր. Ուտէիք.
Ուտէր. Ուտէին.
Կտր. Կերայ[1]. Կերաք.
Կերար. Կերայք.
Կերաւ, եկեր. Կերան.
Ապա. Կերայց, կերիցեմ. Կերիցուք, կերիցեմք.
Կերիցես. Կերիջիք, կերիցէք.
Կերիցէ. Կերիցեն.
ՀՐԱՄ. Կեր. Կերայք, կերէք.
Կերիջիր, ուտիջիր. . . . .
Մ՛ի ուտեր. Մ՛ի ուտէք.
ՍՏՈՐ. Ուտիցեմ. Ուտիցեմք.
Ուտիցես. Ուտիցէք, ուտիջիք.
Ուտիցէ. Ուտիցեն.
ԴԵՐԲ. Ուտել. — Կերեալ. — Ուտելոյ։

---

1 Կերի, կերեր, կերեւ, կերին, ապառնի կերից, չգտանւեցաւ բուն նախնեաց գրոց մէջ։

## 244. Կրաւորական, ՈՒՏԻՄ.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| Ներկ. | Ուտիմ. չ'ուտուիմ. | Ուտիմք. չ'ուտուինք. |
| | Ուտիս. | Ուտիք. |
| | Ուտի. | Ուտին. |
| Անց. | Ուտէի. | Ուտէաք. |
| | Ուտէիր. | Ուտէիք. |
| | Ուտէր. | Ուտէին. |
| Կտր. | Կերայ. | Կերաք. |
| | Կերար. | Կերայք. |
| | Կերաւ. | Կերան. |
| Ապռ. | Կերայց, կերիցիմ. | Կերիցուք, կերիցիմք. |
| | Կերիցիս. | Կերիջիք, կերիցիք. |
| | Կերիցի. | Կերիցին. |
| ՀՐԱՄ. | — | — |
| | Կերիջիր, ուտիջիր. | . . . |
| | Մ'ի ուտիր. | Մ'ի ուտիք. |
| ՍՏՈՐ. | Ուտիցիմ. | Ուտիցիմք. |
| | Ուտիցիս. | Ուտիցիք, ուտիջիք. |
| | Ուտիցի. | Ուտիցին. |
| ԴԻՐԲ. | Ուտել, ուտիլ. — | Կերեալ. — Ուտելոց: |

## 245. Չէզոք ՅԱՌՆԵԼ. արմատ յար' կամ յարեր:

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| Ներկ. | Յառնեմ. ոտք չ'ելլեմ. | Յառնեմք. ոտք չ'ելլենք. |
| | Յառնես. | Յառնէք. |
| | Յառնէ. | Յառնեն. |

1 Այս բային ու Յարնչիմ բային (223) արմատը մէկ ըլլալուն, խոնարհումն ալ նման է:

| | | |
|---|---|---|
| անկ. | Յառնէի. | Յառնէաք. |
| | Յառնէիր. | Յառնէիք. |
| | Յառնէր. | Յառնէին. |
| կտր. | Յարեայ. | Յարեաք. |
| | Յարեար. | Յարեայք, յարերուք. |
| | Յարեաւ. | Յարեան. |
| ապռ. | Յարեայց, յարիցեմ. | Յարիցուք, յարիցեմք. |
| | Յարիցես. | Յարիջիք, յարիցէք. |
| | Յարիցէ. | Յարիցեն. |
| ՀՐԱՄ. | Արի, յարիր. | Արիք, յարիք, յարերուք. |
| | Յարիջիր, յառնիջիր. | . . . |
| | Մի յառներ. | Մի յառնէք. |
| ՍՏՈՐ. | Յառնիցեմ. | Յառնիցեմք. |
| | Յառնիցես. | Յառնիցէք, յառնիջիք. |
| | Յառնիցէ. | Յառնիցեն. |

ԴԵՐԲ. Յառնել. — Յարուցեալ. — Յառնելոյ.

246. Արտաքի բայերուն տեղ տեղ անսովոր կերպերն ալ կայ, որ չգրեմք.

## ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՅԵՐ

247. Քանի մը բայեր ալ կան, որ տեղ տեղ կը պակսին, և ուրիշ ամբողջ բայէ կը լեցուին. և ասոնք են.

### ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

### ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԻՆ ՊԷՍ

248. Ներգործական ԱՌՆԵԼ. արմատ առէ.

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| կտր. | Արարի. խմեչ. | Արարաք. խմեչեն. |
| | Արարեր. | Արարէք, արարիք. |
| | Արար, եարր. | Արարին. |

ապա · Արբից, արբցեմ: Արբցուք, արբցումք ·
Արբցես · Արբջիք, արբցէք ·
Արբցէ · Արբցեն ·
ՀՐԱՄ · Արբ · Արբէք ·
Արբջիր · . . .
ԴԵՐԲ · ԱՆՑԵԱԼ · Արբեալ:

249 · Մնացածը կը լեցընէ Ըմպել, ըմպեցի, ամբողջ բայէն · ինչպէս կրաւորականն ալ, որ կ՚ըլլայ նաև Արբեալ լինիմ, եղէ, և այլն:

250 · Ներգործական ԼՈՒԱՑ · արմատ լուա-, լուաց ·

ՍՀՄ ·

կտր · Լուայ · լուացի · Լուաք · լուացինք ·
Լուար · Լուայք, լուարուք ·
Լուաւ · Լուան ·
ապա · Լուայց, լուիցեմ: Լուիցուք, լուիցեմք ·
Լուիցես · Լուիջիք, լուիցէք ·
Լուիցէ · Լուիցեն ·
ՀՐԱՄ · Լուր · Լուարուք ·
Լուիջիր · . . .
ԴԵՐԲ · ԱՆՑԵԱԼ · Լուեալ:

251 · Պակասը կ՚առնէ Լսեմ, լսեցի ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ կ՚ըլլայ նաև Լուեալ լինիմ, լուր կամ լու լինիմ, լսելի լինիմ, եղէ, և այլն:

Կրաւորական ապառնին կ՚ըլլայ նաև

Լուիցիմ: Լուիցիմք ·
Լուիցիս · Լուիջիք, լուիցիք ·
Լուիցի · Լուիցին:

252 · Ներգործական ԾԱՆԵԱՅ · արմատ ծան ։

ՍՀՄ ·

| | | |
|---|---|---|
| Կատ · | Ծանեայ · ճանչցայ · | Ծանեաք · ճանչցանք · |
| | Ծանեար · | Ծանեայք, ծաներուք · |
| | Ծանեաւ · | Ծանեան · |
| Ապա · | Ծանեայց, ծանիցեմ · | Ծանիցուք, ծանիցեմք · |
| | Ծանիցես · | Ծանիջիք, ծանիցէք · |
| | Ծանիցէ · | Ծանիցեն · |
| ՀՐԱՄ · | Ծանիր · | Ծանիք, ծաներուք · |
| | Ծանիջիր · | · · · |

ԴԵՐԲ · ԱՆՑԵԱԼ · Ծանուցեալ ։

253 · Պակասը կը լեցուի Ճանաչեմ, Ճանաչեցի ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Ծանուցեալ լինիմ, եղէ, և այլն · կամ Ծանուցանիմ, ծանուցայ, ըստ 218 ։

Կրաւորական ապառնին կ'ըլլայ նաև

| | |
|---|---|
| Ծանիցիմ · | Ծանիցիմք · |
| Ծանիցիս · | Ծանիջիք, ծանիցիք · |
| Ծանիցի · | Ծանիցին ։ |

254 · Հասարակ ՈՒՆԻՄ · արմատ ուն, կալ ։

ՍՀՄ ·

| | | |
|---|---|---|
| Ներկ · | Ունիմ · ունեմ, կը բռնեմ, կը բռնուեմ · | Ունիմք · ունենք, կը բռնենք, կը բռնուենք · |
| | Ունիս · | Ունիք · |
| | Ունի · | Ունին · |

| | | |
|---|---|---|
| ԱՆՑ. | Ունէի. | Ունէաք. |
| | Ունէիր. | Ունէիք. |
| | Ունէր. | Ունէին. |
| ԿԱՐ. | Կալայ. | Կալաք. |
| | Կալար. | Կալայք, կալարուք. |
| | Կալաւ. | Կալան. |
| ԱՊԱ. | Կալայց, կալցիմ. կալ-ցեմ, Ներգ. | Կալցուք, կալցիմք. կալ-ցեմք, Ներգործ. |
| | Կալցիս. կալցես. | Կալջիք, կալցիք. կալցէք. |
| | Կալցի. կալցէ. | Կալցին. կալցեն. |
| ՀՐԱՄ. | Կալ, կա. | Կալարուք, կալայք. կա-լէք, Ներգործ. |
| | Կալջիր, ունիջիր. | . . . |
| | Մի՛ ունիր. | Մի՛ ունիք. |
| ՍՏՈՐ. | Ունիցիմ. | Ունիցիմք. |
| | Ունիցիս. | Ունիցիք, ունիջիք. |
| | Ունիցի. | Ունիցին. |
| ԴԵՐԲ. | Ունել. — Կալեալ. — Ունելոց։ | |

255. Կալում, կալնում ամբողջ բայ է ինչպես տեսանք վերը (231). Ունիմ պակասաւորը անոր խառնուեցաւ. ու աւելի ասանկ խառն կը բանի, ինչպես մէկալ ամէն պակասաւորներն ալ։

256. Ասանկ կը խոնարհի Ընդունիլ. միայն կենին քովը դան կը կորսնցընէ. Ընկալայ, ընկալայց, ընկալ, ընկալեալ։ Նորերն ալ կ'ըլլայ ընդունեցայ կամ ընդունեցի, ընդունեա, ընդունեալ։

257. Պակասաւոր են եսեւի բայերն ալ, որ տեղէ մ'ալ չեն լեցըներ պակասնին, հապա այսչափ միայն կը բանին.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ՆԵՐԿ. | Պարտիմ: | պէտք է ինծի որ. |
| | Պարտիս. | պէտք է քեզի որ. |
| | Պարտի. | պէտք է անոր որ. |
| | Պարտիմք. | պէտք է մեզի որ. |
| | Պարտիք. | պէտք է ձեզի որ. |
| | Պարտին. | պէտք է անոնց որ. |
| ԱՆՑ. | Պարտէի. | պէտք էր ինծի որ. |
| | Պարտէիր. | պէտք էր քեզի որ. |
| | Պարտէր. | պէտք էր անոր որ. |
| | Պարտէաք. | պէտք էր մեզի որ. |
| | Պարտէիք. | պէտք էր ձեզի որ. |
| | Պարտէին. | պէտք էր անոնց որ. |
| ՍՏՈՐ. | Պարտիցիմ: | պէտք ըլլայ ինծի որ. |
| | Պարտիցիս. | պէտք ըլլայ քեզի որ. |
| | Պարտիցի. | պէտք ըլլայ անոր որ. |
| | Պարտիցիմք. | պէտք ըլլայ մեզի որ. |
| | Պարտիցիք. | պէտք ըլլայ ձեզի որ. |
| | Պարտիցին. | պէտք ըլլայ անոնց որ. |
| ԴԵՐԲ. | Պարտել. | պէտք ըլլալ: |

258. Իսկ Պարտիմ, պարտեցայ, պարտեցայց, կը նշանակէ պարտական եմ, պարտք ունիմ տալու: Ուրիշ է Պարտեմ, պարտիմ ալ, որ յաղթեմ, յաղթուիմ ըսել է:

259. ՍՀՄ. ապա. —— ——

| | | |
|---|---|---|
| | Գոգցես. | ըսես, ասես. |
| | Գոգցէ. | ըսէ, ասէ. |
| | Գոգցուք. | ըսենք, ասենք. |
| | Գոգջիք. | ըսէք, ասէք. |
| | Գոգցեն. | ըսեն, ասեն. |
| ՀՐԱՄ. | Գոգ. | ըսէ, ասէ. |
| | Գոգջիր. | ըսէ, ըսես, եւն. |
| | Գոգէք. | ըսէք, ասացէք. |
| | . . . | . . . . |
| ԴԵՐԲ. | Գոգել. | ըսել, ասել: |

## ԱՆԴԻՄ ԲԱՅԵՐ

260. Բանի մը բայ ալ կայ խիստ պակասաւոր, որ միայն մէկ քանի եզակի երրորդ դէմքերնին կը բանի, ան ալ առանց ուղղական անուանի մը որ գործող դէմք մը յայտնէ ։ Ու ասանկ դէմք յայտնող ուղղական անուանի մը չունենալնուն՝ անդէմ ըսուած են. ու ասոնք են ։

261. Մարթի. կարելի է որ. Մարթի այդմ լինել. կարելի է որ այդ ըլլայ. Մարթի լինել. կարելի է որ ըլլայ. Մարթի ինձ առնել, գալ. կարելի է որ բռնեմ, գամ. կրնամ բռնել, գալ. Մարթի առնել, գալ. կարելի է բռնել, գալ ։

Մարթէր. կարելի էր որ. Մարթէր քեզ առնել, գալ. կարելի էր որ բռնէիր, գայիր ։

Մարթիցի. կարելի ըլլայ որ. Մարթիցի նմա առնել, գալ. կարելի ըլլայ որ բռնէ, գայ ։

262. Պիտի. պէտք է. Պիտի առնել, գալ. պէտք է բռնել, գալ ։

Պիտէր. պէտք էր. Պիտէր առնել, գալ. պէտք էր բռնել, գալ. Ո՞չ պիտէր. հարկ պէտք էր ։

Պիտեցաւ. պէտք եղաւ. Պիտեցաւ ժամանակի. ատենի պէտք եղաւ, ատեն պէտք եղաւ ։

Պիտասցի } Պիտիցի } պէտք ըլլայ. { Պիտիցի առնել, գալ. պէտք ըլլայ բռնել, գալ. պէտք ըլլայ որ բռնեմ, բռնես, բռնէ, ևն ։

263. Ցաւէ ինձ, քեզ, նմա. ցաւ կ'ըլլայ ինծի, քեզի, անոր ։

Ցաւէր ինձ, քեզ, նմա. ցաւ կ'ըլլար ինծի, քեզի, անոր ։

Ցաւեաց ինձ, քեզ, նմա. ցաւ եղաւ ինծի, քեզի, անոր ։

Ցաւեսցէ կամ ցաւեսցի } Ցաւիցէ կամ ցաւիցի } ինձ, քեզ, նմա. { ցաւ ըլլայ ինծի, քեզի, անոր ։

264 . Բայց Մարթեմ (198) որ Մարթանամ ալ կ'ըսուի , կրնամ , Ջանիմ՝ կը ջանամ , ամբողջ ու դիմաւոր են . ու Պիտի , երբոր նշանակէ պարտի (257) կամ բան մը պէտք է , դիմաւոր է ու յոգնակի ալ կը բանի . Միայն ոչ պիտի ծածկել զգլուխ իւր . էրիկ մարդը ծածկելու չէ գլուխը : Պիտի ենք . պիտէք կեալ . բազմութիւք պիտին :

265 . Ուրիշ դիմաւոր ու ամբողջ բայերու եզակի երրորդ դէմքն ալ երբեմն անդէմի պէս կը բանի .
Պիտակեցի մեզ թողուլ զաշխարհ . ըլլայ որ թողունք աշխարհքս :
Ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել . կղզի մը պէտք է իյնանք :
Եհաս նմա թագաւորել . եղաւ որ թագաւորեց :
Թէ և մեռանել հասանիցէ . մեռնիլ ալ ըլլայ նէ :
Ասանկ անդէմի պէս կ'ըսուի , Ասի , լի , երևի , թուի , կարծի ինձ , ամենց :

## ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

266 . Բայեր կան որ կրաւորական խոնարհումին չեզոքի փոխուելով ամենևին ուրիշ բան կը նշանակէ . ինչպէս ,
Ժտեմ, խնդրել . Ժտիմ, յանդգնիլ, համարձակիլ :
Կրեմ, կրել, տանիլ . Կրիմ, ըլլալ, գտնուիլ :
Պաշտեմ, ծառայել . Պաշտիմ, բանեցնել, բանի գալ, ըլլալ :

267 . Երբոր բան մը ինք իր վրան ընել նշանակուի , ներգործականի տեղ կրաւորական խոնարհում կը բանի , հասարակ բայի պէս : Ասանկ կ'ըսուի Լուացայց զձեռս իմ . ձեռքերս լուամ կամ ձեռքերս լուացուիմ :
Բաժանեցան զաւար . Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս . աւարը մէջերնին բաժնեցին , լաթերս մէջերնին բաժնեցին :
Գօտի ընդ մէջ իւր ածաւ . իր մէջը գօտի կապեց :
Արկաւ հանդերձ . լաթ հագաւ . Արկաւ ուռն և զարդարեցաւ . լալ կամ զօր ... զարդարուեցաւ :
Եդաւ զթագ . հագաւ կամ իր գլուխը դրաւ թագը :

268 . Երբեմն ուրիշ ներգործական ու ներգործականերով չեզոք բայերն ալ կրաւորականերով խոնարհումով կ'ըսուին , Տեսանեմ, տեսայ . Գտանեմ, գտայ . Հարցանեմ, հարցաւ զնոյն բան . Ցարկանեմ, յարկար զվերնայարկն նորա . — Ելանեմ, ելայ . Հասանեմ, հասանիմ, հասայ . Անցանեմ, անցանիմ, անցայ . փոխանակ ըսելու Տեսի , գտի , եհարց

զնոյն բան, յարկեր զվերնայարկս նորա, [illegible] կամ [illegible] [illegible] . եղի, հասի, անցի ։

269 . Ամէն բայերու ապառնին ու ստորադասականը մէկմէկու տեղ ալ կը բանին, ու հրամայականի տեղ ալ ։ Վրանին մի ալ կը գրուի . մի սիրեսցես, մի սիրեսջիք, մի սիրեսցեն . մի սիրիցես, մի ուսանիցես, մի ուսանիցեք, մի համարիցիք [illegible] մի համարիջիք ։ Երկրորդ կերպ եզակի հրամայականին ալ կը գրուի երբեմն մի . Կերիցես և մի յագեսջիր . մի կեցջիր, զի ասա խօսեցար . մի յագեսցիս, մի կեցցես ըսելու տեղը ։

270 . Ապառնիները տեսար որ երկու կերպ են . [illegible], [illegible] կամ [illegible], [illegible] . — [illegible], [illegible], [illegible] . [illegible] վերջացածները՝ սովորական են . [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] վերջացածները՝ շատ չեն գործածուիր ամէն բայի անխտիր ։ Որոնց մէջ որ բային արմատին ցան ալ փոխուած չկայ նէ (169), անոնք աւելի կը գործածուին . ինչպէս, կեցցեմ, ուսցեմ, հանցեմ, թաքիցեմ, զենցեմ, տացեմ, երթիցեմ, դիցեմ, կերիցեմ, յարիցեմ, և այլն . եղիցիմ, ծնցիմ, ուսցիմ, տարցիմ, լուիցիմ, ծանիցիմ, և այլն . որ ամէնն ալ ապառնի են, և ոչ ստորադասական, ինչպէս ցան ալ փոխուածներն ալ ։

271 . Ջիր վերջացած երկրորդ կերպ հրամայականը՝ ապառնիի ու ստորադասականի եզակիի պէս ալ կը նշանակէ, չէ թէ միայն [illegible], [illegible], ըսոր ուսար տեղը, հապա նաև [illegible] [illegible] . [illegible] [illegible] . ինչպէս, Եւ ահա յղասջիր և ծնցես որդի . [illegible] ։

Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյ կոչեսջիր . զի երթիցես առաջի երեսաց տեառն . [illegible] ։

Այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր . [illegible] ։

Բայց ալ ուրիշ կերպ ապառնիի կամ ստորադասականի պէս՝ պայմանով մը ուրիշ բայէ կախուած չբանիր . օրինակ իմն՝ չըսուիր Եթէ յղասջիր . թէ կամ զի կոչեսջիր . որպէս զի գիտասջիր ։

272 . Սահմանական ներկան ու անկատարը՝ ապառնիի ու ստորադասականի պէս պայմանով ուրիշ բայէ կախուած ալ կը բանին . ինչպէս . Եկ առաքեմ զքեզ . [illegible] . Եկ առաքեցից կամ զի առաքիցեմ ըսելու տեղը ։

Աղաչեմ հրամայես բանալ . [illegible] . Աղաչեմ զի հրամայեսցես կամ հրամայիցես ըսելու տեղը ։

Թող անխծանէ . Թող դրեմ և ցուցանեմ . [illegible] . [illegible] ։

Զազգատոհմ իմ խնդրես, թէ վարձուոր՝ որ երթայ ընդ որդւոյդ քում ։

Լաւ է ձեզ եթէ ես երթամ ։

Ապա թէ աղն անհամի, իւ յաղիցի ։

Կամիս զի ծածկես ։

Զի որ ընթեռնուցուն, համարձակ ընթեռնու ։

Երանի թէ էի [illegible] ըլլայի ․ [illegible] ։
Մարդ չէր՝ որ գործէր զերկիր ․ [illegible] ։
Եթէ կայք, ու հաղորդէայք ․ [illegible] ։
Արժան էր՝ զի վկայէին ․ [illegible] ։
Որպէս զի արժանի լինէին ․ [illegible] ։
Թող ինքն նախ երթայր առնոյր ․ [illegible] ։

273 ․ Ասանկ ալ կ՚ըսուի երբեմն ․ իմանաս և տալս պատուհասես ․ Բարկանայք և մի մեղանչէք ․ փոխանակ ըսելու, իմացիր կամ իմա-ցէք, և տալս պատուհասեցես կամ պատուհասեսցիր ․ Բարկասջիք կամ բարկանայցէք, բարկացարուք կամ բարկացէք և մի մեղանչէք ։ Մի լի-նիս, [illegible] ․ մի լաս, [illegible] ․ մի ոք քանոյ, [illegible] ․ մի պատմես, [illegible] ․ մի գտանիս, [illegible], մի առնես, [illegible] ․ մի անցանէք, [illegible] ․ մի վաճառեմք, [illegible] ․ մի զայրացուցանեն, [illegible] ։

274 ․ Ստորադասականն ու ապառնին՝ երբեմն սահմանականի ներ-կայի տեղ ալ կը բանին ․ ինչպէս

Գիտեմ թէ այդ այդպէս իցէ ․ [illegible] ։
Եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի կամ արձակիցէք ․ [illegible]
[illegible] ։
Գիտացիցես արդեօք զոր ընթեռնուցուս ․ [illegible] ։
— Ո՞ւր իցեն որ գեհենին չհաւատայցեն ․ [illegible]
[illegible] ։
Ո՞յր վնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի ․ [illegible],
[illegible] ։

275 ․ Երբեմն ալ սահմանականի անկատարի տեղ՝ ստորադասական անկատարի տեղ կը բանին ․ ինչպէս, Փութայր, եթէ հնար ինչ իցէ նմա․ փոխանակ ըսելու՝ եթէ հնար ինչ էր ․ [illegible] ։
Որոյ չգոյր տեղի ուր զգլուխն դնիցէ ․ [illegible]
[illegible] ։

Եթէ տեսանէր, Թագաւորդ ողջունէր մինչև սթափեցուցանէր զնա ․ [illegible]
[illegible] ։

276 ․ Նախնիք երբեմն երկրորդ ըծորդութեան առաջին օրինակի բայերը՝ երկրորդ օրինակին պէս ալ կը խոնարհէին, երկրորդինն ալ՝ առաջինին պէս ․ զոր օրինակ կ՚ըսեն կատարեալը՝ Բժշկեր, քեցին, ձուլար, գիտաւ, կռուաւ, հեղքեաւ, պարտեաւ, փոխանակ ըսելու՝ Բժշկեցեր, քեցեցին, ձուլեցար, գիտեցաւ, կռուեցաւ, հեղքեցաւ, պարտեցաւ ։ Կ՚ըսեն հրամայական՝ խնդրէք, լսէք, ասէք, փոխանակ ըսելու՝ խնդրեցէք, լսեցէք, [illegible] լուարուք, ասացէք ։ — Կ՚ըսեն՝ Հանեցի, հանեալ, տարածանեցեր, անիծանեցես, առաւանեսջիք, առաքեցեմ, առ-աքեցես, ափածիցիմ, նստեցայ, նստեցան, լուծանեալ, առնեցեալ, սպա-նեցէք, սպանանեալ ․ փոխանակ ըսելու՝ Հանի, հան [illegible] և հան, տարա-ծեցեր, անիծցես, առաջիք, առաքիցեմ, առաքիցես, ափածանիցիմ, նստայ, նստան, լուծեալ, առեալ, սպանէք, սպանեալ ։

Ուրիշ կերպ կերպ անսովոր բաներ ալ կ՚ընեն, որ ընդարձակ քերա-կանութենէ կամ բառգիրքէ սորվելու է ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԳԵՐԲԱՅ

277. *Այս բառերս, ինչպէս ըսինք (162), գերբայ կ'ըսուին իրաւամբք, վասն զի շատ անգամ բայի տեղ կը բանին, ինչպէս որ անուան տեղ դրուած բառերն ալ գերանուն կ'ըսուին։*

278. Անորոշ դերբայն *շատ անգամ, անանկ ինչպէս որ է, ուրիշ բայի քով կը դրուի՝ սպառնիլի կամ ստորադասականի տեղ. ինչպէս,*

*Ինձ տացէ Աստուած ասել.* Աստուած տայ ինծի որ ըսեմ։

*Պատուիրեցի քեզ չուտել.* պատուիրեցի քեզի որ չուտես։

*Հրամայեաց առ բարեկամսն երթալ և դարման գտանել.* հրամմեց որ բարեկամներուն երթայ ու դարման գտնէ կամ երթան ու դարման գտնեն, *թէ որ շատի վրայ ըլլայ։*

*Ակնարկէին ընկերացն՝ գալ օգնել նոցա.* նշան կ'ընէին ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց։

*Արբեսցես զնոսա՝ քահանայանալ նոցա ինձ* կամ *զի քահանայասցին ինձ։*

*Ոչ ապաքէն զի քննեսցեն զքաղաքս և դիտել զերկիրս եկին։*

*Մի ոք որ չար իցէ, յուսասցի անպարտ լինել.* Ան որ չար է՝ չյուսայ որ անպարտ ըլլայ կամ որ անպարտ պիտի ըլլայ, *փոխանակ ըսելու՝ Մի յուսասցի թէ անպարտ լինիցի։*

279. *Շատ հեղ ալ սահմանական եղանակին ժամանակներուն տեղը կը դրուի. ինչպէս,*

*Զ Հայկակ ասեն լինել առ Նինոսիւ.* Հայկակ կ'ըսեն թէ Նինոսին ատենն էր։

Ասելին որոտումն լինել. կ'ըսէին թէ որոտած է կամ որոտած կ'ըլլայ կոր կամ որոտած եղաւ ։
Պատասխանի ետուն չգիտել. պատասխան տուին թէ չի-տէնք կամ թէ չիտէն ։
Կարծելին կարել կարկատել. կը կարծէին թէ կրնան կար-կըտել, կամ թէ պիտի կարենան կարկտել (278)։

280. Շատ անգամ ալ գոյական անուան պէս կը բանի, ու կը հոլովի եզակի ըստ 31, ածական ալ կ'առնէ. Լինել, լինելոյ, լինելով, 'ի լինելոյ, զլինել, 'ի լինել, առ 'ի լինել, 'ի լինելն, ընդ լինելն. Գալ, գալոյ, գալով, 'ի գալոյ, զգալն, 'ի գալ. Սիրել կամ Սիրելն, սիրելոյ, սիրելով, 'ի սիրելոյ, զսիրել, 'ի սիրել, առ 'ի սիրել, 'ի սիրելն, ընդ սիրելն. Տեսանել, տեսանելոյ, տեսանելով, 'ի տեսանելոյ, զտեսանելն, 'ի տեսանելն. Առնուլ, առնլոյ, զառնուլն, յառնուլն, եւ այլն ։ Ու ասանկ հոլոված ալ բայի տեղ կը բանի երբեմն։

Ածականով ալ կ'ըսուի, Մեծաւ գոչելով, մեծաւ պատուիրելով, 'ի մեծ խրոխտալոյն, 'ի խօսել իմում, 'ի չուել քում, յաղաչել քում, յառնելն իւրում։

281. Ի, առ, առ 'ի նախդրիւ սրականը շատ տեղ կը բանի՝ ալ, որպէս ալ ըսելու տեղը ապառնիով կամ ստորադասականով, որ համար կը նշանակէ. Ինչպէս,
Ի լսել կամ առ 'ի լսել եկեալ եմ. եկեր եմ լսելու, որ լսեմ։
Ոչ առ ատել. չէ ատելու համար, որ ատեմ կամ ատէս, կամ ատէ, և այլն ։
Մտանեմք անդր առ 'ի խուզելոյ զնեզ. հոն կը մտնենք կոր որ կրնանք փնտռեն կամ փնտռելու համար (148)։

282. Նոյն մտքով ուղղական ալ կ'ըսուի շատ տեղ. Կոչեաց հարցանել. կանչեց հարցնելու համար կամ որ հարցնէ ։
Եկիր կորուսանել. եկար կորսընցընելու համար, որ կորսընցընես։
Եդ զնոսա՝ լուսատու լինել յերկիր. դրաւ անոնք լոյս տալու համար, որ լոյս տան ։

Նոյն էր թէ ըսելը, առ 'ի հարցանել, առ 'ի կորուսա-նել, առ 'ի լուսաւոր լինել։

283. Ի, ընդ նախդրիւ տրականը ու գործիականը շատ տեղ կը բանի՝ յորժամ, երբ, որովհետեւ, վասն զի, թէ-պէտ եւ ըսելու տեղը դիմաւոր բայով. ինչպէս,
Ի տեսանելն զքեզ՝ բերկրեսցի. երբոր տեսնէ քեզ, պիտի ուրախանայ։
Յերթալդ քո և 'ի դառնալդ. երբոր երթաս ու դառնաս կամ երթալուդ ու դառնալուդ։
Ի խօսել իմում, յառնելն իւրում. երբոր խօսիմ կամ կը խօսէի, երբոր ելնէ կամ կ'ելնէր։
Ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա. երբոր կ'երթար նէ կամ երթալնին ժողովուրդները նեղութիւն կու-տային անոր։
Ի դառնալ մեղաւորին՝ կեցցէ. թէ որ դառնայ նէ մեղա-ւորը՝ ապրի։
Ի Պաւղոսի բողոքելն՝ հրամայեցի պահել զնա. որով-հետեւ բողոքեց Պօղոս՝ հրամմեցի որ պահեն զան։
Ասելով նոցա զայս. երբոր աս բանս ըսին նէ անոնք։
Եւ զմեծատունն պատուէ՝ անպատիւ գոլով. ու մեծա-տունը կը պատուէ՝ երբոր կամ թէ որ անպատիւ է նէ։
Բարեգործ ծնողաց գոլով որդիք՝ բարի գործոցն նոցա պարտին նմանել. որովհետեւ կամ վասն զի բարեգործ ծնո-ղաց զաւակ են՝ պէտք է որ անոնց բարի գործերուն նմանին։
Ընկալուածք գոլով ըստ բնական պիտոյիցն, սակայն ան-յագ են. թէպէտ անկարօտ են բնութեան պէտքի դիէն, բայց անյագ են։

284. Անցեալ դերբայն շատ հեղ ուրիշ բայի մը հետ կը բանի՝ առաջ կամ ետեւ, ու անորոշ դերբայի գոր-ծիականի պէս կ'առնուի կամ քովի բային պէս. ինչպէս,
Ելեալ գնաց. մտեալ բազմեցաւ. հայեցեալ ընդ իս զարմանայք. ըսել է՝ ելլելով գնաց, մտնելով նստաւ, ինծի

նայելով կը շարժանար, կամ ելաւ գնաց, մտաւ նստաւ, ընծայ ընելու կը շարժանար:

*Կալեալ կործանել.* բռնելով կործանելու կամ բռնել կործանել:

*Ա՛ռեալ գնեաց.* առնելով գնեց:

*Փախեան զարհուրեալք.* վախնալով փախան:

285. *Ոստ տեղ ալ՝* ըէ, *չէ շաղկապով գլխաւոր բայի տեղ կը դրուի. ինչպես,*

*Հաւատարմանայ ասացեալն յոմանց, ապաշխարեալ Ադամայ զյանցումնն. այս ինքն՝ թէ ապաշխարեալ է կամ ապաշխարեաց.* կը պատմուի ոմանց բանը, թէ Ադամ մեղքը ապաշխարեր է կամ ապաշխարեց:

*Տեսի՝ անզգամաց արմատս ձգեալ. այս ինքն՝ զի ձգեալ են կամ էին.* տեսայ որ անզգամները արմատ ձգեր են կամ ձգեր էին:

*Յարեաւ Եսթեր երթալ 'ի սենեակն արքայի. այս ինքն՝ զի երթիցէ.* ելաւ Եսթեր որ երթայ արքային սենեակը:

286. *Ոստ հեղ ալ* երբ, *յորժամ մակբային ու* թէ, որովհետև, թէպէտ և *շաղկապներուն ու գլխաւոր բայի տեղ կը բանի. ինչպես,*

*Եւ հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս. այս ինքն՝ իբրև հրամայեաց, յետ հրամայելոյն.* ու երբոր հրամեց Փեստոս՝ բերին Պօղոսը:

*Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն. այս ինքն՝ իբրև թագաւորեաց, յետ թագաւորելոյն.* սպաննեցին Յովասը Երուսաղէմ, երբոր քառասուն տարի թագաւորեց, քառասուն տարի թագաւորելէն ետքը:

*Հիւանդացեալ, և մի ակն կալցի ողջանալոյ. այս ինքն՝ յորժամ կամ եթէ հիւանդասցի.* հիւանդնայ նէ, յոյս չունենայ ողջնալու:

*Մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ 'ի նմանէ. այս ինքն՝ յորժամ կամ եթէ յանդիմանիցիս.* երբոր չհարի՝ անկէց յանդիմանուիս նէ:

*Յորոց պահեալ զանձինս՝ բարւոք գործիցէք. այս ինքն՝ եթէ պահիցէք.* որոնցմէ զգուշանաք նէ՝ աղէկ կ՚ընէք:

Նա դորա խնդնլին բողոք կալեալ առ քաջ ատենին, խորհեցայ յղել · այս ինքն՝ որովհետեւ բողոք կալուածս · ու որովհետեւ ինքը հայտնեց բողոքեց, մտքս դրի որ խաբրեմ ։

Կարօտին թագաւորին, այլ ումեք 'ի ծառայիցն ոչ կարացեալ · այս ինքն՝ որովհետեւ այլ ոք ոչ կարաց · Թագաւորին կը կարօտնան, որովհետեւ ծառաներէն ուրիշ մէկը չկրցաւ ։

Բազմաց զգործ բաժանեալ · բայց սկիզբն և կատարածն շինուածոյն 'ի բուն Ճարտարապետն անդր հայի · այս ինքն՝ թէպէտ և բազմաց բաժանեալ է · Թէպէտ գործը շատի վրայ բաժնուած է, բայց շէնքին սկիզբը ու լմնալը բուն ճարտարապետին կը նայի ։

Էր մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող · այս ինքն՝ թէպէտ և մահկանացու ծնեալ էր · որ Թէպէտ մահկանացու ծներ էր, իր յիշատակը անմահ թողուց ։

287 · Անցեալ դերբայն շատ հեղ լինիմ, եմ էական բայերով մէկտեղ կը բանի, ու ինչ տեսակ բայի դերբայ է նէ, անոր նշանակութիւնը կը պահէ ։ Ու որովհետեւ ներգործական ու կրաւորական բային անցեալ դերբայն մէկ է, անոր էականով շինուածն ալ հասարակ բայ կ'ըլլայ, այս ինքն ներգործական ու կրաւորական (165) ։ Համառօտ օրինակ մը դնենք ·

288 · Սիրեալ լինիմ · կը սիրեմ, կը սիրուիմ · սիրած կ'ըլլամ, սիրուած կ'ըլլամ ·

Սիրեալ լինիմք · կը սիրենք, կը սիրուինք · սիրած կ'ըլլանք, սիրուած կ'ըլլանք ։

Սիրեալ լինէի · կը սիրէի, կը սիրուէի · սիրած կ'ըլլայի, սիրուած կ'ըլլայի ·

Սիրեալ լինէաք · կը սիրէինք, կը սիրուէինք · սիրած կ'ըլլայինք, սիրուած կ'ըլլայինք ։

Սիրեալ եղէ · սիրեցի, սիրուեցայ · սիրած եղայ, սիրուած եղայ ·

Սիրեալ եղաք · սիրեցինք, սիրուեցանք · սիրած եղանք, սիրուած եղանք:

Սիրեալ եմ · սիրեր եմ, սիրուեր եմ · սիրած եմ, սիրուած եմ.

Սիրեալ եմք · սիրեր ենք, սիրուեր ենք · սիրած ենք, սիրուած ենք:

Սիրեալ էի · սիրեր էի, սիրուեր էի · սիրած էի, սիրուած էի.

Սիրեալ էաք · սիրեր էինք, սիրուեր էինք · սիրած էինք, սիրուած էինք:

Սիրեալ լիցիմ, եղէց · սիրեմ, պէտք սիրեմ · սիրուիմ, պէտք սիրուիմ · սիրած ըլլամ, սիրուած ըլլամ.

Սիրեալ լիցուք, եղիցուք · սիրենք, պէտք սիրենք · սիրուինք, պէտք սիրուինք · սիրած ըլլանք, սիրուած ըլլանք:

Սիրեալ լեր · սիրէ, սիրուէ · սիրած եղիր, սիրուած եղիր.

Սիրեալ լերուք, եղերուք · սիրեցէք, սիրուեցէք · սիրած եղէք, սիրուած եղէք:

Սիրեալ լինիցիմ · սիրեմ, պէտք սիրեմ · սիրուիմ, պէտք սիրուիմ · սիրած ըլլամ, սիրուած ըլլամ. եւն.

Սիրեալ լինիցիմք · սիրենք, պէտք սիրենք · սիրուինք, պէտք սիրուինք · սիրած ըլլանք, սիրուած ըլլանք. եւն:

Սիրեալ իցեմ · սիրած ըլլամ, պէտք սիրած ըլլամ · սիրուած ըլլամ, պէտք սիրուած ըլլամ.

Սիրեալ իցեմք · սիրած ըլլանք, պէտք սիրած ըլլանք · սիրուած ըլլանք, պէտք սիրուած ըլլանք:

Սիրեալ լինել, գոլ · սիրել, սիրուիլ · սիրած ըլլալ, սիրուած ըլլալ:

Սիրեալ լեալ, եղեալ · սիրած, սիրուած · սիրած կամ սիրուած եղած, ըլլալով:

Սիրեալ լինելոյ · սիրելու, սիրուելու · սիրած կամ սիրուած ըլլալու:

289. Էական բայն ալ կ'ըլլայ ատանկ՝ ինք իր դեր-բայովը. Ըլլալ կամ եղեալ լինիմ, լինէի, եղէ. ըլլալ կամ եղեալ եմ, էի. ըլլալ կամ եղեալ լիցիմ, եղէց, լի-նիցիմ, իցեմ. ըլլալ կամ եղեալ լինել, գոլ, լինելոյ:

290. Էական բայը շատ անգամ առաջ ալ կը դրուի. Լինիմ սիրեալ, եմ սիրեալ: Ու դերբան յոգնակի ալ կ'ըլլայ, մանաւանդ կրաւորականը ու չէզոքը. Տնկեալք եղիցին. Հասեալք լինէին:

291. Անցեալ դերբան շատ տեղ ալ ածական անուան պէս կը բանի. ու լեալ կամ լիեալ դերբայէն 'ի զատ՝ մէկալ ամէնն ալ կը հոլովի եզակի ու յոգնակի (բառ 31). Եալ, ելոյ. եալք, ելոց.

Եղեալ, եղելոյ կամ եղելում, եղելով, յեղելոյ, զեղեալ. եղեալք, եղելոց, եղելովք, յեղելոց, զեղեալս:

Գնացեալ, գնացելոյ, գնացելում. գնացեալք, գնացելոց:

Սիրեալ, սիրելոյ, սիրելով կամ Սիրեցեալ, սիրեցելոյ, սիրեցելում, սիրեցելով, 'ի սիրեցելոյ, զսիրեցեալ, սի-րեցեալք, սիրեցելոց, սիրեցելովք, 'ի սիրեցելոց, զսի-րեցեալս:

Տեսեալ, տեսելոյ, տեսելում. տեսեալք, տեսելոց:

Զենեալ, զենելոյ, զենելում. զենեալք, զենելոց: —

Իսկ լեալ՝ նախդրիւ հոլովները միայն ունի, լեալք, լեալս, զլեալս:

292. Ապառնի ածական դերբան՝ շատ տեղ ալ ող կամ օղ վերջացած բայածականի պէս էղօղ, ընօղ կը նշանակէ, ու սովորաբար անոր տեղը կը բանի. ինչպէս,

Չար խորհուրդ՝ խորհեցելումն կամ խորհելոյն յոյժ չար է. փոխանակ ըսելու՝ խորհողին. չար խորհուրդը՝ մտա-ծողին շատ գէշ է:

Առնն բարբառելոյ. փոխանակ՝ բարբառողի. խօսող մար-դուն:

Մասն երթելոյն 'ի պատերազմ. փոխանակ՝ երթողին. պատերազմ գացողին բաժինը:

Աստուածք նմանեալք մարդկան . մարդու նմանօղ աս-տուածներ :

Ոչ խոստովանեալք , այլ հայհոյիչք . չէ թէ խոստովանող-ներ , հապա հայհոյիչներ :

Բերանց խոստովանելոց . փոխանակ՝ խոստովանողաց . խոստովանող բերաններուն :

Գազանաց գոչելոց . փոխանակ՝ գոչողաց . գոռացօղ գա-զաններուն :

Կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց . փո-խանակ՝ առողաց . աստուածպաշտութիւնը յանձն առնօղ կնիկներուն :

293 . Ապառնի դերբայն սովորաբար էական եմ բային հետ կը բանի՝ ասանկ , համառօտ օրինակով .

| | |
|---|---|
| Սիրելոց եմ. | պիտի սիրեմ . պիտի սիրուիմ . |
| Սիրելոց եմք . | պիտի սիրենք . պիտի սիրուինք : |
| Սիրելոց էի . | պիտի սիրէի . պիտի սիրուէի . |
| Սիրելոց էաք . | պիտի սիրէինք . պիտի սիրուէինք : |
| Սիրելոց իցեմ. | պիտի սիրեմ . պիտի սիրուիմ . |
| Սիրելոց իցեմք . | պիտի սիրենք . պիտի սիրուինք : |

294 . Ասոր ալ էական բայը առաջ ալ կը դրուի . Եմ սիրելոց , էաք սիրելոց :

295 . Ապառնի դերբայն ածական անուան պէս ալ կը բանի , բայց վերջահոլով չունի , հապա միայն նախ-դրիւ հոլով , ան ալ քանի մը բայինը միայն կ՚երևնայ . Գալոց կամ լինելոց չարեաց . գալու կամ ըլլալու չարիք-ներուն :

Զլինելոց իրսն . ըլլալու բաները :

Զգալոցն կամ զգալոցսն պատմել . գալիքը կամ գալիքները պատմել :

Եղեալքն և լինելոցք , զլինելոցսն , ընդ լինելոցսն . ե-ղածները ու ըլլալիքները , ըլլալիքներուն հետ :

296 · Վերջահոլով պէտք ըլլայ նէ, ՚ի վերջացած բայածականը կը բանի, որ ըլլալու, ըլլալիքու կը նշանակէ, և կը հոլովի ըստ 43· Լինելի, լինելւոյ կամ լինելոյ (45), լինելեաւ կամ լինելւով · լինելիք, լինելեաց կամ լինելւոց, լինելեօք կամ լինելւովք · ըլլալու :

Սիրելի, սիրելւոյ կամ սիրելոյ, սիրելեաւ կամ սիրելւով, սիրելիք, սիրելեաց կամ սիրելւոց, սիրելեօք կամ սիրելւովք · սիրուելու · և այլն :

297 · Առանց ածնի հոլովի նէ, անորոշ ու սահմանի դերբային կը նմանի · բայց պէտք չէ շփոթել · զոր օրինակ,

Մինչև բարձցին աւանք լինելոյն · ըսել է լինելւոյն, լինելեացն :

Խմել արեամբ վասն ձեր հեղլոյ կամ հեղլով · ըսել է հեղլւոյ կամ հեղլւով, հեղլեաւ, այս ինքն թափուելու, որ պիտի թափի :

298 · Թէ որ է բային հետ գրուի, ներգործականի կամ չէզոքի պէտ ընելու ալ կը նշանակէ ·

Իմանալի է, պահանջելի է, ըսել է՝ իմանալու է, պէտք է իմանալ, պահանջելու է, պէտք է պահանջել :

Դառնալի է, հրաժարելի է, ըսել է՝ դառնալու է, պէտք է դառնալ, հրաժարելու է, պէտք է հրաժարել :

299 · Առ ՚ի բայածականը շատ անգամ ող բայածականի տեղ ալ կը բանի, ու երբեմն ալ անցեալ դերբայի տեղ · Լինելի, ըսել է եղող ու եղած · Սիրելի, սիրող ու սիրուած · Լսելի, լսող ու լսուած · Գալի, եկող ու եկած · Տալի, տուող ու տրուած · Խնդրելի, հայցելի, խնդրող ու խնդրուած :

Առնենք կ՚ըսուի, Առնելի գործոյն, գործելու բան · Առնելիք բանին, ընելու բաներ · Լսելիք օրինացն, լսելու օրէնքներ :

Ձայն փողոյ լսելի եղիցի · այս ինքն՝ լսուելու եղիցի :

Տալ զխնդրելին · Առնել զհայցելին · այս ինքն՝ զխնդրեալն, զհայցեալն :

Վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր · այս ինքն, վաղամեռիկ լինելւոյ, եղելոյ :

Արեամբն հեղլով · Յարենէն հեղլոյ · այս ինքն՝ հեղլւով, հեղելով, հեղլւոյ, հեղելոյ :

Ի սկզբանցն լինելոյն հաստատեաց · այս ինքն՝ լինելւոյն, եղելոյն :

Իշխանութիւն ոչ ունէր իւր առնելոյն · այս ինքն՝ առնելւոյն, արարելոյն :

300 · Ող կամ օղ վերջացած բայածականին վրայ մասնաւոր գիտելիք մը չկայ : Սովորաբար անցեալ կատարեալէն կը շինուի ամէն տեսակ բայ բաց ՚ի կրաւորականէն · Ածացող, ածող · գնացող, գացող · լուացող, խմացող, երբեմն լուանող, խմանող · հոգացող կամ հոգող, յուսացող կամ յուսող, պարծեցող կամ պարծենող : Սիրեցող կամ սիրող, սիրող · տեսացող կամ տեսող, ըսող · կարող կամ կարացող, կրցող : Տեսող կամ տեսանող, տեսնող · առող կամ առնող, փախչող : Զենող, մորթող · առող, առնող · յեցող կամ յենող, կենող : Տուող, եկող, երթող, արարող կամ առնող, եգող կամ գնող, կերող, ունող : — Իսկականներէն ալ կայ միայն Լինող, գոյող, եղող : Ամէնն ալ ընող, ըլլող կը նշանակէն :

301. Շատ տեղ ալ՝ չէ թէ հիմայ ընող կը նշանակէն, հապա բնութեամբ անանկ եղողը. ինչպէս, Այր կերող և արբեցող. Ես չեմ խօսող ոք. Ամենայն որ կարող էր զօրութեամբ:

302. Չէզոք բայերուն՝ երբեմն անցեալ դերբայի ու մի բայածականին տեղն ալ կը նշանակէ. Պատսպարիմ, պատսպարող. ապաւինած կամ ապաւինող: Վարժիմ, վարժող. վարժած կամ վարժուող: — Կարեմ, կարող. կրնալ, կրցող. Հաւանիմ, հաւանող. հաւնիլ, հաւնող:

303. Ողին տեղ իչ ալ կը վերջանայ, ու նոյն է անոր հետ. Բացող, բացիչ. սիրող, սիրիչ. փրկող, փրկիչ. բնակող, բնակիչ. արարող, արարիչ. ըսել է, ամէնը մէկ է: Բայց ողը ամէն բայի ու ամէն չէզոքի ալ կը փակչի. իսկ իչը աւելի ներգործականներու, ու քիչ չէզոքներու:

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՄԱԿԲԱՅ

304 · Մակբայը բառ մըն է որ բային վրայ պէտք եղած միտք մը կ'աւելցընէ, իմացընելով ընելուն կամ ըլլալուն տեղը, առենը, կերպը, եւն ։ Ածականի և ուրիշ մակբայի վրայ ալ կ'ըսուի ։ Առջեւիդ քանի մը օրինակով կը տեսնես՝ ինչ ըլլալը հասկընալու չափ ։

| | |
|---|---|
| 305 · Աստ է · Անդ է · | Հոս է · Հոն է ։ |
| Եկ այսր · Նստարուք այդր · | Հոս եկուր · Նստէք հոս ։ |
| Անդր մուծին · | Հոն խոթեցին ։ |
| Երթիցուք աստի · Ել անտի · | Երթանք ասկից · Ելիր անկից ։ |
| Ելեալ անտի գնաց · | Անկից ելլալ գնաց ։ |
| Ո՞ւր էիր · Ուր էրն · | Ո՞ւր էիր · Ուր որ էր նէ ։ |
| Ուստի՞ գաս · | Ուսկի՞ց կուգաս ։ |
| Իբրեւ լուան · Մինչ կենդանին էր · | Երբոր լսեցին · Երբոր ողջ էր նէ ։ |
| Մինչեւ կերայց · Մինչեւ եկին · | Ինչուք որ ուտեմ · Ինչուք որ եկան ։ |
| Այժմ ասացի · Ե՞րբ եկիր · | Հիմայ ըսի · Ե՞րբ եկար ։ |
| Մերթ երեւի, մերթ ծածկի · | Մէյմը կ'երեւնայ, մէյմը կը գոցուի ։ |
| Մինչ, հանապազ ուսանիմ · | Միշտ, ամէն իժիր կը սորվիմ ։ |
| Արդ եւ վախճանեցաւ · | Հիմաճուկ մեռաւ ։ |
| Արդ ասէ · Արդ գիտասջիր · | Եսքը կ'ըսէ · Եսքը պիտի գիտնաս ։ |
| Ոչ կամիմ · չգիտեմ · չերկնչիմ · | Չեմ ուզեր · չեմ գիտեր · չեմ վախնար ։ |
| Չեւ է հասեալ · | Դեռ հասած չէ ։ |
| Ոչ եւ այլ շատ խօսեցայց · | Ալ շատ պիտի չխօսիմ ։ |
| Չեւ եւ էր եկեալ · | Դեռ չէր եկած ։ |
| Չեւ եւ գիտաց որպէս արժան է · | Դեռ չգիտցաւ ինչպէս որ պէտք է ։ |
| Մինչդեռ խօսէր · | Երբոր դեռ կը խօսէր կոր ։ |
| Մի սիրեք · Մի երթայցեք · | Մի սիրէք · Չերթաք ։ |
| Ահա եղեւ · Այո տեսի · | Ահա եղաւ · Հա, հրամմերես տեսայ ։ |
| Զիա՞րդ գիտէ · | Ի՞նչպէս գիտէ ։ |
| Այսպէս ասէ · Այնպէս արարեք · | Ասանկ կ'ըսէ · Անանկ ըրէք ։ |

| | |
|---|---|
| Եւս մեծ . Յոյժ իմաստուն . | Աւելի մեծ . խիստ իմաստուն : |
| Կարի բարւոք . Կարի յոյժ . | Խիստ աղէկ . խիստ շատ : |
| Ամենևին անշարժ . | Ամենևին չշարժող : |
| Ու բազում, ու սակաւ . | Քիչ , շատ : |
| Գրեթէ հանապազ . | Գրեթէ միշտ , (ամէն ժամ) . |
| Արդարև լսեն . Արդարև առնիցէք . | Ի հարկէ կը լսեն . Ի հարկէ որ պի- տի ընէք : |
| Թերևս արասցէ . | Ըլլայ որ (դէպքին) ընէ : |
| Գուցէ գայցեն . գուցէ ոչ իցէ բա- ւական . | Ըլլայ թէ գան , չըլլայ թէ չգան : |
| Գուցէ կարծէր . գուցէ զգաստասցի . | Կարելի է որ (դէպքին) կարծէր . կարելի է որ (դէպքին) խելքը գլու- խը գայ : |
| Մորմոքէին հանապազ 'ի վ(երայ) բանին . | Աւելի ան խօսքին վրայ կը ցաւէին : |
| Յայտնապէս խօսել . | Բաց խօսիլ : |
| Իշխանաբար դատել . | Իշխանի պէս դատել : |
| Վայելչապէս կեալ . | Փառաւոր ապրիլ : |

306 . Ածականներն ալ շատ անգամ եզակի , կամ յոգնակի սեռով, երբեմն ալ շատուորի վրայ՝ քեով, մակբայի տեղ կ'երթան , ու կերպ մը կը յայտնեն . ինչպէս ,

| | |
|---|---|
| Նոր գալ, | Նոր գալ . |
| Ուղիղ գնալ, | Շիտակ երթալ . |
| Բարւոք ընթանալ, | Աղէկ երթալ . |
| Սակաւ կամ շատ սիրել, | Քիչ կամ շատ սիրել . |
| Արդար խօսել, | Շիտակ խօսիլ . |
| Բազում ծառայել, | Շատ ծառայել . |
| Մեծաձայն կարդալ, | Բարձր ձայնով կանչել . |
| Մանր մանր կոտորել, | Մանրիկ կոտրտել . |
| Մերձ գալ, մերձանգամ գտանել, | Մօտ գալ, մօտ գտնալ . |
| Ողջամտաբար ապրել, | Ողջ ապրիլ . |
| Մաքրապէս չհաւատալի գերծանել, | Մաքուր աղօթել ըմբռնելով կերպով . |
| Գեղեցիկ իմն պատմել, | Աղուոր մը պատմել . |
| Երագս ընթանալ, | Շուտ քալել . |
| Թեթևս գտանել, | Թեթև գտնալ . |
| Ճշմարտագոյնս գիտել, | Աղէկ մը գիտնալ . |
| Ծանուծս լսել, | Ծանր կամ ծանր կերպով լսել . |
| Մեծամեծս վազել, փքալ, կտտրել, | Մեծ մեծ վազել, խրոխտալ, կտրել . |
| Նորք և առաժամայնք եկեալ, | Նոր ու առաջին եկած . |
| Բազումք՝ փոխանակայք ապրեցան, | Շատեր՝ փոխանակ աղօթելու ապրեցան . |
| Արքք որհատահանք հզօրագոյնք կը- ռուէին, | Մարդիկ զօրաւոր հաստ արծիւ կերպ ուժով կը զարկէին . |

307. Շատ տեղական անուններու հոլովները մակբայի տեղով կը բանին.

| | |
|---|---|
| Առաւօտու՝, առաւօտուց, | առտուն, առտուանց. |
| Գիշերի, գիշերայ, գիշերաւ, | Գիշերը. Գիշերուան. Գիշերով. |
| Կանխաւ, | առաջուց, կանուխ. |
| Փութով, աճապաւ, | շուտով, արագութեամբ. |
| Ի պարզի, | երեւելի բաց տեղն. |
| Ի կարճոյ, | կարճ կերպով. |
| Զառաջինն, | առաջ, առջի անգամը. |
| Զնոյն, յարժամ, յայնժամ, | նոյնպէս, երբոր, ան ատենը. |
| Ի զուր, 'ի նանիր, | պարապ տեղը. |
| Ընդ հուպ, ընդ փոյթ, | շատ ատեններ, շուտով. |

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՇԱՂԿԱՊ

308. Շաղկապը բառ մըն է, որ բառ բառի ու խօսք խօսքի հետ կը կապէ։ Մէկ քանի օրինակով հերիք կը հասկընաս։

| | |
|---|---|
| 309. Ես և դու և ամենայն բազմութիւնդ. | Ես ու դուն ու բոլոր ատ բազմութիւնը։ |
| Քարոզեցէք և ասացէք. | Քարոզեցէք ու ըսէք։ |
| Ես ևս. Ես իսկ. Այլ ևս ոչխարք. | Ես ալ. ուրիշ ոչխարներ ալ։ |
| Ցուրտ կամ ջերմ. Առէք կամ տուք. | Պաղ կամ տաք. Առէք կամ տուէք։ |
| Գաւազանա՞ւ եթէ սիրով. | Գաւազանո՞վ չէ նէ սիրով։ |
| Տացո՞ւք թէ ոչ տացուք. | Տա՞նք մի չէ նէ չտանք։ |
| Եթէ կամիս կատարեալ լինել. | Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ։ |
| Թէ հնար ինչ իցէ. | Թէ որ ճար մը կայ նէ։ |
| Ոչ ունիմք աստ բայց հինգ նկանակ. | Բան մը չունինք հոս, հապա միայն հինգ հաց։ |
| Թէպէտ և կամէր, բայց ոչ կարաց, սակայն ոչ կարաց. | Կ'ուզէր ալ, բայց չկրցաւ. Թէպէտ կ'ուզէր, բայց չկրցաւ։ |
| Սուղ, այլ զօրաւոր. | Կարճ, բայց ուժով։ |
| Մի լայք, զի չէ մեռեալ. | Մի լաք, վասն զի մեռած չէ։ |
| Լուարուք զի ասացաւ. | Լսեցիք որ ըսուեցաւ։ |
| Գիտաց թէ ցածուցեալ են. | Իմացաւ որ ցածցեր են։ |
| Ետես եթէ հաճոյ է. | Տեսաւ որ ախորժելի է։ |
| Իսկ նա գնաց. | Բայց (կամ ու) ան գնաց։ |
| Իսկ զի՞ մկրտես եթէ դու չես. | Հապա ինչու կը մկրտես, թէ որ դուն չես։ |
| Ապա, ուրեմն, ապա ուրեմն ազատ են որդիքն. | Ըստանկ է նէ՝ տղաքը ազատ են։ |
| Եթէ ոչ զմեծն, գոնէ զփոքրն արասցուք. | Մեծն ալ չէ նէ, պզտիկը ըլլայ ընենք։ |
| Արդ, և արդ, իսկ արդ զի՞նչ առնիցեմ. | Էյ անանկ է նէ հիմայ ի՞նչ ընեմ։ |
| Արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է. | Հիմայ պիտի հոտած ըլլայ, ինչու որ չորս օրուան է։ |
| Քանզի բազումք յօժարեցին, կամ եղև և ինձ. | Որովհետև շատերը յօժարեցան, ես ալ ուզեցի։ |
| Քանզի ծնաւ, ապաքէն գութ ունի. | Որովհետև ծնաւ, անանկ է նէ գութ ունի։ |
| Մեռանել քան ծառայել, քան եթէ ծառայել. | Մեռնիլ քան թէ ծառայել, քան թէ ծառայ ըլլալ, գերի ըլլալ։ |

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

310. *Ձայնարկութիւնը բառ մը կամ ձայն մըն է, որ մարդուս կիրքը կը յայտնէ, բարկութիւն կամ վախ կամ ուրախութիւն կամ տրտմութիւն, ևն. Ինչպէս,*

| | |
|---|---|
| 311. Ա՛ թշուառական. ո՜յ թշուառ. | Հա՜յ թշուառական։ |
| Ո՜վ անմիտք, ո՛ անմիտք. | Հէյ անխելքներ։ |
| Ո՜հ, կարի է տառապելս. | Ո՜ւհ ամմա տառապել հա՛։ |
| Ո՜վ սքանչելեաց. | Ո՜ւհ զարմանալու բան։ |
| Ո՜հ, ես մեղայ. | Վա՜խ, ես մեղանչեցի։ |
| Վա՜հ, որ քակեիր զտաճարն. | Վա՜խ, որ տաճարը կը քակեիր կոր։ |
| Օ՜ն եկայք. ե՛ն արիք. | Հա՛յտէ եկէք. հա՛յտէ ելէք։ |
| Հա՜դ առաքինիք. | Հա՛յտէ կորիճներ։ |
| Աղէ պատմեա. աղէ դու եկ. | Հէլէ պատմէ. հէլէ դուն եկուր։ |
| Վա՜յ քաջիդ. | Աֆէրիմ կամ մաշալլահ կորըճիդ։ |
| Վա՜յ քաջդ ինձ. | Մաշալլահ կորիճներ։ |
| Վա՜յ վա՜յ, զի բեկաւ. | Օ՛խ օխ որ կոտրեցաւ։ |
| Բա՜բէ կուրութեան մտացն։ | Փէհ կամ վա՜յ մտքին կուրութեանը։ |

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ԼԸՄՆՑԱՒ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՐԶ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

312. ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆՆ է բառերը լեզուին օրինաւոր կարգովը շարել ու կապել, որ խօսք ըլլայ։

313. Բան մը խօսինք նէ, առաջ պիտի նայինք՝ թէ որու կամ ինչի վրայ ինչ պիտի ըսենք որ է կամ կ'ըլլայ կամ կ'ընէ։ Որու կամ ինչի վրայ որ պիտի ըսենք նէ, ան բուն բանին տէրն է, ու անուն բայի կ'ըսուի. ինչ որ պիտի ըսենք նէ, ան բայն է, որ ըլլալ մը կամ ընել մը կը նշանակէ. ինչպէս,

Ես եմ. Դուն լինիս. Աստուած արար.
Ես, դուն, Աստուած անուն բային են. եմ, լինիս, արար բայերն են։

314. Բայց միայն ասանկով չլմննար խօսքը։ Ես եմ, թէ որ հասկընաս՝ ես կամ, լմնցած է. իսկ թէ որ հասկընաս՝ ես բան մըն եմ, լմնցած չէ, ինչ բան ես[1], Դուն լինիս, դուն չ'ըլլաս. Աստուած արար, Աստուած ըրաւ, լմնցած չեն. ինչ կ'ըլլաս, ինչ ըրաւ։ Ըման

---

1 Բայց երբոր ըսուի Ես եմ, մի երկնչիր, մարդ լման է. վասն զի կը հասկցուի բառերէն, թէ ես ան եմ որ կը ճանչնաք գիտէք։

ընելու համար՝ քովը բան մը դնելու է, որ խնդիր բայի կ'ըսուի · ինչպէս,

> Ես եմ մարդ · Դու լինիս իմաստուն · Աստուած արար զաշխարհ ·

Մարդ, իմաստուն, զաշխարհ, բայերուն խնդիրներն են, որ անոնց նշանակութիւնը կը լմնցընեն, ու կ'ըլլայ լման խօսք ·

315 · Բայց ամէն խօսք մինակ աս իրեք բանով չըլլար · շատ անգամ իրեքն ալ կերպ կերպ յաւելուած մասեր կամ պարագաներ կ'ունենան հետերնին · ինչպէս,

> Աստուած՝ ամենակարող Ճարտարապետն տիեզերաց, որ յաւիտենից էր, ի սկզբանէ իմաստութեամբ իւրով արար զայս մեծ աշխարհս և զամենայն զարդ սորա ·

Հոս նմանապէս գլխաւոր խօսքը ան է · Աստուած արար զաշխարհ · մէկալ բառերը պարագաներ կը յայտնեն · այս ինքն թէ Աստուած ինչ է կամ ինչպիսի բան կը մտածուի կոր աս խօսքիս մէջ, — Ճարտարապետ · ինչին Ճարտարապետը, — տիեզերաց · ինչպիսի Ճարտարապետ, — ամենակարող · ինչով ըրաւ, — իմաստութեամբ իւրով · երբ, որ ատեն ըրաւ, — ի սկզբանէ · որ ու որպիսի աշխարհքը, — զայս մեծ աշխարհս · ու չէ թէ մինակ աշխարհքս, հապա՝ և զամենայն զարդ, ու ամէն զարդն ալ · որուն զարդը, — սորա, ասոր, աս աշխարհքիս ·

316 · Ինչպէս ըսինք, Աստուած անուն բայի է կամ տէր՝ ներգործական բային արար · զաշխարհ ու զմարդ՝ որ ըլլուողն են, խնդիր սեռի են արար բային · այս ինքն անանկ խնդիր մը՝ որ ներգործական բայերուն ամենուն ալ կը յարմարի, որ է հայցական հոլովը ·

317 · Իսկ կրաւորական բայերուն սեռի խնդիր է բացառական հոլովը · Վասն զի կրաւորական բայերուն ուղղական անուն բայի կ'ըլլայ ըլլուողը, ու բացառական խնդիր կ'ըլլայ ընողը · Ինչպէս թէ որ աս խօսքը՝

Աստուած սիրեց զաշխարհ՝ կրաւորական բայով դար-ձընես ասանկ, Աշխարհ սիրուեցաւ Աստուծմէ, — աշխարհ եղաւ ուղղական՝ անուն բայի, Աստուծմէ եղաւ բացա-ռական՝ խնդիր սեռի։

318. Մէկալ հոլովուած բառերէն՝ Տրականէ, ենթա-կայութեամբ խնդիր, նոյն տեղը բային անուղղակի խնդիր են. այս ինքն անանկ խնդիր՝ որ սեռի խնդիրէն ՚ի զատ, կամ թէ առանց անոր ալ, կ՚առնէ բայ մը իր մանաւոր նշանակութեանը ու տեղին յարմար զանազան հոլովով։

319. Սեռականները աշխարհքի, զարդ, որ կը յայտնեն թէ որ բանին Ճարտարապետը, որուն զարդը, կ՚ըսուին աշխարհքին ու զարդին յատկացուցիչ. Ճարտարապետն ու զարդն ալ կ՚ըսուին յատկացեալ, յատկացուցիչին նայելով։

320. Ճարտարապետն՝ որ կը յայտնէ թէ Աստուած ով կամ ինչ է կամ ինչպիսի կը ճանաչուի աս խօսքիս մէջ, բացայայտիչ կ՚ըսուի Աստուծոյ. Աստուած ալ կ՚ը-սուի բացայայտելի կամ բացայայտեալ, բացայայտիչին նայելով։

321. Ամենակարող, ճարտար, սոյն, մեծ, ամենայն, ածական-ներ են ամէն մէկը իրեն գոյականին՝ որուն որ ըսուած է, այս ինքն Ճարտարապետին, խնամութեան, աշխար-հին, զարդին։

322. Ուն շաղկապ է, որ զայս մեծ աշխարհը ու ա-մենայն զարդը կը կապէ իրարու հետ մէկ բայի տակ։

323. Ան որ յաւիտենից էր, մէջ ընկած ու յարաբե-րականով կապած ինքիրեն լման խօսք մըն է ան ալ. որ՝ անուն բայի, էր՝ բայ, յաւիտենից խնդիր։

324. Բառերուն օրինաւոր կարգը ու մէկմէկու կա-պակցութիւնը մէյմը ինչ ըլլալնին լման ու յստակ յայտնի ընելու համար է, որ վերի բաժնուածովս կ՚ըլլայ. մէյմ՚ալ մէկմէկու համեմատ ու նման ընելու համար է, որ համաձայնութիւն ըսուածը կ՚ըսուի, ու ան ատենը կ՚ըլլայ՝ երբոր մէկմէկէ կախում ունեցող կամ մէկմէ-կու յարմարուելու բառերը՝ իրարու նման կամ համա-

ձայն են թուով ու հոլովով կամ դէմքով, ժամանակով ու եղանակով. ինչպէս, անուն բայի՝ բայի հետ, ես խօսիմ, դու լսես, Աստուած արար, նոքա իմանան, բազումք դարձուցին. բացայայտիչ՝ բացայայտեալի հետ, Աստուած արարագործն. ածական՝ գոյականի հետ, բարձր ձայն, բարձրոյ ձայնի, բարձրոյ ձայնէ, ձայնիւք բարձրովք, ձայնից բարձրոց։

325. Եւ անհամաձայն կ'ըլլայ՝ թէ որ ըսենք, աղտ եղև բանքն, տիրեցին ազգն. — բարձր ձայնի, 'ի բարձր ձայնէ, բարձր ձայնիւք, բարձր ձայնից, բարձրոյ ձայնովք։

326. Տարադրութիւնը երկու է. մէյմը Պարզ, որ լեզուին հասարակ ու սովորական կանոններովը կ'ըլլայ. մէյմ՝ ալ Զարդար, ան կանոններէն դուրս ու գերազանց։

Հիմա մենք վերի ցուցուած բնական խելքի կարգով ինչպէս տեսանք որ մտուենք բանին գլխաւոր ըման խօսքը ու իր պարագաները յայտնելու կուգան նէ, սկսինք առաջ աս մասին մէջ մէկիկ մէկիկ անոնց պարզ շարադրութեան հարկաւոր կանոնները սորվելու նոյն կարգով։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ ԲԱՅԻ ՈՒ ԲԱՅ

327 . Դիմաւոր բային անուն բային՝ ուղղական կը դրուի, ու բայը՝ թուով ու դէմքով անոր համաձայն. ինչպէս,

Դուն ըլլէիր նորա աշակերտ. Մենք Սողոմոնի աշակերտք էինք. Մենք գիտէինք զի ընդ Սողոմոնի խօսեցաւ Աստուած ։

Անոնք մեր նախնեացն ժամանակաւ ։

Խորհուրդք ձերք անջատեն յԱստուծոյ ։

Մարդիկն Հայոց ոչինչ հաւատային ։

Բարձր են երկինք, խոր են դժոխք, երկայն է չափ երկրի, լայն է ծով ։

Ես պատուեալ եմ ։ Տէր իմ ծերացեալ է ։ Դուք յոյժ մոլորեալ էք ։

328 . Ներկայ ու անցեալ դերբայներուն անուն բային սովորաբար սեռական կը դրուի, թէ և դիմաւոր բայի հետ ալ ըլլան. ինչպէս,

Մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա ։

Մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ ։

Յելանել և ՚ի մտանել նորա ։ Ի կալ նորա յաղօթս ։

Նախ ծնանին, մինչև մտեալ առ նոսա մանկաբարձաց ։

Տեսեալ արդարոյ՝ ծիծաղեցան ։ Տեսի՝ անզգամոց արմատս ձգեալ ։

Իմ զձեր արծաթն առեալ և հաճեալ եմ ։

Որոյ զնոյն ստացեալ ունիցի ։

Բոլոր բարեկամներուն խուսափեալ փախչին ։

329. Ուրիշ գերբային, մանաւանդ ուղղականին, անուն բային գերանուն ըլլայ նէ, տրական կը դրուի. ինչպէս,

Անցից ընդ երկիր քո, երթալ անցանել ինձ յաշխարհ իմ։

Ընտրեաց զմեզ, լինել մեզ սուրբս և անարատս։

Ի գալն մեր զհետ որդոյն։ Ի կալ նմա յաղօթս։

330. Իսկ տեղ ուղղական ալ՝ կ'ըլլայ երկու գերբային ալ անուն բային.

Օ՛ խորդ մարթիցի՝ լինել Բուռն-Բերան. այս ինքն թողութեան։

Պատերազմել ընկեր ընդ ընկերի խրատ։

Մի ես լինել՝ 'ի սմա բնակիչ։ Մինչև ցեղէ ես ոչ լինել։

Մինչև չմնալ ժամ չմնալոյ 'ի նոցանէ աղբեւր և ծախապաշտն։

Մեղուորք ելով մեզ։ Մարդ 'ի մարդոյ առնլով զտէրութիւն։

Մտեալ Յովսէփ 'ի տունն գործել զգործ ինչ իւր, բուռն եհար կնոջն զձորձոց նորա։

Նկեալ 'ի դէպ նոցա Ճշմարիտ առաջին զզօրութեն։

Մաշէ, չէր զուլումք երթեալ, ասացիկեր։

Ըստ սաստայ հանդերձ աերամբք տանջեալ, և առաջին թագաւորան զնոյն չարչարեալ։

Ինքեանք յարտասուս հարեալ դղայն, ոչ որք կարէր ընկղմանել։

---

1 Ինչ բանի համար որ առաջ ալ հիմա ալ բանք նէ քերականութեան մէջ, զիտնալու է որ հեղինակները շատ տեղ երկու գերբայն ալ մէկէն կը բանեցընեն մէկ խօսքի մէջ։ Ինչպէս հոս սեռական և ուղղական անուն բայիին օրինակ ըլլայ աս. Եղև բառնալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ և գալ ձայն յերկնից. Զորս ելեալ իւր իսկ ինքնին վ թևանես մատուցեալ հարցանէր։ — Աս բանս մէկմէ հոս խառնելնս հերիք ըլլայ։

331. Անցեալ դերբայն՝ էական բային է, էր, իցէ եղակի երրորդ դէմքերուն հետ, շատ անգամ սեռական կ՚առնէ ամէն դէմքի անուն բային եղակին ու յոգնակին. զոր օրինակ,

ԵԶԱԿԻ

| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| --- | --- |
| Ես տեսեալ եմ, | Իմ տեսեալ է. |
| Դու տեսեալ ես, | Քո տեսեալ է. |
| Նա տեսեալ է, | Նորա տեսեալ է. |
| Ես տեսեալ էի, | Իմ տեսեալ էր. |
| Դու տեսեալ էիր, | Քո տեսեալ էր. |
| Նա տեսեալ էր, | Նորա տեսեալ էր. |
| Ես տեսեալ իցեմ, | Իմ տեսեալ իցէ. |
| Դու տեսեալ իցես, | Քո տեսեալ իցէ. |
| Նա տեսեալ իցէ, | Նորա տեսեալ իցէ. |

ՅՈԳՆԱԿԻ

| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| --- | --- |
| Մեք տեսեալ եմք, | Մեր տեսեալ է. |
| Դուք տեսեալ էք, | Ձեր տեսեալ է. |
| Նոքա տեսեալ են, | Նոցա տեսեալ է. |
| Մեք տեսեալ էաք, | Մեր տեսեալ էր. |
| Դուք տեսեալ էիք, | Ձեր տեսեալ էր. |
| Նոքա տեսեալ էին, | Նոցա տեսեալ էր. |
| Մեք տեսեալ իցեմք, | Մեր տեսեալ իցէ. |
| Դուք տեսեալ իցէք, | Ձեր տեսեալ իցէ. |
| Նոքա տեսեալ իցեն, | Նոցա տեսեալ իցէ։ |

332. Նմանն ալ ՉԻՔ բային հետ

| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| --- | --- |
| Ես չեմ տեսեալ, | Իմ չիք տեսեալ. |
| Դու չես տեսեալ, | Քո չիք տեսեալ. |
| Նա չէ տեսեալ, | Նորա չիք տեսեալ. |

| փոխանակ ըսելու , | կ՚ըսուի |
|---|---|
| Մ՛եք չեմք տեսեալ , | Մ՛եր չէք տեսեալ · |
| Դուք չէք տեսեալ , | Ձեր չէք տեսեալ · |
| Նոքա չեն տեսեալ , | Նոցա չէք տեսեալ : |

333 . Սեռական անուն բային ու անցեալ դերբայն կամ էականը՝ ետև առաջ ալ կը դրուին , Տեսեալ է իմ, իմ է տեսեալ, է մեր տեսեալ, ևն . Տեսեալ չէք իմ, իմ տեսեալ չէք , չէք տեսեալ քո , չէք մեր տեսեալ, ևն .

Չ կամ ոչ մակբայով որ զրուցուի նէ , սովորաբար էականը առաջ կ՚ըսուի . Իմ չէ տեսեալ, քո չէ տեսեալ, նորա չէր տեսեալ, չէ տեսեալ քո , չիցէ մեր տեսեալ, չիցէ նոցա տեսեալ . որոյ չէ կամ ոչ է տեսեալ, կամ որոյ ոչ տեսեալ է :

334 . Նոյն դէմքով շատ անուն բայններ որ ըլլայ նէ , բայց սովորաբար յոգնակի կը դրուի , մանաւանդ ետքն որ դրուի նէ .

Փոքր և մեծ անդ էին : Յորեանն և Հաճար ոչ հարան :

Ատելի են Աստուծոյ ամպարշտեալն և ամպարշտութիւն իւր . զի գործն և գործեալն առ հասարակ տանջեսցին :

Մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի և ասէն ցնա :

Եղեն իմ արջառ և ոչխար և էշք , ծառայք և աղախնայք :

335 . Բայց շատ անգամ եզակի ալ կը դրուի , մանաւանդ առաջ որ դրուի ու մօտ անուն բային եզական ըլլայ նէ .

Եմուտ Նոյ , Սեմ, Քամ, Յաբեթ՝ որդիք Նոյի , և կին Նոյի և երեք կանայք որդւոց նորա ընդ նմա 'ի տապան անդր :

Եղև նորա ոչխար և արջառ յոյժ և ծառայք և աղախնայք , ուղտք և էշք :

Եկին Ագրիպպաս և Բերենիկէ բազում երևելի ապաւոր, և մտին յատեանն . — Ատեան և գարին հարբա ։

Հանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից պատմէ զնմանէ ։

336 . Եզակի անուն բայիներ կամ շաղկապաւ զա-տուած ըլլան նէ , սովորաբար եզակի կը դրուի բայը՝ մէկը կամ մէկալը հասկըցուելով .

Եթէ յառնիցէ 'ի միջի քում մարգարէ կամ երա-զահան . . . և տայցէ նշանն կամ արուեստն . . . մարգարէն այն կամ երազահանն երազոց մեռցի ։

Ա՞ ոչ քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք ։

337 . Իսկ ամենուն վրայ հասկըցուելով, յոգնակի ալ կը դրուի .

Եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկք ։

Ո՞ր հայր գթած կամ ո՞ր մայր ողորմած այնպիսի ողբէիցեն ։

338 . Իսկ թէ որ այլևայլ դէմքով անուն բայիներ ըլլան նէ , որ դէմքն որ կարգով աւելի առաջ է նէ՝ բայը անոր դէմքով կը դրուի . այս ինքն առջի կամ եր-կրորդ դէմքով, որն որ կայ նէ . ու սովորաբար յոգնակի կը դրուի .

Ես և դու հեծեալ էաք ։ Դու և ես մի եմք ։ Ես և հայր իմ մի եմք ։

Ես և դու և ամենայն բազմութիւնդ ողջերթեւ-ցուք ։

Կեցցուք և մի մեռցուք և մեք և դու և ստացուածք մեր ։

Պատիւս և շատ պարգևս տուանեմք յարքայից ար-քայէ և դու և մեք ։

Յորժամ դու և նա միայն իցէք ։ Դու և որդիք քո ընդ քեզ պահեսջիք ։

339. Ուր հեղ եզակի ալ կը դրուի, բայց միշտ կարգով առաջ եղող դէմքովը.

Ես և տուն իմ պաշտեսցուք զՏէր։

Լինիցիմ ես և որդի իմ Սողոմոն վնասապարտք։

Մուտ դու և ամենայն տուն քո 'ի տապանդ։

Մեղար դու և երկոքին բարեկամք քո. զի ոչ խօսեցարուք առաջի իմ ճշմարիտ։

340. Ուր տեղ բայը յայտնի չդրուիր, զօրութեամբ կ'իմացուի, մանաւանդ էական բայը. Ինչպէս թէ որ ըսենք, Ես հայր, դու որդի, դա դուստր և նոքա ծառայք. կ'իմացուի ես հայր եմ, դու որդի ես, դա դուստր է և նոքա ծառայք են։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՅԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

341. Էական բայերը ամէն հոլովով ու ամէն նախդիրներով խնդիր կ'առնեն, հայցականէն 'ի զատ. ինչպէս,

342. Ուղղական, որ նախդիրիւ տրական ալ կ'ըլլայ, ու յոգնակիին տեղ՝ եզական ալ.

Ես եմ Տէր։ Եղէց նոցա Աստուած կամ Աստուած։

Բաց է դուռն. բաց են աչքն։ Ի բաց է դուռն. 'ի բաց են աչքն։

Եղիցուք տեառն մերում ծառայք։ Եղիջիք դուք մեզ 'ի ծառայս։

Եղիցին դժուարինքն դիւրինք։ Եղիցին դժուարինքն 'ի դիւրինս։

Լերուք որդք։ Ուղղ լերուք (59)։ Լերուք յորդիս զօրութեան։

Երկոտասան եղբարք եմք ծառայք քո։ Բանք քո բարի են և դիւրինք։

Էր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզ։

Բարձրութիւն նորա 'ի տասն կանգուն. — այսինքն էր 'ի տասն կանգուն (340)։

343. Սեռական. Իւր է ամենայն ինչ։ Որդիք լինին դու 'ի նմանէն։ Գետինն չորեք հարիւր ստատեր արծաթոյ է։ Էր ամաց երկոտասանից։

344. Տրական. Ընդէր է ինչ այդ։ Ուեղ լիցի քեզ։ Լեր դու ինձ յորդի։

Ի ըսկզբանէն՝ կանգուն մեզ (էր)։ Թանձրութիւն նորա շուրջ՝ ամ ... (էր)։

345. Գործիական. Միմիայն ինչ նշան եղև։ Պանծանք եղիցի փրկութիւնն մեր։

Թանձրութիւն ծովուն ... (էր)։ Կանգնեալ 'ի լայնութիւն (էր)։

346. Բացառական. Ի ձենջ ես, թէ 'ի ... մերոց։ Գոյր մեզ օգնութիւն ...։ Ի ... էր տունն։ Ի ... ձայն նորա (էր)։

347. ... Որ ... էին։ Բանքս ... օծեալն է։

Ի ... անց է։ Ո՞ ... են բանք իմ։ Ո՞ նմա էի։ Ո՞ր նմա էին։

348. Ցանկ ուղղական խնդրով կ'ըսուի, Պարտ է լինել, վայել է ինալ, արժան էր առնել, դէպ եղև կամ հարկ եղև իջանել, եւ․ որ ըսել է, լինելն՝ է պարտ, ինալն՝ է վայել, առնելն՝ էր արժան, իջանելն եղև դէպ կամ հարկ։ Որ շատ անգամ տրական խնդիր ալ կ'ունենան. Պարտ է ինձ, վայել է մեզ, արժան էր քեզ։ Ինձ անկ է իշխանութիւնդ. քեզ անկ է առնուլ. չէ մարթ այդմ լինել. ոչինչ պիտոյ է դոցա երթալ։

349. Նորէն գերբային յոգնակի ուղղական խնդիրը սովորաբար սեռական կը դրուի (59).

Կամիմ զձեզ ... լինել։

Նորեաց զմեզ՝ լինել մեզ ... և ...։

Պարտ էր ձեզ լինել ...։

Ցանկայք փոխարկելով ... լինել և ...։

350. Երբեմն քեով, մանաւանդ ուղղական անուն բայի վրայ որ ըսուի.

Կամին լինել ... օրինաց։

Պարտին այսպիսի պատմութեանց լինել ...։

351. ...ական բայերը հայցական խնդիր ալ կ'առնեն

միայն ժամանակի բառերը, ան ալ նախդրիւ տրականի տեղ, մանաւանդ ընդ նախդիրով եղածին տեղը.

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս. — այս ինքն ընդ ամենայն աւուրս։

Գործս ոչ թէ մի օր է կամ երկուս։ Նոյն էր մինչ օր։

Որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակն եղէ։

Եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։

Զամենայն ժամանակս՝ շուրջ եղև անապատ. — այս ինքն յորս։

Զամառն և զձմեռն նոյնպէս եղիցի. — այս ինքն ընդ բոլոր ամառն։

Եղիցուք անդ աւուրս գ. — որ է ըսել զատրի մի։

352. Ներգործական բայերը, ինչպէս ըսինք (316), սեռի խնդիր կ'առնեն հայցական։ — Կրաւորական բայերը սեռի խնդիր կ'առնեն բացառական (317), կամ նոյն մտքով գործիական.

Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն։ Որ սիրեն զիս՝ սիրեսցին 'ի նմանէ։

Պատուեմք զհայրն մեր և պատուիմք 'ի նմանէ։

Կատարեսցին ամենայն գրեալքն 'ի մարգարէից կամ մարգարէիւք։

353. Կրաւորականները երբեմն սեռական կամ տրական ալ կ'առնեն, մանաւանդ անցեալ դերբայ որ ըլլան.

Հարեալք սատանայի իմոյ էք։ Թէ պարտեալ գացի ինչ։

Կապեալք սատանայի և կաշկանդեալք երկայն գիշերոյ։

Թէ և նոյն իսկ որքոյն Աստուծոյ էին տեսեալ ամենայնքն։

Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց։

Ընտրեալ ջերմին չգնի. Հոգւոյ իմանի, այլ ոչ աչաց տեսանի։

354. Հայցական խնդիրը, թէ որ մանաւանդ կերպով մը որոշեալ բան է, ինչպէս դիմորոշ յօդով կամ ուրիշ

բանով մը, զայ նախդիրով կը դրուի. չէ նէ՝ առանց զայի, որ կ'ըսուի **անորոշ կամ աննախդիր հայցական**.

Առնու զհացն և տայ նոցա։ Առեալ հաց՝ գոհացաւ եբեկ և ետ նոցա։

Ցուցէք ինձ զդահեկան հարկին. և նոքա մատուցին նմա դահեկան մի։

Ած զգօտի քո։ Ած գօտի ընդ մէջ քո։

Արկ զաթոռ նորա։ Աթոռս արկին։

Շինեաց զտուն իւր։ Շինեաց իւր տուն։

355. Միջակ անունները միայն խնդիրեննուն որ ըլլան, դերանունները ու յատուկ անունները՝ միշտ յայտնի ու որոշ ըլլալնուն, միշտ ալ զայով կ'ըլլան հայցական. Տեսանել զոհն, զոք, զամենայն, զիս, զքեզ, զմեզ, ըզձեզ, զինքն, զինքեանս, զնա, զնոսա, զայն, զայնոսիկ, զՄովսէս, զարեգակն։

356. Մէն երբեմն աննախդիր ալ կ'ըսուի. Տեսանէրք 'ի գազանաց անտի։ Արձակեաց նա զ յիշխանաց իւրոց։

357. Նոյնէ ու բայէ մէկ եղած բայերն ալ ներգործականի պէս հայցական խնդիր կ'առնեն.

Թոյլ տալ զայն կամ զնոսա. Թոյլ ալս զաշխարհս 'ի նա. — այս ինքն թող։

Թողութիւն առնել զօրէնսն իւրեանց. — այս ինքն թողուլ, թոյլ տալ։

Աւար հարկանել զկարասի նորա կամ զինչս նոցա. — այս ինքն աւարել։

Հրաման տաց զշարխ։ Գան հարին զնա։ Ակն ունել զնոյն։ Զնա չառնէր փոյթ։

Վրէժ խնդրել զանկանելն իւրեանց 'ի տէրութենէն։

Բուռն հարկանել զմի 'ի յոստոց ծառոյն. — այս ինքն ըմբռնել։

Բուռն հարկանել զգործս. — այս ինքնի 'ի բուռն առնուլ, սկսանել։

Հարցփորձ առնել զնոսա ։ Օ՜ ցածութիւն իւրեւ-
գող ական հատանես ։

Խրատմնկարկառ ապարին զայն . — այս ինքն կար-
կատեցին զխրատ Նորա ։

Օ՜ այն լուր խոկ եղեց ։ Օ՜ որ յառաջագոյն տե-
ղեակ էմք ։

Օ՜ որ իրազեկ եղեալ արքային ։ Օ՜ ամենայն ինչ
նպաստ լիցուք յընկերացն օգուտ ։

358 . Նոյն, էս էական բայով խոնարհած անցեալ
դերբայն ալ (288), ներգործական մտքով, հայցական
խնդիր կ'առնէ .

Օ՜ փրկութիւն գտեալ լինէին ։ Օ՜ որ ինքն խոկ
իւրովք աչօք տեսեալ լինէր ։

Օ՜ անօգուտն թէ թողեալ լինիք ։ Պահեալ լի-
նէին պահս ։

Ընկալեալ լինին պատուհաս ։ Տուօղն զխւյն բոլոր՝
յանձնեանն լինի կատարեալ ։

Ական չէր տեսեալ զխս ։ Օ՜ բարեկամ իմ չէք տե-
սեալ ։

359 . Ասական բային հետ է բայածականն ալ (298),
ներգործական մտքով, հայցական խնդիր կ'առնէ .

Օ՜ համատօսն յինէն պահանջելի է ։ Օ՜ որ յա-
ջորդաց է խմանալի ։

Ներելի է քեզ այժմ զմի յայտնանէ ։

Օ՜ այս է մեզ առնելի և յուէտ գործելի ։

360 . Ներգործական ու կրաւորական բայերը՝ իրենց
սեռի խնդիրէն 'ի զատ, կամ առանց անոր ալ, իրենց
կերպ կերպ նշանակութեանը ու խօսքին մտքին յար-
մար ուրիշ տեսակ տեսակ խնդիրներ ալ կ'առնեն այլ-
ևայլ հոլովով ու զանազան նախդիրներով (142) կամ
հոլովառու բառերով (152), որ Բնութեան խնդիր կ'ըսուի
ըսինք (318) ։

361 . Ասանկ ալ չէզոք բայերը, հասարակ ամենուն

մէկէն մէկ սեռի խնդիր չունենալնուն, միայն բնութեան խնդիր կ'առնեն այլևայլ հոլովով ու նախդիրներով կամ հոլովառու բառերով, տեղին ու իրենց մասնաւոր նշանակութեանը նայելով։

362. Բային նշանակութիւնը գիտնալէդ ետքը, հոլովներուն ու նախդիրներուն ու հոլովառու բառերուն ուժը աղէկ միտք առեր ես նէ, կրնաս ատ բնութեան խնդիրները անսխալ դնել. կանոնով չսորվեցուիր։

363. Ուղղական բնութեան խնդիրը՝ շատ տեղ նախդրիւ տրական ալ կը դրուի, ու յոգնակիի տեղ եզական ալ, ինչպէս էական բայերուն տեսանք (342)։

Արար զիս հայր։ Արարից զքեզ յազգ մեծ։
Օծանել զոք թագաւոր կամ ՚ի թագաւոր։
Ոչինչ համարել։ Յոչինչ համարել. Առ ոչինչ համարել։
Զկուռս ոչ կալայ երբէք առ Աստուածն ճշմարիտ
Թշնամի դառնալ. Դառնալ ՚ի թշնամի։
Առիւծ ձևանալ. Յառիւծ ձևանալ։
Զեօթն աղջիկն, զորս տուեալ էր նորա նաժիշտս։
Զամենեսեան պատերազմօղ և թշնամի ունել բարի իցէ, եթէ սիրելիս և բարեկամս։
Զ[illegible]ագոյն և պայծառք երևէին։

364. Ներգործական բային յոգնակի ուղղական խնդիրը սովորաբար սեռով կը դրուի. Կացո զնոսա իշխանս։ Կենդանիս արար զմեզ։

Նոյ զձեզ դեսպանս։ Առնել զամենեսեան պնդաւորս։

365. Կրաւորական ու չէզոք բայերունը սովորաբար քէով. Զօրք անուանին։ Մայրք չինեցան քեզ պահապանք։ Մեկնեցան ՚ի միմեանց ողջ անարատք։ Կային դատարկք։ Գնային անարատք։

366. Բայց շատ բայեր՝ բնութեան խնդիրի տեղ

ալ հայցական կ՚առնեն, որ համառօտ մը գիտնալու է. ինչպէս,

367. ա. Սեռականի տեղ հայցական.

Դու զո՞վ առնես զքեզ. — այս ինքն ո՛վ առնես ։

Թագաւոր զո՞ն՝ ասեն զՅիսուս. — այս ինքն Թագաւոր ոմն ասեն ։

Զնախանձն որ առ մարդն եղև՝ իմացին զպատճառն. — այս ինքն զնախանձն իմացին պատճառ ։

368. բ. Տրականի կամ գործիականի տեղ հայցական.

Որ զգեցուցանէր զձեզ կարմիրս. — այս ինքն ձեզ կարմիրս կամ զձեզ կարմրօք ։

Հարցից զձեզ բան մի. — այս ինքն ձեզ բան մի, կամ զձեզ բանիւ միով ։

Հարցից ինչ զձեզ. — այս ինքն ինչ ձեզ կամ զձեզ իւիք ։

Ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ. — այս ինքն նոցա, կամ բազում իւիք ։

Արբոյց զպարտէզն երկերիւր սափոր ջուր. — այս ինքն պարտիզին, կամ ջրով ։

Զամուր ամուր տեղիսն Հայոց՝ բերդս շինել. — այս ինքն յամուր ամուր տեղիսն, կամ բերդիւք ։

Զայս միայն աղաչեսցուք զԱստուած. — այս ինքն առ այս կամ այսու ։

Զկշիռ մարմնոյ նոցա ոսկի առնուլին. — այս ինքն 'ի կշիռ կամ կշռով ։

369. գ. Նախդրիւ տրականի կամ գործիականի տեղ հայցական կ՚առնեն սովորաբար ժամանակի, չափի, ձևի, ճամբայի ու ասոնց նման անունները. ինչպէս,

370. Ժամանակի անունները.

Հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. — այս ինքն յամենայն աւուրս ։

Զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր. — այս ինքն 'ի վեց աւուրս ։

Տեսին զգործս իմ զքառասուն ամ. — այս ինքն ընդ քառասուն ամ։

Ծառայեաց ամս եօթն։ Թագաւորեաց ամս տասն։

Կացին չէօրն օր և չէօրն գիշեր։ Մու եկաց ամսօրս երկոտասան։

371. Չափի անուանքը.

Բարձրանալ հնգետասան կանգուն. — այս ինքն ՚ի հնգետասան կանգուն կամ հնգետասան կանգնաւ։

Արբուցանել ումեք բաժակ մի ջուր. — այս ինքն բաժակաւ։

Բարձին զնշխարսն երկոտասան սակառի. — այս ինքն սակառօք։

372. Ձևի անուանքը.

Օ բացական տեսիլն զնոյն օրինակ բանդակեցին. — այս ինքն նոյն օրինակաւ կամ ՚ի նոյն օրինակ։

Օ Տարսոն զձև և զօրինակ Բաբելոնի շինէր. — այս ինքն ձևով և օրինակաւ կամ ՚ի ձև և յօրինակ։

Օ ինչ օրինակ վկայեցին։ Աստուածակերպ օրինակ բարձրանալ. — այս ինքն օրինակաւ։

373. Ճամբայի անուանքը.

Երթիջիք զճանապարհն ձեր։ Գնալ զճանապարհս թիւրս։

Գնաց ճանապարհ ժամանակս բազումս։

Մի երթար ճանապարհ ընդ նոսա։ Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ։

Տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին։

Փնդեցան ալքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու։

Հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ։

Ի ճանապարհին՝ զոր երթայցես։ Երթան զերկայնաձիգ հրապարակն։

Երթիցաք զուղորդն ։ Օ լեռնլեռնային փնտռաջինք ։

Երթայր զայս կողմն լերինն ։

Մեծ վայրս խաղացեալ յառաջ երթիցեն ։

Մեծաւ հոգաբարձութեամբ ընթացաք զառա-պար կենցաղոյս ։

Զարացուցանել զնա և տաքել զերկայն ճանա-պարհն ։

Նա իբրև տեղեակ՝ զուղորդն տանի ։

Առաջնորդէր նոցա զերկայնութի ճանապարհին ։

374. դ. Գործիականի տեղ հայցական կ՚առնեն իրենց գոյական անունները կամ ուրիշ նոյն և նման նշանակութիւն ունեցող բառերը, ու յարաբերական ները՝ որ զանոնք կը յարաբերէ. ինչպէս,

375. Իրենց գոյական անունները.

Մեղոյց զնոսա մեղս մեծամեծս ։ — այս ինքն մե-ծամեծ մեղօք ։

Սէր յաւիտենական սիրեցի զքեզ ։ Անէծ զիս ա-նէծս ցաւագինս ։

Օ մի սէր սիրեցին զՅիսուս . — այս ինքն միով սիրով ։

Օ հարուածս թշնամւոյ հարի զքեզ ։

Օ թաղումն իշոյ թաղեսցի ։ Օ այսպիսի պատիժս պատժեսցաւ ։

Պսակեցար ՚ի թագաւորէն զանթառամ փառաց զպսակն ։

Տաճարն Աստուծոյ շինեցի շինուածս փառաւորս ։

Ամաչեցէք զամօթ մեծ ։ Երկեան երկիւղ մեծ ։

Օ անգիւտ կորուստ կորնչի ։ Ընթացս յանդըգ-նութեան ընթանային ։

Լացին լալիւն մեծ յոյժ ։ Մեծացաւ մեծութի յոյժ ։

376. Ուրիշ նման բառերը.

Օ մահ աղուեսու սպանից զքեզ . — այս ինքն մա-հուամբ ։

Օգնեա յանցանաց քոց ոչ յանցեաւ. — այս ինքն կե-
ցոյ. (յանցանքին կէտն ալ նոյնպէս յանցանք է.)
Մատեաւ ամենայն այր զզէն իւր. — այս ինքն
զինեցաւ զինու իւրով։
Եւ նոքա զնոյն քուն ննջեցին։ Թմբրեցին զմա-
հացն քուն։
Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։
Բողջացան զանախտաւորութիւն երկնաւոր։
Պատերազմել զառաքինութեան զհանդէս։
Կորնչել զյաւիտենական սատակումն կամ զյաւի-
տենական մահն։

377. Յարաբերական ոճք.

Տեսի ես զնեղութիւնն՝ զոր նեղեն զնոսա եգիպ-
տացիքն. — այս ինքն որով։
Հարուածք՝ զոր հարցէ տէր զազգս ամենայն. —
այս ինքն որովք։
Գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ. Ի
մեղս իւր զոր մեղաւ։
Բժշկել 'ի վիրացն կամ 'ի նետիցն զոր խոցեցին
զնա ասորիքն։
Եւ թողից քեզ զանարգանս գիցն՝ զոր թշնամա-
նեցեր զնոսա։
Ի զարհուրանաց սրտի քոյ՝ զոր երկնչիցիս։
Յամենայն անօրէնութեանց դոցա՝ զոր մեղան։

378. Շատ չէզոք բայեր ալ, նշանակութիւննին փոխուելով, ներգործականի մօքով հայցական կ'առնեն ուրիշ հոլովներու տեղ.

Ամենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմն. — այս
ինքն 'ի լեռնակողմն։
Որ զտեղին բնակեալ նստէին. — այս ինքն 'ի տե-
ղին, 'ի տեղւոջն։
Եսթեր՝ զոր ամուսնացաւ թագաւորն. — այս ինքն
ընդ որում։

Խնդացին զմեր 'ի նոսա հասանել. — այս ինքն ընդ մեր հասանել։

Ի բամբասանաց խնայել զլեզու. Խնայել զձեռն յարենէ. — այս ինքն արգելուլ։

Աչկցան միշտ կանխէ զանհնարինս. — այս ինքն կանխաւ գուշակէ։

Կաց և խրատեաց զզօրութիւն տեառն. — այս ինքն ուսիր, 'ի միտ առ։

Զինչ ես պակաս իցեմ. — այս ինքն իւ է՞ յորմէ։

379. Շատ ներգործականներ ալ, չէզոքական մաքի փոխուելով, հայցականի տեղ ուրիշ հոլովներ կ'առնեն. ինչպէս,

Լսել ձայնի, լսել կ'ըլլայ ձայն ընել, հաւանիլ։

Տարայք մեզ, համբերեցէք։

Կամել յօրէնս տեառն կամ ընդ պատերազմ, հաճիլ հաւանիլ։

Տեսանել 'ի նա, 'ի լոյս, նայիլ։

Ուրանալ 'ի հայելոյ, յԱստուծոյ, յօրինաց, խորշիլ հրաժարիլ։

Անիծանել այլոյ, անէծք կարդալ։

Հովուել հօտի, հովուութիւն ընել։

Զգալ ցաւոց, յաղթութեանց, անձին, մնաց կամ խելաց իւրոց, զգայուն ըլլալ։

Յանձն առնուլ կամ յանձին ունել ումեք, իմիք, հաւանիլ, խօսք տալ։

Զմտաւ ածել զնմանէ, մտածել, մտմտալ անոր վըրայ։

380. Առնելու տալու բայերը, ինչպէս Գնել, ստանալ, առնուլ, վարձել, վաճառել, տալ, մատնել, սակարկանել, գնոց անունները կ'առնեն սեռական, գործիական, բացառական, ընդ կամ 'ի նախդիրով. Ստանալ կամ վաճառել արծաթոյ, արծաթով, 'ի գնոց արծաթոյ, ընդ արծաթոյ, 'ի հինգ յիսուն։

381. Զափի, կշռքի անուններն ալ խնդիր կ'ըլլան ուղղական կամ անմախնդիր հայցական, գործիական, բացառական.

Ունել զբարձրութիւնն տասն կանգուն է՛ 'ի տասն կանգուն (363), տասն կանգնաւ, 'ի տասն կանգնոյ։

Շինել զպարիսպն յիսուն կանգուն յերկայնութիւն, կանգունս հարիւր յերկայնութիւն, կանգնաւ յերկայնութիւն, 'ի քսան կանգնոյ զերկայնութիւն։

Հատանել փայտ մի յիսուն կանգուն. Էր աշտարակ մի յիսուն կանգուն շինեալ։

Կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի։

Տային տասն հազար քոռ ցորենոյ, և գարի՝ տասն հազար քոռ։

Պատրաստեցի ոսկի՝ տաղանտս հարիւր հազար, և արծաթ՝ տաղանտս հազար հազար։

---

382. Բայի զօրութիւն ունեցող անունները բայանուն կ'ըսուին, ներգործական, կրաւորական ու չէզոք բայի մտքով գտնուելով, ան բայերուն պէս ալ խնդիր կ'առնեն՝ սեռի կամ բնութեան։

383. Բայց ան այլևայլ խնդիրներուն տեղ՝ սեռականն ալ կ'առնեն յատկացուցիչի պէս, որը շատ ու սովորաբար, որը երբեմն. որ աղէկ գիտնալու է.

384. Ներգործական մտքովները՝ խիստ շատ անգամ հայցականի տեղ.

Ծննդեամբ զԿային. Ծննդեամբ Կայենի. — Կայէնը ծնանելովը։

Արարչութիւն զաշխարհս. Արարչութիւն աշխարհի. — աշխարհս ստեղծելը։

Գործելեաց զգործս. Գործօնաց գործոյն. — Գործը գործողներուն։

Սրտիւ զբնաւս. Սրտիւ բնաւից, ամենեցուն. — ամէնը ստեղծող։

Դատապարտօղք՝ զՔրիստոս ոչ խոստովանողաց. —Քրիստոս չխոստովանողները դատապարտողներ. մէկ խօսքի մէջ երկու կերպն ալ։

385. Կրաւորական մասնիկները՝ երբեմն բացառականի տեղ.

Ծննդեամբ ՚ի կուսէն. Ծննդեամբ կուսին. — կուսէն ծնելով։

Վիրաւորք ՚ի սրոյ. Վիրաւորք սրոյ. — Սրէ վիրաւորածներ։

Կոխան յազգաց. Կոխան ազգաց, ոտից. — Ազգերէ կոխուած։

386. Չէզոք մասնիկները՝ երբեմն իրենց բնութեան խնդրին տեղ.

Յօժարեցութիւն գործոյ եւ հրաժեշտ վատացն. — այս ինքն ՚ի գործ, ՚ի վատացն։

Գալ՝ զգլխեցումն չարչարանացն առէ. — այս ինքն զգլխեցն ՚ի չարչարանսն։

Ու եւ ծառայն. Ի յելն Եգիպտոսի. — այս ինքն ՚ի ծառան, յԵգիպտոսէ։

Որպէս առնիցէ զփախուստ միեղջերուին. — այս ինքն զփախչիլն ՚ի միեղջերուէն։

Հաստողին փախչող. Երկիւղածք Աստուծոյ. — այս ինքն ՚ի հաստողէն, յԱստուծոյ։

387. Ան, ս, մասնիկներով ածականները, ու պակսութիւն մը ցուցընողներուն շատը, անխտիր կ՚առնեն բացառական ու տրական, երբեմն ալ գործիական.

Տգէտ գրոց, ՚ի գրոց.
Անտես աչաց, յաչաց.
Անփորձ մեղաց, ՚ի մեղաց.
Անյայտ տեսողաց, ՚ի մարդկանէ.
Անպտուղ սերմանն, ՚ի հաւատոյ.
Հեռի ՚ի տանէ, արդարութեան.
Օտար ՚ի մօրէ, հաւատոց.

Կարօտ հացի, 'ի հացէ, հացիւ.
Աղքատ 'ի գիտութենէ, բարեաց, մտօք.
Անպարտ 'ի յանցանաց, այլոյքն.
Կրտսեր իմաստութեան դատաստանի և օրինաց։

388. Նոյնպէս ըն բայածականք կ'առնէ տրական ու բացառական.

Մերձենալի մարդկան, 'ի մարդկանէ.
Ընդունելի ամենեցուն, յամենեցունց.
Աշխատելի ամենեցուն, յամենեցունց.
Գովելիք աշխարհի, 'ի մէնջ.
Աչաց տեսանելի.
Ճանապարհ գնալի ոտից և սմբակաց։

389. Շատ տեղ ալ որ և իցէ գոյական անուններ խնդիր կ'ունենան քովերնին՝ չէ թէ իրենց, հապա գոյութեան էական բայ կ'իմացուի որ յարաբերականով.

Ազգ տեսակաւ, այլ ոչ համեղութեամբ. ըսել է, ես որ ազգ եմ տեսակաւ, ևայլն։
Չափով կեանք. Ծուլութեամբ կեանք. — ըսել է, կեանք որ չափով է, ևն։
Խօսիք պատարագ. — ըսել է, պատարագ որ խօսիւք լինի, բանաւոր։
Առ 'ի քէն իմաստութիւնդ. Առ 'ի քէն փառօքն. — ըսել է, իմաստութիւնդ որ է առ 'ի քէն, փառօքն որ են առ 'ի քէն։
Անցաւորք են և թագաւորքն և 'ի նոցանէ սպանալիքն. — ըսել է, և սպանանալիքն որ լինին իմ եղեալք 'ի նոցանէ։
Եղբայր առ 'ի հօրէ կամ առ 'ի մօրէ. — ըսել է, որ է իմ եղեալ առ 'ի հօրէ։
Կոյր 'ի ծնէ. Կաղ յորովայնէ մօր իւրոյ. — ըսել է, կոյր եղեալ, կաղ եղեալ։

Արուեստն չափ յարուեստէ բժշկի ։ Ազգաւ չափ յազգէ Հրէայ ։

Տուր բերել զարծաթն հարիւր քանքար . — այս ինքն որ է հարիւր քանքար ։

Որդի ամաց ութից . Այրի ամաց իբրեւ ութսուն և չորից . — այս ինքն որ էր ։

Աճուղ սուր երկսայրի թզաւ յերկայնութիւն . — այս ինքն որ իցէ թզաւ ։

390. Ածական անունները ուրիշի բաղդատութեամբ որ բանինէ[1] , սովորաբար քան բառով խնդիր կ'առնեն .

Հատն մանանխոյ փոքր չափ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս . բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար ։

Թեթեւ քան զօդ ։ Թեթեւագոյն քան զարծուիս ։

Գերազանց քան զմիտս ։ Քան զամենայն վեհագոյն ։

391. Երբեմն ալ սեռական կամ տրական կ'առնեն .

Ամենայն նախարարացն աւագ ։ Ամենեցուն վեհագոյն ։

Օրինակաց գերագոյն ։ Ես վատթար ամենեցուն ։ Բարձրագոյն նմին ։

Գերազանց մեւաց ։ Յոյժ գերազանց առ հասումն իմացմանց ։

Ոչինչ նուազ էր կայն արքային հասակի . — այս ինքն քան զհասակ ։

---

1 Ըստ ինքեան բաղդատական ածական չկայ մեր լեզուին մէջ , հապա յայտնի կամ զօրութեամբ քան բառով կամ ուրիշ խնդրով կ'ըլլան համառօտապէս թէ պարզերը՝ թէ գոյն բառով բաղդատները , ինչպէս կը տեսնես օրինակներուդ մէջ ։ Ու գոյնով բառերը՝ ակրապէս բաղդատութիւն չեն բերեր , հապա կը սաստկացընեն միայն . ինչպէս , վարժապէս վեհագոյն , լեառն բարձրագոյն , ծայրագոյն գահ . որ ամենէն վերը ու աւելին կը նշանակեն ։ Երբեմն ալ բնաւ չեն փոխեր բառը . ինչպէս , Լինն անեղ յանեղագունէն իջեալ հօրէ ։

392. Ինչ տեղ ալ բացառական.

Յայլոց վերագոյն. Յերկնից վերագոյն. Ի յօդապատ մարմնոյ 'ի վեր:

Զօրեղագոյնք 'ի սոցունց. — այս ինքն քան զսոսին:

Հին էր ժամանակաւ 'ի նմանէ. — այս ինքն հին քան զնա:

393. Իսկ երբոր առանց բաղդատութեան՝ նմաններու մէջ աւելի կամ պակաս ըսել պէտք ըլլայ նէ, կ'առնեն սեռական, բացառական, նախդրիւ տրական, 'ի մէջ բառով.

Յընտիր չիրմաց մերոց Թաղեա: Մեծդ դիւցազանց:

Մեծն 'ի ձէնջ. անմեղն 'ի ձէնջ. կրտսերն 'ի նոցանէ. ծերագոյնքն 'ի նոցանէ:

Մեծն 'ի մարգարէս. կրտսերագոյն յորդիս նորա. նախդ 'ի վկայս. տկարագոյն յանասունս:

Ի մէջ իմաստնոց իմաստնագոյն:

394. Միջակ անուններն, թէ միայն՝ թէ գոյականի հետ, սովորաբար բացառական խնդիր կ'առնեն.

Ընկցի 'ի մի 'ի քաղաքացն այնոցիկ: Ի միում յաւուրց:

Նշլեցի բան քո իբրև զմիոյ 'ի նոցանէն: Նշկա 'ի նոցանէ: Հինգն 'ի նոցանէ:

Զինչ գտեր յամենայն ընչից քոց: Պիղծ ինչ 'ի կերակրոցն:

Ով 'ի ձէնջ. որ 'ի մէնջ. մի ոմն 'ի դպրացն. ոմանք յայնցանէ:

Իւրաքանչիւր որ 'ի ձէնջ: Ամենայնք 'ի ժամանակագրաց:

Վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ: Ի մասն ինչ միայն 'ի նմանէ:

Միոյ ուրուք կուսակալի 'ի ծառայից տեառն իմոյ:

Ով որ իցէ 'ի ձէնջ մարդ: Ո՞ որ 'ի ձէնջ հայր:

395. Տասանգամ ալ սեռական ու նախդրիւ տրական կ'առնէն.

Հասանել 'ի մի քաղաքացն ։ Ի միում աւուրց ։

Եղիցին և քո բանք իբրև զմիոյ նոցա ։ Մի ումն քաղաքացւոց ։

Մի կարծեր ինչ նիւթոյ ։ Իբր 'ի պղծոյ իմիքէ արարածոյ ։

Ի տան ուրումն իշխանացն ։ Ով է որ պիտանիք իցեն ձեր ։

Իւրաքանչիւր որ սրբոյն ։ — Մի յորդիս ։ Է որ 'ի Թագաւորս ։

Է որ 'ի նոսա ։ Ոչինչ է յամենայն ախտս չար քան զլրբութիւն ։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

396 ․ Գոյական անուն մը կամ դերանուն մը ուրիշ անուան քով, բաց 'ի խնդիր ըլլալէն՝ որ տեսանք խնդիրներուն գլուխը, կամ յատկացուցիչ է կամ բացայայտիչ ։ Ասոր համար երկուքն ալ մէկտեղ տեսնենք ։

397 ․ Երբոր մէկ բանին որուն ըլլալը կ'ուզենք յայտնել նէ, քովը սեռական անուն մը կամ դերանուն մը կդնենք, որ յատկացուցիչ կ'ըսուի (319), մէկալն ալ յատկացեալ ։ Աշխարհաբառ լեզուի մէջ յատկացուցիչը միշտ առաջ կդրուի յատկացեալէն ․ գրաբառին մէջ՝ շատ անգամ ետքը, բայց առաջ ալ կդրուի ․

*Բան քո ․ քո բան ։ Ծոց իւր ․ իւր ծոց ․ — բու խօսքդ, իր ծոցը ։*

*Արքայութիւն երկնից ․ երկնից արքայութիւն ․ — երկնքի թագաւորութիւնը ։*

*Պտուղք ծառոց ․ ծառոց պտուղք ․ — ծառերու պտուղներ ։*

*Պտղովք ծառոց ․ ծառոց պտղովք ․ — ծառերու պտուղներով ։*

*Գլուխ և ձեռք և ոտք նորա ։ Ձեր ոգի և շունչ և մարմին ։ Զհայր քո և զմայր ։*

*Սէրն Աստուծոյ և ընկերին ։ Ս՛թերք ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց ։*

*Աւուրք չորեքտասան՝ հարսանեացն ։ Ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց ։*

*Առեր զհանդերձն գեղեցիկ քո ։ Զզօրսն ամենայն Պարսից ։*

Ի վերայ լերանց բարձանց՝ իւրեանց ․ Ի լերինն բարձու՝ Իսրայէլի ։

Նուազք ամաց կենաց իմոց կամ աւուրք կենաց ամաց իմոց ոչ հասին յաւուրս ամաց կենաց հարց իմոց ։

Կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն . — այս ինքն դայեակն կրտսեր որդւոյն ։

Նուանց բարեգործից հրամանաց անհնարկութեան . — այս ինքն աւանց անհնարկութեան հրամանաց բարեգործից ։

398 . Բայց միջակ անուն ու յարաբերականը ո , որ , միշտ առաջ կը դրուին . Այր որդի , որոյ որդին , որոյ ձայնն , որոյ որդիքն , որոց իմաստութիւնն , որոց ոգիքն ։

399 . Յատկացեալը շատ անգամ չկրկնուիր նոյն խօսքի մէջ , ինքիրեն կ'իմացուի . ինչպէս ,

Ժամք նորա՝ կորեան առիւծու . — այս ինքն՝ են կամ էին ժամք կորեան ։

Ոչ օգտի և խաղաղութեան բանս խօսի , այլ չարի . — այս ինքն չարի բանս ։

Ու էին գործք իւրեանց՝ չարութեան . — այս ինքն գործք չարութեան ։

Աստուծոյ բարբառ է , և ոչ մարդոյ . — այս ինքն ոչ մարդոյ բարբառ ։

Հրեշտակի կարծեցին զաստուածային բարբառն . — այս ինքն հրեշտակի բարբառ ։

---

400 . Երբոր մէկ անուան կամ դերանուան ինչ կամ ով ըլլալը կամ ինչ մարդով անուած ըլլալը յայտնել կ'ուզենք նէ , քովը նոյն հոլովով ու թուով համաձայն ուրիշ անուն մը կամ դերանուն մը կը դնենք , որ բացայայտիչ կ'ըսուի (320) , մէկալն ալ բացայայտեալ կամ բացայայտեալ . ինչպէս , Վահան զօրավար , ըսել է ան Վահանը որ մարդ է ու զօրավար . Զօրավարն Վահան ,

ըսել է ան զօրավարը որ անունը Սահան է ։ Յաթոռն Աստուծոյ՝ յերկինս, ըսել է Աստուծոյ աթոռը՝ այս ինքն կ՚ուզեմ ըսել երկինքը ․ իսկ Յերկինս՝ յաթոռն Աստուծոյ, ըսել է երկինքը՝ որ Աստուծոյ աթոռն է ․ ու թէպէտ ինքիրեն յայտնի է, բայց հոս աթոռ կը մտածուի կոր, աթոռի պէս առնուած է, ուստի ադյեկտիվով չմեկնուիր, հապա ոչ է ըսելու է ։ Նման կ՚ըսուի,

Ասանէթ՝ դուստր Պետափրեայ քրմի ․ Արքայի Պուտթի ․ Պուտթի արքայի ։

Աղէտպատրաւ գաւերըն հանդերձ ․ Հանդերձ կընաւ իւրով Սափիրաւ ։

Սէր քարոզեցաւ, ինձ և Սիղուանոսի և Տիմոթէոսի ։

Ի Պարեհէ արքայէ ․ Յինէն՝ ՚ի կնոջէ առնմրացւոյ ։

Նա զԱղէտպատրա զդուստր իւր ․ Զմեղմն ձեր, զոր արարէք, զորթն առի և այրեցի ․ Թողեալ ՚ի բաց զփառսն հայրենի՝ զքահանայութիւն ։

Հողմոյ մահուն, որ ընկենու զծառս՝ զմեզ ։

Ըղջէլ զեղջաւրք իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի ։

401 · Ըստ անգամ բացայայտիչը՝ այս ինքն, այս ինքն է, այս է, այսինքն, մեկնելու բառերով ալ կը դրուի ․

Լուսաղունք, այս ինքն ոգիք իբրև ութ ։

Ի նա հաւատացեն, այս ինքն ՚ի Յիսուս Քրիստոս ։

Ի ձեռն փարազուրին, այս ինքն է մարմնոյ իւրոյ ։

Զսուրն, այս ինքն զբանն Աստուծոյ ։

Սաղարթօք փարախց, այս է արտաքին զինօք բարեշուք կերպից ։

Հրաշալի պատուով յարգեալ, բանիւ ասեմ և մտօք ։

402 · Նման՝ բայ բայի ալ կ՚ըլլայ բացայայտիչ ․

Յամաքեցաւ խոտն, այս է մեռաւ ։

403. Տեղի և ուրիշ բանի յատուկ անունները՝ շատ անգամ ածականի պէս առաջ կը դրուին, ուստի և սովորաբար անհամաձայն կը դրուին ուղղական.

Եփրատ գետոյ.
Ապար աշխարհին.
Արեգ քաղաքի.
Ովկիանոս ծովուն.
Բագաւ աւանոյ, 'ի Բագաւ աւանէն.
Սերկևիլ մրգոյ, բարտի ծառոյն.
Օսէիր լերանց, առ Եփրատ գետով.
Ի Սիոն լեռնէ, 'ի Հռոմ քաղաքէ, յԱյրարատ գաւառէ, 'ի բարտի ծառոյն.
Օմոլախինդ արմատն.
Իշղելին ծառոյ. մայր փայտիք. բիւրեղ և գահանակ և սարդիոն ակամբք.
Գովեցար ովսաննա երգով։

404. Բայց համաձայն ալ կ'ըլլան.
Սեփարուիմայ քաղաքի.
Առ Հիւդասպաւ գետովն.
Ի Սինէ լեռնէ.
Ահեկանի ամսեան.
Սարոյ ծառոյ։

405. Երբեմն մարդու անուններն ալ անհամաձայն՝ ածականի պէս առաջ կը դրուին.
Սանատրուկ արքայի, Յուլիոս կայսեր, Բակուր բդեշխի.
Աշխէն տիկնաւ.
Յուգոստոս կայսերէ. յԱղեքսանդրոս զօրքնէ.
Օքանան մանկանէն.
Արաւեմա գից։

406. Տեղի և իրաց անունները երբեմն ետև ալ կը դրուին անհամաձայն. Քաղաքին Սեփարուիմ, լերինն Կաւկաս, գետոյն Ախուրեան, ամսոյն Ադար, 'ի քաղաքին Երուսաղէմ, 'ի լերինն Սինա, 'ի լերինն Թաբոր, յամսեանն՝ Նիսան։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

407. Ածական անունը (9) աշխարհաբառ լեզուի մէջ՝ միայն առաջ կը դրուի, գրաբառին մէջ՝ առաջ ալ ետև ալ. մեծ ծառ, ծառ մեծ. արդար այր, այր արդար։

408. Հասարակ անուն ածականները անմիջապէս գոյականէ առաջ որ դրուին նէ, սովորաբար չեն համաձայնիր անոնց հետ ոչ հոլովով ոչ թուով. այս ինքն չեն հոլովիր անոնց պէս, հապա ուղղական կը մնան. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ. | Մեծ ծառք. |
| Մեծ ծառոյ. | Մեծ ծառոց. |
| Մեծ ծառով. | Մեծ ծառովք. |
| 'ի Մեծ ծառոյ. | 'ի Մեծ ծառոց. |
| զՄեծ ծառ. | զՄեծ ծառս։ |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր. | Արդար արք. |
| Արդար առն. | Արդար արանց. |
| Արդար արամբ. | Արդար արամբք |
| յԱրդար առնէ. | յԱրդար արանց. |
| զԱրդար այր. | զԱրդար արս։ |

409. Բայց անհամաձայն կ'երթան շատ տեղ՝ թէ և միջանկեալ բառով հեռացած ըլլան գոյականէն, որ շատ հեղ կ'ըլլայ.

Աշխարհական պատահեալ վիճակի․ Հաստատուն վի-ճակեալ բնութեան։

Ապաշաւն եմք մտանեալ ատենի․ Օտնդարձն 'ի չարեաց զմեղաւորէն։

Աշխարհն կարօտանամք բանից․ Պղծալիցն իբրեանց շրթամբք։

Բազում ծնանիցին նմա որդիք․ Բազում ունէր ուստերս։

410․ Բայց շատ հեղ ալ կը համաձայնին վերջահօ-լովներուն, մանաւանդ հեռու ընկածները, որ աշխար-հաբառին մէջ ընաւ չըլլար․ ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ․ | Մեծ ծառք․ |
| Մեծի ծառոյ | Մեծաց ծառոց․ |
| Մեծաւ ծառով․ | Մեծօք ծառովք․ |
| 'ի Մեծէ ծառոյ․ | 'ի Մեծաց ծառոց․ |
| զՄեծ ծառ․ | զՄեծ ծառս։ |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր․ | Արդար արք․ |
| Արդարոյ առն․ | Արդարոց արանց․ |
| Արդարով արամբ․ | Արդարովք արամբք․ |
| յԱրդարոյ առնէ․ | յԱրդարոց արանց․ |
| զԱրդար այր․ | զԱրդար արս։ |

Անահիտ՝ ծնունդ է Մեծին արին Արամազդայ։

Վեհի և փառաւոր Թագաւորի։

Մեծաւն և կատարելովն և անձեռագործ խորանաւն։

Մեծամեծացն և անբաւ խնամոցն։ Ի պղծոց և 'ի նո-րաձայն բանից։

Փախուցելոյ 'ի բարկութենէ եղբօրն առաջնոր-դեաց արդարոյն։

Նորհնաօրէն վերակոչեաց հրաման արքային ։
Հրաշափառափառնիւ պարտ էր անցանել բանիւ ։
Ի ճոխաձայնորաց ասոյ բերմանց ։ Ի դաստակոյն թափէ
զինքն Ռաշինոյ ։

411 . Ինչպէս տեսար, անմիջապէս մօտիկները հա-մաձայնին ալ նէ՝ վերջահոլովներուն միայն կը համա-ձայնին, և ոչ յոգնակի նախդրիւ հոլովներուն, այս ինքն յոգնակի ուղղականին ու հայցականին. զի անմիջապէս մօտ որ ըլլան՝ չլսուիր սովորաբար մեծք ծառք, արդարք արք, զմեծս ծառս, զարդարս արս ։

412 . Բայց հեռու ինծողներուն ատ ալ կ՚ըլլայ խիստ վայելչաբար . ինչպէս,

Նորկու ահեղ քառաթարեւոր աներեւոյթ հրեշտակք ։
Մեծամեծք և պատուական առեալք ։
Նա այլ ես բազմամք որ 'ի սոյն յարին բանք ։
Արձակել 'ի վերայ նոցա նուագարդս լի բարկու-
թեամբ գազանս անծանօթս ։
Օ ընտիր ընտրեալ և գեղեցիկ անօթեան տարայք ։
Նորեցէք վեհայեալս 'ի ձենջ առ եօթն ։
Բազմամս բազմաբերս և քննեբերս 'ի նմա տնկեաց
հաճոյս ։

413 . Գոյական դերանուններուն ածականը միշտ համաձայն դնելու է հոլովով ու թուով . Ողբացելոյս ինձ . փրկելոյս մեզ . զսկարս զմեզ . զկորուսեալս զմեզ . զստարացեալքս զմեզ ։

414 . Բայց չորս թուական անունները, Դ, երկու, երեք, չորք, և միջակ անունները երկոքեան, ամենեքեան, ես կամ ինչ, որ, ամ, ոք, ու ածական դերանունները և դերանուանական ածականները, անմիջապէս առաջ ալ որ դրուին նէ, սովորաբար կը համաձայնին հոլովով ալ թուով ալ, շատը նախդրիւ հոլովներուն ալ . ինչպէս, Միոյ առն, 'ի միում աւուր, 'ի միջէ մարդոյ, երկուց

աւուրց, երկուս ամս, երկուք և երիք վկայիւք. 'ի չորից ծառայց. զերկոսին որդիս, ամենեքեան ծերքն, ամենեցուն բնակչաց. առանց իրիք միջնորդի, մի իւիք սաստիւք. որով հրով, յորմէ արարչէ, որոց անուանց. 'ի չարէ ումեքէ արարչէ, ոմանք արք, զոմանս եղբարս.

Նոյն աւուր, այդմ չորրհի, այնու օրինակաւ, այնց ժամանակաց. 'ի միւս աւուր, նմին կամ նմինէ անուամբ, նորիմբք պարծանօք.

Իմոյ խնամատարութեան, քում հրամանի, քով կամ քոյով ձեռամբդ, 'ի քումմէ ձեռանէ. իմոց բանից, 'ի ձերոց աշխատանաց. նորայոցն ախտից.

Բայց քանի մի հարկաւոր գիտելիք կան.

415. Երկուքն ուղղական, եզակի կ'ըլլի Երկու որդիք, երկու արք, երկու պարտապանք. չէ թէ երկուք որդիք.

416. Միջակ անուանք որ՝ նախդրիւ հոլովի մէտ չհամաձայնիր, հապա միայն հետը, ինչպէս ամէնքը. Որ մատեանքն, զոր օրէնս. ո՛ր մեծատունք, զո՛ր չարիս. — Օ՛րս հիւսեցից չարս և տողս բանից. Եւ ամենեքին գայթակղանէ ետև չըլլուիր.

417. Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանուններուն կարծ՝ նախդրիւ հոլովները չեն բանիր մէտ. չըսուիր՝ այնք բանք, զայնս բանս. նոյնք բանք, զնոյնս բանս. հապա կ'ըսուի այնորիկ բանք, զայնսիկ բանս, նոքին բանք, զնոսին բանս. Հետև ըլլան նէ, կ'ըսուի. Այսոք ոչ էին լեալ յաջողուածք. զայնս եւ ամբոխս. զնոյնս նկատելով ներողութիւն.

Իսկ վերջահոլովներուն, ինչպէս ըսեր ենք 'ի 128, սովորաբար կարծերը առաջ կը բանին, երկամները ետքը. թէպէտ երբեմն ընդհակառակն ալ կ'ըլլայ. ինչպէս,

Յայսմանէ տեղւոջէ, այսոցիկ տարակուսանաց, այնոցիկ մարդկան, յայսցանէ 'ի գործոց.

Ընդ այդր, ուխտիս այսմ, 'ի տանս յայսմ, տեղւոյն այնմ, 'ի տեղւոջն յայնմ, տեղեացն այնց մարդկանց, զարսն զայնս, յաւուրն յայնս.

Իսկ սոյն, դոյն, նոյն, ինչպէս նաև սորա, դորա, նորա, վերջահոլով միշտ առաջ կը դրուին, ամենևին գոյականէ ետև չեն դրուիր:

418. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, նց, դերանուանական ածականները նախդրիւ հոլովներուն՝ միայն թէ որ առաջ դրուած ու հեռու ըլլան ու գլխաւոր յօդ ունենան նէ կը համաձայնին. Ըզ զիւրան խրատելով որդիս. զքոյն խոհերս: Զայնքն գալոց են աշխք: Իսկ մատ՝ չեն համաձայնիր ամենևին, ոչ առաջ ոչ ետքը, հապա եզական դերանուանի սեռականի պէս կը կենան. ինչպէս երբեմն վերջահոլովի հետ ալ. Բանք իմ, քո կամ քոյ բանք, բանք մեր, ձեր բանք, զբանս իմ, զբանս իւր: — Ընդ իմ ձեռամբ, քո ձեռամբդ, մեր թագաւորի, մեր կենացն, նախնոյն ձեր հօր, իւր մարմնոյն, իւր գործոյն: — Յետ երթալոյն իմ, զօրութեամբ քո մեծաւ, հօր իւր, ցաւոց իմ, հաւատովք ձեր, ՚ի չարեացդ քո:

419. Իմն, ինչ յոգնակի չունենալուն, թուով չեն կրնար համաձայնիլ, միշտ յոգնակիի քով ալ եզակի կը դրուին: Բայց շատ հեղ հոլովով ալ անհամաձայն կը դրուին, առաջ ալ ետև ալ. Բարկութեամբ իմն, ընդ պատենիւք իմն, ոչ առ իմաստութեան ինչ, յետ աւուրց ինչ, իրօք ինչ:

Բայց առաջ որ դրուին նէ, մինակ խօսքի սկիզբը չեն դրուիր, իրենցմէ առաջ բառ մը կ՚ուզեն.

Մեծ իմն սնուն.
Բազմախոհաւ իմն յարմարութեամբ.
Օտարոտի իմն գլից.
Նա՝ իմն ազնուականի են ցանկացեալ.
Փոքր ինչ դատաստան.
Սակաւ ինչ ժամանակի.

Խմիլ ինչ շնորհօք.
Բազում ինչ աւուրց.
Ի ինչ և այլ խորհուրդ.
Ունիք ինչ կերակուր.
Մի ինչ վնաս առնել.
Յորժամ ինչ մեղաց պատահէ.
Ոչ թէ ինչ պատճառ վը-

նոսա կարծէին .
Չու ինչ համեմատութիւն
ոչ գոյ 'ի նոսա .

Ի վերայ ինչ բանի .
Վասն ինչ պիտոյից :

420 . Մ՛ի, երկու, ո՛ր հարցականը, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, ընդհանուր կանոնին պէս (408) անհամաձայն ալ կը դրուին երբեմն առաջ .

Մ՛ի բանին, մի ուսով,
'ի մի բանէն .
Երկու ամաց, երկու ընկե-
րօք, երկու ձիօք .
Ո՛ր ձևով, ո՛ր աչօք, յո՛ր ազ-
գէ, ո՛ր մեղաց .
Այս նշանի, յայս լերին,
այս օրինակաւ .
Այն ժամու, յայն տանն,
այն երեսուն արամբ, յայն
կողմանէ .

Այս բանք, այս բանիւք .
Այն այրք, այն արանց, առ
այն արամբք .
Զայդ նշանադ, յայդ տե-
ղիսդ, յայն գործս .
Սոյն և այսր իրի, 'ի սոյն
աւուր .
Ի նոյն ժամանակի, նոյն
շաւղօք, 'ի նոյն հօրէ, սոյն
խորհուրդք, նոյն բանքն,
'ի նոյն գործս :

421 . Նոյն ինքն մէջտեղ մէկ ածականի պէս որ բանի նէ, կրնայ համաձայնիլ ալ՝ չհամաձայնիլ ալ .

Նորին ինքեան հիւանդին,
նմին ինքեան Քրիստոսի .
Նոյն ինքն տեառն, նոյն
ինքն փրկչին անուամբ .
Ի նոյն ինքն 'ի վերայ այ-
րին . այս ինքն 'ի վերայ
նոյն այրին .
Նոյն ինքն յինէն իսկ առե-

լով մասամբն . այս ինքն
նովին մասամբն .
Ի նոյն ինքն յԱստուծոյ . 'ի
նոյն ինքն 'ի Թշնամեացն .
զնոյն ինքն զքահանայսն .
զնոյն ինքն կեանս, զնոյն
ինքն զօրէնս :

422 . Ամէն ածական գոյականէն ետքն որ դրուի նէ, սովորաբար միշտ կը համաձայնի հոլովով ու թուով, նախդրիւ հոլովներուն ալ . ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ծառ մեծ. | Ծառք մեծք, մեծամեծք. |
| Ծառոյ մեծի. | Ծառոց մեծաց. |
| Ծառով մեծաւ. | Ծառովք մեծօք. |
| 'ի Ծառոյ մեծէ. | 'ի Ծառոց մեծաց. |
| զԾառ մեծ. | զԾառս մեծս, մեծամեծս. |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Այր արդար. | Արք արդարք. |
| Առն արդարոյ. | Արանց արդարոց. |
| Արամբ արդարով. | Արամբք արդարովք. |
| յԱռնէ արդարոյ. | յԱրանց արդարոց. |
| զԱյր արդար. | զԱրս արդարս։ |

423. Երբեմն անհամաձայն ալ կ'ըլլայ որ և իցէ հասարակ ածականը, մանաւանդ անցեալ դերբայն. Մերոյն հոգւոր, արեան քոյ սուրբ, տանն արքունի, հրամանաւ արքունի, պսակաւն փչեալ, 'ի տանէ Թորգոմական կամ Թորգոմեան, 'ի վերին իմաստութենէն 'ի սուրբ և 'ի խաղաղարար. 'ի մէջ այդչափ վկայից բազում, երկու մասամբք՝ ակար և զօրաւոր, 'ի զօրացն արքունի, 'ի բանից անտի Յուդայ 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ. 'ի տեղւոջ մի սուրբ, 'ի դրախտին եդեմական. գազանք ինչ անհնարին, ժամք հարուստ, բանք սուրբ, բազում մնաք գնացին յաշխարհի հոգւոր և մարմնաւոր. զանգակս ոսկի, փայտս եղևնեայ, 'ի վիշտս մեծ, զօրս կուտէր բազում յոյժ, սրիկայս բազում, զամենայն բլուրս բարձր, չարիս մեծամեծ, ձկունս սակաւ ունէին, զրաստս պատրաստական, արդիւնս բաւական, զայսն պիղծ, զպարգևս արքունի, բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն։

Իբրև զհամբաւ տան ընթացեալ.
Ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ.
Ի տեղւոջ միոջ ուժգին ամրացեալ.
Բազում ազգք ընդ քեզ հեծեալ յերկխարս.
Ոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով.
Հարջիկք զամենայն քաղաքս ամրացեալ.
Լուես երկուս եղբարս արկեալ ուռկան 'ի ծով.

424. Բանկ ալ թուական անունները, Մի հը մի-ջակը, ու ածական դերանուններն ալ կ'ըլլան երբեմն. Յետ տարւոյ մի, աւուրց հինգ, արանց եօթն, ամաց յիսուն և ութ, լուերց հարիւր, ապարխոք հինգ, օ-թիւք հնգետասան, դրամբք հարիւր և քսան, յաւուրց քառասուն. — Մխայնաւորի մի, կնոջ մի այրւոյ, գծառով մի. — Բանիս այս, ծերոյն այն, 'ի ժամանակին յայն, դեղովս այս հոգևորաւ, 'ի բանէդ յայդ, յընչիցն յայն.

425. Յետադաս գոյականէն ետքը շաղկապով կա-պած ածական մ'որ գրուի, նախադասին պէս ան ալ շատ անգամ անհամաձայն կը գրուի.

Ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր.
Ոչ սակաւ պատուոյ նշանակ է, այլ մեծ և բար-ձրագոյն.
Լու անտի տան բանի տեղեկացեալ, կիմ ևս աւե-լի՛ քսան.
Հանդերձ անմոռաց անուամբ և հռչակելի. Օ յնն ժամանուն կամ զոսան.
Յամենակալ տեառնէն և յամենակարող. Ի զի-նուորական կարգէ և յաշխարհական. Դաւիթ 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս յաշխար-հական.
Բազում են մեզ բանք և դժուարապատում.
Դժնդակ վարուց և աղտեղի. Անխարդախ մարդ-կան և պարզամիտ.
Որչափ գնոց զգեօղն վաճառեցէք, և նա ասէ, այո այնչափ.

Հեշտալուր բանիւք և քաղցրալից ։ Մարդկեղէն իրօք, և ոչ աստուածայնն ։

Իմանալիքս՝ հոգեկան կրիւք միայն, և մարդիկ՝ հոգեկան և մարմնական ։

Հանդերձ չորիւք բիւրուք և աւելի ։

426. Շատ գոյականներու, հասարակ անուն են նէ, ամէնը մէկտեղ մտածելով՝ եզակի կը գրուի շատ անգամ ածականը, թէ և եւս գրուի. ևս առաւել թէ որ նշանակութիւննին ալ մօտ է իրարու.

Բազում ցնծութեամբ և ուրախութեամբ ։

Բարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ մեծաւ ։

Ամենայն հացիւ և ջրով ։ Նշկիւղիւ և խաղաղութեամբ բազմաւ ։

Ընդ որթով և ընդ թզենեաւ իւրով ։

Զմարմին և զարիւն իւր ուտել կամ ճաշակել ։

Բայց ամենուն վրայ զատ զատ որոշ հասկցնել պէտք ըլլայ նէ, յոգնակի ալ կը գրուի.

Փոխատուի և փոխառուի՝ ի մի վայր հասելոց ։

Որ զարծաթ և զոսկի նուիրեալս ՝ի գանձ տան տեառն ։

427. Իսկ թէ որ շատ գոյականները յատուկ անուն են նէ, սովորաբար յոգնակի կը գրուի յետադաս ածականը.

Սաւուղ և Յովնաթան սիրելիք ։ Գաբրիէլ և Միքայէլ մեծք ։

Եզրայ և Նեեմեայ դարձելոց ՝ի Բաբելոնէ ։

Ղեւկոսի և Մաղեսի առաքելոցն ։

Նախադասը եզակի ալ կը գրուի. Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի. Զօրացեալն Աբրահամ և զՂովտ ։ — Իսկ յոգնակի առաջ գրուի նէ, բացայայտելին հետ կը խառնուի. Նահապետացն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ ։ Երկոքեամբք սրբոյն Պետրոսի և Պաւղոսի ։ Մեծափառացն Արտեմեայ և Աթենեայ ։

428. Անեզական գոյականներուն կամ եզակի ձայնով յոգնակիներուն՝ շատ անգամ եզակի կը դրուի ածականը, թէ և հոլովով համաձայն.

Առ հարսն եղելոյ աւետեացն.
Անցաւորիս կենաց.
Նորոյ շնորհաց.
Անպխուժ չարեաց.
Մեծաւ փառօք.
Մեծաւ տանջանօք.
Թացաւ երեսօք.
Թացաւ աչօք.
Յայնպխուժ կապանաց, այս ինքն յայնպխուժոյ (33).

Յայլմէ մարդկանէ.
Փառք բազում.
Արհաւիրք մեծ, օրէնք աստուածային.
Օփառան յաւիտենական.
Վարս անարատ ունել.
Փառացս անցաւորի.
Փառօք մեծաւ.
Մանկտի մանրիկ.
Մարդիկ փափուկ.
Մարդկան եղականի։

Ասանկ ալ որ միջակը, ու ածական դերանունները, ու դերանուանական ածականները.

Վասն որոյ պատճառանաց, որով կամօք, յորմէ պատճառանաց և իցէ, որում տանջանաց։

Այսր շնորհաց, այնմ կենաց, յայսմ կենացս, այսու կենօքս։

Իմոյ յանցանաց, քումդ շնորհաց, մերոյ մեղաց, իւրով կամօք, 'ի քումդ խնամոց, այս ինքն 'ի քոյդ. մեռաւ յիւրում 'ի մեղսն։

Գրոցս այսմիկ, սանդղոյն այնմիկ, 'ի գիրս յայսմիկ, մեղօքն այնու։

Ի կապանս իմում, 'ի կեանսն քում, 'ի կառս իւրում, 'ի մեղս իւրում, մարդկանն այնորիկ, մանկւոյ իմում։

429. Երբեմն ուրիշ որ և է գոյականներուն ածականն ալ առանց թուով անհամաձայն կ՚ըլլայ, մանաւանդ առաջ դրուածը.

Ըստ առաջնոյ բանից · Այնպիսում ձգնութեց ·
Մեծի զրանս · Որպիսում պատկաց ·
Ոսկւոյ աշտանակաց · Ի փոքուէ կողմանց ·
Ծանրագունի բեռանց · Ընդ մէջ անդամոցն յօշելոյ ·
Հանդերձելոյ և յաւէժա- Ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ ·
կայ բարութեանցն · Յազգացն հարաւայնոյ ·
Այնպիսւոյ բազմագունդ Վասն այնպիսի իրաց փո-
միայնացելոց · քու ·
Այնպիսում խոնարհացն · Զօրօք բազմաւ ։

Ասանկ ալ որ միջակը, ու ածական դերանունները ու դերանուանական ածականները ·

Վասն որոյ իրաց, որով կամիս պատուհասիք, վասն որոյ արդար վաստակոյ ։

Այնր պատկաց, այնմ դատաստանաց, զայսու աւուրբք, առ այնու ժամանակօք, յայսմ պատերազմաց, յայնմ ժամանակաց հետէ, յայսմանէ իրակութեանց, յարտաքնոցն յայնմանէ հրապարակաց, յայնմ աւուրն ։

Սովին բանիւք, ըստ նմին բանից, 'ի սմին կողմանց, 'ի նմին աւուրս ։

Մերոյս բանից, քում կամ իւրում ծառայից, ձերով պատուհասիւքդ, յիմմէ ջանից, յիւրում ձեռացն, այս ինքն յիւրոյ (33), 'ի մերում տան, 'ի քում շարագրածութիս, յիւրում ժամանակս ։

Բանքս այս, իրքդ այդ, աւուրքն այն, յիշատակօքս այսուիկ, երկոքումբք այդու, թշնամեացս այսմ, զարդ զայդ, զբանսն զայն, յիրս յայս, ընդ ժամանակս ընդ այն ։

Նշխարբք իմով, յընկերաց իւրմէ, յերկոսին 'ի ձեռս իմում, յարարածս քում, ընդ հարս իւրում ։

430 · Ասանկ եղակի կ'երթայ սովորաբար Ամենայն, երբոր մօտ ըլլալով համաձայնի ·

Ամենայնի եղելոցն, ըստ ամենայնի իրաւանցս, այսր ամենայնի առաքինութեանց, ամենայնիւ

այսքանեօք , այլովք ամենայնիւ վարին արուես-
տիւք , յամենայնէ յայնպիսեաց անտի , յայնմ
ամենայնէ վնասակար գազանաց ։

Դրունք ամենայն , գործքն ամենայն , պատգամքս այս ամենայն , զօրացն ամենայնի , այլոց իրաց ամենայնի · լեռնականօքն ամենայնիւ · զգանձսն ամենայն , 'ի գաւառսն ամենայն , ընդ սուրբսն ամենայն ։

431 · Ընդ հակառակն , գոյական անունները թուական ածականէ ետքն որ դրուին նէ , շատ անգամ եզակի ալ կը դրուին ·

| | |
|---|---|
| Զերկուս բուռնն · | Հարիւր ոչխարի · |
| Երիւք հարցմամբ · | Չորեք հարիւր և երեսուն ամի · |
| Չորք կանգուն · | Հազար ամն · |
| Յետ հինգ աւուր · | Երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ · |
| Վեց ամն · | Երեք հազարք այր · |
| Ի վեց կանգնոյ · | Երից հազարաց ամն · |
| Եօթն ամ · | Ութ հազար հեծեալ սպառազինաւ · |
| Զեօթն աղջիկն · | Երիւք բիւրուք վահանաւոր զօրու և չորիւք հազարօք հեծելազօր գնդաւ · |
| Յետ ութ աւուր · | Զերկոսին եղջիւր նորա · |
| Ինն այր · | Յերեսին աշխարհն · |
| Տասն աւուր · | Ի չորեցունց կողմանէ ։ |
| Տասն քանի · | |
| Ի տասն գահեկանէ · | |
| Զերկոտասան ազգն · | |
| Յիսուն արդար · | |
| Յիսուն արդարոյն · | |
| Քառասուն և միոյ ամի · | |

432 · Իսկ առաջ որ դրուին գոյականները , յոգնակի կը դրուին , ու թիւերը հինգէն ետքը՝ մանաւանդ թեչուք տասը՝ նախդրիւ հոլովներուն սովորաբար եզակի կը դրուին ։

Արք երկու ․
Ամք երեք ․
Կանանց երից ․
Ամք չորք ․
Արք հինգ ․
Արս հինգ ․
Ոչխարք վեց ․
Աւուրս վեց ․
Ամք եօթն ․
Ամս կամ աւուրս եօթն ․
Աւուրք ութ ․
Աւուրց տասանց ․

Ամս տասն ․
Տուփք երկոտասան ․
Աւուրս քառասուն ․
Հեծեալս եօթանասուն ․
Խոյք հարիւր ․
Լտերս հարիւր ․
Ամք չորեք հարիւր և երեսուն ․
Ամաց քսան և միոյ կամ քառասուն և միոյ ․
Արք իբրև երկու հազար ։

433 ․ Թւերը վերջահոլով եղակի չեն դրուիր ոչ առաջ ոչ ետև ․ չըսուիր տասին աւուր , տասին աւուրց , աւուր տասին , աւուրց տասին , հապա տասն աւուր , տասն աւուրց , տասանց աւուրց , աւուրց տասանց ։

Մեծ թիւերուն՝ կը դրուի ըսուած գործիականը ․

Տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք ․
Տասն հազարաւ գլխու ընտիր զօրու ․
Երկոտասան հազարաւ մարտիկ պատերազմող արամբ ․
Զօրիւք բիւրու հետևակաւ զօրու ․
Մետասան բիւրու վահանաւոր զօրօք ․
Ամօք երեք հարիւրով ․
Արամբք իբրև վեց հազարաւ ․
Հանդերձ զօրօք վաթսուն կամ ինսուն բիւրուն ։

434 ․ Նախդրիւ հոլովներուն ալ համաձայն կը գըտուին մեծ թիւերը միայն ․

Զօրք հազարք դռնապանք ․
Զօրք բիւրք մատակ ձիք ․
Երկուս հազարս մարս ․
Երիս հազարս տաղանտս ոսկւոյ ․

Զօրս հազարս արս սիկարեանս ․
Տուփք ոսկիք երկոտասանք ․
Քաղաքք երեքտասանք ․
Ազգք չորեքտասանք ․

Արք վեց հարիւրք ·
Իշխանք հազարք ·
Արք հազարք երեք հարիւրք ·
Սլխարք երեք հազարք ·
Օտականն երկոտասանս ·
Իջզինս երկոտասանս ·
Նուրս քառասունս ·
Ճարմանդս յիսունս ·
Իշս երկուս հազարս ·
Որս երիս հազարս ·
Ուղտս քսան և երկու հազարս ·
Հետևակս հազարս հարիւր քսան ·
Դահեկանս երկուս բիւրս ։

435 · Շատ անգամ ածականի տեղ գոյական մը կը դրուի սեռական յատկացուցիչի պէս ·

Սպասք ոսկւոյ և արծաթոյ · — ըսել է ոսկեղէն և արծաթեղէն ։

Արք զօրութեան · Նահատակք քաջութեան · — ըսել է զօրաւորք, քաջք ։

Աշկիր բարութեան · Հարուածք անբժշկութեան · ըսել է բարի, անբժշկելիք ։

Պարիսպք բարձրութեան · Աթոռ բարձրութեան · — ըսել է բարձր ։

Որք գարշութեան · Խունկ անուշութեան · — ըսել է գարշելի, անոյշ ։

Բուն թանձրութեան · Տկարութեան միտք · — ըսել է թանձր, տկար ։

Լսօղ մոռացութեան · Մեծվայելչութեան փառք · — ըսել է մոռացկոտ, մեծավայելուչ ։

Վէմ անշարժութեան · Նման ինչ մորթոյ · Փոփոխմանն անուն · — ըսել է անշարժ, մորթային, փոփոխեալ անունն՝ ։

Հօտք բազմութեան այծեացն սեւութեան՝ յօղիս դարձեալ ապխտակութեան · — ըսել է՝ բազում հօտք սեւ այծիցն յօղիս ապխտակս ։

Գործք բարեաց · Գործք յոռութեանց · — ըսել է բարի, յոռի ։

Օ խորդ իրաւանց իցեն այսպիսի իրք · — այս ինքն իրաւացի ։

Նա քեզ 'ի պէտս արկանել զչափով հանդերձան եւ զօգտիցն . — այս ինքն որ չափով է (389), զչափաւոր եւ զօգտակար ։

Ունայնութեան հայրենատուր գնացք . — այս ինքն ունայն ։

Ոչ յապականութեան սերմանէն , այլ յանապականացուէն . — այս ինքն ոչ յապականացու ։

Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, եւ մեք զանեղծութեանն . — այս ինքն զանեղծն ։

Իբրեւ զարհամարհ մի եւ զքամահանաց եւ զերեքգանդեան 'ի մէջ արկեալ կտտէին . — այս ինքն զքամահելի ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ որ ·

436 · Այս դերանունը շատ տեղ եզակի յոգնակի մնալով կը բանի, մանաւանդ ուղղական ու հայցական.

Գոքա որ կանդ · բազումք որ ունէին · ամենայն մարդիկ որ ըմպեն ։

Որդիքն քո զոր դու սիրեցեր · զգործսն զոր ես գործեմ ։

Յամենայն ծառոց՝ որ է 'ի դրախտիդ ։

Զաղբերս ջուրցն՝ որ ելանէ 'ի լեռնոտանէ անտի ։

Պղինձ և երկաթ՝ որոյ ոչ գոյ թիւ ։

Այնք յորոյ վերայ վկայէ ։

Անկողնովքն՝ որով դատապարտեցանն ։

Առաքինութեանցն՝ որով փայլեցին ։

Զաւելորդացն կերակրոց՝ յորմէ ամենեքին հրաժարեալ էր ։

Յամենայն գործս՝ յորում են մարդիկ ։

Եկեսցեն աւուրք՝ յորում թողցեն ։

437 · Այս դերանուան յարաբերած կամ ցուցըցած բանը Յարաբերեալ կ'ըսուի ։ Որովհետև ըսուած ու գիտցուած բանը պիտի յարաբերէ, սովորաբար յարաբերեալն ետև կը դրուի, ու իրմով կապուած խօսքին սկիզբը, ինչպէս տեսար հիմայ օրինակներուն մէջ ։

438 · Բայց շատ տեղ ալ առաջ ինքը կը դրուի, ետքը յարաբերեալը ետևէն կուգայ · ինչպէս,

Վասն զի սուրբ է ուր եմուտ անդր տապանակն տեառն · — այս ինքն տապանակն որ եմուտ անդր ։

Ո՞ւր է **որ ծնաւ արքայն** հրէից. — այս ինքն ար-քայն որ ծնաւ ։

Որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ **բանն**՝ հաստա-տուն եղև. — այս ինքն բանն որ ։

Վասն **որ** ՚ի Քրիստոս Յիսուս **հաւատոյն**. — այս ինքն վասն հաւատոյն որ ։

Որ բարւոք վերակացու լինին **երէցանք**՝ կրկին պա-տուոյ արժանի եղիցին ։

Դեմետրիոս և **որ** ընդ նմա **ճարտարք**. — այս ինքն և ճարտարք որ ընդ նմա էին ։

Իբրև լուան **որ** յԵրուսաղէմ **Առաքեալքն** էին. — այս ինքն Առաքեալքն որ էին ։

Դուք **որ** գործէին զամբարտաւանութիւն **զսոդոմացւոցն** խայտառակեցէք. — զսոդոմացւոցն որ գործէին

Զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր՝ զա ՚ի միում ամի կորոյս **զերկերն ամե-նայն**. — այս ինքն զերկերն ամենայն զոր ։

439. Յարաբերեալը դերանուն որ ըլլայ նէ, շատ անգամ յայտնի չըլլուիր՝ զօրութեամբ կ՚իմացուի. որ ըսել է թէ յարաբերելի դերանուն մը ու յարաբերա-կան դնելուն տեղը՝ միջակ անուն ու որ կը դրուի, որ ինքնիրեն մինակ ան կը նշանակէ (125).

Որ այժմ կեամ, ըսել է **Ես որ** ։

Որ մեռայք մեղացն, **Մեք որ** ։

Ո հովուեսդ, որ ուսուցանես զընկերն, **Դու որ** ։

Ո՛վ որ պատուհասեսդ, ո՛ որ զպսակս զայս հիւ-սեցեր, **Ո՛վ դու որ** ։

Որ ՚ի Դէթդ էք, **Դուք որ** ։

Որ ձեզ լսէ, **Նա որ** ։

Որ կամին մեծանալ, **Նոքա որք** ։

Նմանակ ալ հոլովները.

Որով դատիս զընկերն՝ զանձն քո դատապարտես. — այս ինքն այնու որով դատիս, **որով որ կը դատես նէ** ։

Ոչ յանդիման առնել կարեն՝ քեզ՝ վասն որոյ այժմ չարախօսեն զինէն. — այս ինքն զայն վասն որոյ, որ բանի համար որ կը չարախօսեն կոր նէ ։

Ոչ որում ցանկացեալ էք՝ վաղվաղակի տամ գը-տանել ձեզ. — այս ինքն զայն որում ցանկացեալ էք, որուն որ կարօտցեր էք նէ ։

Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ՝ 'ի միտ առցեն. — այս ինքն նոքա որոց. որոնց որ չպատմուեցաւ, ևն ։

Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն. — այս ինքն այնոցիկ որոց ոչ իցէ տեսեալ. որոնց որ տեսած չըլլան ու հաւտան ։

Վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ զորոց դուք չարախօսէքդ զդմանէ. — այս ինքն յայնց զորոց չարախօսէք. որ բաներուն համար որ կը չարախօսէք կոր ։

440. Երբեմն առանց դերանուան յարաբերեալը զօրութեամբ կ'իմացուի նէ, յարաբերականը կամ միջակ անունը ո, որ՝ կ'ըլլայ որ ան ծածուկ յարաբերեալ դերանուանին հոլովը ինք կ'առնէ, կ'ըլլայ ալ որ չառներ ու ինք իր պէտք եղած հոլովը կը դրուի. ինչպէս երկու կերպին օրինակն ալ քովէ քով դրած կը տեսնես.

Որում խնդրէ՝ 'ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ՝ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. — այս ինքն այնմ որ խնդրէ, յայնմանէ որ կամի. երկու կերպը մէջտեղ ։

Խօսել չհամարձակէին զոր ինչ եղեն. — այս ինքն զայն որ ինչ եղեն ։

Առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղեն. — այս ինքն ոչինչ յայնմանէ որ ինչ եղեն ։

Դու ոչ մտանես, և զորս մտանեն՝ ընդդէմ կացեալ արգելուս. — այս ինքն զայնոսիկ որք մտանեն՝ արգելուս ։

Դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն էին՝ արգելուք. — այս ինքն զայնոսիկ որ մտանելոցն էին ։

Դուք ոչ մտանէք, և որոց մտանէին՝ չտայք թոյլ մտանել. — այս ինքն այնոցիկ որ մտանեն ։

Զի երևելի կացցեն որ անցանեն ընդ ծով նաւօք. — այս ինքն այնոցիկ որ անցանեն ։

Դողացեալ վասն որոյ գաղտն արար. — այս ինքն վասն այնր զոր ։

Վասն որ ասեսն թէ, ևն. — այս ինքն վասն այնր զոր ասեսն ։

Վասն որոց առաքեցանն ՚ի Յովհաննէ. — այս ինքն վասն նոցա որք առաքեցան ։

Վասն որք ոչ կարեւոր համարին. — այս ինքն վասն նոցա որք ոչ համարին ։

Ոմանք յորոց անդն կային. — այս ինքն յայնցանէ որք անդ կային ։

Ոատեայ առ մի ումն որ անդ կային. — այս ինքն յայնցանէ որ անդ կային ։

Նա առ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս. — այս ինքն յայնցանէ զորս ածէր ։

Որոշումն արտաքոյ բնութեան՝ չունս գործէ յորմէ բաժանեցաւ և առ որում բնակեաց. — այս ինքն զայն յորմէ, և զայն առ որում ։

Ոչ գարշիս յումեքէ յորոց արարեր. — այս ինքն յայնցանէ զորս արարեր ։

Կողոպտեցին համին և ոչինչ թողին զոր ընդ իւրն ունէր. — այս ինքն ոչինչ յայնցանէ զոր ընդ իւր ունէր ։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐ ս, դ, ն.

441. Այս յօդերը, ինչպէս ըսինք ու ցուցըցինք (140), դերանուններու ուժ ունենալով՝ կ'որոշեն յայտնի կ'ըլնեն անորոշ ու անյայտ անունը. — ս ու դ, էս, դաս, էնս, քաղէդ, աս, ադ նշանակելովը կ'որոշեն. իսկ ն, նա, այն նշանակելէն 'ի զատ, յատուկ որոշող ու յայտնի ընող յօդ ալ է, և կը դրուի այն անուան՝ որ առաջուց յայտնի է կամ խօսուեր է վրան. կամ թէ և առաջ չէ խօսուեր ալ նէ վրան, բայց մէկ կերպով մը որոշուած ու մասնաւորուած է ։ Ինչպէս անյայտ ու անորոշ ծովի կամ հացի ու ձկներու վրայ խօսուի նէ, կ'ըսուի.

Ամենայն ուխք 'ի ծով գնան և ծով ոչ լնու.
Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս ։

Բայց երբոր մէյմը առաջուց խօսուած կամ գիտցուած ծովին ու հացին ու ձկներուն վրայ նորէն խօսուի նէ, կ'ըսուի.

Զինչ արասցուք քեզ և դադարեսցէ ծովս 'ի մէնջ. Առէք ընկեցէք զիս 'ի ծովդ, և դադարեսցէ 'ի ձէնջ ծովդ. և առին զՅովնան և ընկեցին 'ի ծովն, և դադարեաց ծովն 'ի խռովութենէ իւրմէ.
Առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն օրհնեաց ։

Ասանկ ալ անորոշ ու չմասնաւորած մտքով կ'ըսուի.
Հոգի սուրբ Աստուծոյ գոյ 'ի քեզ.
Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ ։

Իսկ որոշեալ ու մասնաւորած մարդոյ, թէ և առաջ չէ խօսուեր վրան, կ'ըսուի.

Սուրբ հոգին իմաստութեան փախիցէ 'ի նենգութենէ.

Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս.

Եւ օձն էր իմաստնագոյն քան զամենայն գազանս. — այս ինքն օձը, օձ ըսուած գազանը.

Յառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից 'ի կատարել բանին տեառն 'ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից։

Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն. — առջի բանն որոշուելու ու մասնաւորուելու համար ունի ն. իսկ ետեւի երկուքը կ'ընշանակեն ան բանը։

442. Ինչպէս 140 թիւը ըսածէն յայտնի կ'ըլլայ, յօդը շատ անգամ բառի մը վրայ դրուելով զօրութեամբ մէջ կը բերէ դերանուն մը, անուն մը, ինչուք նաև բայ մը. ինչպէս,

443. Դերանուն.

Ընկալ զփոքրս 'ի տկարէս, և հատուցեա զմեծդ առ 'ի հզօրէդ. — այս ինքն զայս փոքր յինէն 'ի տկարէ, զայդ մեծ 'ի քէն 'ի հզօրէ։

Տեսանեմ զմարդիկս զի շրջին. — այս ինքն զայս մարդիկ որ աստ մօտ են։

Արքայդ Իսրայէլի. — այս ինքն դու արքայ կամ դու արքայ։

Զայն կերակուրդ. — այս ինքն զայն կերակուր քո

Ի բոլորեսին յայտնիկ թուղթն. — այս ինքն յայտնիկ թուղթս նորա, իւր։

Աստուծոյն. — այս ինքն աստուծունը, ան որ աստուծոյ է։

Մաքսաւորն եւ ձկնորսն եւ առանց զայրութեանն. — այս ինքն այն որ առանց զայրութեան է կամ էր :

Մարմնովն, հոգւովն. — այս ինքն այն որ հոգւովն է :

Որ 'ի մէնջս կամ 'ի մէնջն, առ 'ի ձէնջն. — այս ինքն այս որ, այն որ 'ի մէնջ է, եւն :

Զոր արար Դաւիթ յորժամ քաղցեաւն եւ որ ընդ նմայն էին. — այս ինքն քաղցեաւ ինքն եւ որ ընդ նմայն էին :

Ոչ այսպէսն. — այս ինքն այն որ ոչ այսպէս է :

444 . Նոյն .

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի. — այս ինքն ընդ չոր փայտն :

Աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, եւ քոյքդ կամ քոյդ ուտեն եւ ըմպեն. — այս ինքն քո աշակերտքդ :

Այս առակ եւ դատաւորին. — այս ինքն դատաւորի առակն :

Եւ բարկութիւն որ գովելի է 'ի գիրս, որպէս Մովսէսին. — այս ինքն որպէս Մովսէսի բարկութիւնն :

Նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոյն միայն. — այս ինքն մերոց մեղաց միայն :

Ընդէր ոչ բովանդակեցէք զսակ աղիւսոյն ձերոյ որպէս յերէկն եւ յեռանտ՝ եւ զայսր աւուրդ. — այս ինքն զսակդ այսր աւուր :

Բարեաց գործողքն պսակելին, չարեացն՝ 'ի հուրն անշէջ մատնելին. — այս ինքն չարեաց գործողքն :

Ոչ էր հաւասար պարզաբար գնալն եւ այնպիսի պատճառաւն. — այս ինքն այնպիսի պատճառաւ գնալն :

### 445 . Նոյ .

Պաշարեցից զքեզ որպէս և Դաւիթն . — այս ինքն որպէս և Դաւիթ պաշարեաց ։

Զգործ տեառն գործէ որպէս և ես . — այս ինքն որպէս և ես գործեմ ։

Ելից և արարից որպէս միշտն . — այս ինքն որպէս միշտ առնէի , արարի ։

Զառնելն և զոչն . ՚ի բանալն և յոչն . — այս ինքն զոչ առնելն , յոչ բանալն ։

446 . Շատ անգամ մէկ անուանի յօդը՝ իրմէ առաջ դրուած ածականին , յատկացուցիչին , բացայայտիչին , խնդիրին ու մակբային վրան կը դրուի . ինչպէս ,

### 447 . Ածականքն .

| | |
|---|---|
| Կորուսեալս հոգւոյ . | Երկուցն եղբարց . |
| Կարօտս անձին . | Ի չորիցն հիւթոց . |
| Հաւոր և մեծս արարածոց . | Յիմում անձին . |
| Ամենակալդ մեծանունդ տէր . | Իմոցս բանից . |
| Ով քաջդ խոհեմք . | Քումդ կուսութեան . |
| Միածինն որդի . | Ի քումդ լուսութեան . |
| Զհինգն ես փեղկ . | Քոյովդ բանիւ . |
| Ներկեալն ցնծութբ . | Իւրումն որդւոյ ։ |
| Աշխարհաքն երկրպագուք . | |

### 448 . Յատկացուցիչն .

Զսրբութեանն օրէնս .

Զինչ օգտեցուցանէ ումանց լուսաւորութիւն զհասարակացն անտեսութիւն .

Զինքեանն սպանանէ զփեսայ .

Զնորունն հաւատութիւն ։

### 449 . Բացայայտիչն .

Եպիսկոպոս անուն 'ի հելլենացի լեզուէ է .

Դկղաթն գետոյ . Զկուաշն աւան .

Ի Սինն անապատէ . Ջայրդ անուն՝ մի է ։

### 450 . Խնդիրն .

Նմանութիւն Աստուծոյ է սուրբն և արդարն գոլ հանդերձ խոնարհութեամբ . — այս ինքն սուրբ գոլն և արդար գոլն ։

Զինչ իցէ 'ի մեռելոցն յառնել . — այս ինքն յառնելն 'ի մեռելոց ։

Յընկեցիկն առնել զնա . — այս ինքն յառնելն ընկեցիկ ։

Չարն 'ի չարն գործելոյ առնու զանուն . — այս ինքն 'ի չար գործելոյն ։

Ի բարին խօսել և 'ի չարն . — այս ինքն 'ի բարի խօսելն և 'ի չար խօսելն ։

Յետ այնչափ ուղղութիւնսն գործելոյ . — այս ինքն յետ գործելոյն այնչափ ուղղութիւնս ։

Վասն Անտիոքայ Սելեւկեայն անուանելոյ . — այս ինքն անուանելոյն Սելեւկեայ ։

Զանձնէ անփոյթ առնես 'ի մարդոյ առիւծդ ե-ղելոյ . — այս ինքն եղելոյդ առիւծ ։

Յինէնս գործեցելոց . — այս ինքն գործեցելոցս յինէն ։

Յորժամ յիսս խորհրդոց լինիք վերահասու . — այս ինքն խորհրդոցս որ յիս (389) ։

Յաղագս առ մեզն գթութեան . — այս ինքն գթութեանն որ առ մեզ ։

### 451 . Մակբայն .

Վաղն առնելով . ցանգն հայելով . — այս ինքն վաղ առնելովն , ցանգ հայելովն ։

Զկարին խոկ զոք շուայլեալ. — այս ինքն զոք զկարի խոկ շուայլեալն ։

Միւսանգամն գալստեան դատաստանին. — այս ինքն միւսանգամ գալստեանն ։

Զանդն աւուրս. անդն իրաց. — այս ինքն զաւուրսն որ անդ, իրացն որ անդ ։

Անանկ ալ յատուկ անուններուն սովորաբար ածականին կը դրուի յօդը.

Մեծն Պաւղոս. ՝Նորն Երուսաղէմի.
Արին Վաղարշակ. Իմն Գրիգոր.
Երուանդեանն Տիգրան. Մերոյն Հայկայ.
Քաջին Հայկայ. Անսուտն Աստուած.
Բարերարին Յիսուսի. Մեծին Աստուծոյ.
Զմեծէն Սահակայ. Ի մարդասիրէն Աստուծոյ ։

452. Երբեմն ալ ետեւի հասարակ անուան ածականին կը դրուի, երբոր զատելով մը կ'առնուի.

Որ տեառն մեծն և երևելին.
Տէր ամենակալն խնդրեսցէ վրէժ.
Օրհնեցէք զԱստուած բարերարն.
Պանծացուցին զԱստուած բարձրեալն.
Այր մի գիտութեամբ հայով և առաւելեալ յանխին.
Պարծանն արք Իսրայէլի ասպատակեալքն զհետ այլազգեացն.
Արանց խստապարտացդ այդոցիկ.
Յամենայն ազգաց եկելոցն 'ի վերայ Երուսաղէմի.
Զայս յայտ առնէ Դաւիթ մեծն.
Ընկաւ Բարսեղն մեծն.
Ուր էր Ղազար մեռեալն ։

Բայց ետեւ դրուած թուի ու դերանուանական ածականներուն չըլլար ըսել՝ Եղբարց երկուցն կամ երկո-

ցունցն , մանկանց եօթանեցունցն , որդի քոյդ , որդւոյ իւրումն , բանից իմոց քան քոյդ . — Հապա ըսելու է եղբարցն երկուց քան երկոցունց , մանկանցն եօթանեցունց , որդիդ քո , որդւոյն իւրում, բանից իմոց քան քոյ :

453. Շատ անուններ կայ կապած մէյտեղ որ գըտուին , շատ անգամ առջինին միայն գրուելով , երբեմն ալ ետքինին միայն , ամենն ալ որոշուած կը սեպուին .

Կարկուտն և անձրև .
Աղքատն և տնանկ .
Մանրեցան խեցին և երկաթ .
Ազգն քո և քահանայապետք .
Դպիրքն և փարիսեցիք .
Քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք .
Պիղծ և անուանարկ .
Զպտուղ ցորենոյն և գինւոյ և ձիթոյ և մեղու .
Հօրն կամ մօր .
Ի բերան կործանելոց և չարչարելոց .
Եկացն և պանդխտաց .
Զխուլն և զհամր , զականին և զկոյր .
Մանրեաց զխեցին և զերկաթ .
Զպղինձն և զարծաթ և զոսկի .

Զմեծամեծս և զփոքունս .
Զբովն ուստի ոսկին և արծաթն հատանի քան
Զբովն ուստի ոսկի և արծաթն հատանի .
Քամնեալ լինէին ոսկերք և մարմինքն .
Զքաղցրութի և զսաստկութիւնն Աստուծոյ .
Ո՛վ պիղծ և ամենապիղծ .
Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ .
Հեղութի և հանդարտութեամբն Քրիստոսի .
Վասն հարց և մարցն .
Հրաման ետ մոգուց և մոգպետացն .
Ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօքն :

454. Երբեմն ալ աւելի կը գրուի , գոյականին ալ

ածականին ալ, յատկացեալին ալ յատկացուցչին ալ.

Յարանցս յայտնանէ եկեղեցս ընդ մեզ ·
Հան զարդ մնեալդ առ քեզ ·
Մատուցանել զայն թագաւորին երկնաւորին ·
Ազգացն առաջնոցն ·
Պատմէր զիրսն եղեալսն ·
Զաւազանն մեծամեծն ·
Ի չարէն որդւոյն սատակեցաւ ·
Զմիջինն այսոցիկ տեսութեանց ընտրեցուք զբանն ·
Տեսիլս Առաքելոյս ·
Ամենայն ժողովուրդն երկրին ·
Ի վերայ աշտարակացն քաղաքին ·
Զբանակն եգիպտացւոցն ։

Ոչ բաւական էր ըսել միայն՝ տեսիլ Առաքելոյս, ամենայն ժողովուրդ երկրին, 'ի վերայ աշտարակաց քաղաքին, զբանակն եգիպտացւոց կամ զբանակ եգիպտացւոցն։

455 . Երբոր գոյական մը այս, այդ, այն դերանուններէն ետև գրուի, հարկաւոր չէ վրան յօդ դնել. Այս այր, զայն այր, այդր բանի, յայնմ աւուր, այսու օրինակաւ, այդց պարծանաց, յայնց ժամանակաց, այս բանք, այսոքիկ բանք, յայդոսիկ տեղիս, յայնոսիկ գործս։

Բայց կրնայ ալ գրուիլ. Այս երանելոյս, այս կարգաւորութեանս, այս կրիւքս, յայսմ կենացս, յայսցանէ 'ի գործոցս, յայդմ ահաւոր անուանեդ, զայդ նըշանդ, այն բնութեանն, յայն տեղին, յայն տանն, զայն ջուրսն, զայն տեղեօքն, այնմ աւետեացն, յայնմ աւուրն, այնց բանիցն, զայնոսիկ արհաւիրսն ։

456 . Բայց երբոր գոյականը առաջ գրուի, սովորաբար միշտ յօդ դնելու է իրեն, մանաւանդ ուղղականին ու հայցականին .

| | |
|---|---|
| Օրս այս · | Մատենիդ գտելոյ այդորիկ · |
| Որդիս մեր այս · | Ոսկերքդ այդոքիկ · |
| Ժողովուրդս քո այս · | Եղբդ այդ · |
| Ախմիս այսորիկ · | Այրն այն · |
| Վասն բանիս մեծի այսորիկ · | Մարդոյն այնմիկ · |
| Նուամբս այսուիկ · | Վասն բանին այնմիկ չարի · |
| Արքս այսոքիկ · | Ագաւն այնուիկ · |
| Արանցս այսոցիկ · | Արքն այնոքիկ · |
| Թռչունդ այդ · | Արքն այն · |
| Թղթովդ այդուիկ · | Յետ աւուրցն բազմաց այնոցիկ · |
| Յերդմանէդ քումմէ յայդմանէ · | |

457 · Երբեմն առանց յօդի ալ կ՚ըսուի , մանաւանդ վերջահոլովներուն , ու թէ որ դերանուանական ածական ունենայ ·

| | |
|---|---|
| Յաւուր յայսմիկ · | Ի գաւակէ իմմէ յայսմանէ · |
| Յազգէ յայսմանէ · | Եղբայր քո այս · |
| Ի տեղւոջ յայդմիկ · | Ժողովրդեան քում այսմ · |
| Ի ջրոյ յայդմանէ · | Ծառայից քոց այսոցիկ · |
| Ի ժամանակի յայնմիկ · | Զմարմին մեր զայս ։ |
| Յօրէ յայնմանէ · | |

458 · Դերանուանական ածականները իմ , քոյ , եւն (134) մինակ որ ըսուին՝ միշտ յօդով կը բանին ։ Իմս , իմդ , իմն , զիմն , զիմսն , յիմոցն , քոյդ , քոյումդ , քոյովս , քոյովդ , քոյոյն , 'ի քումմէդ , 'ի քումմէն , 'ի քոյոցդ , մերովս , 'ի մերմէն , ձերդ , զձերն , ձերոցդ , ձերովքդ , զիւրն , իւրոցս , յիւրոցն , զիւրսն · նորայն , զնորայն , 'ի նորայոյն , նորայովքն , զնոցայսն , եւն ։ Եւ ինչպէս տեսար , ամէնքը իրեք յօդն ալ կ՚ առնեն տեղին նայելով ու ան զանազանութեանը որ ցուցըցեր ենք 'ի 140 ։

459 · Շատ անգամ դիմորոշ յօդերուն տեղը կը

բանին այսր, այդր, անդր մակբայները՝ պարզ նախդրիւ տրականի հետ, աստ, այդ, անդ՝ նախդրիւ վերջահոլով տրականի հետ, աստի, այդի, անդի՝ բացառականի հետ. որ երբեմն այս, այդ, այն դերանուններուն տեղն ալ կը բանեն ասոնք ամէնը, ինչպէս որ յօդերն ալ. ինչպէս,

Ի տեղի այսր գալ երթեալ էին՝ ի քաղաքամէջը, ՚ի վաղուանցը, յերեկանցը, առ ջուան անցը.
Ի գլխոյ աստ.
Ի ժամանակի աստ յայսմիկ.
Ի թղթի այդր.
Ի պարտիզի անդ.
Յազգի անդ իւրում.
Ի ժամանակի անդ.
Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք.
Յերդմանէ աստի իմմէ.
Ի նզովից աստի իմոց.
Ի ժամէ աստի յայսմանէ.
Յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ.
Ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ.
Ի մերոյ, ՚ի քոյոց աստի.
Յանձէ այտի յայդմանէ.
Ի տեղւոջէ այտի.
Ի մասանց այտի.
Ի քոյոց այտի.
Ի լեռնէ անտի.
Ի սրտէ անտի.
Ի քնոյ անտի.
Ի սիրոյ անտի Աստուծոյ.
Յիւրոց անտի.
Ի նորայոց անտի.
Ի ծմակին կողմանց անտի.
Ի մեծամեծաց աւազաց քանանացւոց անտի:

460. Յոգնակի հայցականները ու նախդրիւ տրականները — յօդ որ առնելու ըլլան նէ, անուշութեան համար շատ տեղ իրենց սէն քէ կը փոխեն բառ 60. ու կ՚ըսուի զբանքս, զէքս, զանարժան ծառայքս, ՚ի ծառայքս, առ փրկեալքս, ընդ հողեղէնքս. — փոխանակ ըսելու զբանս, զէսս, զանարժան ծառայս, եւ. ինչպէս որ կ՚ըսուի ալ երբեմն, զմեղս զայսոսիկ, զերիս թագաւորս, յիրս յայս, ՚ի հարսանիս:

461. Միջակ անունները չինչ, ոչ կամ, որ, ու

յարաբերական դերանունը որ, ինչու ամենևին յօդ չեն առներ. ինչու չըսեր որս ես, որոյդ, որումդ, որմէդ, որովդ, յորոցն, զորն, զորսն, ևն. անոնց տեղը՝ ետևի բային վրայ կը դրուին յօդերը, ինչպէս հիմա կարգաւ կը տեսնենք:

462. Թէ որ որ յարաբերականէն ետև կամ ով, ո, որ, ինչ միջակ անուններէն ետև, կամ անոնց մէկը ունեցող՝ որպէս, որպիսի, որքան, որչափ, ուր, ուստի, յորժամ, մինչև, մինչ, թէ, թէպէտ բառերէն ետև՝ գլխաւոր բայ մը ըլլայ նէ, ան բայը գլխորոշ յօդ կ'առնէ շատ անգամ, ու ես, դու, նա, այս, այդ, այն դերանուններուն, կամ աստ, անդ, այսր, այդր, անդր, աստէն, այդէն, անդէն, այժմ մակբայներուն մէկուն ուժը կ'ունենայ ան յօդը. ինչպէս,

Որ խօսիմ ընդ քեզ.
Զոր խորհեցայս առնել.
Գտէք զինչ ասեմս.
Ես այր տառապեալ զիարդ
կամս հիացեալ.
Բան զոր ասեմդ.
Զոր գրեցից.
Գտէք զինչ արարից ձեզ.
Զոր կամիմն.
Զոր առնեմն.
Որում չեմն արժանի.
Զոր քակեցին.
Ողորմեցայց որում ողորմե-
ցայցն և գթացայց յոր
գթացայցն.
Զոր ինչ հնարհիցեմն.
Որպէս երդուայն.
Ըստ որպիսիս կամիցիմն.
Եւ ուստի եմ գիտէք և
ուր երթամն գիտիցէք.

Ուստի եկին.
Մինչ երթային.
Զոր պարտէաքն առնել.
Ուր էաքն ժողովեալ.
Մինչ էաքն մարմնով.
Հաստատուն կաց յոր ու-
սարդ.
Չգիտեմ զինչ խօսիդ.
Զինչ է այդ զի խորդադ.
Զի կայ մեր և քո՝ զի ե-
կիրդ այսր.
Զոր ընթեռնուցուքդ.
Որպէս էքդ անխոհք.
Բան որչափ էքդ.
Ուր զի յղեցէքդ առ իս.
Զաս զոր տեսանէքս.
Զոր ասեմն նա ոչ գիտէ.
Ուր և կոչիմ՝ գնացես.
Որովք համարիքն առնել.
Որոյ եղերուքն դուք որդիք.

Օ՜ր ուսարուքն և ընկա-
լարուք և լուայք և տեսէք
յիս .
Օ՜ր տեսանիցէքն .
Ո՜ր էջն յերկնից , որդին
մարդոյ՝ որ էն յերկինս .
Որում չէն մարԹ լինել .
Ուր չիքն փոփոխումն .
Որ գԹայն .
Որ տայն ամենայնի .
Այն որ սրբէն և սրբին .
Օ՜ր ուտէն .
Ի՜ուր զիարդ ասէն .
Որ ընԹեռնու՝՝ 'ի միտ առ-
ցէ .
Մ՝ինչդեռ կայրն կախեալ .
Որ եկնն .
Օ՜ր ինչ խնդրիցէն .
Այլ ումեք որ նստիցին .
Յորժամ եկնն .
Օ՜ր արար Դաւիթ՝ յոր-
ժամ քաղցեաւն և որ ընդ
նմայն էին .
Ոչ զի մեռաւն՝ այլ զի խա-
չեցաւն .

Քա՞ն փուԹացաւն և առա-
քեաց . — այս ինքն քան
Թէ զի փուԹացաւն .
Որ առեալն զիս .
Որք կամինն մեծանալ .
Որ կամն .
Օ՜ր ասէս կամ ասէդ՝ այս-
պիսի ինչ է .
Օ՜ ինչ է այս զոր ասէս
ցմեզ .
Առաւել քան զոր երևի-
մեզ և գիտէի .
Որ եկնս 'ի վերայ .
Որպէս ասացաւս .
Որ ենս .
Որ կամս .
Սոքա որ խօսինս .
Ո՞վ է որ ասէդ ցքեզ .
Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է .
Այդ որ ասիդ .
Ի մէջ դոցա որ կանդ ասա-
դիկ .
Ուր էրդ յառաջն .
Օ՜ր ընտրեացդ իւր տէր .
Որպէս և ասացաւդ ։

463 . Թէ որ նոյն բառերէն ետև բայէն առաջ՝ անուն բայի կամ խնդիր դերանուն մը ըլլայ նէ , յօդը ան դերանունը կ'առնէ , Թէ և բայը յայտնի դրուած չըլլայ՝ բայց զօրուԹեամբ իմացուի (340, 445).

Օ՜ր ինչ ես գործեմ.
Օ՜ գործ տեառն գործէ՝ որ-
պէս և ես.—այս ինքն որ-

պէս և ես գործեմ.
Որ ինև ընդ ձեզ խօսի .
Որ ինչ յինէն խնդրեցէր .

Որպէս մեքս լուաք .
Ո՛ որ եսդ սիրեմ.
Յոր եսդ իջանեմ.
Ո՛ որ եսդ բժշկեցի .
Որ շուրջ զմեւքդ բնակեալ են .
Ո՛ որ եսն պատուիրեմ.
Ուր եսն եմ.
Ուր եսն երթամ.
Որ զիսն սիրեն .
Որ յիսն մեղանչեն .
Ո՛ որ մեքն քարոզեմք .
Ո՛ որ դուդ առնես .
Ոչ գիտեմ զինչ դուդ առնես.
Որ շուրջ զքեւդ են .
Որ իբրեւ զքեզդ իցեն .
Ընդ որս դուքդ զարմանայք.
Ո՛ այրն զորմէ դուքդ ասէք.
Մ՛ինչ առ ձեզս եմ.
Յորում եւ դուքս էք բնակեալ .
Որում դուն վկայեցեր .
Ո՛ որ դուքն ոչ գիտէք .
Յորս դուքն պանծացեալ էք .
Մինչ առ ձեզն իսկ էաք .
Որոյ իւրն է համդերձեալքն.
Որ զիւրեանն էին .
Որոյ իւրն հրաման տուեալ էր .
Ո՛ որ սայս առնէ .
Ո՛ որ դայդ մարգարէանայ.
Ոչ տեսանես զինչ գոքայդ գործեն .
Ուր նայն վախճանեսցի .
Որպէս նայն Քրիստոսի է .
Որոյ նմայն զայն շնորհեալ էր .
Որ 'ի նմայն ծնեալ է .
Ոչ վասն այլ իրիք՝ այլ զի նմայն չլուան .
Որ զնովաւն էին .
Յորժամ նոքայն նախատէին .
Որ նոքօքն խրատիցին .
Որ 'ի վերայ նոցայն մեռաւ.
Որք զայսն կամին .
Որ զայնն առնեն .
Որք զայսոսիկն պահանջէին

464 . Ուրիշ տեղ եւ ուրիշ կերպով, առանց ան բառերէն ետեւ ըլլալու, սովոր չեն աս դերանունները յօդ առնելու . քիչ տեղ կ'ըսուի

Դուն գիտես .
Իբրեւ զձեզդ եմ կամ էի .
Ընդէ՞ր ոչ նայն հարկանէր.
Ով է զայսն ասեն .
Նա այնքն ոչ դադարէին .
Յայնցն որ ողջոյն տային .

465 . Նմանապէս նոյն բառերէն ետեւ՝ ուրիշ որ եւ

իցէ անուն բայի կամ խնդիր մ՛որ ըլլայ բայէն առաջ՝ մնա կամ քիչ մը հեռու , յօդը անոնք կ՛առնեն կամ անոնց ածականները · ինչպէս ,

466 · Անուն բայէն ·

Օր Աստուածն առաքեաց ·
Որով բազումքն իսկ զեղխանան ·
Ուր Քրիստոսն նստի ·
Որոյ երեսուն և ութն ամ էր ·
Որ 'ի Բաբելոն ընտրելակիցն եկեղեցի է կամ ընտրելակից եկեղեցին է . — այս ինքն ընտրելակից եկեղեցին որ 'ի Բաբելոն է ։

467 · Խնդիր ·

Ինձ որ տրտում եմ ·
Որ կարօտըս եմք ·
Այս որ հրամանս առաք ·
Այն քո չա՞ր է զի ես առատ եմ ·
Որ ձիթենիդ վայրենի էիր ·
Դուք որ չարքդ էք ·
Որ ամենեցունցդ ես թագաւոր ·
Ուստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել ·
Որ հուրն ծախիչ է ·
Որ կարի վայելուչն իսկ է ·
Մ'ի ընդ այն նայիցիս՝ զի նեղն և անձուկ և խիստ է ·
Որպէս պարտն է գիտել ·
Որ բունքն իսկ են ·
Ինքն որ Աստուածն էր ·
Որոց պարտն և պատշաճ էր խնդալ ·

Մ'ինչպէս ալեկոծն ծովածուփ իցէ ·
Որ աւարն հարկանէր ·
Մ'ինչպէս այգն կամէր լինել ·
Ոչ յամեցուցէ տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամ-ըրն համարին ·
Որ խորան տայ կամ ես ·
Որ ոչինչ ունէին ·
Որպէս մինչ յարգն տային ·
Ընդ որում անհաշտ թշնամութիւնն պարտ էր ունել՝ և ոչ բարեկամութի ·
Որ զԵրիքովն կործանեաց ·
Որ 'ի վերն քան զՕր-ըուանն էր ·
Որ յԵպասպօլիան իցեն ·
Որ 'ի բանտն տայի ·
Որ օրինօքն էին ·

Որ Քրիստոսին խօսէր · Որ ընդ աջմէն իցէն ·
Որ յաւիտենից եմ.

468 · Նման ալ անորոշ, անցեալ և ապառնի դերբայները՝ գիտնալու բայէ առաջ որ ըլլան, իրենք կ'առնեն յօդը կամ իրենցմէ ալ առաջ բառ մը ·

Որք ուսուցանելս պարտէաք ·
Նյու զի չնալն եմ ·
Մինչ ասելն կամեցար ·
Ես որ կապեալս եմ.
Ընդ որոց և կապեալս կամ.
Որ յօղեալ և ուսեալդ ես ·
Ընդ որում և համբերակեալդ խօսիմ.
Որ արբեալդ էք ·
Որ հզօրացեալն է ·
Որ խօսեալն էր ·
Նա զի կապեալն եւս էր զնա.
Որ մեռեալն էիք ·
Որ ի պնդեալն եկեալն էին յօժարութեամբ ·
Որ ծնեալն իցէ ·
Ահա եւ այն են՝ որ և

ննջեցեալքն իսկ իցեն ·
Որ բարձեալն տանէին ·
Որովք մկրտեալն պաշտէին.
Որ յայտ արարեալն ասէ.
Որ ըստ Աստուածոյն հաստատեալ է ·
Որ Ցորն գրեալ է ·
Որ աճումն կոչեցեալ էր ·
Որ ընդ նմա ՚ի խաչն ելեալ էին ·
Որ բռնքն հաստատուն կացեալ էին ·
Որ կալցս և մնալցս է ·
Որ նզովելոյն է ·
Որ զբանք ածելոյն իսկ է զմեծ վիշտին ·
Որ հարկանելոյն էին զնա.
Որ նորօքն շահելոյն էին ·
Որ գալոյն իցէ ։

469 · Եւ որ նոյն վերի բառ (462) բառերն եւ՝ բայէն առաջ մակբայ մը ըլլայ նէ, յօդը ան մակբայը կ'առնէ, թէ և բայը գործութեամբ ըլլայ ·

Որ աստ կան ·
Որ այժմն կեամ.
Ոչ լինէր որպէս արդս · — այս ինքն որպէս արդս լինի.

Որ արտաքոյս եմք ·
Այնու զոր ուս ասար ·
Նարձըլի որ այժմդ ունի ·
Որ զկնիդ գայ ·

Որ վաղդ եկեր մեկնեցար ·
Բայց զիարդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք ·
Որ չէգ էք որբեալ ·
Որ ուշդ հաւատաս ·
Որ ուշդ երկնէիր ·
Զոր ուշդ վայելէ քեզ խօսել ·
Զոր ատամն եմ ·
Զոր անդն խոստացաւ ·
Որ անդն կային ·
Զոր միշտն ասէի ·
Նոյնց և արարից որպէս միշտն.— այս ինքն որպէս միշտն առնէի կի՛մ արարի ·
Զոր հանապազն ըմպեմք ·
Որ այնպէսն գնայցեն ·
Որ զհետն երթային ·
Զոր յանդիմանն տեսի ·
Որ մնացիւքն ծառայեաց ·
Որ սոյգն փախչիցին ·
Զոր ինչ մեծամեծ և ողջն ողջն կլանիցեն ·
Որ ստահակն գնայցեն ·
Որ հազիւն ապրեցան ·
Որպէս կանխաւն ասէի ·
Որ ոչն է ·
Որ ոչն ունիցի ·
Զոր ոչն կամիմ ·
Զոր ոչն արդեօք յարոյց ·
Որ ոչն անկեալ երկիր պագանիցէ ·
Մինչ ոչն գիտէին ·
Որ ընտիրն է՝ սրբի և պատուականանայ, իսկ որ ոչն՝ այրի և հրդեհի · — այս ինքն՝ իսկ որ ոչն է ընտիր ·

470 · Յօդ առնել կրցօղ դերանուանէ, անմիջապէս մօտ անուան բայիէ կամ խնդիրէ, դերբայէ ու մակբայէ ետև դրուած դիմաւոր բայի վրայ սովորութիւն չէ յօդ դնել · չըսուիր օրինակ ինձ, զոր ես գործեմս կամ գործեմ, ընդ որս դուք զարմանայքդ, ուր Քրիստոս նըստին, ինքն որ Աստուած էրն, որ խրատ եմն, որ յաւիտենից եմն, որ հզօրացեալ էն, որ ամուլ կոչեցեալ էրն, որ հարկանելոց էինն զնա, որ այժմ ունիդ, զոր ոչ արդեօք յարոյցն, ևն ·

Բայէն առաջ յօդ առնելու յարմար բառ չըլլալէն՝ կ՚ըսուի երբեմն ·

Զինչ խօսիդ ·
Զինչ ասէքդ ·
Տեսէք զինչ ասէրն Քրիստոս ·

Յորժամ թշնամի զոք ունիցիմ.

Ընկեր՝ վասն որո՞յ եկիր.

Որո՞ւմ կրից համբերեմ.

Որոց խունկսդ արկանէքդ. — այս ինքն զխունկսդ, զխունկս ձեր.

Որոց հանգիստապատիւ մեզ հասէքդ հաւատոց. — այս ինքն որոց հասէքդ՝ հանգիստապատիւ մեզ հաւատոց.

Որ զաստուածս անարգենն. — այս ինքն որ անարգենն զաստուածս, անորոշ մըտքով (441).

## ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

### ՆԱԽԴԻՐՆԵՐ

471 . Երբոր նոյն անունը կրկնուի նէ (65), սովորաբար առջինին միայն կը դրուի նախդիրը .

Օ այր այր խրատանչիւր .
Օ ազգս ազգս բոլոր .
Օ բարի բարին .
Օ ծանր ծանր օրինաց .
Օ մի մի .
Օ ամենա ամենա .
Ի քաղաքս քաղաքս առ զօրավար զօրավար .
Ի շաբաթու շաբաթու .
Ի տեղեաց տեղեաց .
Ընդ ժամս ժամս .
Ըստ ազգս ազգս .

Ի կեղծս կեղծս կամ կեղծս 'ի կեղծս .
Ի կերպս կերպս լինել կամ կերպ 'ի կերպս լինել .
Նա մեզ զերկիրս զայս, երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր .
Տարայց զձեզ յերկիրն բարի զոր երդուայ հարց նոցա, երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր .

472 . Երբոր նոյն անունը մէջ մը բացառական մէջ մը նախդրիւ տրական քովէ քով դրուի նէ, սովորաբար երկրորդին միայն կը դրուի նախդիր՝ որն որ ըլլայ նէ . Թէպէտ առաջ դրուած բացառականին ալ կրնայ դրուիլ .

Ի տանէ 'ի տուն կամ տանէ 'ի տուն .
Ի քաղաքէ 'ի քաղաք կամ քաղաքէ 'ի քաղաք .
Ի դրանէ 'ի դուռն կամ դրանէ 'ի դուռն .
Ի կրօնից 'ի կրօնս կամ կրօնից 'ի կրօնս .
Ի կենաց 'ի կեանս կամ կենաց 'ի կեանս .

Կենդանութենէ 'ի կեանս .

Տուն 'ի տանէ , քաղաք 'ի քաղաքէ , տեղի 'ի տե-
ղւոջէ , կողմն 'ի կողմանէ , աման յամանոյ , որ յո-
րէ , ամիս յամսոյ .

Երբեմն ալ առջինին միայն՝ բացառականին . Յա-
մանոյ աման , 'ի նիւթոյ նիւթ , 'ի ժամանակէ ժամանակ .

473 . Երբոր նոյն նախդիրը առնելու շատ բաներ մէջտեղ գտուին նէ , սովորաբար ամենուն ալ կրկնելու է նախդիրը .

Տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչաման .
Մտանէր 'ի բանտս և 'ի կապանս և 'ի պատիժս .
Յարջառոյ և յիւղոյ և յոչխարէ և 'ի հանդերձէ .
Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և
առ զօրականս .
Ընդ ծով և ընդ ցամաք . Առ փոքուն և առ մեծին .

474 . Բայց շատ տեղ ալ առջինին միայն հերիք է , մնացածնին ևով կապուած որ ըլլան .

Զարջառ և ոչխար . Զմտաւորս և բանաւորս .
Ճանաչել զլայնութիւն և երկայնութիւն , խորու-
թիւն և բարձրութիւն սիրոյն .
Նոյն խաւար մածեալ է զգլխով և մարմնով նորա .
Յոգի և մարմին էաք տրտմեալք . Ի պակասել
հանել թափել զոգիս իւրեանց .
Ի ժողովել Պաւղոսի խուռ ինչ բազում և դնել
'ի վերայ խարուկին .
Սպառեցին նոքա 'ի տոհմոյ և ծառայոյ . Ի մեռե-
լոց և կենդանեաց .
Առ հովիւն և տեսուչ հոգւոց ձերոց . Առ Պե-
տրոս և Յովհաննէս .
Ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր ձեր և Ա-
ստուածն իմ և Աստուած ձեր .

Առ Աբրահամու և Յորաւ և ամենայն պոլա-րովքն. Ըստ փոքու և մեծի.
Զարմացեալ ընդ ժուժկալութիւն համբերու-թեանն կարի անհնարին և տոկալ նորա.

475. Այս, այլ, և ոչ շաղկապներով կապուած բա-ռերուն կրկնելը է.

Զծառայ կամ զաղախին.
Ի հօրէ կամ 'ի մօրէ.
Յերկինս կամ յերկրի.
Ոչ զմարդ անարգէ, այլ
զԱստուած.
Ոչ յերկրի, այլ յերկինս.
Ի հաւատոցն Քրիստոսի,
և ոչ 'ի գործոց օրինաց.

476. Երբոր անուն մը իրմէ առաջ յատկացուցիչ կամ ածական ունենայ նէ, նախադիրը ան յատկացուցի-չին ու ածականին վրայ կը դրուի. ինչպէս,

477. Յատկացուցիչն.

Առ զնորին սուսեր.
Զգեցիր զիմ հանդերձս.
Գիտել զտարեաց բոլորմունս և զաստեղաց դիրս.
Մերկեցան յԱստուծոյ գիտութենէն և 'ի նորին օրհնութենէն.
Ի հօր մերոյ ընչից.
Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ.
Քաղել հասկ յայլոց անդի.
Զիմ ինչ, զքո ինչ, զտեառն ինչ.
Զոր ինչ ուրուք և առեալ իցէ.
Յորոյ շրջանին.
Զորոց կերպարանս.
Յորոց ձեռաց.

478. Ածականին.

Զմեծ թագաւորն.
Զամենայն ծառ.

Ընդունիջիք զանթառամ փառաց պսակն. — այս ինքն զանթառամ պսակն փառաց.

Զտէրունականն ասել առ նոսա բան.

Ի մեծ թագաւորէն.

Յուղիղ հաւատոյ և 'ի սուրբ վարուց.

Ի հարազատէն իւրմէ մեռանել եղբօրէ.

Յաստուածայինսն գտանեմք ասացեալ պատմութիւնս.

Զբազումտկարաց տունս խորտակեաց.

Ի տղայ մանկանցն բերանոյ զտոնս 'ի բաց կորզէին. — ուր յատկացուցիչին ածականին վրայ գրուած է նախդիրը, ու կ'իմացուի զտունս բազումտկարաց, 'ի բերանոյ տղայ մանկանցն.

479. Թէ որ շատ յատկացուցիչ կամ ածական ըլլայ առաջ նէ, առջինին միայն հերիք է նախդիր.

Յաստուծոյ և սրբոց զօրութենէ.

Յաստուծոյ շնորհացն ազդեցութենէ. — այս ինքն յազդեցութենէ շնորհացն Աստուծոյ.

Զաստուածային սուրբ հոգին.

Զմեծն և հռչակաւոր Հոմերոս.

Յայնմ մեծ տագնապի.

Ի գրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն.

Ի ձերոց ստայօդ և չարաթոյն բանից:

480. Երբոր յատկացեալը չգրուիր յայտնի, կամ երբոր չկրկնուիր նէ, անոր նախդիրը յատկացուցիչին վրայ դնելու կամ կրկնելու է՝ ան հասկըցընելու համար, թէ որ երկու յատկացեալն ալ զատ զատ են նէ. ինչպէս,

Մ'ի ոք զանձին և եթ խնդրեսցէ, այլ և զընկերին. — այս ինքն զանձին իրս, զընկերին իրս:

Սպիրատ է 'ի յայլոցն ձեռնարկել. — այս ինքն 'ի յայլոց իրս:

Զվարագոյր դրան խորանին և զդրան սրահին. —

այս ինքն և զվարագոյր դրան սրահին . երկուքին մէկ վարագոյր չկրնար ըլլալ , հարկաւ զատ են ,
Խոստովան լինիցին զմեղս իւրեանց և զհարց իւրեանց . — այս ինքն և զմեղս հարց ,
Մի լիցի ապրեալ 'ի ներքոյ երկնից տուն նորա , այլ 'ի նորայն կացցեն օտարք . — այս ինքն 'ի նորա տունն կամ տանն ,
Ձուկն թէպէտ և գայ յառակ , 'ի գերեզմանի առակ գայ , և ոչ 'ի կենդանութեան . — այս ինքն և ոչ յառակ կենդանութեան ,

481 . Ըսինք որ (400) բացայայտիչը հոլովով համաձայն կ'ըլլայ բացայայտելի անուանի . բայց նախդիրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ՝ իրեն ալ նախդիր դնելու , մանաւանդ երբոր մօտ է , Աստի կ'ըսուի ,

Առին զՅակոբ հայրն իւրեանց .
Զհայրն մեր Աբրահամ .
Զհայր քո Խոսրով .
Զխոսրով հայր նորա .
ԶՏրդատաւ արքայիւ .
Զամբոցաւն Աշխէնակաւ .
Ի Սիոն լեառն .
Յերուսաղէմ քաղաք .
Յերկրին Գեսեմ .
Յականն տիեզերաց Հռովմ .
Ի Դարեհէ արքայէ .
Ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ .
Յանմահ արքայէն Քրիստոսէ .
Ի քաղաքէն Հռովմայ .

Զսահակայ հայրապետէն .
Մինչև ցգետն մեծ Եփրատ .
Առ Յակոբ հայրն իւրեանց .
Առ Լաբան որդի Բաթուէլի ասորւոյ՝ եղբայր Ռեբեկայ .
Առ բանաւոր աշխարհս՝ մարդս .
Կատարեաց առ մեզ որդիս նոցա .
Առ Թէոդոսիւ կայսերբ .
Արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել , զՅուդա և զՇիղա՝ արս գլխաւորս ,

482. Նմանապէս ըսինք որ եւ գրուած ածականը կը համաձայնի գոյականին (422), բայց նախդիրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ իրեն ալ նախդիր դնելու, մանաւանդ երբոր մօտ է. Ուստի կ՚ըսուի,

Զայր հաւատարիմ.
Յառնէ անխրատ.
Յայրի անդ կրկնում.
Զպատմուճան նորա ծաղ-
կեայ.
Զզօրութիւնս քո զոր ա-
րարեր մեծամեծս.
Ի սրտմտութենէ բարկու-
թեան իւրոյ մեծէ.
Զթագաւոր ծեր և ան-
միտ.

Զայր ծոյլ և գձուձ.
Յերկիր բարի և պարարտ.
Ընդ անապատն մեծ և ա-
հագին.
Զազգս մեծամեծս և հը-
զօրագոյնս.
Առ արս արդարս և ուղիղս.
Ի ցուպն եղեգնեայ ջախ-
ջախեալ.
Ի մարդոյ մեղաւորէ նեն-
գաւորէ.

Իսկ թէ որ եւելի ածականը՝ մանաւանդ հեռուն՝ դիմորոշ յօդ ունենայ նէ (452), գոյականին նախդիրը սովորաբար անոր ալ դնելու է, թէ հայցականի զայ ըլլայ (354) և թէ ուրիշ նախդիր.

Զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել՝ զչա-
րըն և զանկարգն.
Զձեռագործս իւրեանց զամենայն (355).
Յընկերաց սրբոց հափշտակմանցն 'ի գրուելոցն.

483. Բայց երբոր այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ածական դերանուններն՝ գոյականէ կամ՝ ուրիշ ածականէ մը եւս գրուին նէ, սովորաբար միշտ անոնց վրայ ալ դնելու է գոյականին նախդիրը, մանաւանդ զ, 'ի, յ, ց նախդիրները.

Զօրս զայս.
Զժողովուրդս քո զայս.
Զգեղեցիկ պատմուճանս

զայս.
Զմեծ զայս մարմինս.
Զերկրաւոր ստորինս զայս

չարութիւն ․
Ո՜ հուրդ զայդ ․
Ո՜ տեսիլն զայն մեծ ․
Ո՜ տեսիլն մեծ զայն ․
Ո՜ ջերաշխարհիկն զայն տօնախմբութիւն ․
Ո՜ տեղեաւն զայնուիկ ․
Ո՜ առնէն զայնմանէ ․
Ո՜ տասն նկանակս զայսոսիկ ․
Ո՜ ամենայն չարիսդ զայդոսիկ ․
Ո՜ աւուրսն զայնոսիկ ․
Ո՜ նշանս մեծամեծս զայնոսիկ ․
Յաշխարհս յայս ․
Յաւուրս նեղութե̄ յայսմիկ ․
Յերկրէս բարութե̄ յայսմանէ ․
Յերկրիդ յայդմիկ ․
Յերդմանէդ յայդմանէ ․
Յերդմանէդ քումմէ յայդմանէ ․
Ի տարւոջն յայնմիկ ․
Ի չար հիւանդութեանն յայնմիկ ․
Ի պատուիրանացս յայսցանէ ․
Ի կարևորացս յայսոցիկ կամ այսոցիկ ․
Ի չարեացդ քոց յայդցանէ ․
Ի քաղաքացն յայնցանէ կամ յայնոցիկ կամ այնոցիկ ․
Ցտեղին ցայն ․
Ցժողովուրդն ցայն ․
Ցոսկերսդ ցայդոսիկ ․
Ընդ վէմս ընդ այս ․
Ընդ առնս ընդ այսմիկ կամ ընդ վիմիս այսմիկ ․
Ընդ յարկաւս ընդ այսուիկ կամ ընդ յարկաւս այսուիկ ․
Ընդ այրդ ընդ այդ ․
Ընդ ամենայն երկիրն ընդ այն ․
Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ․
Ըստ արժանս ըստ այս ․
Ըստ ժամանակին ըստ այնմիկ կամ ըստ ժամանակին այնմիկ ․
Ո՜ տէր զնոյն ․
Յորոգայթ 'ի նոյն ․
Ի չարիսն 'ի նոյն ․
Ընդ ճանապարհ ընդ նոյն ․

484 ․ Ու մակբայը հասարակ անուն ածականի հետ ալ գոյականի հետ ալ որ ըլլայ, ինք կ'առնէ նախդիրը՝ մէկ բառ եղածի պէս ․

Ո՜ կոյս զոչ խօսեալ ․
Իբր զոչ ինչ պիտանի ․ — այս ինքն իբր զոչ պիտանի ինչ ․

| | |
|---|---|
| Զոչ իւր պատշաճագոյնն ․ | Զոչ ընդունելն ․ |
| Զոչ երևելեացս ․ | Ի յոչ լսելն ․ |
| Զոչ կամաց երթալ ․ | Ասացից ցոչ ժողովուրդ իմ։ |
| Զոչ գոյէ կամ յոչ գոյից ․ | Ընդ ոչ գոյսն ․ |
| Զոչ պէտս երևեալ ․ | Ըստ ոչ սովորութեան ․ |
| Օ ոչ այնպիսի երևեալն ․ | |

Ըսեր ենք որ ամենևին զոչինչ, յոչինչ, զոչ ոք, յոչ ոք չըսուիր (86, 100)․

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

485 . Ուղղագրութիւնը խօսքը շիտակ գրելն է ։ Բառերը շիտակ կարդալ ու գրել գիտնալէն ետքը, խօսքն ալ շիտակ կարդալու և գրելու քանի մը նշաններ կան ։

486 . Առոգանութեան՝ այս ինքն յարմար ձայն հանելու նշաններն են բութ (՝), շեշտ (՛), երկար (՛), պարոյկ (՞), որ ստորակէտ կ'ըսուին ։

487 . Բութը դուր ձայն կը նշանակէ, ու ամենևին չգրուիր ․ ինչու որ մեր գրեթէ ամէն բառը միայն որ գրուցուի՝ դուր է, ետքի վանկին վրայ կ'իյնայ ու կ'իջնայ ձայնը ։ Աստի հիմայ բութը կէտերուն կարգն է ։

488 . Շեշտը զարնելու և ձայնը բարձր հանելու նշանն է ։ Խիստ քիչ բառ ունինք որ ինքիրենը շեշտ ունենայ, ինչպէս հապա, մանաւանդ ։ Բայց բայերուն հրամայականները ու ոչ, մ մակբայները կը շեշտուին ․ սիրեա՛, լուարո՛ւք, ո՛չ կամիմ, ո՛չ ոք, ո՛չ այդպէս ․ մի՛ տայք, մի՛ սիրէք, մի՛ մեղանչէք ։

489 . Նմանապէս ամէն բութ բառերնիս՝ ետևէն իրեն փակչելու և մէյտեղ գրուցուելու բառ մ' որ ունենայ, շեշտ կ'առնէ ետևի ձայնը ․ ինչպէս, վեցերո՛րդ ամիս, մե՛ծ պատուհաս, ե՛ս առաւել, առաւե՛լ ես, ե՛ս իսկ տեսի, դէ՛մ յանդիման, օրինա՛կ առէք, զգուշացա՛յ

ող, կեցիցէ մի. — գիտէ որ այն ատենը հրամայականը տուէք, տուր, դն, իրենց շեշտը կորսնցուցին.

490. Նմանք ալ անուն մ' որ կանչուի նէ, վերջը կը շեշտուի. ու երկու որ ըլլան, առջինինը միայն.

Լո՛ւր դու ինձ, իշխա՛նդ.
Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեա՛լդ և խախտեալդ.
Ծառա՛յք, հնազա՛նդ լերուք.
Բայց դու՛, արքայ, տուր իշխանութիւն.
Նզարի՛մ եղբայր, եղբա՛յր Նզարիմ.
Բարերա՛ր տէր, տէ՛ր բարերար.
Տէ՛ր տէր.
Յակո՛բ Յակոբ.
Աստուա՛ծ՝ Աստուած իմ.

491. Շեշտն ալ կարգացմունքի մէջ կը զրուցուի, բայց չգրուիր հիմա. Հիմկու սովորութիւնը կէս հարցականներուն վրայ կը դնէ շեշտը, մէյմ' ալ շատ շերկընալու ձայնարկութիւններու վրայ. ինչպէս,

| | |
|---|---|
| Հարցանել թէ դու ո՛վ ես. | Նո՛յ անօրէն. |
| Հարցանէր թէ ո՛ւր ծնա-նիցի. | Նա ո՛վ մարգարէ. |
| | Ո՛ն արէք. |
| Խրանի թէ. | Հա՛պա առաքինիք. |

492. Երկարը կը դրուի այն ձայնարկութիւններուն ու անուններուն, ուր որ կիրքին յարմար երկընալու է ձայնը.

| | |
|---|---|
| Բա՜րէ. | Ո՜վ քանի աչագին են. |
| Վա՜շ. | Տէր տէր մեր, զի սքանչելի |
| Ո՜հ կարի է առասպելս. | է անուն քո. |
| Եւա՜ղ բախտին. | Զարմա՜նք մեծ. |

Երբեմն շեշտն ալ կ' օգտէ. վա՛շ վաշ, ո՛վ անմտութեան.

493. Պարոյկը հարցընելու բառերուն վրայ կը դրուի. Ո՞վ, քանի՞, ընդէ՞ր, ուստի՞, ո՞րպէս, ո՞րչափ, ա՞յդչափ, վասն ա՞յնորիկ եկիր, որպիսի՞, որպիսու՞մ հասեա՞լ իցես, կերա՞ր արդեօք, ո՞չ տեսանես, միթէ մա՞րթ ինչ իցէ, միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես.

494. Տրոհութեան՝ այս ինքն բառերը ու խօսքը բաժնելու նշաններն են ենթամնայ ( ‿ ), ապաթարց և մականկէտ ( ' ), բութ ( ˋ ), ստորակէտ ( , ), միջակէտ ( · ), վերջակէտ ( : ). Ետքի իրեքը մէկէն կ'ըսուին կէտք ու տրոհմունք.

495. Ենթամնան բառերը տողին ծայրը բաժնելու պէտք կ'ըլլայ, որ տողադարձ կ'ըսուի. Ու տողադարձին կանոնն աս է համառօտ.

496. Երկու զատ զատ վանկ ընող ձայնաւորներուն մէկը անդին անցընելու է. ինչպէս, մի-այն, առնու-ին.

497. Բաղաձայնը մէկ որ ըլլայ, միշտ անդին դրելու է. շատ որ ըլլայ, մէկը միայն անդին տանելու է. բա-րի, եր-կիր, համգ-չիմ.

498. Բայց բարդած կամ ածանցած բառ որ ըլլայ՝ շատ բաղաձայնով սկսող, բոլորն ալ հետը մէկտեղ անդին դարձընելու է. Նորա-նշան, ան-բնական.

499. Մէկ տողին վերջը ու մէկալին ծայրը մնացած բաղաձայններն ալ որ մինակ կը մնան կամ բնական չեն կտրած բառին, հետը կամ մէջը ուր որ ըլթով կ'ըսուի է դնելու է. գը-րոյ, ըզ-գեստ, ըզ-բան, երկըր-պագու, մշտըն-ջենաւոր, մըշ-տընջենաւոր. տըր-տում, ան-տրտում.

500. Ապաթարցը աւելի բանաստեղծները կը բանեցնեն՝ ուր որ գիր մը կը ձգեն նէ. ինչպէս, ապ'եթէ, նա՛ ւանիկ, վէմ մ' 'ի դուռն, ազնուականի'մն ցանկացեալ. առաքեալ'ի մեզ 'հոգին. փոխանակ ըսելու ապա, աւանիկ, մի, իմն, զհոգին.

501 . Մակակէտը՝ նախդիր ինքին ետին կը դրուի. ՚ի Սահակ. ՚ի հօրէ, ՚ի յայրին, առ ՚ի յԱստուծոյ.

502 . Մակակէտ կամ ճշէյ (') կը դրուի ղ կամ լ գրերուն վրայ ալ, բարակ լինուն կարդալու համար. ինչպէս, այղ' կամ այլ', Թոյղ' կամ Թոյլ', ջիղ' կամ ջիլ', փիղիսոփայ կամ փիլիսոփայ, Իսրայէղ' կամ Իսրայէլ', Աղէքսանդր կամ Ալէքսան, Պօղղոս կամ Պօլլոս[1].

503 . Կէտերէն բութը կը դրուի բառի մը վրայ՝ ուր որ ձայնը խիստ քիչ կանգ առնելու մը պէս պիտի ընէ, որ բառ բառի չխառնուի.

504 . Ստորակէտը կը դրուի՝ երբոր խօսքի մը կտորը խիստ անկատար է, ու ետևէն բան մը կ՚ուզէ.

505 . Միջակէտը կը դրուի լման խօսքի մը ետքը, որ ետևէն ուրիշ կտոր մ՚ ալ ունի.

506 . Իսկ վերջակէտը կը դրուի՝ ուր որ խօսքը ամբողջ լմնցած է, ու տուն մը կ՚ըսուի.

Զօրսէն ալ օրինակ.

Բոլոր մարմնոյս՝ հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ՝ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհս.

Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ իբրև զգոյն ՚ի մարմնոյ՝ չկարէ շրջել. Թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ՚ի կատարած.

507 . Ստորակէտով կը զատուին կոչական անունները, ու միջակէտով՝ ուրիշին խօսքն որ բերենք, որ գըլ-

---

1 Ուստի սաանկները և այլ օտարազգի զատով չեղող բառերն ու անուններն առանց փչլկի զատով գրելը կամ զատով կարդալը մեծ սխալ է, որ ընդարձակ քերականութեան մէջ ցուցուցեր ենք բուն նախնեաց խօսքերով և վկայութիւններով.

խագրով ալ կը սկսի · Ո՜յր , որքայ քաջ , այդ այդպէս է ։ — Մոխպէր վնաս և ասէր · Խօղ գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին ։

508 · Կարգ յատուկ անուններն ու պատուոյ անուններն ալ գլխագրով գրելու է · Հայկ , Աթէնք , Աչքասխ-վրո Ջոխութիւնդ ։

509 · Փակագիծ կ՚ըսուի աս նշանս ալ ( ) , երկու միջանկեալ բան մը մէջն առնել ու զատելու համար , Բայց կարճերը ստորակետով զատել հերիք է · Ինչպէս , Ընդ հանել ոգւոյն , քանզի մեռաւ , կոչեաց զանուն նորա որդի վշտաց իմոց ։ — Գուցէ ամաչեսցուք մեք , զի մի ասասցուք թէ դուք , ՚ի մասին յայդմիկ պարծանաց ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ԼԸՄՆՑԱՒ

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՁԵՒԱՒՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

510 . ԻՆՉՈՒՐ *հիմայ սորվածնիս՝ լեզուին պարզ շարադրութեան հասարակ ու սովորական կանոններն էր . Բայց երբեմն , այլեւայլ պատճառով ու մտքով , կարգէ դուրս գերազանց բաներ ալ կ՚ըլլան շարադրութեան մէջ, որ ձեւ կ՚ըսուին, ու անանկ շարադրութիւնը կ՚ըսուի ձեւաւոր շարադրութիւն .*

511 . *Քերականական ձեւերը հինգ են . զեղչում , աւելադրութիւն , բակառութիւն , փոխադրութիւն , արտուղութիւն , ու ասոնց շատ կերպ կերպ վարպետ գործածութիւնը կայ գրոց մէջ . բայց մենք ամէն մէկին խիստ շատ բանուկները կամ երբեմն երբեմն գործածուածները միայն՝ գիտնալու և հասկընալու չափ տեսնենք՝ բաւական է . Իսկ բանեցնելը՝ խելքով ու չափով բանեցնելու է , որ բանը մութ չըլնայ ու համով գայ .*

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԶԵՂՉՈՒՄՆ

512 . Զեղչումն է՝ բան մը պակաս դնել որ ինքիրեն դիւրաւ կ՚իմացուի , կարճ ու կտրուկ ընելու համար խօսքը ։

513 . Ասանկ , անուն բային կամ խնդիրը՝ միջակ անուններէն որ ըլլայ նէ , շատ տեղ չգրուիր ու ինքիրեն կ՚իմացուի . ինչպէս ,

Ոչ իցէ 'ի նոցանէ որ ապրիցի . — այս ինքն ոչ ոք իցէ ։

Եկն առ իս յեղբարց իմոց . — այս ինքն ոմն յեղբարց իմոց ։

Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի . — այս ինքն ոմանք յաշակերտաց ։

Առ ընդ քեզ 'ի ծերոց ժողովրդեանդ . — այս ինքն առ զոմանս 'ի ծերոց ։

Յղեցին և կոչէին զնոսա . — այս ինքն յղեցին զոք կամ զոմանս ։

Յերևելի նիւթոց և յազգի ազգ գունոց 'ի միասին խառնել . — այս ինքն ինչ ինչ ։

Մի դատիք և ոչ դատիցիք . տուք և տացի ձեզ . — այս ինքն մի զոք դատիք և ոչ դատիցիք յումեքէ . տուք ինչ ումեք և տացի ձեզ ինչ յումեքէ ։

514 . Անորոշ ու անցեալ դերբային անուն բային շատ անգամ տեղէն ինքիրեն կը հասկըցուի .

Զալիսն 'ի նաւն զեղոյր , մինչ գրեթէ լի իսկ լինել . — այս ինքն նմա , նաւին լի լինել ։

Զի մի լուռ քո փարախդ արտաքս ելեալ, չար գազան զարձեալ բեկանիցէ զխս. — այս ինքն ելեալ իմ։

Եւ բախեալ զդուրս տանն, մտեալ աղախին մի ունկն դնել. — այս ինքն նորա բախեալ։

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն. — այս ինքն թագաւորեալ նորա։

Զի մի յատենի անդ կացեալք, չարաչար առ մեզ վարեսցի ատեանն. — այս ինքն մեք կացեալք։

515. Անցեալ դերբայն էական բային երրորդ դէմքերումն որ դրուի նէ (331, 332, 586), սեռական անուն բային շատ տեղ զօրութեամբ կը հասկըցուի.

Զառ 'ի յետոյն մոռացեալ է և 'ի յառաջադէմն նկրտեալ եմ. — այս ինքն իմ մոռացեալ է։

Մինչև զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է. — այս ինքն մեր լուծեալ է։

Զինչ եղեալ է 'ի մէջ ձերում վասն մեր՝ կատարեցէք. — այս ինքն եղեալ է ձեր։

Զիա՜րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չէք. — այս ինքն սորա չէք ուսեալ։

Մինչև ատեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ. — այս ինքն իմ ստեղծեալ էր։

Որպէս զամենայն ազգ նուաճեալ էր և 'ի հնազանդութեան ունէաք. — ա՞յ նուաճեալ էր մեր։

Եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ. — այս ինքն նորա, կամ որ և փորեալն էր։

Որք էին ժողովեալ 'ի Հրէաստան, և զտունն 'ի պղծութենէ անտի դեռ ևս էր սրբեալ. — այս ինքն էր սրբեալ նոցա։

Երբ ոչ եթէ արդէն առեալ իցէ կամ արդէն կատարեալ իցեմ. — այս ինքն առեալ իցէ իմ։

Երբու թէ անձին զօրութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա. — այս ինքն արարեալ իցէ մեր։

Զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ . — այս ինքն ոչ իցէ քո առեալ ։

Ի տասանորդէ զմասս ձեզ թողեալ լիցի , և զիշխանութիւն զամբիդ 'ի ներքս տուեալ լիցի ցքահանայապետդ . — այս ինքն մեր կամ իմ թողեալ լիցի , տուեալ լիցի ։

Եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն կանոնարականին . — այս ինքն մեր կամ իմ եղիցի տուեալ ։

516 . Շատ տեղ ալ բայը չդրուիր ու կ'իմացուի ինքիրեն , ըսեր ենք առաջ (340) . հիմայ տեսնենք այլ և այլ կերպը ։

517 . Անցեալ դերբային էական բայը շատ տեղ չը-դրուիր հետը , ու տեղէն կ'իմացուի բանին ու դէմքին համեմատ .

Մինչև լերինք հաստատեալ էին , մինչև ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս . — այս ինքն ստեղծեալ էր քո , Աստուծոյ ։

Զայն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս , յորմէ ծնաւ Յիսուս . — այս ինքն խօսեցեալ էր կամ էին ։

Տուեալ քեզ ընդ այնր վրիժուց զամենեսեան որ կամիցին հաւատալ քեզ . — այս ինքն տուեալ է կամ տուեալ լիցի ։

Ասացի ձեզ մինչև եղեալ , զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք . — այս ինքն մինչև եղեալ են , կամ եղեալ է այսոցիկ ։

Ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել . — այս ինքն տուեալ է կամ լիցի ։

Եւ իմ հրամայեալ մի որ արգելցէ . — այս ինքն իմ հրամայեալ է ։

Տուր իշխանութիւն . և ասէ թագաւորն , Տուեալ քեզ . — այս ինքն տուեալ է կամ լիցի ։

Ահաւասիկ Հոլեփեռն յերկիր կործանեալ, և գլուխ իւր չէ առ նմա. — այս ինքն կործանեալ է։

Ոչ կերեալ զորս երբեք և ոչ արբեալ. — այս ինքն ոչ կերեալ է։

Գնացին արք անօրէնք պատմել Թագաւորին, եթէ Յովնաթան մեքենայս կազմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յանձուլ պատրաստեալ. — այս ինքն պատրաստեալ է կամ էր։

Զիա՞րդ կարասցուք մարտնչել ընդ այնչափ պընդակազմ գնդի, մանաւանդ զի քրեալք և լուծեալք. — այս ինքն լուծեալք եմք։

Ձայն արար կաքաւ, ժողովեաց զոր ոչ իւր ծնեալ. — այս ինքն ծնեալ էր։

Եւ այրն ծերացեալ 'ի տեսանելոյ, և փակեալ աչք իւր 'ի ծերութենէ իւրմէ. — այս ինքն ծերացեալ էր, փակեալ էին։

Եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. — այս ինքն նեղեալք էաք կամ եղաք։

Ի գիրս հարցափորձից՝ որ առ ամօքն Նեէմեայ եղեալ. — այս ինքն եղեալ էին։

Զարմանային զի ոչ նման արդարոցն ծառայեալք. — այս ինքն ծառայեալք էին։

Չև այգ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք. — այս ինքն չև իցէ այգ եղեալ։

518. Շատ տեղ ալ մէյմը միայն կը գրուի դիմաւոր բայը կամ անցեալ դերբայն, ու պէտք եղածին պէս ինքիրեն կ'իմացուի ետքը կամ առաջ.

Զոր օրհնես դու՝ օրհնեալ է, և զոր անիծանես՝ անիծեալ. — այս ինքն անիծեալ է։

Եղիցի երկիրն ձեր աւերակ, և քաղաքքն ձեր թափուրք. — այս ինքն թափուրք եղիցին։

Որոյ մեղքն յայտնի են և յառաջագոյն հասեալ 'ի դատաստան. — այս ինքն հասեալ են։

Որ այնչափ պատժոց արժանապարտ իցես, և ահա-
գլխատեալն յանդիման լինելոց և ընդ ամենայնի
Ճշտիւ համարս տալոց. — այս ինքն լինելոց իցես,
տալոց իցես:

Ես 'ի հայր, և հայր յիս է. — այս ինքն ես 'ի
հայր եմ:

Չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ.
— այս ինքն զայրացեալ էր:

Եթէ հրամայէ սպանանել սպանանեն, և եթէ
կեցուցանել կեցուցանեն. — այս ինքն և եթէ
հրամայէ կեցուցանել:

Ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աս-
տուած. — այս ինքն Աստուած առաքեաց:

Մեկնեաց յինէն. եթէ դու յահեակ, ես յաջ.
եթէ դու յաջ, ես յահեակ. — այս ինքն եթէ
դու յահեակ մեկնիցիս, ես յաջ մեկնեցայց, ևն:

Որ արբեալդ ես, և ոչ 'ի գինւոյ. — այս ինքն և
ոչ 'ի գինւոյ ես արբեալ:

Թէ կամիս և թէ ոչ. — այս ինքն և թէ ոչ կամիս:

Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցեն, այլ ես
ոչ. — այս ինքն ոչ գայթագղեցից:

Կշտամբեսցէ զքեզ քո բերան, և ոչ ես. — այս
ինքն և ոչ ես կշտամբեցից:

Առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի. և
ոչ եթէ ես, այլ շնորհքն Աստուծոյ. — այս ինքն
և ոչ եթէ ես վաստակեցի, այլ շնորհք Աստու-
ծոյ վաստակեցին:

Դու 'ի նմանէ, և ոչ թէ նա 'ի քէն հատաւ. դու
զնա, և ոչ թէ նա զքեզ անգոսնեաց. — այս
ինքն դու 'ի նմանէ հատար, դու զնա անգոսնե-
ցեր:

Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան. օտարն,
և մի քո շրթունք. — այս ինքն մի գովեսցէ, մի
գովեսցեն:

Պատառեցէք զսիրտս ձեր, և մի զհանդերձս. — այս ինքն մի պատառէք ։

Երթայք գործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ. — այս ինքն մի գործէք, այլ գործեցէք ։

Տեսեալ արդարոց ծիծաղեցան, անարատին և արհամարհեաց. — այս ինքն և անարատին տեսեալ ։

519. Բանիկ ալ երկու իրեք անցեալ կամ ապառնի դերբայի մէկ էական բայ մը միայն կը դրուի շատ անգամ։

Պատրաստեալ և խորհեալ եմ։

Զսուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ ։

Ոչ երբէք հեղգացեալ եմք յաղքունի վաստակս, և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան ։

Զոր ստացեալ և ապրեցուցեալ և սնուցեալ էր ։

Խառնեալ և աղմկեալ և զարհուրեալ միտքն էին ։

Ընկեցեալ լինէր և քարկոծեալ և թափչաւ ըղգլուխն հարեալ, և այնու վկայ ճշմարտութեանն Յիսուսի եղեալ, և զճշմարիտ մահն նորա մեռեալ ։

Արդ իմ զքեզ սպանեալ էր և զդա ապրեցուցեալ ։

Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա ։

Եթէ չէր մեր աճապարեալ և 'ի փախուստ դարձեալ ։

Չև էր զէնումն զենեալ և մատուցեալ պատարագ և ոչ հոգին սուրբ իջեալ, ոչ մեղքն լուծեալ, ոչ թշնամութիւնն բարձեալ և ոչ անիծիցն եղծեալ ։

Զոր տալոց և հատուցանելոց ես ։ Գալոց իջանելոց էր ։

Մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց ։

Մարդ լինելոց է և վէմ անուանելոց և 'ի հիմունս Սիոնի դնելոց ։

Լոյս զգենլոց են և արքայութեանն խոստացելոյ արժանաւոր լինելոց ։

Հնազանդելոց էին զամենայն ազգս , և ինքեանք անուանիք և հոյակապք լինելոց քան զաշխարհս ամենայն ։

Որ լսելոյն է՝ լուիցէ , և որ արհամարհելոյն՝ ար- համարհեսցէ ։

520 . Շատ անգամ ալ բայը , մանաւանդ էականը, ամենևին չգրուիր ու տեղէն կ՚իմացուի . յիշեր ենք ՚ի 340 . հոս ուրիշ օրինակներ ալ տեսնենք .

Մեք կաւ և դու ստեղծիչ մեր . — այս ինքն մեք եմք , դու ես ։

Ըստ Հիպոկրատեայ՝ կեանք սուղ և արուեստ երկայն . — այս ինքն սուղ է ։

Եւ ամենայն որ ինչ նոցա , եկին . — այս ինքն որ ինչ նոցա է կամ էր ։

Այսօր մաքուր հոգեկիր , վաղիւ մոլի խելագար . — այս ինքն այսօր եմ, վաղիւ լինիմ ։

Գոհութիւն երեքսրբեանին ։ Անէծք այնպիսի կրծ- ծի բանից . — այս ինքն գոհութիւն լիցի , մա- տուսցի . անէծք լիցին , եղիցին ։

Սուր ՚ի վերայ քաղդէացւոցն ։ Ահաւասիկ ես ՚ի վերայ քո . — այս ինքն սուր լիցի , հասցէ . ես եմ, ես գամ ՚ի վերայ քո ։

Վայ զիս . եղուկ զիս . երանի զազատեալսն . — այս ինքն վայ ասելի է , համարելի է ։

521 . Շատ տեղ անորոշ դերբայն ալ մէյ մը գրուե- լով, կամ ամենևին չգրուելով, զօրութեամբ կը հաս- կցուի ինչ հոլով որ պէտք է .

Խօսել բան՝ զոր ոչ է արժան . — այս ինքն ոչ է արժան խօսել ։

Ի հրոյ էութենէ ասեն զբնութիւն աշխարհիս . — այս ինքն ասեն լինել ։

Զպատրաստութիւն սպառազինութեանն հրա- մայեաց յարքունուստ . — այս ինքն յարքունուստ լինել ։

Մեռաւ ամաց քսանից. — այս ինքն գոլով ամաց քսանից կամ եղեալ ամաց ։

Յայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ. — այս ինքն ապաստան գոլով կամ եղեալ ։

Ինքն երթայր բոկ և ամենայն ժողովուրդն ընդ նմա՝ ձորձ գլխով. — այս ինքն ունելով ձորձ գլխով, գոլով ձորձ գլխովն ։

Անկանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին. — այս ինքն ունելով սուսեր ։

Արմունկն 'ի ծունգ և ձեռն 'ի ծնօտի՝ նստաւ այնպէս. — այս ինքն 'ի ծունգ, 'ի ծնօտի ունելով կամ գոլով ։

Կոյս վճարեցաւ յաշխարհէ. — այս ինքն կոյս գոլով, կոյս մնալով ։

Այր մի Մատթէոս անուն. Այլն մի անուն Գաւմարխս. — այս ինքն անուն ունելով, անունն գոլով ։

522. Ասանկ կ'ըսուի Բերան 'ի բերան խօսել, թագ 'ի գլուխ զարդարել, հիմն 'ի վեր տապալել, գալ 'ի բերան ածել զոք, ձեռս 'ի գլուխ եղանել, բերան 'ի վայր անկանել, կապել զնոսա ձեռս յետս կամ ընդ միմեանս ձեռ ընդ ձեռ ։

523. Գոյական անունը շատ տեղ ածականին տակը զօրութեամբ կը հասկցուի, մանաւանդ դիմորոշ յօդ դնելով ածականին (444) ։

Ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայ է. — այս ինքն ոչ բազմաժամանակեայ ծերութիւնն է ։

Անկիրթն զխրատ մերժէ. — այս ինքն անկիրթ մարդն ։

Բարկասիրտ գործէ առանց խորհրդոյ. — այս ինքն բարկասիրտ մարդ ։

Հանցես զպատուականն յանարգէն. — այս ինքն զպատուական իրն կամ մարդն յանարգ իրէն ։

Աստուած առաւել ատեայ զհպարտն քան զյանցաւորն. — այս ինքն զհպարտ մարդն։

Որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն. — այս ինքն երկրաւոր մասամբս կամ կերպիւս։

Մեծքն շփանան և փոքունքն նախանձին. — այս ինքն մեծ մարդիկ, փոքր մարդիկ։

Ոչ բազմաժամանակեայք են իմաստունք. — այս ինքն ոչ բազմաժամանակեայ մարդիկ։

Աստուծոյ յայտնի են անգործք մարդոյն. — այս ինքն անգործ իրք։

Որ հասանէ անքննականաց, փառաւորաց և հրաշակերտաց. — այս ինքն իրաց։

Որ առնէ զմեծամեծս և զանքննինս և զփառաւորս և զհրաշակերտս. — այս ինքն զիրս։

524. Գոյական ու ածական դերանունները շատ տեղ զանց կ'ըլլուին, ու բանէն կը հասկցուին.

Մի կարացէ ունել զդէմ. — այս ինքն զդէմ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա, տեղին նայելով։

Ամենայն բարիք որ յԱստուծոյ առ մեզ ժամանեն և լուսաւորեն զհոգիս. — այս ինքն զհոգիս մեր։

Պնդեա զմէջ, զօրացիր զօրութեամբ յոյժ. — այս ինքն զմէջ քո։

Յոտն եկաց Պաւղոս, շարժեաց զձեռն և ասէ. — այս ինքն զձեռն իւր։

Որ անարգէ զհայր։ Հայր սիրէ զորդի։ Կոչէ ըզբարեկամս և զդրացիս. — այս ինքն զհայր իւր, զորդի իւր, զդրացիս իւր։

Եթէ հրամայէ պատերազմել, ոչ իշխեն անցանել զբանիւ. — այս ինքն զբանիւ նորա։

Ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն. — այս ինքն զձեռս իւրեանց։

Դէպ եղև եղբարս եօթն մարբն հանդերձ կալեալս ածել · — այս ինքն մարբն նոցա ։
Ընդէր բարկանաս եղբօրն · — այս ինքն եղբօրն քում ։
Թող որդւոյն զբարերարութեանդ քո հանդէս · — այս ինքն որդւոյն քում ։
Զոր հանդերձեալն ես թողուլ որդւոյն · — այս ինքն որդւոյն քոյ ։
Զոր 'ի ձեռին ունէր · — այս ինքն 'ի ձեռին իւրում ։
Թողու լքանէ յօժարականութենէ · — այս ինքն յօժարականութենէ իւրմէ ։
Սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն · — այս ինքն աշակերտաց իւրոց ։
Առցեն զպսակն՝ զոր խոստացաւ սիրելեացն · — այս ինքն սիրելեաց իւրոց ։

525 · Նախդիրներն ալ շատ կերպով զանց կ'ըլլուին ։ Ինչպէս , թէ որ բառը զայով , սէով , յիով կամ հոյով սկսած ըլլայ նէ , երբեմն նորէն չդրուիր զ , 'ի · Առին զէնս իւրեանց · — այս ինքն զզէնս ։ Սեղանն եւ սրբել · — այս ինքն զսեղանն ։ Սուրբ սեպուհն զՀմայեակ · — այս ինքն զսուրբ սեպուհն ։ Երթիցես յարկս քո · յաւիտեանս · յաւիտենից · յարդէ 'ի ցորեան փոխել · — այս ինքն 'ի յարկս , 'ի յաւիտեանս , 'ի յաւիտենից , 'ի յարդէ ։ Համառօտ Ճանապարհն էին · հարաւոյ կողմանէ · — այս ինքն 'ի համառօտ Ճանապարհն , 'ի հարաւոյ կողմանէ ։

526 · Երբեմն ալ առջի բառը զ , » , ի ըլլայ նէ , անոր ետեւինին ալ նախդիրի տեղ կը բռնէ · Ծաղկեցո 'ի մեզ հատն · — այս ինքն զհատն ։ Մաքրագոյնք որպէս մարգարէսն · — այս ինքն զմարգարէսն ։ Յայնմ ժամանակի խնդիր եղանէր արքայն · — այս ինքն 'ի խնդիր եղանէր ։

527 · Երբեմն չ , ց գրերն ալ զայի տեղ կը բռնեն ատ երկու կերպովդ ալ ։

528. Չորրորդ՝ առջի բառը ետքինին խնդիր ըլլայ ու երկուքին ալ նոյն նախդիրն որ պէտք ըլլայ նէ, ետքինին հարկ չըլլար դնելու, առջինինը երկուքին ալ կ'օգտէ.

Զձեռամբ անկեալն իւրեանց՝ բռնութեամբ ժողովէն. — փոխանակ ըսելու զանկեալն ձեռամբ իւրեանց:

Ըսելով զկնի յոլովից առեալն. — փոխանակ ըսելու՝ զառեալն զկնի յոլովից:

Յարի եւ այս 'ի Բաբելոնէ դարձեալն. — փոխանակ ըսելու 'ի դարձեալն 'ի Բաբելոնէ:

Ի Քրիստոսէ պարգեւեալ փառսն վայելեսցուք. — փոխանակ ըսելու 'ի փառսն պարգեւեալ 'ի Քրիստոսէ:

Ի քուն լինել մարդկան՝ եկն Թշնամին. — փոխանակ ըսելու 'ի լինել 'ի քուն:

Ի Ճանապարհ անկանել նոցա. — փոխանակ ըսելու յանկանել նոցա 'ի Ճանապարհ:

Յանչափն ձգտիլ՝ խնդին ոչ հասի. — փոխանակ ըսելու 'ի ձգտիլ յանչափն:

529. Նախդիրի պէս հոլովառու բառերն ալ (152) շատ անգամ ինքիրեն կը հասկցուին առանց կրկնելու, նախդիր ունին նէ՝ ան միայն կրկնելով.

Յառաջ քան զիս եւ զքեզ. — այս ինքն եւ քան զքեզ:

Ընկէնք եւ երկիր վասն մարդոյն, եւ մարդն՝ պատուիրանին. — այս ինքն վասն պատուիրանին:

Փառաց վասն, ընչից աղագաւ, կամաց կատարելոյ, երկայնակեաց լինելոյ. — այս ինքն կատարելոյ վասն կամ աղագաւ, լինելոյ աղագաւ:

Վայ 'ի վայի վերայ, եւ գոյժ 'ի գուժի. — այս ինքն 'ի գուժի վերայ:

Վէրս 'ի վերայ վիրաց եւ ցաւս 'ի ցաւոց յաւելուն. — այս ինքն 'ի վերայ ցաւոց:

Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորոց խաչանց այդեօք . 'ի հարթուցելոյն , 'ի փախուցելոյն , 'ի գազանակուր եղելոյն. — այս ինքն 'ի վերայ որոց խաչանց . 'ի վերայ հարթուցելոյն , ևն ։

Գթայր 'ի վերայ նորա իբրև հայր յորդւոյ . — այս ինքն 'ի վերայ որդւոյ ։

Յերկինս 'ի վերայ քերովբէից , և յերկրի՝ անասուն կենդանեաց . — այս ինքն 'ի վերայ անասուն կենդանեաց ։

Երթ զհետ արդարութեան , զաստուածպաշտութեան , զհաւատոց , զսիրոյ . — այս ինքն զհետ աստուածպաշտութեան , զհետ հաւատոց , ևն ։

530 . Շատ տեղ ալ նախդիրներուն կամ հոլովաւոր բառերուն խնդիրը յայտնի չըլլուիր ու կը հասկըցուի. ինչպէս շատ անգամ երբոր յատկացեալը չըլլուիր կամ չերեւնուիր ու իր նախդիրը յատկացուցիչին վրայ կը դրուի (480) .

Կերպարանիմ զԴաւթին . Օ քրովբէից խորհրդաբար կերպարանիմք . — այս ինքն զիս էած զկերպարանս Դաւթի , քրովբէից ։

Տգէտ են Աստուծոյ արդարութեանն , և զիւրեանցն խնդրեն կացուցանել . — այս ինքն զիւրեանց արդարութիւնն ։

Հայեաց 'ի տառապանս մեր և 'ի նեղութիւնս , և 'ի թագաւորացն մերոց և իշխանացն մերոց և քահանայից և մարգարէիցն մերոց . — այս ինքն և 'ի նեղութիւնս թագաւորացն մերոց ևն ։

Ընծաեցուք 'ի Քրիստոսի պատուիրանէն՝ որ 'ի բերանս նորա խօսէր . զի եթէ 'ի Պաւղոսին խօսէր , ապա և 'ի Պետրոսին , ապա և յայլոց Առաքելոցն . — այս ինքն 'ի բերան Պաւղոսի , 'ի բերան Պետրոսի , 'ի բերան այլոց Առաքելոցն ։

Օտարանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և

ընդ ամենայն որդւոցն Իսրայէլի . — այս ինքն և ընդ գեղեցկութիւն ամենայն որդւոցն ։

Աչք քո իբրև զառն ։ Թևք նորա իբրև արծուոյ . — այս ինքն իբրև զակն առն , իբրև թևք արծուոյ ։

Դարձոյց զսիրտ ամենայն Յուդայ իբրև զառն միոյ . — այս ինքն իբրև զսիրտ առն միոյ ։

Ոչ էին իբրև զԻսրայէլի գործք նորա . — այս ինքն իբրև զգործս Իսրայէլի ։

Մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց . — այս ինքն քան զտեսաւորութիւն մարմնոց ։

Հայեաց 'ի վերայ աբրահամեան զաւակիս , 'ի որդոյ Սահակայ . — այս ինքն 'ի զաւակի որդոյ Սահակայ , որ ընկել է 'ի վերայ զաւակի (529) ։

Զոմանս վասն պիղծս դատելոյ , և զայլս՝ վասն բարիս . — այս ինքն վասն բարիս դատելոյ ։

Հանդերձ որք բոլորովին են անշունչք . — այս ինքն համդերձ այնոքիւք (440) ։

531 . Մակբայներէն ոչ , մի , շատ տեղ չեն կրկնուիր ետևի բային , ու կը հասկցուին .

Բանի զօրուք մեք ոչ կերաք և արբաք . — այս ինքն և ոչ արբաք ։

Ոչ թողեր և ցուցեր զնոսա . — այս ինքն և ոչ ցուցեր ։

Խստացուցին զպարանոցս իւրեանց առ 'ի չլսելոյ ինձ և ընդունելոյ զխրատ . — այս ինքն և չընդունելոյ ։

Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն , այսպէս 'ի ստութենէ ճշմարտութիւն . — այս ինքն այսպէս ոչ կամ չիք ։

Մի աղաչեր վասն դոցա խնդրուածովք և պաղատիր . — այս ինքն և մի պաղատիր ։

Մի ներէք նոցա և թողացուցանէք . — այս ինքն և մի թողացուցանէք ։

532 . Ուրիշ մակբայներն ալ երբեմն զանց կ'ըլլուին, կամ մէկ կողը կը ձգուի .

Որպէս դու, և ես . և որպէս զօրք քո՝ զօրք իմ . — այս ինքն այնպէս կամ նոյնպէս և ես, նոյնպէս զօրք իմ ։

Որչափ մեծ է իշխանութիւնն, դժուարին է մարտըն . — այս ինքն այնչափ դժուարին է ։

Եւ արար՝ մինչև ճեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց . — այս ինքն այնչափ արար ։

Որպէս խորհեալ եմ, այն կացցէ . — այս ինքն այնպէս կացցէ ։

Այսչափ կամ այն . Եթէ այսպէս և եթէ այն . Երբեմն այնպէս և երբեմն այս . — այս ինքն այնչափ, այնպէս, այսպէս ։

Որպէս այժմ, նոյն և յայնժամ . — այս ինքն նոյնպէս ։

Մեծին այլազգ ծառայանալ, և փոքուն այլ . — այս ինքն և փոքուն այլազգ ։

Հայեաց յայսկոյս և յայն . — այս ինքն և յայն կոյս կամ յայն կոյս ։

533 . Շաղկապներէն ալ ոմանք զանց կ'ըլլուին, ու յայտնի կ'իմացուին .

Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ . — այս ինքն կամ թէ ատելւոյն մեծաբանեալ էր ։

Այսուհետև չես ծառայ, այլ որդի . եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ . — այս ինքն ապա, ուրեմն և ժառանգ ։

Թէպէտ և զհետ եղև նոցա, չկարաց հասանել . — այս ինքն այլ, սակայն չկարաց ։

Թող տուք մնացից ընդ երկիր քո . — այս ինքն թող տուք զի մնացից ։

Վաղվղեցան փաղփաղակն զի խորհեցին՝ զինչ գործ գործեցին. — այս ինքն թէ զինչ գործ գործեցին ։

Եւ խաղաղութիւն մեծ 'ի մէջ զինուորացն, զի արդեօք Պետրոսն եղև. — այս ինքն թէ զի արդեօք եղև ։

Եւ ոչ անխտիր ինչ իրք են՝ անտի իսկ յայտ է. — այս ինքն և զի չափ և թէ ոչ անխտիր ինչ իրք են ։

Որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել. — այս ինքն որպէս զի ։

Այնպէս ծածկեցաւ 'ի մէնջ, որպէս ամենևին ոչ գիտացաք. — այս ինքն որպէս զի, որ ըսել է մինչ զի ոչ գիտացաք ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

534 . Աւելադրութիւն է բան մը աւելի դնել՝ զօրաւոր կամ բացայայտ և կամ զարդարուն ընելու համար խօսքը ։

535 . Ասանկ անորոշ դերբայն, ուղղական ու հայցական, կը դրուի իր բային քովը, հաստատութիւն ցուցնելու համար, որպէս թէ ըլլար ապաքէն, արդարև կամ թէպէտ և ։

Տալ ետու կնիք և տանն Ստեփանեայ . — այս ինքն ապաքէն ետու ։

Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած . — այս ինքն արդարև ունէր, թէպէտ և ունէր, այլ ևն ։

Սիրել սիրեն կամ զսիրելիս սիրեն, այլ ոչ սերտիւ կամ այլ ոչ սրտացաւութեամբ . — այս ինքն ապաքէն սիրեն, թէպէտ և սիրեն, այլ ։

Ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու . — այս ինքն թէպէտ և ամենեքին ։

536 . Անորոշ դերբային գործիականը ու անցեալ դերբայն իրենց բային քով կը դրուին հաստատութեան ու սաստկութեան համար, կամ բանին ետևէ ետև աճիլը ցուցնելու .

Զամենայն ինչ զոր խօսիցի, լինելով լինի ։

Յամենայն ծառոյ որ է 'ի դրախտիդ՝ ուտելով կերիցես ։

Աճելով աճէին և բազմանալով բազմանային ։

Երթալով երթայր և զօրանայր ։ Գնալով գայր և մեծանայր ։

Շինեալ շինէին (զաշտարակն)՝ ի պաշտօն դիւաց ։

Գողացեալ գողանայ ․ պահեալ պահէն ․ հանեալ եհան ։

Յափշտակեալ յափշտակին յառաջագոյն ․ Յերուսաղէմ երթեալ երթիցէ ։

537 ․ Ոք, ինչ, որ միջակ անունները առանց հարկի աւելորդ կը դրուին ․

Ոչ ոք այն ոք գոյր յորմէ խնդրային ։

Յորմէ ոչ ոք երբէք այլ ոք մասն կալաւ ։

Եւ որ ինչ այլ ինչ գեղեցիկ յօրինուածք պատմին ․ — այս ինքն այլ գեղեցիկ յօրինուածք որ պատմին ։

Որ ինչ անդ դիպեալ էին քաղաքացիքն ․ — այս ինքն քաղաքացիքն որ անդ դիպեալ էին ։

Եւ ոչ ինչ էր յաշխարհի՝ որ ինչ ընդդէմ դառնայր հրամանաց նորա ․ — այս ինքն ոչինչ որ ընդդէմ դառնայր ։

Եւ որ ինչ այլ ինչ պատիւ ունէր ․ — այս ինքն և այլ ինչ պատիւ որ ունէր ։

Ոչ ինչ ունիմ իրս ինչ ․ — այս ինքն ոչ ունիմ իրս ինչ ։

Իսկ այլոց իշխանացն թուի ինձ և ոչ մի ինչ մնացեալ ․ — այս ինքն և ոչ մի մնացեալ ։

Եւ ոչ մի ինչ յայսցանէ ամենևին ինչ ոչ յիշեաց ․ — այս ինքն ամենևին ոչ յիշեաց ։

Ամենայն ինչ այնպիսի պարծանք՝ չարութիւն են ․ — այս ինքն ամենայն այնպիսի պարծանք ։

Որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր ․ — այս ինքն զամենայն չարիսդ ։

Ոչ եթէ առ քեզ ինչ առաքեաց զիս տէր ։

Չեմ ինչ լսելոց ։

Ոչ առ բազում ժամանակս ինչ ․ Ոչ այժմ ինչ կոչեցի զքեզ ։

Եթէ ինչ զգօստ խորամանկել յօժարեսցուք ։

Երբեւ կամեցին ինձ թէ փոխեսցուք զնա ։ Յայտ ինձ այսպէս առնէր ։

Յանկարծակի ինձ եղաք ։ Մտաղիւր ինձ անսայիք ։

538 ․ Գոյական ու ածական դերանունները երբեմն կը կրկնուին ․

Ես իւրայ և գործոյ առնն խնամոյ ինչ ես ոչ կարեմ ։

Մեք անպակաս յամենայն ժամանակի ․․․ յիշեմք մեք զձեզ ։

Դու որ զամենայն ինչ չարիւդ խորամանգեցեր ․․․ դու ոչ ապրեսցիս ։

Ես թուի այս տխմարայ, թէ չիցէ այս համգոյն առաջնոյն ։

Նա որ ամենաբարին է բնութեամբ, այլ ումեք չարի պատճառ նա ոչ լինի ։

Զայնոսիկ որ այնպէս մատն եղեն օրինացն՝ ածին սատակեցին զնոսա ։

539 ․ Շատ տեղ ալ բանի մը հետ աւելի կը դրուին նոյն հոլով, եւս կամ առաջ ․

Կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ՚ի ծառոյ անտի և կերայ ։

Ծանեաւ Մանասէ եթէ տէր՝ նա է Աստուած ։

Զայն Մովսէս զոր ուրացանն՝ զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց ։

Ազգքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես՝ նոքա հմայից և գուշակութեանց անսան ։

Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ իսկ լիցին (129) ։

Այն խնամատարի ուրախ առնէ հայր իւր ։

Ես երկիւղածաց քոց քաւիչ լինիս դու նոցա ։

Եթէ ինչ յարարածոյ՝ որ գեղեցիկ է, այն ՚ի բարւոյ արարչէ կարծիցի ունից ։

Զճգնելն և զճշմարտելն՝ զայն առաջնոյն թողուք ։

Ափրածիր մանկունս ընտրանաւ՝ զայն յուսումն արուեստականացն տայլն ։

Տեղի բնակութեանն Աստուծոյ լինիցին, այնմ որ ասաց բնակեցայց 'ի նոսա ։

Ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, յայն որ 'ի հնոց ժամանակաց հետէ ունէին ։

Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ, հանցես ընդ նա աղբ ։

Իբրև լուան նախարարքն Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն ։

Իսկ սուրբ քահանայքն որ անդ դիպեցան յանմուրսըն, .. մատուցին և նոքա զպատարագս իւրեանց ։

Այս ոչ հրամանաւ արքունի է՝ այսչափ երկայնաբան լինել ընդ ձեզ պայքարաւ ։

Մեծ է քեզ այդ՝ կոչել զքեզ ծառայ իմ ։

Նա և այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է շնորհն ։

540 . Նմանկ ալ յարաբերականին ետևէն աւելի կը դըրուին, որ շատ անգամ դիմորոշ յօդի տեղ է անոր՝ որ չառնէր (461), կամ յարաբերեալին .

Որ դու միայն կարող ես . Որ ինքն իւր չար է . Որ էր և նա 'ի նոյն ազգէ ։

Պտուղ՝ որոյ սերմն իւր 'ի նմին . Որոյ յօժարէին միտք իւրեանց ։

Տէր զօրութեանց՝ որոյ կացի առաջի նորա . Որոյ որդի նորա հիւանդ կայր ։

Տեղիդ՝ յորում կաս դու 'ի դմա . Դու հաւատս ունիս՝ որով պարծիս դովաւ ։

Զարք որոց ոչ էր նոցա թիւ . Աստուածք՝ յոր յուսացեալ էիք 'ի նոսա, զորոց զճարպ զոհից նոցա ուտէիք ։

Որոյ բան հրամանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ ։

Որոյ կերակուր կամաց իւրոյ էր 'ի մանկութենէ անարատ մարմին սրբոյ ։

541 . Յարաբերական դերանունին ետեւէն շատ հեղ յարաբերեալն ալ կը կրկնուի, կամ ինչ որ է նէ իրօք, կամ ինչպէս որ կ՚երեւնայ նէ հոն գրողին մտքին, բացայայտիչի պէս .

Զոր ստացաւ Աբրահամ զայրն յԵփրոնէ քետացւոյ :
Իբրև զՌաքէլ և զԼիա, որ շինեցին երկոքեան ըզ- տունն Իսրայէլի :
Բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան :
Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բելայ, չու արարեալ գնայ :
Յորմէ յամենեցունց յայսցանէ ազատ են իմանալիքն :
Ի ձեռն տասն աղքատ և անգիր արանց, որք ոչ 'ի ձեռն ընչից կամ իմաստութեան կամ զօրութեան յնորոցն իմաստնոցն և հզօրացն յաղթեցին :
Այն արարի զտկարութիւն ձեր, որք այդպէս բաղձացեալք զմի թէ հաւու ոչ բարձէք :
Հոգւոյն սրբոյ՝ որով առաքեալքն սրբեցան անձա- հական բաժանման :
Յորմէ զարհուրին յայսմ իրէ ֆոքոսէ :
Որոյ անուանքն են այս՝ գործակցաց նորա :
Ես որ մատուցեալ էք 'ի լեռն կենդանի :
Զոր ոչ բաւեմ ասել զայնքան աղէտս տանջմանցն :
Որ Աստուծոյ միայն է, զծածուկս ճանաչել :

542 . Յարաբերական դերանունն ալ կերպ կերպ աւելորդ գլուխ ունի . անսովոր ըլլալուն՝ հոս զանց կ՚ընենք :

543 . Յատկացեալին, բացայայտեալին ու գոյականին նախդիրը (476, 481, 482) շատ անգամ կը կըրկնուի ետև դրուած յատկացուցիչին, յատկացեալին, բացայայտիչին, հատուած ածականին կամ գոյականին վրայ, մանաւանդ հեռու որ ըլլան ու գլխորոշ յօդ ու-

նենան , կամ գոյականը երկու կոյլ կապած ածականի մէջ որ գլուխ . ինչպէս ,

544 . Յատկացուցչին վրայ ։

Մի՛ խոտորիցես զիրաւունս զեկին և զորբոյ և զայրւոյ ։

Զմիտս կամեցաւ հաճել զամենեսին ։

Մի՛ մերձեսցի ՚ի պղծութիւնս մարդոյ կամ յանասնոց պղծոց ։

Խաղաղութիւն արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդմիկ ։

Յոգի վախճանեալ մի մնացէ ՚ի հօր և ՚ի մօր , յեղբօր և ՚ի քեռ ։

545 . Յատկացեալին վրայ .

Կախեաց զՆիկանովրայ զգլուխն ։ Զքո զաւարեկամն ։

Զիմ զաչս երաց ։ Սատակել զձեր զայր և զկին ։

Կապեցէք զգորա զոտս և զձեռս ։

Զքո բարերարութեանդ զչափ առեալ ։ Զամենայն երկրի զիշխանութիւնս ։

Ոչ զուրուք բռնացայ ունել զանդաստանս և կամ զայգիս ։

Յիւր ՚ի փառս և ՚ի վայելչութիւն ։ Այրեցան ՚ի հրոյն ՚ի հնոցէ ։

Ի փորձութեան ՚ի հանդիսի գտաւ հաւատարիմ ։

Ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն ։

Ըստ իւրաքանչիւր ըստ վրանս ձեր ։ Զորոյ զվաստակն ՚ի բժշկութիւն մատուցանէն ։

Զորոյ մեք զխնամք զհայրն և զմայր ։ Յորոյ այսօր ՚ի դիրկսն գգուեցար ։

Զորոյ իւրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետսն գտանել ։

Յորոյ զուն ՚ի խնդիր երթեալ էիր ։ Ընդ որոյ թէ ընդ դեղն զուարճացեալք , եւն ։

546 . Բացայայտիչն վրայ .

Կոչեաց զԵսաւ զորդի իւր երէց ։ Կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ ։

Յերկրին 'ի Գեսեմ։ Ի լեառն 'ի Նաբաւ ։ Մօտ 'ի լեառնն 'ի Նպատ ։

Ի Մովսիսէ յառնէն Աստուծոյ ։ Ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքունէ ։

Յերկրէ հեռաստանէ եկին առ իս՝ 'ի Բաբելոնէ ։

Ը՞նց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ ։

Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս ։

547 . Ծածկածին վրայ .

Օ հայրութիւն զամենայն ։ Օ արմն զամենաբիշտս ։

Օ տունս զայս զկարծր։ Օ ժողովուրդ զայդ զչար։

Օ զօրն զայն զմեծ ։ Կոչեա զՄխմնն զամն ։

Պսումբէին յերկիրն 'ի հեռաւոր ։ Ընդ քաղաքն ընդ ամենայն ։

Ըսէ ցարմն ցյարուցեալս 'ի վերայ նորա ։

Ի մնկոյ իմեքէ 'ի մահարերէ ։ Ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց ։

Յայրի անդ 'ի կրկնում։ Յաւուր միում յերկելոջ ։

Պատի զոչխարս իմ զկորուսեալ ։ Օ ճանապարհս ձեր չարս և զգնացս ձեր զանբարիս ։ Ո խնեաց զցուռն տանն տեառն զկարծր ։

Յերկիր Թշնամւոյ 'ի հեռաւոր կամ 'ի մօտաւոր ։

Ի ծառայից տեառն իմոյ 'ի յետնոց ։ Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ ։

Ի ցուպն եղեգնեայ 'ի ջախջախ ։ Յազգ օտար և 'ի չար ։

Յազգ անյոյս և 'ի կախեալ ։ Օ ազգ մի զանգէտ և զարդար ։

Զտասանորդս երկրիս մերոյ Գետայքն շրջեա-ցին եւ տացեն զամենայն բովանդակ։ Զհովիւն հօտից զմեծն։

Զքորսն քո զերիցունսն։ Զջուր գետոյն զհզօրն եւ զյորդ։

Եւ զմուրհակ ստացուածոյն զկնքեալն ըստ հրա-մանի եւ ըստ իրաւանց եւ զարձակն։

Զամենայն սպաս տանն տեառն զմեծ եւ զփոքր։

Յամենայն քաղաքսն Յուդայ յամուրս։ Ընդ ա-մենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս։

Զեօթնամասուն արամբքն զծերովք։ Զահագին տեսիլն զայն եւ զերկիւղալից։

Զանհնարին հարուածսն եւ զմեծամեծս յոյժ։

Իբրեւ զխոտ ինչ զանծամ եւ զանկոտոր։

Զեօթն երինջսն զառաջինս զգեղեցիկսն եւ զըն-տիրս։

Ընդ ամենայն անապատն ընդ մեծ եւ ընդ ահագին։

548. Գոյականին վրայ.

Զամենայն զերկիրս զայս. զամենայն զինչս իւր. զամենայն զկահ եւ զկարասի նորա։

Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին զմեղս։ Եւ նա զանձինախառն զկրակն։

Զարքունի զհրամանսն։ Զերկոսին զորդիսն իմ։ Զայդ ես զքո բան։

Իբրեւ զհաւատարապատիւ զօք։ Զանչափ զան-քնին զերկիրս կամ զերկինս ամենայն։

Զահաւոր եւ զսարսափելի զփրկական զխոր-հուրդն։

Յամենայն 'ի կեանս քո. յամենայն 'ի թագաւո-րութեան նորա։

Յամենայն իսկ 'ի թուղթսն. յամենայն 'ի բա-զում մեծութեան իւրում։

Յերկոսեան 'ի սրահս տանն։ Յանցաւոր 'ի կեանս։ Յամենայն յԻսրայէլէ։

Յամենայն 'ի զուր բանէ ։ Հրաժարեալք յաշխարհական 'ի զբաղմանց ։

Յայնչափ 'ի բազում 'ի նախնեաց փիլիսոփայից աստուածոց ։

Յանապատէ եկեալ յերկրէ ։ Ի բարձրաւանդակունն կուռ կալով 'ի տեղւոջ ։

Զկարի խոնարհագունից բուռն հարկանէ զօրինակաց ։

549 ․ Թէ որ ետեւ կամ առաջ դրուած ածականները շատ ալ ըլլան նէ, անոնց վրայ ալ կը կրկնուի երբեմն նախդիրը, մանաւանդ հեռու ինկածներուն, թէ և ետեւ դրուած գոյականին վրայ չկրկնուի ալ, ինչպէս օրինակներուդ մէկ քանիին վրան կը տեսնես ։

550 ․ Պարզ նախդիրները կամ հոլովառու բառերուն՝ աւելորդ կը կրկնուի երբեմն բառին կողմներուն վրայ կամ խնդրոյն կամ անոր ածականին, յատկացուցիչին ․

Զո՞ այլ զոք առաւել քան զՀրեայսդ ․ — այս ինքն զո՞ այլ ոք է—ն զո՞ ոք այլ ։

Ի քսան և 'ի հինգամենից և 'ի վեր ․ — այս ինքն 'ի քսան և հինգամենից ։

Յինն և 'ի տասներորդ ամի ․ Յեօթն և 'ի տասներորդի ամի․— այս ինքն յիննևտասներորդ, յեօթնևտասներորդի ։

Զքսան և զինն ազգաց զօգիս ․ — այս ինքն ըզքսանևինն ազգաց ։

Զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք ․— այս ինքն զփառս առ 'ի միոյն Աստուծոյ, որ է առ 'ի միոյն Աստուծոյ (389) ։

Զուարակն զվասն մեղաց՝ արտասցես ․— այս ինքն զզուարակն որ է վասն մեղաց ։

Գազանաբար յարձակի 'ի վերայ ոչ միայն 'ի մերն յԱրտաւազդայ, այլ և յայլոց եւս ազգաց ․ —

այս ինքն ոչ միայն 'ի վերայ մերն Քրիստոսազգայ, այլ և այլոց եւն ։

Օ խաչեալն 'ի մէջ 'ի յանօրինաց . — այս ինքն 'ի մէջ անօրինաց ։

Օ հետ երթային բազումք զՊաւղոսի և զԲառնաբայ ։

Ոչ չոգար զհետ երիտասարդաց զաղքատաց կամ զմեծամեծաց ։

Օ խմոց բարուց զկնի հայեցեալ . զօտարի զհետ ոչ երթիցեն . զբարեաց զհետ երթայք ։

Ընդ խթանի ընդդէմ աքացել ։ Ընդ այսր ընդդէմ թերևս ոք յամառէ ։

Ունիցի կալ ընդդէմ տասն հազարաւ ընդ այնմ որ գայցէ 'ի վերայ նորա քսան հազարաւ ։

Տես և 656 ։

551 . Երբեմն ալ նոյն նշանակութիւն ունեցող ու նոյն հոլով առնող նախդիրները կամ հոլովառու բառերը մէկտեղ կը դրուին նոյն անուան վրայ, կամ մէկը անոր, մէկը ածականին, եւն ։

Բանակեցան մերձ առ յԵրուսաղէմ . — փոխանակ ըսելու մերձ առ Երուսաղէմ կամ մերձ յԵրուսաղէմ ։

Ետի յերկինս երկնից ընդ յարևելս . — փոխանակ՝ ընդ արևելս կամ յարևելս ։

Ի չար ընդ այն հայելով . — փոխանակ՝ 'ի չարն յայն կամ ընդ չարն այն ։

Առ հզօրս նորա ամենս հատուցանելով յազգայինս . — փոխանակ՝ առ հզօրս նորա ազգայինս կամ 'ի հզօրս նորա ազգայինս ։

Առ փոքր մի նիւղակակցացն յանզգաստութենէ . — փոխանակ՝ առ փոքր մի անզգաստութենէ կամ 'ի փոքր մի անզգաստութենէ ։

Ընդ գերաշխարհիկսդ վարուք և քաղաքավարու-

թեամբ խօսեցուք առ կրօնաւորսդ . — ուր անձա-
կանին վրայ ընդ է , գոյականին — .

Հաւուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ . — փոխանակ բարւոյ կամ միայն չար ընդ բարւոյ ըսել հերիք էր .

Յիրաւի պատժեցաւ վասն ընդ անաստուածոյն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ . — վասն ունելոյ կամ ընդ ունելոյ միայն հերիք էր .

Զգալի այն ասի , որ ընդ զգայարանացս 'ի ներքոյ անկանի . — միայն ընդ զգայարանացս անկանի կամ զգայարանացս 'ի ներքոյ ըսել հերիք էր .

Իւր զօրքին հաստատուն պահելոյն պատճառաւ . — առ պահելոյն կամ պահելոյն պատճառաւ հերիք էր .

Զարմացաւ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշն .

Զկնի յետ բազում ժամանակաց .

Վասն կամ Սակս այնր աղագաւ . — միայն վասն այնր , սակս այնր կամ միայն այնր աղագաւ ըսել հերիք էր .

552 . Նախդիրի և հոլովառու բառի ուրիշ վարպետ աւելադրութիւններ ալ կան անուան կամ գերբայից հետ .

553 . Մակբայներն ալ շատ անգամ աւելորդ կը դրուին , նոյնը կամ նմանը .

Մի մնասցէ անդ և մի մի քար : Նա որ ընդդէմ մի դարձցի մի խելք սատուխք արքունի : Մի դու , արքայ , և մի զայդ այլ առ մեզ ասեր :

Յետոյ ապա հեղձոյց : Յորժամ մինչ դեռ նա կամիցի : Նա յայտ եղև աւաղիկ :

Դարձեալ միւսանգամ գրոյին հրաման անդրէն եղծանես :

Ի գերութեան մերում՝ ուր ցրուեցեր զմեզ այսր :

Ուր էին անդ ծառք ։ Ի տեղւոջ՝ ուստի գերեցի զձեզ այտի ։

Յամենայն տեղւոջ՝ ուր և երթայցես անդր ։

Իբրև զկաւդ 'ի ձեռս բրտիդ , այդպէս էք 'ի ձեռս իմ ։

Օրն տեառն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասանէ ։

Ըստ բազմութեան խուրեանց նոյնպէս և մեղան ինձ ։

554 . Ոչ մասնիկը շատ անգամ կը կրկնուի ։ Մէկը բայէն առաջ մէկը ետքը՝ սովորական է ու շատ տեղ պէտք . իսկ երկուքն ալ բայէն առաջ՝ ան ալ շատ տեղ կ'ըլլայ .

Ոչ էր նոցա ոչ եղև ոչ մուտ և ոչ գին և ոչ վաճառ ։

Ոչ ումեք պատմեցին և ոչինչ յորոց տեսին ։

Ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան մի ։

Չնախանձի և ոչ ընդ ումեք երբեք ։

Եւ ոչ մի 'ի նոցանէն ոչ եղծանէին ։ Եւ ոչ 'ի միում ոչ վայելեցեր ։

Ոչ ումեք ոչ երևէին , բայց միայն Հրէիցն ։ Եւ ոչ զմի ոք ոչ գիտեմ ։

Այնպիսին հպարտացեալ է և ոչինչ ոչ գիտէ ։

Ոչինչ ոչ կարացէ քեզ մեղանչել ։

Թուի ինձ թէ և ոչ նոցա չգոյր ։ Որում և ոչ հրեշտակք չէին բաւական ։

Ոչ պոռնիկք , ոչ կռապաշտք . . . և ոչ յափշտակողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն ։

555 . Միանգամ , գամ մի մասնիկները՝ որ , որ ինչ բառերէն ետև աւելորդ կը դրուին՝ առատութիւն կամ ընդարձակութիւն մը նշանակելու .

Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի ։

Զորս միանգամ գտանիցէք ։ Որ ինչ միանգամ օրէնքն ասեն ։

Որ գամ մի լինում իշխանութեան է ։ Որ ինչ գամ մի անցք անցին ընդ մեզ ։

556 . Շաղկապներէն եւ առանց հարկի կը դրուի շատ տեղ՝ բան բանի ետեւէ կից կամ շատ հակադրելու համար .

Ի միջոյն և 'ի խոնարհ . 'ի միջոյն և 'ի վեր . 'ի քսանամենից և 'ի վեր . յերկեմենից և 'ի խոնարհ . 'ի քէն և այսր . 'ի քէն և անդր :

Եղիցի քեզ որպէս և կամիս : Զոր ինչ ուրուք և առեալ իցէ :

Որով իւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է :

Ի յընթանալս խնամ և կախիւ : Ընդ Ջանայէն և անծանօթացաք :

Ընդ հրամանին և առնէին : Թռուցեալ և մերձեցաւ յիս :

557 . Ուրիշ շաղկապներէն ալ մէկ քանին, ինչպէս Թէ, եթէ, զի, [illegible], [illegible], զանազան կերպով աւելորդ կը դրուին, որ վերցնես ալ նէ՝ բանը ինչ է նէ ան կը նշանակէ .

Յորժամ եթէ տանիցի զքեզ : Անձն որ եթէ վրիպեսցի և մեղիցէ :

Ոչ թէ սրով խրեանց ժառանգեցին զերկիր, և ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա :

Չէ ինչ 'ի ծածուկ որ թէ ոչ յայտնեսցի : Վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի :

Որ 'ի հանգստեան են՝ դուն ուրեք թէ յիշեն զԱստուած :

Աղաչէր թէ զմեկնեալն 'ի նոցանէ մի առնուլ ընդ ինքեան :

Բայց ես ասեմ ձեզ թէ մի կալ հակառակ չարին :

Ասացէք . Ոչ այդպէս, այլ զի կացուսցես 'ի վերայ մեր թագաւոր :

Յանդիմանեաց զԱսա, թէ զի ոչ յԱստուած՝ այլ 'ի մարդ յուսացար :

Խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ ունիմք :

Ոչ միայն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ ։
Թէ չէ ակնառու Աստուած, որպէս զի և չէ իսկ ։
Արձակեաց ... բաղում պատուիրանս, զի զՅու-
դայ ինքնին 'ի գլխովն զօրաւն արկանել և ըղ-
դունդն ամենայն յայսկոյս յայնկոյս ցրել․ առ որ
կացուցանել զԱղկիմոս քահանայապետ ։
Հրաման տուաք զի ... յիւրաքանչիւր տեղը դար-
ձուցանել ։
Մինչ էր ողորմ տեսիլ տեսանել, զի առ հասարակ
ամենայն մարդկանն՝ զաղօթս թափելով յեր-
կինս մատուցանել ։
Մինչ զի ոչ լինել․ մինչ զի ոչ ժամանել ։
Որպէս զի 'ի լռութեան նստեալ լալ ։
Թէ ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք․ և եթէ
հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի ։
Զոր թէ կամէր, թէ չկամէր, սակայն կրեաց ։
Գիտացի ես՝ զի սակայն և այս յօժարութիւն
ազգոյ է ։
Չիք հնար, թէ կամիք և թէ ոչ կամիք, բայց
թէ մտանեմ ։

558․ Գրոց մէջ՝ մակբայի ու շաղկապի ուրիշ վար-
պետ ուղղութիւններ ալ կայ անորոշ ու անցեալ
դերբայից հետ․ հիմկու հիմայ այսչափս բաւական
ըլլայ ։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

559 . Պակասութիւն է՝ բան մը օրէնքէ դուրս գրո-ղին մտքին կամ ուրիշ կանոնի մը յարմար դնել։

560 . Ասանկ, ձայնով եզակի՝ բայց նշանակութիւ-նով շատուոր ցուցնող անունները յոգնակի բայ կ'առնեն շատ անգամ, որ կերպ կերպ կ'ըլլայ, ինչպէս առջևի օրինակներէդ կը տեսնես ․

Տիրեցին ազգն Ասսուրոց ։ Յարեաւ այլ ազգ որ ոչ ճանաչէին զսէր ։

Հարկանէին զունդն մակաբեան ։ Ով են ժողո-վուրդս այս ։

Ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ և զարմա-նային ։

Բանակն Աղխանու էին 'ի ներքոյ նորա ։

Ամենայն մարդ աչօք բացօք տեսանէին ։

Ժողովեցան առ նոսա այր ամենայն որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի ։

Այր զօրաւոր եղանէին տիրել աշխարհիս ․ — որ կը հասկցուի այր խուռնամխիւր , ամէն մէկը , ամէն մարդ ։

Ահա իմաստութիւն և հանճար և աստուած-պաշտութիւն ․ այս են գանձք արդարութեան ․ — ուր այս եզակի է , բայց առջի բառերը կը ցուցնեն (129) ։

Բեղ վեցին այդ ․ Այդ և 'ի մարդիկ երկին ․ — այս ինքն այդ նախասացեալ բաները ։

Բերան անզգամաց պատմեն զչարիս . — շատ ան-
զգամաց բերանը հարկաւ շատ է ։

Խորհուրդ մահկանացուաց զանգիտօղք են . — շա-
տի խորհուրդը մէկ մը չէ ։

Ի բերանոյ նոցա ելանեն հրամանս մահու և կենաց. — երկու տեսակ հրաման ու շատի բերնէն ։

Ջուր աղի և անոյշ զամենայն ջրաւորացն ըմուն . — երկու տեսակ ջուրը երկու է ։

561 . Երբոր եզակի անունի մը հետ՝ հոլովով մը կամ հոլովառու բառով կապուած անուն գտուի նէ , բայը սովորաբար եզակի դրուելուն՝ յոգնակի ալ կը դրուի .

Մակաբէ զօրօքն եկն ։ Մովսէսն ինքնին մօրօքն հանդերձ հասանէր ։

Երևեցաւ նոցա Եղիա Մովսիւ հանդերձ , և խօսէին ընդ Յիսուսի ։

Յուդա Մակաբէ այնպէս գնդաւն , որ ընդ նմա էին , անցուցանէին զժամանակն ։

Ուր էին հասեալ բանակեալ Անտիոքոս ամենայն զօրօք իւրովք ։

Սատանայէլն՝ ի վերին իշխանացն բանակաւն իւ-
րով՝ ի վայր անկեալ՝ մեզ պատերազմողք եղեն և սատանայ անուանեցան ։

562 . Եական բային ուղղական խնդիրը յոգնակի որ ըլլայ նէ , բայն ալ յոգնակի կը դրուի շատ անգամ , թէ և անուն բային եզակի է .

Բարկութիւն հօր որդի անմիտ , և ցաւք են ծնա-
նելեաց նորա . — այս ինքն անմիտ որդին ցաւ է ծնողացը ։

Աչք՝ իմաստութիւն մարդոյ են . — այս ինքն իմաստութիւնն է աչք ։

Մտաց բարբաջանք են աղանդն ։ Երկիրս երկինք եղեն ։

Փառք են առն խոտորել՝ ի հայհոյութեանց ։

Ոչ վայրապար ինչ իսկ էին զփարէս յիշել ։

563 . Այլ և այլ խնդիր առնող բայերն ու անուանները՝ մէկ խօսքի մէջ մէկ խնդիրը ասանկ, մէկալը անանկ, ինչուք գոյականը ասանկ՝ ածականը անանկ կ'առնեն նոյն մտքով .

Նախ չարչարանացն Քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ զփառացն ։

Ոչ որչափ երկրաւորացս՝ ունիմք փոյթ յանձին զառաքինութենէն ։

Միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ՚ի տէրութիւն Արտաշրի քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին ։

Զանարժանիցն և զշաղախեալն հեղգութեամբ կենացս զեկուցանէ ։

Նորին ինքեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ զարկուցեալ հրեայքն (352 , 353) ։

Մտաց աչաց իմաստնոց , և ոչ թէ զգալեաւ տեսանելին ։

Են արդարք՝ որոց ժամանեն առ նոսա գործք ամպարշտաց (540) ։

Զորմէ և մեռեալ ասեն զնա ընդ Շամիրամայ ։

Որում և Այն անուանէին զնա ։

Հաւատոյ պատմիչք լինին առաջին սքանչելեացն և արդարութեան նորա և զանխրաւ յանդգնութիւնս հրէիցն (384) ։

Աշխատութեան կարօտ են և բազում ժամանակք (387) ։

Թէ և յայտնի անհանճարաբար շաղակրատանաց անպարտ ես , սակայն ոչ և այլովք ։

Ի միումուրոյն յայնցանէ (394 , 395) ։

564 . Բացայայտիչը անհամաձայն կը դրուի ուղղական , հայցական , զայ նախդիրով բացառական , յատկացուցիչի պէս սեռական , կամ ուրիշ հոլով որ բանին

յարմարի , Թէ ըլլան Թէ չըլլան հետը մեկնական բա-
ռերը այս ինքն , այս է , ասեմ , իմա . Ինչպէս ,

565 . Ուղղական .

Վաղվաղ լինէր առ Նոսա բազում զօրաց ասխա-
ցւոց , ազգ հզօր և պատերազմող . — կ'իմացուի
որ է ազգ հզօր ։

Առեալ ածէին զհարսն , դուստր միոյ ուրումն 'ի
մեծամեծաց . — կ'իմացուի որ էր դուստր միոյ
ուրումն ։

Ի չորից տարերցս յայտնապէս ոչ զմինն 'ի միւսոյն
ստեղծ արարիչն , այս ինքն երկիր և ջուր , հուր
և օդ ։

566 . Հայցական .

Երկու մասամբք ոկար և զօրաւոր , զմարմին և
զհոգին . — զօրութեամբ կը հասկցուի , զմար-
մին ասեմ կամ իմա՝ և զհոգին ։

Զերից ժամանակաց ունի զնախագիտութիւն ,
զանցեալն՝ զներկայս և զապառնին ։

Ամենայն տնօրէնութեանցն Քրիստոսի , զմահն
ասեմ և զթաղումն և զյարութիւնն ։

Երբև զքարինս էր ոսկի և արծաթ յերկրի մե-
րում , զմաքրութիւնն իմա և զորբութիւնն ։

567 . Զով նախդիրով բացառական .

Զբարւոյն կոչմն յԱրմնդէ գնեն , զարջառոյ և
զոչխարէ և զայլոց պիտանացուաց . — կ'իմացուի
զարջառոց ասեմ և զոչխարէ եւն ։

Ոխաբան լինէր ամբաստանութիւն երկոցունց
կողմանցն , զառաքինեաց և զչեառ կացելոց . —
կ'իմացուի զառաքինեացն ասեմ և զչեառ կա-
ցելոց ։

Զայնպիսի օձ 'ի փոքր ունիմք՝ որ ուտէ 'ի ներ-
քոյ , զցասմանէն ասեմ ։

Լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն , ըզ-
Հայոց լերանցն ասեմ ։

Ընդդիմաբանեցան այլքն 'ի պատմագրաց, զՍփեւռոս ոսեմ, զՍաղմանլիպէն և զՍեբուզենայ. — ուր մէկը հայցական, մէկալ երկուքը զայով բացա_ռական :

568. Սեռական, յատկացուցիչի պէս.

Ի ժողովրդենէ քումմէ Իսրայելի. — յԻսրայէլէ ըսելուն տեղը :

Օցետուն Եփրատայ և զԱկլաթա : Ի լեռնէ Սինի :

Ըմբոստան լինէին զզօրավարէն Մուշեղի. — ըզ_Մուշեղէ ըսելու տեղը :

Ի Համանայ որ հաստատեալ կացեալս է 'ի վերայ իրացս այսոցիկ, և երկրորդի հօր մերոյ. — փո_խանակ ըսելու և յերկրորդէ հօրէ մերմէ, որ ըսել կ'ըլլայ՝ որ կացեալս է 'ի վերայ իրացս, որ և երկրորդ հայր մեր է :

569. Սերիչ՝ բանին յարմար հոլով.

Այց երկուց չորհցայ առ միմեանս եկեալ՝ կա_րեն ընդ կամեն. — վասն զի անցեալ դերբայն սեռական ալ կ'առնէ անուն բայի՝ ուղղական ալ :

Արձակեաց զաչս իւր զհետ հոմմեայ իւրոց. յա_սորեցանեայն՝ յիշխանս և 'ի զօրագլուխս. — արձակեմ կ'առնէ խնդիր չէ ալ, 'ի ալ :

Ոչ ինչ արարէք ընդ երկուս թագաւորսն ա_մօրհացւոց՝ ընդ Սեհոնի և ընդ Ովգայ. — ընդ նախդիրն ու ընդ վերջահոլով տրականը նոյն են :

Յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ և ընդ Պաւղոսի :

Գլխոյն ամենայն բարութեանց՝ զհաւատոյն բուռն հարկանել. — վասն զի բառն հարկանել տրական ալ կ'առնէ, զայով բացառական ալ :

Կոչի եւս յաւէտ ընտանի կողմանքն, այս ինքն հայր, վարդապետ, փեսայ, և այլ բազում. — վասն զի կոչեմ գործիական ալ կ'առնէ, խնդիր՝ ուղղական ալ

Կերակրել 'ի բարութեանց երկրին այնմիկ՝ կաթամբ և մեղու, այս ինքն պտղաբերութիւնն առատածայլին. — Հերոդէսի բացառական ալ՝ գործիական ալ՝ հայցական ալ կ'առնէ խնդիր.

Զորս և տեսողս առնէ մեծի լուսոյն, այս ինքն մարմնոյ աչօք զՔրիստոս. — վասն զի տեսող սեռական ալ կ'առնէ խնդիր՝ հայցական ալ (384).

570. Ածական հայնով շատուոր նշանակող անուններ, ինչպէս բայ (560), անանկ ալ յոգնակի ածական կ'առնեն կամ գոյական.

Զօրն նորա անցեալք 'ի հանդիսի. Մեծամեծք ժողով մարդկան.

Երկոտասան այր տգէտք և տառապեալք, որք 'ի նա էին յարեալ.

Սատակեսցի ամենայն մարդ դիմակայք Թագաւորի.

Յարս զօրուն եկելոց. Ժողովրդեանն մնացելոց, գումարելոց.

Ամենայն ժողովրդեանն ելելոց. Կրկին առակուն այլովք.

Ամենայն ումեք մատուցելոց առ նա.

Եւ ընդ իւր եօթն հարիւր այր սուսերամերկս.

Զսպասն արծաթեղէնս. Զամենայն սպաս ցանկալիս նոցա.

Հօտք և անդեայք բազում յոյժ. Բոլորումն Հայոց.

Ի բոլորումն վայելչականս.

571. Եւանանկ ալ յոգնակի դերանուն կ'առնեն շատ անգամ.

Եւ առ ժողովուրդն զհայսն իւրեանց մինչչև խմորեալ էր, և զզանգուածս իւրեանց ծրարեալ 'ի կտաւս իւրեանց 'ի վերայ ուսոց իւրեանց.

Արձակեաց զժողովուրդն 'ի խորանս իւրեանց.

Զնա օծ տունս Յուդայ՝ իւրեանց 'ի թագաւոր.
Փախեաւ զօրն 'ի բնակութիւնս իւրեանց.
Որոշեաց զգունդն երթալ 'ի տեղի իւրեանց.
Ժողովուրդ քո այդ որ բնակեալ է 'ի լեռնակող-մանց, եթէ ոչ էր ապստամբեալ դոցա յինէն, ոչ էր իմառեալ զնիզակ իմ 'ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս.
Եթէ ոք 'ի կարի մերձաւորաց իցէ, զնոյն առցս և ընդ նոսա անցուցից. — ուր ԵԹԷ ՈՔԸ մէկ մը մի-այն չնշանակեր, հապա որչափ որ ըլլայ նէ.
Արդ երանեցին ժողովրդեան որոց այս այսպէս է.
Առ ազգ այնպիսի՝ որք դատաւորաց եկեղեցւոյ նոքին դատաւորք.
Ստոնմննութեան դարուն՝ որ ելեալ էին յերկրէն եգիպտացւոց.
Զգաստուն զայնոսիկ որք անկան. Ամենայնի որք ընտրեն հնազանդել.
Յամենայն եղբօրէ որ ստահակին գնայցեն.

572. Իւրաքանչիւր բառէն ետև սովորաբար բային դէմքին համեմատ դրուելու են գոյական ու ածական դերանունները քո, մեր, ձեր, իւր եզակի և յոգնակի. Ինչպէս,

Զատէ այր իւրաքանչիւր 'ի բնակութիւն քո, Իսրայէլ.
Իւրաքանչիւր ոք երթայք 'ի տեղիս մեր.
Դարձարուք իւրաքանչիւր 'ի տունս ձեր.
Ասէ կամ ասէն իւրաքանչիւր ցեղբայր իւր.
Դարձան իւրաքանչիւր 'ի ճանապարհաց իւրեանց.
Բարձէք անտի իւրաքանչիւր ոք քար մի 'ի վերայ ուսոց ձերոց.
Ի դառնալ ձեր իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց.

Բայց շատ անգամ առջի ու երկրորդ դէմքի բայերուն՝ եզակի երրորդ դէմք կը դրուին այս դերանունները.

Իւրաքանչիւր ըստ կարգի իւրում տեսանէր .

Գնացին իւրաքանչիւր յերկիր իւր .

Դարձցին առ իւրաքանչիւր ժողովուրդ իւր եւ յիւրաքանչիւր աշխարհ իւր .

Սպանցէ իւրաքանչիւր զընկեր իւր եւ իւրաքանչիւր զեղբայր իւր .

Գնաց ճեպեալէ յիւրաքանչիւր տուն իւր .

Դնէ իւրաքանչիւր զսուր իւր յազդեր իւրում եւ խոտորեսցէ իւրաքանչիւր զընկեր իւր . Ապրեցուսցէ իւրաքանչիւր զանձն իւր .

Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգուշ լերուք , եւ յեղբարս ձեր մի յուսայք .

Ո՛ իւրաքանչիւր ոք ըստ ճանապարհաց իւրոց (կամ ձերոց) դատեցայց զձեզ .

Տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց .

373 . Սոյն պատճառն ան է որ իւրաքանչիւրը եզակի ալ է յոգնակի ալ ( 108 , 109 ) , ու զատ առնուելով ամէն դէմք կը նշանակէ . Սա պատճառաւ յոգնակի բայի հետ եզակի ալ կը դրուի շատ տեղ երրորդ դէմքի գոյական կամ ածական դերանունը իւր . Սպանին իւրաքանչիւր զեղբայր իւր . Ածին ընդ մէջ այր իւրաքանչիւր զսուր իւր . Գնացին այր իւրաքանչիւր 'ի տեղի իւր . Իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում ժողովեցին . Խնդրեսցեն իւրաքանչիւր ոք յընկերէ իւրմէ .

374 . Բարդ ու ածանցեալ անուններուն մէջի եղած գոյականին՝ յատկացուցիչ , ածական ու դերանուն կը դրուի .

Աղեկերպք մարդկեղէն մարմնոյ . — որ ըսել է կերպք զազիր մարմնոյ .

Խորագէտ ամենայնի կամ ամենեցուն . — գիտող զխորս ամենայնի .

Կամակատար Հօր , կամարար Հօր . — կատարող , արարող զկամս Հօր .

Զ ամենայն չարեացապարտ Մենեղաւոս արձա-կել. — այս ինքն զպարտ, զպարտական ամենայն չարեաց ։

Առ հրեշտակականն Թափուր տեղի ստորանկելոց. — որ ըսել է՝ առ Թափուր տեղի հրեշտակաց ստորանկելոց ։

Պատկ ատեղեայ յերկոտասանից. — այս ինքն յատեղաց երկոտասանից ։

Յաստուածային սիրոյն յաղթելով, այն որ հրա-մայէն սիրել. — որ զրողին մեքին նայելով ըսել է 'ի սիրոյն Աստուծոյ, այն որ հրամայէ ։

575. Ու յարաբերականին յարաբերեալը շատ ան-գամ ինչ հոլով որ պիտի գրուի նէ ան չգրուիր, հապա կամ ուղղական կը մնայ կամ յարաբերականին համա-ձայն կը գրուի. ու շատ տեղ իրեն բուն գրուելու հո-լովովը ան դէմքին դերանունը կ'աւելցուի ։ Աս ոճը աշ-խարհաբառներուս մէջ ալ կը գտուի. ինչպէս,

576. Յարաբերեալ ուղղական կեցած.

Եւ բորոտ՝ յորում իցէ ախտն, հանդերձ Նորա քա-կեալ լիցի. — փոխանակ ըսելու բորոտի հան-դերձն. ու սեռականին տեղը աւելցած է Նորա ։

Եւ տուն՝ զոր յանդիմանեսցէ տէր, մատուսցէ ըստ արանց. — փոխանակ՝ զտուն ։

Իսկ տկարք՝ որոց պէտք ինչ էին, ոչ արդեօք երբէք վճարեցի. — փոխանակ՝ տկարաց ոչ վճարեցի ։

Բանն՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ. — փոխանակ՝ զբանն ։

Ամենայն այր՝ որոյ էր դատ գալ առ արքայ 'ի դա-տաստան, բարբառէր առ նա Աբեսողոմ և ասէր. — փոխանակ՝ առ ամենայն այր ։

Պսակդ ոսկի և զօրհնութիւնդ զոր եսուք բերել մեզ, ընկալաք. — փոխանակ՝ զպսակդ ոսկի ։

Գուբն զոր փորեաց և պեղեաց, 'ի նոյն անկցի 'ի

խորխորատ զոր և գործեաց. — փոխանակ՝ 'ի գուբն, որուն տեղ աւելցած է 'ի նոյն խորխորատ.

Նոյն ինքն տէր Քրիստոս միածին որդին Աստուծոյ, վասն որոյ նա խոնարհեցաւ է 'ի մարմին, սատա-կեցի 'ի նմանէն. — փոխանակ՝ 'ի նոյն ինքն 'ի տեառնէ Քրիստոսէ միածին որդւոյն Աստուծոյ սատակեցի.

Քրիստոսի, այն որոյ տէրութիւնն յաւիտենից է. — փոխանակ՝ այնր.

Օտարոտէն ամենայնի, այն որոյ բանիւ երկինք հաստատեցան. — փոխանակ՝ զայնմանէ.

577. Յարաբերեալ յարաբերականին համաձայնած.

Ամենայն այր կամ կին որ մտանիցէ առ արքայ, չիք փրկութիւն. — փոխանակ՝ ամենայն առն կամ կնոջ չիք փրկութիւն.

Այր այն Մովսէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ՝ ոչ գիտեմք զի եղև նմա. — փոխանակ՝ առն այն-միկ Մովսիսի. ու առ տրականին տեղը աւելցած է նմա.

Դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ հոգ յանձին ունել. — փոխանակ՝ քեզ որ մարզ-պանդ ես.

Թագաւոր որ անկնդիր է բանից անիրաւութեան, ամենեքեան որ ընդ նմա են՝ անօրէնք են. — փոխանակ՝ ամենեքեան որ են ընդ թագաւորաւ որ նա.

Ամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտս. — փոխանակ՝ մարդկան.

Վկայեալ յամենայն բնակչաց որ 'ի Դամասկոս Հրէայքն էին. — փոխանակ՝ յամենայն բնակչաց Հրէից որ 'ի Դամասկոս էին.

Դուք որ թողէք զիս, ես մատնեցից զձեզ 'ի սուր. — փոխանակ՝ զձեզ որ.

Ոստոծէնք և արծաթաթափէնք որ էին յազգաց օտարաց,

թլփատեաց զնոսա . — փոխանակ՝ զընդոծինս և զարծաթագինս ․

Որ շուրջ զնովաւ քաղաքն էին՝ առնոյր յաւարի . — փոխանակ՝ զքաղաքն որ ․

Ամենայնի որք սպանեալ իցէ և մերձեալ ՚ի վիրաւոր՝ սրբեսցի . — փոխանակ՝ ամենայն ․

Ամենայնի որոց ոչ իցեն թևք և թեփ, պիղծ իցէ ձեզ այն . — փոխանակ՝ ամենայն ․

Զոր ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է . — փոխանակ՝ սա է Յովհաննէս զորոյ ․

Ամենայնի որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ . — փոխանակ՝ յամենայնէ ․

Ամենայն ուրուք՝ որոյ իցէ ՚ի տուն իւր կին այլազգի, երթեալ պահանջեսցեն ՚ի նմանէ ժամանակս . — փոխանակ՝ յամենայն ումեքէ ․

Ամենայնի որոյ իցեն թևք և թեփ՝ ուտիցէք զան զայնս ուտիցէք . — փոխանակ՝ զամենայն որոյ իցեն ․

Զամենայնէ զորմէ ասացից թէ դա մի երթիցէ ընդ քեզ, նա մի երթիցէ . — փոխանակ՝ ամենայն զորմէ ասացից ․

Զամենայն ինչ զոր խօսիցի՝ լինելով լինի . — փոխանակ՝ ամենայն ինչ ․

Զբանն զոր խօսեցար՝ հաւատարիմ լիցի . — փոխանակ՝ բանն ․

Յերկիրն յոր հանէր՝ քեզ լիցի ՚ի ժառանգութիւն . — փոխանակ՝ երկիրն ․

Ընդ երկիրն ընդ որ մեք անցաք լրտեսել զնա՝ երկիր մարդածախ է բնակչաց իւրոց, և զամենայն զազգն զոր տեսաք ՚ի նմա՝ արք յաղթահասակք են . — փոխանակ՝ երկիրն, ամենայն ազգն ․

Զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ . — փոխանակ՝ յամենայնէ ․

Իսկ եղեն որդիք Յովսեփայ զորս ծնաւ նմա Ասա-

նէթ զՄանասէ և զՅովակիմ . — փոխանակ՝ Մանասէ և Յովակիմ զորս ծնաւ ։

Ի հանդերձեալ յոր ելեր՝ ոչ իջցես անտի . — փոխանակ՝ 'ի մահճացդ ։

Յամենայն տեղիս յոր կամ ուր հասանիցեն գնացք ոտից ձերոց , ձեզ տաց զնա կամ զնոսա . — փոխանակ զամենայն տեղիս ։

Դատաստանացն Աստուծոյ , այն որ չափով և կըշռով բաժանէ . — փոխանակ՝ այնր որ ։

Աղքատաց լինի զքաղցր ուտանելն , այն որ ոչ ունի արդարացուցանել զնա . — փոխանակ՝ զայնմանէ որ ոչ ունի ։

Ոչ թողու նոցա բնակել 'ի վերայ երկրի , այնոցիկ որք անարգեցին զբնակիչս բարձանց . — փոխանակ՝ այնոցիկ որք անարգեցին ։

578 . Շատ հեղ ալ յարաբերականը ինչ հոլով որ պիտի դրուի նէ՝ ան չդրուիր , յարաբերեալին հոլովը կ՚առնէ . ու շատ տեղ իր դրուելու հոլովովն ալ դէմքին դերանունը կ՚աւելցուի , որ աշխարհաբառներուս մէջ ալ կայ . նոյն ատեն երբեմն յարաբերեալն ալ եւս դրուելով՝ յարաբերեալին հոլովը կ՚առնէ , որ իրարու հոլովը առած կ՚ըլլան . ինչպէս ,

579 . Յարաբերական յարաբերեալին հոլովը առած .

Չիք ազգ որ ոչ իցեն իրաւունք 'ի դատաւորաց . — փոխանակ՝ որոյ , որում ։

Որդի Աստուծոյ կենդանւոյ , որ տկարանայ ոչ 'է էջն և ոչ ինչ . — փոխանակ՝ յորմէ ։

Ի վերայ սեղանոյ ողջակիզացն՝ որոյ նոր արարին . — փոխանակ՝ զոր ։

Ջնջեա 'ի դպրութենէն յորմէ գրեցերն . — փոխանակ՝ յորում գրեցերն ։

Յօրէ յայնմանէ յորմէ գերեաց . Յօրէ յորմէ եհան . Յօրէ յորմէ լուաք . — փոխանակ՝ յորում ։

Հատուցէ զաւանդն զոր աւանդեցաւ նմա . — փոխանակ՝ որ աւանդեցաւ ։

Ի սմա են սաղմոսք որ ոչ գոյ թիւ . — փոխանակ՝ որոց ոչ գոյ ։

Ամենեցուն որոց էք 'ի Հռովմ սիրելեաց Աստուծոյ . — փոխանակ՝ որք էք ։

Նուագարանօքն որովք արարին՝ օրհնել զտէր . — փոխանակ՝ զորս արարին ։

Ոչինչ հրամայեցաւ առնել յայնցանէ յորոց հաստատեցին զնա . — փոխանակ՝ յայնցանէ որք հաստատեցին ։

Յաւուրցն յորոց կարգեցի դատաւորս . — փոխանակ՝ յորս կարգեցի ։

Պատմեաց զամենայն պատգամսն զոր առաքեաց զնա տէր . — փոխանակ՝ որովք , յորս առաքեաց ։

Գթացաւ 'ի նոսա այն որ ոչ երբեք պակասեցաւ գութ նորա . — փոխանակ՝ որոյ գութն ։

Այն որ Մովսէս և Եղիա իբրև զծառայս եկեալ կային առ նմա . — փոխանակ՝ առ որում կային ։

Ե՞րբ ուսանիցէք զապամտութիւն անուանս աստուածոցն նոցա , այն որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի . — փոխանակ՝ այն աստուածոց որոց կամ յորոց չիք և ոչ մի ։

580 . Յարաբերական ու յարաբերեալ մեկմեկու հոլովք առած ։

Մարգարէանայ զոր առ յապա անցք ընդ Սաւուղ անցանելոց էին . — փոխանակ՝ զանցս որ առ յապա անցանելոց էին ։

Որոց առ գերութեամբն մարգարէք՝ առաջին է սա . — փոխանակ՝ մարգարէից որք առ գերութեամբն ։

Ապստամբութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամենայն հրէայք են . — փոխանակ՝ ամենայն հրէից որք 'ի հեթանոսս են ։

Մարգարէքն , որք յառաջ որոյ 'ի ձեզ լինելոց էին

շնորհօք՝ մարգարէանային. — փոխանակ՝ վասն շնոր-
հաց որք 'ի ձեզ լինելոց էին ։

Ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս Առաքեալքն էին. — փոխանակ՝ առ Առաքեալսն որ էին ։

Ցուցանելով զոր 'ի խոնարհութենէն օգուտն. — փոխանակ՝ զօգուտն որ ։

Զորս վասն Կրոնոսի և Արամազդայ պատմութիւնս իցեն՝ անցեալ առել. — փոխանակ՝ զպատմութիւնս որք վասն Կրոնոսի են ։

Յոր նախ բանիւք՝ յարմարի յաջորդս. — փոխանակ՝ 'ի բանս որ նախ ։

581. Երբեմն ալ յարաբերականը ետեւի բային հայցական խնդիրին կը համաձայնի կամ ուրիշ խնդիրին ալ.

Ըստ ամենայն բանի զոր առաքեաց զքեզ տէր Աստուած քո առ մեզ, այնպէս արասցուք. — փոխանակ՝ ըստ որում կամ որով առաքեաց զքեզ ։

Բազմապատիկ շնորհս բաշխեաց ամենեցուն, զոր և մեծ իսկ քան զամենայն՝ զսէր սուրբ յաննեղ մնաց զխունկք. — փոխանակ՝ յորս կամ յորոց մեծ զխունկք զսէր ։

Հանէին զնա 'ի խաչ յայն տեղին, զոր եսես Աբրահամ զխոյն կախեալ զծառոյն սաբեկայ զեղջերայն. — փոխանակ՝ յոր կամ յորում եսես զխոյն ։

Տեսեալ զՅովհաննէս յայնպիսի վարս, զոր ոչ բնաւ զայլ ոք տեսին 'ի մարդկանէ. — փոխանակ՝ յոր կամ յորում ոչ տեսին զայլ ոք ։

Զոր սերովբէքն ծածկէին զդէմս յահէ փառաց աստուածութեանն. — փոխանակ՝ յորմէ ծածկէին կամ յորոյ ահէ փառաց ծածկէին զդէմս ։

Բայց 'ի քաղաքաց ազգացն այնոցիկ՝ զոր տէր Աստուած քո տացէ քեզ ժառանգել նոցա. — փոխանակ՝ զորոց զերկիրն ։

Սան որոյ Կղէոպատրային, զոր ոչ ոք 'ի մարդկանէ եղև նման նմա և կամ կրեաց զմօրս նորա. — փոխանակ՝ որում ոչ ոք եղև նման և զորոյ մայր ոչ կրեաց.

Մ՛ի երկնչիք յերեսաց արքային Բաբելոնացւոց, յորմէ զարհուրեալ էիք յերեսաց նորա. — փոխանակ՝ որոյ յերեսացն զարհուրեալ էիք.

Յոր վեցթևեան սրովբէքն ոչ իշխէին հայել 'ի փառս քո. — փոխանակ՝ որոյ 'ի փառս.

Տես և 619.

582. Նոյնպէս բայնն ու անուններն համար ըսինք (563), անանկ ալ զանազան հոլով առնող նախդիրներն ու հոլովառու բառերը երբեմն այլայլ հոլովը մէկտեղ կ'առնեն մէկ խօսքի մէջ, ինչուր բացայայտեալն կամ գոյականը մէկ հոլով ու բացայայտիչը կամ ածականը մէկալ հոլով.

Նմանաման լինէին քուրմեամբ առ մեծ թագաւորին Պարսից. — փոխանակ ըսելու առ մեծ թագաւորին կամ Պարսից.

Որ և առ խո ինքեան եցոյց յայտնապէս. Ըստ ծովեզերբ միում.

Ի բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնիւ.

Զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ, և ընդ Արշակ.

Օրհնեցէք զՏէր ընդ երկնային նմանեալ դասուց. — փոխանակ ըսելու ընդ երկնայնոյն դասուց կամ ընդ երկնային դասս.

Ընդ խաղացեալս հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկեալսն.

Ընդ որ առաւել ոք սքանչացցի. ընդ հօրն, եթէ ընդ որդւոյն.

Ընդ գողութեան անուան և բամբասանօք արկանէ զմարդ.

Հանդերձ երանելեաւն Յաւթլաւ տեառն Մա-նանդայ ։

583 . Իբրև, որպէս համաւոտ բառերն ալ, միտքը նման նշանակելով, հայցականի տեղ տրական հոլով կ'առնեն երբեմն .

> Զմնալ զՃանապարհս իմ ցանկամ իբրև ժողովրդեան՝ որոյ զարդարութիւն գործեալ իցէ . — այս ինքն նման ժողովրդեան, իբրև զժողովուրդ ։
>
> Տեսի զարմացման տեսիլ, իջանել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի . — այս ինքն նման կտաւոյ, իբրև զկտաւ մեծ ։
>
> Ոչ որպէս հրաման տալոյ ասեմ․ Ոչ որպէս հրաման ինչ առելոյ ։
>
> Առաքեալք երկնաւոր Թագաւորին և Աստուծոյն՝ պատկառելիք և պաշտելիք գոն մարդկան, իբրու 'ի նմանէ ընտրելոց և առաքելոց . — այս ինքն իբրու 'ի նմանէ ընտրեալք և առաքեալք, նման ընտրելոց են ։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

584. Փոխադրութիւն կամ փոխանակութիւն է՝ ուրիշ բանի մը տեղ ուրիշ բան մը դնել։ Այս ձեւս մէջ տեղ տեղ բակառութիւն ալ կը խառնուի, որովհետեւ փոխադրութիւնն ալ ծածուկ մտքով մը կ'ըլլայ։

585. Ասանկ, գոյական անունը շատ հեղ ածականի տեղ, ածականն ալ գոյականի տեղ կը դրուի. Ինչպէս, Գազան ցանկութիւն, Խաւար խորհուրդ, Աղերս բանք, Պատիժ պատուհաս, Մանուկ տղայ, Գոգ տեղի, Չար կամք, Չուան գօտի, Չափ համբերձ, Չափ ժամանակ, Չափ հասակ, Տօթ ժամանակ։

Աստուածականն, աստուածայինն, ըսել է երբեմն Աստուած. Ջերմ, ցուրտ կամ ջերմք, ցուրտք, ջերմութիւն, ցրտութիւն. բազմամբոխ, բազում ամբոխ. միաբարբառ, մի բարբառ. խառնաձայն, խառն կամ խառնակ ձայն։ Վասն հեշտի ընթերցողաց. Ունել յընդարձակի. Ի բազում ապահովի առնել զոր. Յապահովս կամ յանհոգս լինել. Դառնանս կրել. Կենդանեաւ կամ կենդանեօք, առ կենդանեաւ, առ կենդանեօք, ըսել են վասն հեշտութեան, ունել յընդարձակութեան, յապահովութեան, յանհոգութեան, դառնութիւն կրել, կենդանութեամբ, առ կենդանութեամբ։

586. Ինչպէս էն բային (331), անանկ ալ ընէն,

եղանիմ բայերուն երրորդ դէմքերուն հետ անցեալ դեր-
բան (288) սեռական անուն բայի կ'առնէ երբեմն.

Թէ ուրուք յանկարծօրէն քար ձգեալ լինի 'ի ծառ, և պատահիցէ մարդոյ. — այս ինքն թէ ոք քար ձգեալ լինի, քար ձգէ 'ի ծառ.

Անդ սպանեալ լինէր նոցա զՏիմոթէոս. — այս ինքն սպանեալ լինէին նոքա.

Չև լինէր արեգական ճառագայթիցն յաշխարհ սփռեալ. — այս ինքն չև սփռեալ լինէին ճառագայթքն.

Թերեհաւատից ևս բնակեալ եղիցի 'ի նմա. — այս ինքն թերեհաւատք ևս բնակեալ եղիցին, բնակեսցեն.

Իմ առ բարերարութեան իմոյ արձակեալ լիցի զքեզ. — այս ինքն ես արձակեալ լիցիմ, արձակեցից զքեզ.

587. Անցեալ դերբային անուն բային սեռական կը դրուի երբեմն՝ երբոր էական բայի առջի կամ երկրորդ դէմքին հետ կամ յոգնակի երրորդ դէմքին հետ ալ որ ըլլայ նէ.

Ես 'ի մանկութենէ իմմէ համակ 'ի ճակատու և 'ի կռիւ մտեալ եմ.

Մինչև քո խօսեալ իցես. Ձեր արարեալ և կատարեալ իցէք զամենայն.

Աշխարհն այն՝ ուստի դոցա եկեալ են. Զոր էին նոցա սրբեալ.

Որոց որդւոց իւրեանց բարուք վերակացու լեալ իցէ.

Ոչ գտեալ լինին Առաքելոցն 'ի նմանէն զպատիւ փառաց.

588. Ասանկ պարզ գլխաւոր բայի ալ կը դրուի սեռական անուն բայի գրոց մէջ. բայց զգուշանալու է.

589 . Անորոշ ու անցեալ դերբային երբեմն հայցական ալ կը դրուի անուն բային .

Վասն որոյ փրկիչն ասաց՝ խնդալ զԱռաքեալսն . — այս ինքն ասաց խնդալ Առաքելոցն , զի խնդասցեն .

Որով յայտ է ՚ի կարի կարեւորացն զսա գոլ . — փոխանակ սմա գոլ , թէ սա է .

Զամենայն տեսակս բարեաց վերջին լինել աստուածային սիրոյն՝ և ՚ի տեառնէ աւետարանեցաւ . — այս ինքն թէ ամենայն տեսակք վերջին են .

Յաղագս ՚ի չարն դիւրափոփոխ գոլոյ զբնութիւնս. — փոխանակ՝ բնութեանս .

Հայէր նա ուղիղ , ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգեւաց . — այս ինքն շնորհաց պահեալ , թէ շնորհք պահեալ են , պահին .

Որ թերին էր՝ խօսէր , զամենայն ինչ ընդունայն լեալ զառաջինսն . — այս ինքն ամենայն առաջնոցն , թէ ամենայն ինչ առաջինքն ընդունայն լեալ իցեն .

590 . Երբեմն ալ անորոշ ու անցեալ դերբային անուն բային խնդիրի պէս հայցական կամ բացառական կը դրուի , որոնց մէկուն մէկը հարկաւ անուն բայի պիտի ըլլայ .

Դէպ եղեւ բառնալ բերել զնա ՚ի զօրականացն . — այս ինքն բերելնին ՚ի զօրականացն կամ բերել զնա զօրականացն .

Յետ դարձին ՚ի Բաբելոնէ և շինելոյ զտաճարն ՚ի Զօրաբաբելէ . — այս ինքն յետ շինելոյ տաճարին ՚ի Զօրաբաբելէ կամ շինելոյ Զօրաբաբելի զտաճարն .

Յետ սպանանելոյն զնա ՚ի նոցունց . — այս ինքն նորա ՚ի նոցունց կամ զնա նոցա .

Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին , իբրու

դառնալ ինչ 'ի նմանէ կամ 'ի Հօրէից անտի զայն փոխեալ. — այս ինքն առնն փոխեալ 'ի նմանէ կամ նորա կամ Հօրէից զայն փոխեալ։

Ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեսեան. — այս ինքն շնորհեալ է Աստուծոյ զամենեսեան կամ շնորհեալ են յԱստուծոյ ամենեքեան։

Եթէ ոչ յԱստուծոյ էր տուեալ զիրաւունս յաղթութեանն. — այս ինքն Աստուծոյ էր տուեալ զիրաւունս կամ իրաւունքն էր տուեալ յԱստուծոյ։

Ուր նախ էր զեկեղեցին շինեալ 'ի Գրիգորէ և զվկայարանսն. — այս ինքն եկեղեցին և վկայարանքն 'ի Գրիգորէ, կամ Գրիգորի զեկեղեցին և զվկայարանսն։

Աս բացառականիս պատճառն ան կ'երեւնայ որ գործքին ընողը՝ կրաւորական բայի խնդիր կ'ըլլայ (317), ու աս խնդիրը բացառական ալ կ'ըլլայ սեռական ալ (352, 353). ուստի՝ գործքը ընողը սեռական դրուելուն տեղ անուն բայիի պէս (331), բացառական ալ կը դրուի երբեմն խնդիրի պէս։

591. Բայց երբեմն անուն բային՝ անորիշ ու անցեալ դերբային քովը մէկ ուրիշ բային խնդիր ըլլալով հայցական կը դրուի.

Ասա զիմաստութիւն՝ քոյր քեզ լինել. — այս ինքն ասա զիմաստութիւնն կամ զիմաստութենէ՝ թէ քոյր իցէ քեզ։

Կամեցաւ զիս՝ լինել թագաւոր. — այս ինքն զիս կամեցաւ զի եղէց։

Ոչ կամեցաւ Սեհոն զԻսրայէլ անցանել ընդ սահմանս իւր։

Կարծեցեալ զդիսն՝ հասանել նմա յօգնականութիւն։

Հաստատեաց 'ի լինել զամենայն. — այս ինքն հաստատեաց զամենայն զի լիցին։

Ուսուցանէ նեռն լինել զասացօղսն ոչ եկեալ մարմնով զՔրիստոս. — այս ինքն նեռն լինել ծանուցանէ զայնոսիկ որք ասեն զՔրիստոս մարմնով ոչ եկեալ:

Տեսանիցէք զերկինս բացեալ, և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն. — այս ինքն երկինքը՝ բացուած պիտի տեսնէք:

Լսեալ բացեալ զդուրս բանտին, կարծէր փախուցեալ զկապեալսն:

Գտանէ թագաւորեալ զԱրտաշէս և ընդդիմացեալ նմա զեղբարս իւր. — ուր զԱրտաշէս, զեղբարս գտանէ բային խնդիր են:

592. Երբեմն զխնդիր բային անուն բային այլ ուրիշ բայի խնդիր կը դրուի.

Տեսեալ զնա զոր ինչ արարի 'ի վերայ անօրէնութեան նորա. — փոխանակ ըսելու տեսեալ զոր ինչ արարի ես:

Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն. — փոխանակ՝ կամի զի ամենայն մարդիկ կեցցեն:

Եւ զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք ծանոյց նմա զի գործք ձեռաց նորա են. — փոխանակ՝ ծանոյց զի երկիր և երկինք գործք ձեռաց նորա են:

593. Յոգնակի անուն բային, մանաւանդ անեզական, երրորդ դէմքի բայը շատ անգամ եզակի կը դրուի.

Ազդ եղև նմա բանք խորհրդին: Այս բանք հաւատարիմ է և ճշմարիտ:

Ճանապարհք նորա առ մեզ է: Յորում էր ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և թռչունք երկնից: Եւ էր գրեալ անուանք նոցա: Շահք որ 'ի քէն՝ ոչ եւս իցէ:

Եւ գայր ձայն ոչ էր ընդ նոսա աստուածս օտարս

կամ օտարոտիս . — այս ինքն ոչ գոյին աստուածք օտարք , ոչ էին աստուածք օտարոտիք (59) :

Բազում սասանութիւնս և փլուզմունս տանց լինէր , այլ և մահուանս յոլովից մարդկան 'ի վերայ հասանէր :

Հաճոյ թուեցաւ բանքն կամ իրքն : Ել իրքն 'ի վեր :

Իջցէ իբրև զցօղ պատգամք իմ : Ամենայն զարդք նորա զերծաւ 'ի նմանէ :

Ընկաւ 'ի նոցանէ յաւուր յայնմիկ վիրաւորք բազումք :

Սկսաւ մարդիկն բազմանալ : Կեանք իմ 'ի դժոխս մերձեցաւ :

Ընդէր տուեալ իցէ կեանս ցաւագնելոց ոգւոյք . — այս ինքն կեանք (59) :

Ոչ եկեսցէ 'ի վերայ մեր չարիք : Ման էր եղև ընդ քեզ այդ անցք :

Երևեցան նմա սանդուղք լուսեղէնք , որ կանգնեալ էր :

594 . Բայց դէմքով անուն բայներուն բայը՝ կարգով առաջ եղող դէմքին դրուելու տեղը (338), երբեմն մօտ եղող դէմքին միայն համաձայն կը դրուի .

Դու և մեծամեծք քո , հարձք քո և կանայք ըմպէիք կամ ըմպէին նոքօք գինի :

Մաղիս դու և որդիք քո ընդ քեզ անցցեն :

Զի մի ծառանիցեն և նոքա և դուք :

Արա զկամս դորա և կեցցէ դա և մեք :

Ոչ դու և ոչ դա և ոչ որ զինի ձեր գալոցն է՝ զայն 'ի մեզ ոչ կարէ տեսանել :

Բայց թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ , նզովեալ լիցի . — որ կը հասկցուի՝ թէ ով աւետարանեսցէ , մեք կամ հրեշտակ :

595. Նորին դերբայն՝ ապառնի կամ ստորադասական բայի տեղ՝ ուղղական կամ նախդրիւ տրական դըրուելուն տեղը (278, 281, 282), շատ անգամ սեռական կամ վերջահօլով տրական ալ կը դրուի. երբեմն սահմանական եղանակին տեղ ալ (279).

Ի գումարել ամենայն Իսրայէլի յանդիման լինելոյ առաջի տեառն. — փոխանակ՝ յանդիման լինել, առ 'ի յանդիման լինել, այս ինքն զի յանդիման լիցի.

Ի դարձուցանել զթիկունս իւր գնալոյ 'ի Սամուէլէ. — փոխանակ՝ գնալ, առ 'ի գնալ, զի գնասցէ.

Մ'ի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի. — փոխանակ՝ տալ, առ 'ի տալ.

Մինչ 'ի մահ մարտնչէր՝ նախ զանձն ապրեցուցանելոյ.

Գունդս առ գունդս կազմեցէն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ.

Օտարոտի ինձ թուի պատմիչ լինելոյ. — փոխանակ՝ թուի պատմիչ լինել, թուի թէ է, թէ իցէ.

Զի մի 'ի վհատութիւն ինչ կնոջն կարծիցի զայնպիսի իրս յուշ առնելոյ. — փոխանակ՝ յուշ առնել, զի մի կարծիցի թէ յուշ առնէ կն̃ ապար.

596. Երբեմն ալ գործիական կը դրուի նոյն երկումաքով.

Սկիզբն արասցուք ձեզ պատմելով վասն արարչութեանցն. — փոխանակ՝ պատմելոյ, պատմել.

Ի վեր հայեցուցանելով զմիտս նորա ուտելով 'ի պտղոյ ծառոյն. — փոխանակ՝ ուտելոյ, ուտել, զի կերիցէ.

Բիբք աչաց թէպէտ և սրագոյն լինին զայլս տեսանելով, բայց զինքն անկարանայ նկատել. — փոխանակ՝ զայլս տեսանելոյ, 'ի տեսանել զայլս.

Նեռն պատրողական նշանօքն խաբէ զմարդիկ՝

զինքն գոլով Քրիստոս . — փոխանակ՝ զինքն գոլ, թէ ինքն է կամ իցէ Քրիստոս ։

597 . Նորին ու անցեալ դերբայն երբեմն իւրենց անուն բայերն պէս (328 , 329) իւրենք ալ սեռական կամ տրական կը դրուին .

Յառաջադրելն նորա ՚ի Նաբուքոդոնոսորայ արքայէ և անցանելոյ զերդմամբքն . — փոխանակ՝ և յանցանել ։

Մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս՝ երթալոյ նորա . — փոխանակ՝ յերթալ նորա ։

Իբրև ազդ եղև ինձ՝ նենգութեանն յայլոց լինելոյ ՚ի նոցանէ . — փոխանակ՝ լինել նենգութեան ՚ի նոցանէ յայլոց ։

Նոքա ակն ունէին՝ նմա ուռնլոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ . — փոխանակ՝ ուռնուլ նմա կամ անկանել և մեռանել ։

Որոց քաղաքին ամենայն խաղաղութեամբ բնակելոյ , և օրինացն Ճշմարտութեան իբրև զի գեղեցիկ իմն պահելոյ , Ոնիան ոմն անուն առաջնորդէր տոհմին իւրոյ . — փոխանակ՝ որոց քաղաքին բնակեալ՝ բնակելով , և օրինացն պահեալ՝ պահելով , որ ըսել է ՚ի բնակելն , ՚ի պահելն (283 , 286) ։

Զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ շրջեցուցանէին , յայտնապէս Աստուծոյ զօրութեանն երևելոյ . — փոխանակ՝ զօրութեանն երևեալ , երևելով ։

Ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա՝ ասէ առակաւ . — փոխանակ՝ և եկեալ նոցա , և ՚ի գալն նոցա առ նա ։

Դարձելոյ մեղաւորի՝ ամենայն հրեշտակաց ուրախութիւն բերէ . — փոխանակ՝ դարձեալ մեղաւորի , ՚ի դառնալ մեղաւորի ։

Իսկ նոցա խօսելոյ և կարդալոյ ՚ի Ճշմարտութե-

նէն՝ նախանձէին. — փոխանակ՝ իսկ նոցա խըլացեալ և կուրացեալ։

Այգուն եղելոյ՝ զսպանեալսն թաղել հրամայեաց։

Հզօր մարտի եղելոյ՝ բազումք անկան. — փոխանակ՝ այգուն եղեալ, հզօր մարտի եղեալ։

Լուսոյ երևեցելոյ՝ ոչ կայ մնայ խաւար. — փոխանակ՝ լուսոյ երևեալ, յերևել լուսոյ։

598. Անորոշ դերբայն շատ անգամ սեռականի տեղ ուղղականն կը դրուի հոլովառու բառերուն քով.

Վասն ոչ կարել հայել. — այս ինքն վասն ոչ կարելոյն, վասն զի ոչ կարէին։

Վասն զսուրբ քաղաքն հարթ յատակ և անմարդի կացուցանել. — այս ինքն վասն կացուցանելոյն։

Յաղագս արդարութեամբ կեալ. — այս ինքն յաղագս կելոյ։

Յետ զերկիւղն Աստուծոյ հայցել. — այս ինքն յետ հայցելոյ։

Զկնի մոռանել արևու. — մի զկնի մոռանելոյ։

Առանց արանց յազգէն բագրատունեաց լինել թագաւոր. — այս ինքն առանց լինելոյ թագաւոր։

Փոխանակ համառօտիւ ասել. — այս ինքն փոխանակ ասելոյ։

599. Երկու անորոշ դերբայներ եղնին՝ շատ անգամ ուղղականն կը դրուի, ու առջինը ինչ հոլով է նէ՝ ան կը հասկցուի.

Մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. — այս ինքն է՝ լինելով օրինակ։

Զօր ամենայն տեսանելով զայսպիսի պղծագործութիւն և լսել. — այս ինքն և լսելով։

Հրձիգ առնելով զգաւառս նոցա, քանդել զքաղաքս, 'ի ծառայութիւն վարել զազգն և համաջինջ 'ի միջոյ զօրինացն բառնալ զամբարիշտ սովորութիւն. — այս ինքն քանդելով, վարելով, բառնալով։

Կու լինի այս 'ի բառնալոյ զմեղաց խաւարն և շնորհել ոգւոց լուսաւորութիւն . — այս ինքն և 'ի շնորհելոյ ։

Ի ձեռն յարութեան , վերանալոյ ընդ երկինս և նստել ընդ աջմէ աստուածութեանն . — այս ինքն վերանալոյ և նստելոյ ։

Կու ծիծռան (աղգմունք բնակամք են) 'ի ձմերոց երթալոյ , և խորդոյն՝ խմանալ յառաջագոյն ըղձմերունս կարևորս և վաղվաղ 'ի մարմնոյ տեղիս փութալոյ ։

600 . Ներկայ դերբայն շատ անգամ ուղղական կը դրուի գործիականի տեղ կամ անցեալ դերբայի տեղ .

Սոքա յանձն առին իբր ոչինչ կասկած կամ կարծիս 'ի մտի ունել . — այս ինքն 'ի մտի ունելով , 'ի մտի կալեալ ։

Մոգէր և ապշեցուցանէր զազգն սամարացւոց՝ ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն . — այս ինքն ասելով , ասացեալ ։

Հրաժարեալ յեղբարց նաւէր յՊօղոս , փոքրել զգլուխ 'ի Կենքրեայ . — այս ինքն փոքրեալ , փոքրելով ։

Ի բաց թօթափել այսուհետև զամենայն չարութիւն , անխարդախ կաթինն փափաքիցէք . — այս ինքն թօթափեալ , թօթափելով ։

Միշտ կարօտիմք Աստուծոյ՝ հասանուս գալ բնութիւն և դիւրաշարժ . — այս ինքն գալով ։

601 . Դադրիլ , ետ կենալ նշանակող բայերուն քով ուղղական բացառականի տեղ կը դրուի .

Ոչ դադարէ խօսել ։ Ոչ խոտորեցաւ առնել ուղղութիւն ։

Խորշէր զօրն մտանել 'ի քաղաքն ։ Զգոյշ լեր պատմել ինչ նմա ։

Արգելուին զմեզ խօսել ։ Հռոմք 'ի բաց կացին ձեռնատու լինել քրիստոնէութեան ։

602 . Իսկ հայցական խնդիր առնօղ բայերուն քով որ դրուի նէ , հայցականի տեղ ալ կը հասկցուի .

Իբրև կատարեցին մատուցանել . — ըսել է կատարեցին զմատուցանելն ։

Ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց վարկանէին . — ըսել է զծառայելն ազատութիւն վարկանէին ։

Թողլին նոքա գալ կալ յաղօթս . — այս ինքն թողլին զգալ կալ յաղօթս ։

Ուսո ինձ առնել . Կամեցաւ ելանել . Մ՝ոռացան առնուլ . ևն ։

603 . Ու իրօք ալ կատարեալ հայցական կը դրուի երբեմն անուան պէս (280) .

Տէր իմ յամէ զգալ . — նոյն է թէ ըսուի յամէ գալ ։

Լուաք զնորա խօսել բանս հայհոյութեան . — ըսել է լուաք խօսել զնա ։

Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ , որդիս ծնանել , տնարարս լինել ։

Ցերագեն միայն խոկացի ։ Գիշերն անդէն կամին զընակիլն ։

Ցհարկեն լինել փութացիս ։ Փութա զգալն ։

Զանոյր յանձն զերթալն ։

Լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն ։

Թէպէտ և կամի զտալն ։

604 . Շատ տեղ ալ ուղղական , և մանաւանդ գործիական կը դրուի անորոշ դերբան՝ ու բայածականի կամ՝ անցեալ դերբայի տեղ . կամ թէ գործիական՝ ուղղականի տեղ , ըստ 278 , 279 .

Եթէ սուղ իցէ բանն , իբրու ոչ պարունակող զխմաստս և ոչ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսաւեալ լինի . — այս ինքն տուօղ չէն տուեալ զցոյցս ։

— Կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք , և ոչ ամե-

նեին ունել անդուռն բերան նման այլոց կա-նանց. — այս ինքն ոչ ունող անդուռն բերան։

Օ՛ի քէն պատիւն անգիտողին և հաւասար գոլ անմտին. — այս ինքն գոյողին, եղելոյն։

Մ՝եռանել քան թէ տեսանել զորդիս օտարա-ծնաց կոխելով զսահմանս հայրենիս. — այս ինքն կոխողս, կոխեալս չամ կոխել զսահմանս։

Ուեն զԱչուանդայ ըստ հմայից դժնեայ զօրով ակամն հայեցուածով. — այս ինքն դժնեայ եղեալ չամ դժնեայ գոլ։

Յիշեցէք և զուխ արեանցն 'ի զօրս հոսելով ձե-ռաց. — այս ինքն հոսող, հոսեալ։

Տեսէք շուրջ զաստուածային սեղանոյն պարելով զտղայն. — այս ինքն պարողս, պարեալս չամ տեսէք պարել։

Մ՝ի լեցի փշովք հեղձեալ, այլ պտղաբերելով ըզ-պտուղ սերոյ. — այս ինքն պտղաբերող, պտ-ղաբերեալ։

Մ՝անկունք բժշկաց զորս Ճանաչեն ունելով զցաւս անբոյժս՝ ոչ ձեռնարկեն առ այնպիսիսն. — այս ինքն զորս Ճանաչեն ունողս չամ ունել զցաւս։

Ոմանց աներկիւղից 'ի մէնջ առ ձեզ հատուածե-լոց և զմերս աղարտելով կարգաւորութիւն. — այս ինքն և աղարտողաց զմեր կարգաւորութիւնս։

Չարախօսեն զձէնջ՝ խաղմարարս կարգելով և խռովարարս և խանգարիչս օրինաց Թագաւորաց և նորոգ աստուածպաշտութիւն քարոզելով. — այս ինքն քարոզողս։

605. Ուրիշ դերբայն ուղղական, երբեմն ալ զոր-ծիական, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (278, 279), դիմաւոր բայի տեղ կը դրուի, մանաւանդ ապառ-նիի ու հրամայականի.

Այլ փոյթ յանձին կալեալ պահանջել զամենայն հարկս և զհասս, զի մի երբէք բազմասցին. —

այս ինքն պահանջեսջիք, կամ փոյթ յանձին կալ-ջիք պահանջել (606)։

Զի մի լիցուք ցանկացօղք չարեաց՝ որպէս նոքայն ցանկացան, և մի կռապաշտք լինել՝ որպէս ո-մանք 'ի նոցանէ. — յ̃ և մի կռապաշտք լիցուք։

Ծառայք՝ հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց. — այս ինքն լերուք։

Մի բազում վարդապետս լինել, եղբարք իմ. — այս ինքն մի լինիջիք։

Որքան առատանալ արտասուացն, մինչ զի լուա-նալ զոտս տեառն. — այս ինքն այնքան առատա-ցան, մինչ զի լուանային կամ լուացին։

Բայց քանզի զհրաման կամ զհրամանս ինչ ոչ անցանել ըստ թագաւորին, սպաս արար մար-թանօք զհրամանն կատարել. — այս ինքն ոչ անցանէր։

Որ Ճշմարիտ Աստուածն է, զամենայն ինչ զիւր՝ մշտնջենաւորութեամբ ունի, և զորդին իւր միշտ ընդ իւր ունել. — այս ինքն միշտ ընդ իւր ունի։

Եթէ կարծիցք յանցանաց էին դեք, ոչ երբէք զմարդիկ 'ի կռապաշտութիւն յօժարեցուցա-նէին.. ոչ ընդ աստեղս պշուցանել. — այս ինքն պշուցանէին։

Սակայն և 'ի նոցանէ՝ զոր ինչ հաւատոյն կար-ծեմք՝ առնուլ. — այս ինքն առնումք կամ առցուք։

Եւ զիա՞րդ զպակասամեղն՝ ամենայնիւ ամպարշտե-լոցն մատնել 'ի սատակումն. — այս ինքն մատ-նէք կամ մատնիցեմք։

Որքան յայտնիկ ըստ բազմադիմի գործոցն՝ և ա-նուանցն գոլ զանազանութիւնք. — այս ինքն գոն, են զանազանութիւնք։

Եւ այսպէս ուսուցանելով, մինչև մնամնալ լռո-ղացն զամենայն իրս աշխարհականս. — այս ինքն ուսուցանէն։

Զայս ասելով, զի զայն վերագոյն քան զամենայն յարգարիցէ. — այս ինքն զայս ասէ կամ ասէր։
Տեսեալ զինքն մերկացեալ՚ի լուսեղէն զգեստիցն՝ սաղարթապատ լինելով ընդ տնկով դրախտին. — այս ինքն սաղարթապատ լինէր։

606. Նմանապէս անցեալ դերբայն, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (284, 286), գլխաւոր բայի տեղ կը դրուի երբեմն.

Նորա գիտացին թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց իբրև ժամս երկուս աղաղակել. — այս ինքն մի բարբառ եղև՝ աղաղակել, կամ մի բարբառ եղեալ աղաղակէին (605)։
Յայնմ ժամանակի տագնապափոյթ ստիպաւ դեսպանս արձակեալ, պատուիրակս հանեալ ընդ աշխարհ՝ զի ամենեքեան օժտաբեր ընծայատար լիցին. — այս ինքն արձակէին, հանէին, կամ արձակեցին, հանին։
Նա այնչափ յանդգնեալ, մինչև կամանց հրամայէ մկրտութիւն տալ. — այս ինքն այնչափ յանդգնի կամ յանդգնեցաւ։
Հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց ազգ առնել ամենայն երկրին՝ զի հաճոյ թուեսցի. — այս ինքն հաւանէին, հաւանեցան ազգ առնել, կամ հաւանեալ ազգ առնէին, ազգ արարին։
Յայսցանէ ընկալեալ համարձակութիւն ամենայն ոք՝ հայր իւր կոչել զԱստուած. — այս ինքն ընկալաւ համարձակութիւն կոչել, կամ ընկալեալ կոչէ։
Նա արդ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն. — այս ինքն եղև որոտումն, ահաբեկեաց։
Ասացեալ ՚ի հօրէ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւռ. — այս ինքն և անդէն եղև։
Այս թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ

'ի քաղելոյն, տաճիկ ուղտուք արձակէ 'ի Հայս
արս. — այս ինքն քանզի լուաւ.

Եւ տորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ,
Թագաւորեալ ամս քառասուն և մի. — այս ինքն
սա սիրելի եղև կամ Թագաւորեաց.

Եւ կիտոյն 'ի նոցանէ զմեծն Սահակ խնդրեալ.
— այս ինքն կէսքն խնդրէին, խնդրեցին.

Այն ինչ դադարեալ անձրևին, տօթ եղև. —
այս ինքն այն ինչ, իբրև դադարեաց.

Եւ 'ի լինել աշնան՝ կոխան եղեալ մորենի. — այս
ինքն կոխան եղև.

Եւ զպատճէն հրովարտակիս այսորիկ յառաջ հա-
նեալ եղեալ և տարածեալ ամենայն զգուշու-
թեամբ, եթէ Հրէից վարել զկուրեանց օրէնս.
— այս ինքն հանեալ դիջիք և տարածեսջիք, վա-
րել Հրէից զկուրեանց օրէնս (557).

Հրամայէր նոցա լուանալ և օրհել, զի արժանա-
ւորք լեալ աստուածատես փառացն տեսանելոյ.
— այս ինքն զի արժանաւորք լինիցին.

Յօրինականն՝ որ եհարց զնա, թէ զի՞նչ ինչ արա-
րեալ՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից.
— այս ինքն զի՞նչ ինչ արարից կամ առնիցեմ.

607. Հայերէնի յատուկ եղած ոճ մըն է որ երրորդ
դէմք մէկու մը վրայ բան մը պատմելու ատեն՝ բային
և ուրիշ բառերուն դէմքը առջի դէմք կը փոխուի իբրև
անոր բերնէն. ինչպէս,

Իբրև ետես՝ թէ մեռանեմ, կոչեաց նա զծառայսն.
— փոխանակ ըսելու՝ թէ մեռանի.

Իբրև գիտաց՝ թէ ոչ կարեմ ժոյժ ունել նմա, դար-
ձաւ անդրէն. — փոխանակ՝ թէ ոչ կարէ.

Շինեցին յաշտարակս ամրացեալս, զուցէ գայ-
ցեն հեթանոսք և կոխան առնիցեն զմեզ. —
փոխանակ ըսելու զնոսա.

Երբեւ ետես 'Ալիկանտը՝ եթէ յայտնեցաւ խոր-հուրդ-նոնս, խաղաղ պատահել նոնս պատերազ-մաւ. — փոխանակ՝ խորհուրդն, խորհուրդ իւր ։

Օտեր աղաչէին, մի 'ի ձեռս հայհոյիչ խուժա-դուժ հեթանոսաց մատնել զքեզ. — փոխանակ՝ զինքեանս, զնոսա ։

Լոյ տեղեկին փառանձեմ երբեւ ետես՝ եթէ միայն մաշէ, երաց զգուանըքեղլին. — փոխանակ՝ մնաց ։

Ծանձն իւր տարաբերէր՝ թէ յի Բաֆէշէշ զզա-նութիւն թիւնից. — փոխանակ՝ թափեալ ։

Գրերեւ ցուցանէր՝ որպէս զիւն օգնականութեանք զգործ քաջութեան էնոյ յառաջ մատուցեալ. — փոխանակ՝ իւրոյ ։

Եթէ կիսոյ կէս 'ի մէնջ Քաանիշէնէ, ոչ զիցէն 'ի վերայ մեր զինու. — փոխանակ՝ մեռանիցի կամ մեռանիցին ։

608. Բայց մի դիմքի տեղ շատ անգամ էական բայը կը դրուի ու ան բային մարիչ դերբայն ։ Էական բայը կամ եզակի երրորդ դէմք կ'ըլլայ տրական խնդի-րով, կամ ամէն դէմք եզակի ու յոգնակի. ինչպէս,

609. Եզակի երրորդ դէմք՝ տրական խնդիրով.

Իր ինձ լինել այսօր յերկրի անծանօթ ում. — այս ինքն լինէի, զտանէի ։

Իր երբեմն (նոցա) զհետ երամակաց ցուց ար-շաւել. — այս ինքն արշաւէին ։

Ո՞յն ինչ լինէր նոցա հասանել. — այս ինքն այն ինչ, երբեւ հասանէին ։

Ինձ լիցի պաշտել զՏէր տուած արարիչ. — այս ինքն ես պաշտեցից ։

Կայ լիցի քեզ յուխտի մերում. — դու կացցես դու ։

610. Ամէն դէմք եզակի ու յոգնակի.

Պահանջքն էին մատուցանել զձարպսն. — այս ինքն մատուցանէին ։

Եղես լինել 'ի հազարաւորս. — այս ինքն լիցիս, լինիցիս ։

Լինին նոքա առնել. Այլ ոչ լինէին տեսանել զնա. — այս ինքն առնեն, ոչ տեսանէին ։

Զի թողուլ զչարն և ընտրել զբարին լիցին. — այս ինքն զի թողցեն, ընտրեսցեն ։

Յորժամ մտանելոյ լինիցիմք. — այս ինքն յորժամ մտանիցեմք ։

Եղեն խորհել զվաստակս. Եղիցուք չլինել զան-ձինս. — այս ինքն խորհեցան, չլինեսցուք ։

Եղիցին ականջք քո լսել ձայն 'ի լսել. Յայս լեր թեակոխել. — այս ինքն լսիցեն, թեակոխեա ։

611. Կրաւորական բայերը երբեմն հասարակ բայի պէս հայցական խնդիր կ'առնեն ան անունը՝ որ անուն բայի պիտի ըլլար, ու ընդունելութեան խնդիրներն անուն բայի կ'առնեն.

Զոր ինչ հրամայեցարն՝ զայն զինու ածքեր. — այս ինքն որ ինչ քեզմէ հրամայեցաւ ։

Յիրաւի պահանջի ընդ որոյ յանդգնեցաւն պա-տիժս. — այս ինքն պատիժք պահանջին 'ի նը-մանէ ։

Զարիւն որդւոյն զոր ծնաւ ոք՝ պահանջի, թէ երկիւղին Աստուծոյ ոչ մտացանէ. — այս ինքն արիւնն պահանջի 'ի նմանէ ։

Զուր եմն յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հար-ցանի (Ադամ). — այս ինքն ուր եմն հարցանի Ադամայ ։

Ոչ հրեշտակք հաւատացան զկարգ քահանայու-թեանն. — այս ինքն ոչ հրեշտակաց հաւատա-ցաւ կարգ քահանայութեանն ։

Վիճակեցաւ երեւակն զառաջին և զվերջագոյն գօ-տի. — այս ինքն առաջին և վերջագոյն գօտին վի-ճակեցաւ երեւակին ։

Ո սոյն 'ի Պաւղոսէ աղաչիմք . — այս ինքն սոյնս աղաչէ՝ խնդրի 'ի մէնջ առ 'ի Պաւղոսէ ։

Ո մեծն յանձնեցար շահավաճառութիւն . — այս ինքն մեծ շահավաճառութիւնն յանձնեցաւ քեզ ։

Ո խնւորք աշխարհիս մերոյ զհայրենի տէրութիւնն 'ի բաց կողոպտեցան . — այս ինքն հայրենի տէրութիւնն կողոպտեցաւ 'ի զինուորաց մերոց ։

612 . Անորոշ դերբային, մանաւանդ սեռականին, հայցական խնդիրը շատ անգամ սեռական կը դրուի յատկացուցիչի պէս (383, 384) ։

Վասն կնոջ առնելոյ քահանայի . — այս ինքն վասն կին առնելոյ ։

Ետուն 'ի գործ արքունի՝ վարձ նաւաց գործելոյ . — այս ինքն նաւս գործելոյ ։

Առ աւազանս մկրտութեան՝ կնքոյ տալոյ . — այս ինքն կնիք տալոյ ։

Վասն թողութեան տալոյ մարդկան . — այս ինքն թողութիւն տալոյ ։

Յետ աղօթիցն և այլոց ուղղութեանց յիշեցուցանելոյ . — այս ինքն յետ յիշեցուցանելոյ զաղօթսն և զայլ ուղղութիւնսն ։

Ի ժամու մատուցանելոյ պատարագին . — այս ինքն մատուցանելոյ զպատարագն ։

Որ դատելոյն և արդարացուցանելոյն ամենեցուն . — այս ինքն զամենեսեան ։

Փորձելն՝ քննելն է անձին . — այս ինքն՝ է քննելն զանձն ։

Աբրահամու պատարագելն Իսահակայ . — այս ինքն պատարագելն զԻսահակ ։

Ինձ ոչ փոքր է հիանալ, վասն այսր՝ խնդրոյ ունել ձեզ . — այս ինքն խնդիր ունել ձեզ վասն այսր ։

613 . Լական, կրաւորական ու չէզոք անցեալ դերբային, մանաւանդ հոլովածին, ուղղական խնդիրն ալ կը դրուի երբեմն համաձայն դերբային կամ ան անուանին որու որ կ՚ըսուի նէ ։

Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի . — այս ինքն եղելոյ թագաւոր Մարաց ։

Այնպիսեաց չարաց եղելոցն դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ . — այս ինքն այնպիսի չար եղելոցն ։

Վասն որդւոյ իւրոյ, սահմանելոյ որդւոյն Աստուծոյ . — այս ինքն սահմանելոյն որդի Աստուծոյ ։

Զոր ես յանձնեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոց . — այս ինքն զանուանելոցն մերձաւոր, զայնոցիկ որ մերձաւորքն անուանին ։

Խաւսցուք փոքր ինչ և վասն առաջաւորացն 'ի մէնջ անուանեալ պահոց . — այս ինքն վասն 'ի մէնջ առաջաւորք անուանեալ պահոց ։

Յարմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս պոնտացւոց . — այս ինքն յայնմանէ կոչեցելոյն Արմէն, յայնմանէ որ կոչէր Արմէն ։

Զի և 'ի փոքունցն թուեցելոց մի ինչ արտասեն անտես . — այս ինքն 'ի թուեցելոցն փոքր, յայնցանէ որ փոքր թուին ։

Վասն իշոցն՝ երեքօրէից կորուսելոց . — այս ինքն երեքօրեայ կորուսելոց, որ ըսել է յերից աւուրց հետէ ։

614 . Ուղղական ու նախդրիւ տրական խնդիրները (342, 363), շատ հեղ եզակիի տեղ յոգնակի կը դրուին .

Միթէ այրս աւազակաց եղև տունդ իմ ։ Ածոյց զնա իւր յորդեգիրս ։

Զքեզ յորդեգիրս առնէր ։ Արձակեսցես զնա ազատս 'ի քէն ։

Խոր տախտակամածս արասցես զնա ։

Ոչ միայն երանելիս չասեն, այլ և եղկելիս՝ զայն որ զչար բանսն լսիցէ ։

Զտիւն գիշերս գործէ արբեցութիւնն ։

Զայրն՝ որում զգուշն յանձն արարին, զնոյն դեսպանս արձակեցին ։

Տգեղս ցուցեալ զիս ամենեքին ։ Զնա եդ զլուխս եկեղեցւոյ ։

Զքեզ միածնին իւրոյ հաղորդս և մարմնակիցս և ժառանգաւորս արար ։

Զպարզն առաջի դնեն իբրև զխորահասս, վասն այնորիկ և օգտակարս ։

Ընդ արշալուրջսն . ընդ առաւօտս . ընդ այգս այգուն . ընդ երեկս աւուրն ։

615 . Գործիական ու բացառական բառերուն յատկացուցիչը՝ շատ տեղ անոնց պէս գործիական ու բացառական կը դրուի . ինչպէս,

616 . Գործիական յատկացուցիչ .

Հաստատեա զսիրտ քո պատառով միով հացիւ . — այս ինքն պատառով միով հացի ։

Գնալ ուղղութեամբ սրտիւ . Միամտութեամբ սրտիւ խնդրել . — այս ինքն սրտի ։

Սատակեցի զնոսա բանիւ բերանով իմով . — այս ինքն բերանոյ իմոյ ։

Ընդ հովանեաւ աջովդ քով սրբով . — այս ինքն աջոյդ քոյ սրբոյ ։

Խօսել բանիւք խաղաղութեամբ, բանիւք ողորմանօք, բանիւք սպառնալեօք . — այս ինքն խաղաղութեան, ողորմանաց, սպառնալեաց ։

Արժանաւոր իւրովք մարգարէիւքն ձայնիւք . — այս ինքն իւրոց մարգարէիցն ։

Զանօրէնութիւն մաքրեալ ինքեամբ մահուն . — այս ինքն ինքեան մահուամբն ։

617. Բացառական յատկացուցիչ.

Ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ. — այս ինքն ծննդեան իւրոյ։

Բնակեալ յերեսաց երկրէ. Գնալ 'ի ծագաց երկրէ. — այս ինքն երկրի։

Յորդւոց մարդկանէ կամ յորդւոց 'ի մարդկանէ. — այս ինքն մարդկան։

Ի խորոց անդնդոց երկրէ. Ի պտղոյ որովայնէ քումմէ. — այս ինքն երկրի, որովայնի քոյ։

Ի չարախօսութենէ օտար լեզուէ. — այս ինքն օտար լեզուի։

Ի բերանոյ զաւակէ զաւակի քոյ. — այս ինքն զաւակի զաւակի քոյ։

Ի գլխոյ լերանցն առեալ. Ծնեալն 'ի կնոջէ Թագաւորէն. — այս ինքն լերինն, Թագաւորին։

Ի տանէ կողմանէ. Յինէն կողմանէ. Ի մէնջ կուսէ. — այս ինքն 'ի տան կողմանէ, յիմ կողմանէ, 'ի մեր կուսէ։

Յամբոխէն բազմութենէ. Ի հօրէ յայտնութենէ. — այս ինքն ամբոխին, հօր։

Ի տէրունական խաչէն զօրութենէ. — տ̃ի խաչին։

Ի մարգարէէս գեղեցկապէս գերծանել կամաց. — այս ինքն մարգարէիս։

Օ կնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոյն առէ. — այս ինքն զկնոջն քանանացւոյ։

618. Բայց յատկացուցիչը ածական որ ունենայ՝ ան չհամաձայնիր երբեմն, երբեմն ալ ան միայն կը համաձայնի ու ոչ յատկացուցիչը.

Ընդ հովանեաւ աջոյդ քո սրբոյ. Հեղմամբ արեամբդ քո սրբոյ. Յաջոյ փրկչէն մերոյ և տեառն. — այս ինքն աջոյդ սրբոյ, արեանդ սրբոյ, փրկչին մերոյ։

Հեղմամբ արեան ձերոյ կամ իւրոյ. — այս ինքն արեան ձերոյ, իւրոյ։

Ի գոչէ մարդոյն արդարութենէ . — այս ինքն միոյ մարդոյն ։

619 . Երբեմն ուրիշ հոլովներու ալ կ'ըլլայ որ կը համաձայնի յատկացուցիչը, կամ նախդրիւ հոլովի քով ուղղական կը դրուի, ու ետքը սեռական դերանուն մը կ'աւելցուի .

Թեւք քերովբէիցն երկայնութիւն քսան կանգուն. — այս ինքն երկայնութիւն թեւոց ։

Պատրաստեալ հուրն, մինչեւ ուրուք 'ի նա փըչեալ, վառումն նորա յայտնի իմացաւ . — այս ինքն վառումն հրոյն, որուն տեղը աւելցած է նորա ։

Սուգ եւ մխիթարութիւն՝ անուանք նոցին ընթանան յաշխարհի . — այս ինքն սգոյ եւ մխիթարութեան անուանքն ։

Զերկիրն Հայոց այնուհետեւ եկեալ արքայն Պարսից յիւր անուն զտեղին անուանէր . — այս ինքն զտեղիս երկրին Հայոց ։

Եւ ոչ զյորովայնի զկենանն կարէ ոք առնել զյօրինուածն . — այս ինքն զյօրինուածս կենացն որ յորովայնի ։

Ընդ հրեշտակն դասակցելով պարս . — այս ինքն ընդ հրեշտակացն պարս ։

Սուրբ ուխտաւոր մանուկն՝ զինչ պիղծ մերձենայր 'ի ձեռս նորա՝ սրբեալ լինէր . — այս ինքն 'ի ձեռս սուրբ ուխտաւոր մանկանն ։

Յարաբերական յատկացուցիչին վրայ ալ շատ անգամ կ'երեւնայ աս բանս, որով կ'ըլլայ ըսածնիս 'ի 581 ։

620 . Իսկ երբոր կ'ըսենք Պատառ մի հաց կամ մագաղաթ, բաժակ մի ջուր, բեռն մի փայտ, եւն, չորս կերպ կրնայ իմացուիլ . մէյմը յատկացուցիչ ըստ 619, մէյմը ուղղական խնդիր ըստ 342, 381, 389, մէյմը գործիական խնդիր ըստ 371, մէյմ՝ ալ ածական ըստ 585 ։

621. Երբեմն ալ յատկացուցիչը ու յատկացեալը կը փոխեն հոլովնին, մէկը միւսին հոլովը կ'առնէ.

Ի չխոր բարբառոյ տալ նմա պատգամ. — փոխանակ ըսելու 'ի բարբառ չխորի:

Զփուշն խլել զցանկութիւն բուսոյն հրամայէ. — փոխանակ՝ զբոյս ցանկութեանն:

Հանապազորդ արտասուօք աւազանին լուանալ. — փոխանակ՝ աւազանաւ արտասուացն:

Հաստաւ օգնականութիւն յուսոյ նոցա. — փոխանակ՝ յոյս օգնականութեան:

Ի ժամանակի փախստենէն Րադհոյ. — փոխանակ՝ 'ի ժամանակէ փախստեանն:

Ի գրանէ մարդկանն նենգեալ. — փոխանակ՝ 'ի մարդկանէ գրանն:

Հասարակախառն ինչ բնութեամբ օրինաց. — փոխանակ՝ օրինօք բնութեան:

Ողջ լէր յաղթունական տէրութեանդ պարագայց ամօք. — փոխանակ՝ պարագայիւք ամաց:

622. Գոյականին ածականը երբեմն սեռական կը դրուի յատկացուցիչի պէս.

Օծցին իւղով 'ի մրոյ պարզելոյ. — այս ինքն իւղով պարզելով 'ի մրոյ:

Խմել արեամբ վասն ձեր հեղլոյ. — այս ինքն արեամբ հեղլով (297):

Ուռկանաւն արկելոյ 'ի ծով: Զննելի բնութեամբ մարդկայնոյ:

Մկրտեցար արեամբդ քո սրբոյ: Ծնողք սրբոյ աւազանաւն:

Հերձուածականին չարափառութեամբ. — այս ինքն հերձուածական չարափառութեամբն:

Յանուանեալ Թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին. — այս ինքն յանուանեալ 'ի մարմնաւոր ձեռագործ Թլփատութենէ անտի:

Որդ զայս տուաք բան սակաւուց՝ ձեզ մխիթար տրտմեցելոց . — այս ինքն զայս բան սակաւ ։

Ի մեղադրութենէ աստուածայնոյն և մարդկայնոցս արտաքս զինքն որցեալ . — այս ինքն յաստուածային և մարդկային մեղադրութենէ կամ մեղադրութեանց ։

Օ՜ լեզու մարդկան ... զլի թունոք մահաբերին . — այս ինքն թունոք մահաբերօք ։

Իւրայովքն զօրօք բազմի վառելովք . — այս ինքն զօրօք բազմօք ։

Փառաբանչօքն անմահից . — այս ինքն անմահ փառաբանչօքն ։

Տարեօրականաց լցեալ զանազան պտղովք . — այս ինքն տարեօրական զանազան պտղովք ։

Մեծաբանս մնոտեաց բարբառել . — այս ինքն մնոտի մեծաբանութիւնս , կամ ըստ 435 ։

Շինեցին 'ի պարիսպս ամուր՝ յաշտարակս հզօրաց . — այս ինքն յաշտարակս հզօրս ։

Ընդ արդարս երջանկաց . — այս ինքն ընդ երջանիկ արդարս ։

Հեռագոյն լինիցի ընդ ձեզ և ընդ նոսա որչափ կանգունք երկուց հազարաց . — այս ինքն երկու հազար կանգունք ։

Յայն աւուրս եօթանց կամ եօթեանցն . — այս ինքն յայն եօթն աւուրսն ։

623 . Զօրաւոր հոլովման նախդրիւ վերջահոլով տրականին աւելի համարձակ ու բնականաբար կ'ըլլայ աս բանդ , ինչու որ -ց ալ -մի պէս ամենեւին տրական է . ուստի շատ տեղ կ'ըսուի

Յաւուրն առաջնոյ . — որ ըսել է առաջնում ։

Խնամատութիւն ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղօք ։

Նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ ։

Ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով ։ Ի յաւանակի նորոյ նստեալ ։

՚Նիզակն արի ՚ի ձեռին իւրում աջոյ և յահեկումն վահան ։

Ի մարմնի իմոյ, ՚ի սրտի իմոյ, ՚ի հեծութեան իմոյ, ՚ի ձեռին քոյ կամ քում։

Ի հանգստեան ձերոյ ․ յերկրորդում ամին իւրոյ ․ — այս ինքն իմում, ձերում, իւրում։

624 ․ Երբեմն ալ գոյականին հոլովը ածականը կ՚առնէ, ու գոյականը սեռական կը դրուի յատկացուցիչի պէս ․

Թագաւորեաց ամօրեայ մի աւուրց ․ — այս ինքն ամօրեայ մի աւուրս ։

Աջակողմն թևին բեկաւ ․ — այս ինքն աջակողմ թեւն ։

Հակառակորդք բազում են գործակցաւ բանսարկուին ․ — այս ինքն գործակից բանսարկուաւն ։

Յիւրմէ բարեսէր առատութեանն ․ — այս ինքն յիւր բարեսէր առատութենէն ։

Յահեկէ զատին երկսայրի ․ — այս ինքն յահեակ զատէն ։

Արգելականք կուսանաց ․ — այս ինքն արգելական կուսանք ։

Ընդ հնգեկան կամարարն կուսանաց ․ — այս ինքն կամարար կուսանն ։

Սատակել զսատակիչսն չարացելոյ թշնամեացն ․ — այս ինքն զսատակիչ չարացեալ թշնամին ։

Բաշխել նոցա զդահեկանաց տարեւորն ․ — այս ինքն զտարեւոր դահեկանն ։

Ճակատեցաւ ութ հարիւր հազարօք զօրաւորօք պատերազմողաց ․ — այս ինքն ութ հարիւր հազար զօրաւոր պատերազմողօք ։

Ընտրեաց երեսուն հազար արանց զօրաւորս զօրութեամբ ․ — այս ինքն արս ։

Անկան քսան հազար արանց . Սատակեաց ութ հազար արանց . — այս ինքն արք , արս ։

Տաց քեզ տասն արծաթոյ կամ երկուս հազարս երկվարաց . — այս ինքն արծաթ , երկվարս ։

Զհազար և զհարիւր արծաթոյ զոր առեր . . . դարձոյց անդրէն զհազար և զհարիւր արծաթն ։

Երիւք սոցին . Յերկուց սոցա . Յերկոցունց սոցա . — այս ինքն երիւք սոքօք , յերկուց 'ի սոցանէ ։

625 . Երբեմն ալ գոյականը ածականի պէս առաջ կը դրուի ուղղական , ու ածականը ետև՝ գոյականին հոլովը .

Ընտիր ընտիր երիտասարդ վառելովք . — այս ինքն վառեալ երիտասարդօք ։

Եկին յոր հասարակին . — այս ինքն 'ի հասարակ աւուրն ։

Լուեալ 'ի քահանայիցն և 'ի նախարար պատգամաւորացն եկելոց . — այս ինքն 'ի պատգամաւոր նախարարացն ։

Զարթոյց տէր զոգին Կիւրոս պարսկի . Զբարութիւն Նեէման ասորւոյ . Զկնի Յովհան մանդակունւոյ . — այս ինքն պարսիկ Կիւրոսի , ասորի՝ Նեէմանայ , մանդակունի Յովհաննու կամ Յովհաննու մանդակունւոյ ։

Առ Աղեքսանդր մակեդոնացւով . — այս ինքն առ մակեդոնացի Աղեքսանդրիւ կամ առ Աղեքսանդրիւ մակեդոնացւով ։

ՅԱրիստոտէլ նրբախօսէն . — այս ինքն 'ի նրբախօս Արիստոտէլէն ։

626 . Երբեմն ալ ածականը առանց նայելու իր գոյականին համաձայնութեան օրէնքին՝ կը դրուի ինչպէս որ յարմարի նէ բային կամ խնդիր առնողի մը .

Առեալ անձնագեղոյն և քաջագեղան արին Վաղարշակ կորովաբանոյն և համաձարեղի . — սեռական ուղղական մէկտեղ են , [illegible] անցեալ դեր-

բային համար, որ ուղղական ալ կ՚առնէ անուն բայի սեռական ալ (328, 330)։

Մտաց աչաց խնամոնց և ոչ թէ զգալեաւ տեսանէին. — վասն զի տեսանէմ գործիական ալ տրական ալ կ՚առնէ խնդիր։

Յառաջնում յարձակել անդ. — վասն զի յառաջին յարձակել ըսեր ես՝ յառաջնում յարձակել, երկուքը մէկ է, յարձակելը յարձակման տեղ ըլլալուն։

Մերձ առ մեծիմաստն Սոփոկլեսեան թագաւորին կացելոյ յայնմ նահանգի. — վասն զի առ ուղղական ալ սեռական ալ կ՚առնէ նոյն մտքով։

Ըստ մեծի չարչարանօքն Քրիստոսի։ Ընդ մեծի մեղադրութեամբ է։ Օ ցալի այն ասի, որ ընդ զգայարանացս ՚ի ներքոյ անկանի, կամ ընդ առնեքումբք կամ ընդ ոտամբք կամ ընդ միով. — վասն զի ընդ, ընդ գործիական ալ սեռական ալ կ՚առնէն մէկ մտքով։

Ըստ ազգի ազգի և պէսպէս տուեցելովք ՚ի նմանէ շնորհացն. — վասն զի ըստ գործիական ալ կ՚առնէ երբեմն տրականի մտքով։

Տես և ՚ի 582։

627. Միջակ անուններուն ու դերանուններուն հոլովները շատ անգամ մէկմէկու տեղ կը դրուին, ևս առաւել սեռական ու տրական իրարու տեղ կամ գործիականի ու բացառականի տեղ, մանաւանդ ածական որ ըլլան գոյականի մը։ Նաև մինակ՝ քիչ։

628. Նա դերանունը երբեմն ինքն, ինք դերանուանց տեղ ալ կը բանի.

Որ նա և նա միայն գիտէին. — այս ինքն ինքն և նա։

Գիտաց Յիսուս թէ կամէին զնա հարցանել. — այս ինքն զինքն։

Ասէ Յիսուս ցեկեալսն 'ի վերայ նորա . — այս ինքն 'ի վերայ իւր ։

Ասէ Աբրահամ ցծառայն իւր ցերէց տան իւրոյ՝ ցիշխան ամենայն ընչից նորա . — այս ինքն ամենայն ընչից իւր կամ իւրոյ ։

Վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա . — այս ինքն եղբօր իւրոյ ։

Աղաչէր զնա կինն զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա . — այս ինքն 'ի դստերէ իւրմէ ։

Գոհանային զԱստուծոյ հարցն նոցա . — այս ինքն հարցն իւրեանց ։

Բայց զգուշանալու է որ ծուռ միտք չելլէ ։

629 . Ազգական յարաբերականը որ՝ ամէն հոլովի տեղ կը բանի շատ անգամ , ու շատ տեղ՝ ետեւէն պէտք եղած հոլովովը դերանուն մը կ'աւելցուի . աշխարհաբառերնուս մէջն ալ կայ աս . ինչպէս ,

630 . Սեբ . Ներքեւ զմնացուած ոք որ չիք այլ ինչ յոյս 'ի միտս նորա . — այս ինքն յորոյ միտս չիք , ու որուն տեղը աւելցած է նորա ։

Ան՝ որ ոչ գոյ բանք 'ի բերան . — յն որոց ոչ գոյ ։

631 . Տր . Զօրութիւն է՝ որ մեկին է նմա ամենայն . — այս ինքն որում ։

Զոր գիտէ՝ կամի , և զոր կամի՝ գիտէ . որ առ մերս բնութիւն անհնար է այսմ լինել . — այս ինքն որում անհնար է լինել ։

632 . Գործ . Այնու որ պակաս գտար , եղեր ամենայն օրինացն պարտական . — այս ինքն որով պակաս գտար ։

Որ ամենայն ինչ նովաւ եղեւ , հարկ էր զի նովաւ որբեսցին . — այս ինքն որով ամենայն ինչ եղեւ ։

633 . Բուզ . Մտցուք առ Աստուած կենդանի , որ ոչ եւս ելանիցեմք 'ի նմանէ . — այս ինքն յորմէ ոչ եւս ելանիցեմք ։

Հաստանել յաղջէ յայնմանէ՝ որ խրատունք Աս-տուծոյ տարամերժեալ տրոհեալ է 'ի Նոյանէ . — այս ինքն յորոց տարամերժեալ տրոհեալ է (571) ։

634 . Հայց . Զպարտն որ պարտիք ։ Տեսեալ զայն որ յառաջն ուրանայիր ։

Զամենայն որ միանգամ կամիցիք ։ Զամենայն որ ինչ ասացի ձեզ ։

Զամուրդ որ ամրացուցեր ։ Զամենայն բանսն որ ուխտեաց նմա ։

Մեծ էր ատելութիւնն որ ատեաց զնա . — այս ինքն զոր , որով (374 , 377) ։

635 . Սովոր նախդրով հոլովներու տեղ .

Զայն որ նոքա հուպ լինել չիշխէին . — այս ինքն յոր ։

Մինչև յօրն որ ամենայն խոյք 'ի վեր գան . — այս ինքն յորում ։

Մի յայնցանէ է որ երկրպագութիւն տալ 'ի Նոսա . — այս ինքն յորս ։

Անխիք չլինուածս յերկինս առանց մարմնաւոր ձե-ւագործի , որ ոչ երևին ձեր աչքունքդ — Նո-րոյ . — այս ինքն առ որովք ոչ երևին ։

636 . Սոր շատ տեղ չէ շաղկապ ալ կը նշանակէ , որ աշխարհաբառ ալ որ կ'ըսենք .

Զգալէին որ զայս ողջ անարատ հաստացանել մար-թացեն ։

Կամիս որ դու միայն իցես . — կ'ուզես որ դու միայն ըլլաս ։

637 . Զէ միջակ անուանն ալ (80) որ յարաբերականի պէս կը բանի շատ տեղ , ու անոր պէս ալ ուղղական ա-մէն հոլովի տեղ բանեցուցած կայ նախնեաց լաւ շա-րադրութեան մէջ .

Ես որպէս խուլ զի ոչ լսէ , որպէս համր որ ոչ բա-նայ զբերան իւր ։

Ես որպէս խուլ որ ոչ լսէ, և իբրև զհամր զի ոչ բանայ զբերան իւր ։

Իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս ։

Իբրև ջուրք բազումք զի ծածկեն զծովս ։

Որպէս հանդերձ զի ագանի, որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ ։

Է ինչ զի և ՚ի մարգարէսն յիշի, և է ինչ՝ որ միայն ՚ի գիրս յայս ։

Յած անտի կչին՝ զի անուն էր նորա Ովսանիկի . — այս ինքն որոյ անուն էր ։

Եկն մարախ և խառնիճ՝ զի ոչ գոյր թիւ . — այս ինքն որոյ չափ ոչ ։

Գոյ աստ այլ մի ՚ի զբաւն քում՝ զի իբրգ այգ նո-ջա մեծարեն . — այս ինքն որով իբրգ այգ մեծարեն ։

Եւ զայս՝ զի ոչ համբերեմք մեք տեսանել, գոր-ծէաք և մեք . — այս ինքն զոր ոչ համբերեմք տեսանել ։

Ի ժամանակի՝ զի հարկանէր զԴարեհ արքայ . — այս ինքն յորում հարկանէր ։

Հանգիստի յայնմ ժամու՝ զի մկրտէր զԳրիգոր . — այս ինքն յորում մկրտէր ։

638 . Մակբայներ ու շաղկապներ ալ կան շատ, որ մէկը մէկալի տեղով իրարու տեղ կը բանին երբեմն . բայց ատ իրենց այլևայլ նշանակութիւննին ըլլալով բառգրքին կ'իյնայ սորվցնելը ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

639. Արտուղութիւն է պարզ շարադրութեան բնական կարգէն դուրս ելլելը աղուորութեան մը համար, կամ աւելի ազդու կամ բացայայտ ընելու խօսքը ։

640. Շարադրութեան բնական կարգն է առաջ անուան բային դնել, ետքը բայը, ետեւէն խնդիրը կամ մակբայը. անուան բային ու խնդիրին յատկացուցիչը կամ բացայայտիչը ամէն մէկինը իր քովը. նոյնպէս ածականները գոյականներուն քովը. ուրիշ խնդիր առնողներուն խնդիրը իրենց քովը, ու նախդիրները ամէն մէկինը իր վրան ։ Ասկէ դուրս եղած շարքը՝ արտուղութիւն կը սեպուի ։

641. Ասանկ, անուան բային շատ անգամ ետեւ կը դրուի, ու բառերով կը բաժնուի, ու խնդիրն ալ շատ անգամ առաջ կը դրուի.

*Եմուտ առնել խունկս և ողջակէզս Յէսու ։ Զարմացեալ էր ընդ միտս Պետրոս ։*

*Մատեաւ և յարդարան երբեմն փորձ մահու ։*

*Հրամայեաց զնա վաճառել տէրն նորա և զկին նորա և զորդիս նորա ։*

*Այնու ևս յայտ լինէր՝ եթէ 'ի ծառայութեան և 'ի հնազանդութեան կայ ակամայ Առաքելոցն սատանայ ։*

*Զինչ ընդհատ 'ի մանկուց լիցուք՝ որ ընդ խաղս տունս շինիցեն, մեք որ գեղեցիկ ապարանս շինիցեմք ։*

Պու զյանդուգն զբուռն ապրայն սաստիկ զփարա-ւոն, որ արկ 'ի ծառայութիւն զժողովուրդ քո մէ զԻսրայէլ, պէսպէս հարուածովք կոտորեցեր.

Նոյա առնմոյն որ չէ հնար եթէ բարիս առնելն.

Որ 'ի վեր քան զամենեսեան է, առ այն որ 'ի խոնարհ քան զամենեսին եր՝ եջ.

Օմնդ գարեւականն ընդ որ հանապազ անցանէ՝ յիշեցէ.

Պանէ յօժարութիւն յորժամ այսր ժողովեցինք՝ ցուցանիցեսք.

Նշխր զանէծս օրինացն որ վասն յանցուածոց ե-գան՝ լուծանել.

642. Պերբայն ու իր էականն բային մէջ այլեայլ բառ կը մտնէ, ինչպէս անուն բայի, ինքնր, մակբայ, եւ. ու անով կը զատուին մէկմէկէ.

Այս ծնեալ իսկ 'ի զմին ես. Հանեալ չեւ եւս է.

Ամ է որն լինելութեան նշանակեալ. Որ ժողովն նոցա խառնեալ.

Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղա-քին եւ սպանութեան արկեալ 'ի բանտ.

Ուրախացեալ յոյժ էին քաղաքացիքն. Բեղ Օւոր եկեալ ընդ ձեռամբ առնեալ.

Աշեցեն մնացեալքն Յակոբայ յԱստուած դարձեալ.

Ես արդարեւ ըմբեալ մեր. Մինչ է զորս արժանի մահու գործեալ.

Չեւ իմ 'ի նոցանէ գտեալ զառողջութիւն. Թէ չէր նախ Թողեալ.

Թէ չէր զմանուկն տեսեալ. Մինչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ.

Չեւ իցէ հաւու խօսեալ. Իցէ քերովբէիցն թռուցեալ զԹեւս իւրեանց.

Ընդ ամենեցուն ես համարս տուեալ. Չէ զհարկն 'ի զուրս հատուցանելոց.

Ընդ էր նորա Թափելոց զկեանսն.

643. Այլեւայլ խնդիր առնողներ մէկտեղ որ գտնուին, երբեմն մօտին միայն կը տրուի խնդիր, երբեմն ալ հեռաւորին, ու մէկալը զօրութեամբ կը հասկցուի. ինչպէս,

644. Մօտին խնդիր.

Օրհնեալ Աստուած հարցն մերոց փառաւոր եւ օրհնեալ.
Նեղեալ անձինք օրհնեն եւ փառաւորեն զԱստուած.
Կացէք մնացէք պահեցէք զուք առ մեզ ընդ հաւատ.
Կարկեցեալ 'ի դէպ մտանել եւ ելանել 'ի ձայնէ.
Իջմունքն եւ ելքութն 'ի խորոց.

645. Հեռուին խնդիր.

Օ բաղձանս սրբեալս սաստկեցին եւ տըրեցէն հրով.
Օ Տէրութեան եկին փոքն փոխուցեալ.
Սակաւ զայր ընդրական իշխանութեանն. Սերին զըռ-նացին ընա.
Սանս եղանէ շրջոութեան նորա.
Սանս փառք զնայ Աստուած ընդդէմ նոցա. Հեր-ջոյր անցանէր ըստանգն.
Թաղման եւ գնան Յարութեան ըստորոն խորեանց.

646. Շատ հեղ ալ բայի կամ անունի մը խնդիրը միջանկեալ բառերով կը հեռանայ.

Սա հասարակ աղօթս անկեալ ծաղուանեէն.
Սնծանօթ հրամանն է զանեղեն ճոյությանէն.
Տեսանեմ զմարդիկս զի շրջին՝ իբրեւ ծառս. — այս ինքն՝ զմարդիկս որ շրջին (637) տեսանեմ իբրեւ զծառս.
Արար Աստուած այս որդւոցն Իսրայէլի.
Արկ Հերովդէս արքայ զձեռն չարչարել զոմանս.
Աղտ կամ սուտք կամ ձայնիւ տանիցէ.
Օ ինչ ինչ լոյս եւ օրհնութիւնս տանիցէն.
Արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն մէջէն.
Ոչ զօսանալ ձեռաց խափողաց հրամայեցեր օրհ-նեալ փափաթանաց.
Նա աստ աղաւթութեանն 'ի նմանէ կատարեալ լինի 'ի փրկչաց անտի.

Զհնազանդութիւն արարածոց պատմէ՝ արարչին ։
Ո՞ր օրէնք զի կանգնեալ երևեցաւ 'ի հնդկանեաց ։

647 . Յատկացուցիչը յատկացելեան ու բացայայտիչը բացայայտեալէն կը հեռանան՝ միջերնին բառեր իյնալով .

Զայն օրում ելանէր նահապետն ազատելոց ։
Որ է առաւել գոյ 'ի նմա իմաստութեան և հանճարոյ ։
Իմ փոքր մի և սասանեալ էին սոքա ։
Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք 'ի նա հայէին ։
Ամենեցունց ճարտարապետն ուսոյց ինձ, իմաստութիւն ։
Որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն ։
Նմին Վարդ ողջ զերծեալ 'ի կապանացն զօրութեամբն Աստուծոյ՝ եղբայր զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի ։

648 . Ածականներն ալ կերպ կերպ բաժնուիլ ունին գոյականէն, ինչպէս մէկ քանին տեսանք 'ի 409, 410, 412 ։ — Նմանապէս որ ինչ, որ ոք իրարմէ կը զատուին՝ միջերնին բայ կամ ուրիշ բառ մտնելով .

Որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է ։ Զոր ունիցի ոք ինչ՝ հրամայէ ընկենուլ ։
Զոր և ինչ հայցեն՝ առնուն ։ Զինչ շնորհս որ տայ քեզ Աստուած ։
Որ պարտիցի ոք ինչ յարքունիս ։ Որ անմարմին ոք է ։
Որ լաւ ոք եկեալ յաշխարհ մեռանէր ։
Որ 'ի բռնութենէ ոք ակամայ կալեալ էր զմոգութիւնն ։
Ամենայն որ միանգամ ոք կայր 'ի պատիժս ։ Որ ոչ կամիցի ոք գործել ։

649 · Նմանկ ալ ս, դ, ն, իրենց գոյականէն կը զա- տուին ․

Ի՞ ոս այդր այր · — այս ինքն է այդր այր ոք ։

Մի՛ ոս մեռցի այսօր այր յԻսրայէլէ · — այս ինքն մի՛ ոք այր մեռցի ։

Ինքն հիմունս արկ նմա Իսրայէլեան ։ Ինքն հաստա- տեալ տեղի եա ձորձոյ ։

Ու նա եդ ինքն 'ի մնի խորում։ Ի ջեղ բերիցէք ջինջերն ։

650 · Այս, այդ, այն ածական դերանունները շատ անգամ առաջ դրուելով հեռու կը զատուին իրենց գոյականէն ․

Այս երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակերտացն ։

Զայս մեծ և փրկագործ աւարտեալ 'ի մահուն իւր Քրիստոս նշխարհոքդ ։

Որոց զայս ընդ միմեանս երդմամբ արարեալ էր ։

Հաստատեաց նա զայն որ առ մեզ բարեխօսութեան ։

Զայն որ փոքր մի յառաջ խոստովանութեամբ լցեալ էր պատմառն' ուրախութեամբ ընուլ ։

Այս այն որ ամենայն զօրութեանց և բարձրու- թեանց տիրէ Աստուած ։

Այն որ 'ի հրէաստանէ անտի ազգն փախստական գնացեալ էին ։

Բազում ինչ և մեծամեծ այն էր որ 'ի նմանէ անցք ընդ եկեղեցին անցանէին . — այս ինքն այն անցք էր որ անցանէին ։

Զայն որ խառնիճաղանճ զօրս յինքն կուտեալ էր' յիւրաքանչիւր տեղիս արձակէր . — այս ինքն զայն խառնիճաղանճ զօրս որ յինքն կուտեալ էր ։

Յայն զնոսա բերէր 'ի ձորս . — յն յայն մարտս ։

651 · Նմանապէս սոյն, դոյն, նոյն, որ ոչ միայն վեր- ջահոլով առաջ կը դրուին (417), հապա նախդրիւ հոլովով ալ սովորաբար, երբեմն կը խախտին իրենց սո- վորական տեղէն' զատ առնելով մը ․

Սպանեն՝ նոյն լինի տալոյ և առնլոյ ։ Օրէն՝ մի և նոյն կացցէ ձեզ ։

Սուրբն որ ասկաւ՝ նոյն և յառնելոց է ։ Ձեռն որ զերկինս և զերկիր հաստատեցին՝ նոյն և տախտակս քարեղէնս փորագրեցին ։

Նորէնս—Բեթանէն իւրով զոր արար՝ նոյնչէն մնացի ։

Նով ըրէր՝ չնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ։

Զայրն որում զդուռնն յանձն արարին՝ չնոյն զեսպանս արձակեցին ։

Յորոփայն 'ի նոյն անկցին ։ Սայր միայր 'ի չարեան 'ի նոյն ։ Նոր ախուհեաւ յընդոտնայն եղեալ 'ի նոյն խորհուրդ . — փոխանակ՝ 'ի նոյն ընդունայն խորհուրդս ։

Ընդ ձանապարհ ընդ նոյն ոչ յաւելուցուք տեսանել զնա ։

Ի ձեռն իւր զոր մեղաւ՝ 'ի նոյն մեռցի ։

652 . Նուանի մը նախդիրը շատ անգամ իրմէ առաջ դրուած խնդիրին կամ մակբային վրայ կը դրուի , թէ վերջահոլով ըլլայ ան խնդիրը և թէ ուրիշ նախդիրով հոլով մը . ինչպէս ,

653 . Խնդիրին վրայ նախդիր .

Զգուշանալ 'ի կռոց զոհելոյ . — այս ինքն 'ի զոհելոյ կռոց ։

Նսել զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս . — այս ինքն զգործս արժանի մեծի ողբոց և արտասուաց ։

Յառաքինի գործոյն խոստացեալ վարձուց . — այս ինքն 'ի վարձուցն խոստացելոց առաքինի գործոց ։

Զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն յարուցանես ։

Ի բազում բանս խօսելոյ ։ Ի բազում արութինս քաջութեան ցուցանել ։

Յօժարեալք 'ի զդադար 'ի նմին առնուլն ։ Ո՜ 'ի լոյս անմատոյց ծածկեալդ ։

Ո՜ առ 'ի յԱստուծոյ հաստատեալ թագաւորութեանդ հրամանն ։

Ո՜ յառեան ածելն ։ Նաև զայնժամու պատահիցն ։ Ո՜ յետ մահու կեանս ։

Ո՜ ընդ աջմէ Հօր նստեալն ։ Ո՜ ըստ մարմնոյ ծնունդ Փրկչին ։

Ի զայնոսիկ մատակարարողէ ։ Ապաստ լեալ յառ 'ի նմանէ փրկութենէն ։

Ա— 'ի սպասն յոր կարգեցաւ՝ հասանելոյ ։ Որպէս խորթս —— 'ի ծննդենէ տղայոցն ։

Ո՜ յաղագս սորա բանն ։ Ընծայեցան 'ի նախ քան զմեզ սուրբ հարցն ։

654 . Մակբային վրայ նախդիր .

Ո՜ յառաջագոյն ասացեալ պատգամն ։ Ո՜ երբեմն ախորժելի խորհուրդն ։

Ո՜ անտի վնասն և զաստի օգուտն ։ Յաստի անտի ծայրիցն ։

Ո՜ յոգցես կենդանելին ։ Ո՜ ևս գերազանցն ։ Յևս զարմանալի կենդանեաց ։

Յընդդէմ դառնալնոցս ։ Յառաւել զմարդն պատուելոյ ։ Յզկնի եկելոցս ։

655 . Նոյնպէս կ'ըլլայ թէ և նախդիրը առնելու բառը զեղչմամբ յայտնի դրուած չըլլայ ու միայն դիմորոշ յօդով ըսելեայն իմացուած ըլլայ ըստ 442 .

Ոչ զատակ աղքատն , այլ զհոգւոյն . — այս ինքն զհոգւով աղքատն ։

Ի բանիւք յանցանելն , 'ի գործով և 'ի խորհըրդովք . — այս ինքն 'ի գործով յանցանելն , ևն ։

Ոչ առ մարմնով խոնարհն և ոչ առ մարմնով մաշեալն , այլ առ սրտիւն և հոգւով . — այս ինքն առ սրտիւ և հոգւով խոնարհն և մաշեալն ։

Զաւ ՚ի մէնջն՝ զամենայն կատարեցուք. Ընկալայ զաւ ՚ի ձէնջն. — այս ինքն զայն որ է ՚ի մէնջ, ՚ի ձէնջ.

Բաստուցեն զվասն մեղայն և զվասն փրկութեանն. — այս ինքն զայն որ է վասն մեղաց և զայն որ է վասն փրկութեան.

Զչիւրաղուրն և զաւանց խոր բանիցն յարգեն. — այս ինքն զայն որ է աւանց խոր բանից.

Կեռիւք խոցոտել զ՚ի վերայ պարտալին. — այս ինքն զայնոսիկ որ ՚ի վերայ պարտալին.

Լուեալ խմացան զհիւրընկալութեան աղագաւն. — այս ինքն զայն զի էր կամ զլինելն հիւրընկալութեան աղագաւ.

Զվասն որոյ եղեն սորա՝ եղծանել. — այս ինքն զայն վասն որոյ եղեն.

Իբաց թօթափել իբրև զոչ ՚ի բնութենէս. — զի իբրև զայն, իբրև զիր՝ որ ոչ է ՚ի բնութենէս.

Զառնելն և զոչն. Ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնելն, յոչ բանալն.

656. Նայց երբեմն աւելադրութեամբ կը կրկնուի նախդիրը՝ եւս դրուած բուն նախդիրին տէր եղող խնդրառուին վրայ կամ՝ նաև խնդիրին վրայ, նոյնպէս ալ մակբայէն եւս դրուածին վրայ. Ինչպէս,

657. Բուն նախդիրին տէր եղող խնդրառուին վրայ.

Զցացուցանել մեզ զհոգւով չափ զոէրն. Զաւ Պարեհիւ զկախն.

Զվերայն զռժշկիչ պատուիրանս. Զաւ ՚ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո.

Կամիմ զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս.

658. Խնդիրին վրայ.

Զփառս զաւ ՚ի միայն Աստուծոյ ոչ խնդրեք.

Զտաճարն զաւ ՚ի քէն հոլանացեալն:

Զուարակն զվառն մեղաց . Յարենէ առ ՚ի վառն մեղացն սրբութեան . — որ աւելի որոշ կը հասկցնէ, թէ զզուարակն՝ որ է վառն մեղաց , յարենէն յայնմանէ՝ որ է վառն սրբութեան մեղացն .

Յանկարծ բարեօք զուարճացեալ յամենայնից տեղւոջէս՝ անկանիմ յալէկոծութեանս սահուն եղեալ ՚ի ցաւագին կեանս կենցաղոյս .

659 . Մակբայէն ետև դրուածին վրայ .

Զամենեսեան զյառաջագոյն ննջեցեալսն .

Զայսր գալըյն զորպիսութիւն . Ի միւսանգամ ՚ի գալստեանն .

660 . Երբեմն ալ առաջ դրուած խնդիրն ու մակբայը ամենեւին առանց նախդիրի կը թողուի , ու ետև դրուած բուն նախդիր առնելուքին վրայ միայն կը դրուի .

Յերկինս զհամբառնալն Քրիստոսի մարգարէանայ .

Մի խափանեսցէ ըստ Աստուծոյ զգնացս սրբութեան .

Ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս . Ի նմա եղեալ զկրան խօսէին .

Եթէ ոչ կայցուք ՚ի բաց՝ զաղքատն ՚ի լքելոյ .

Զերկնիցն ժառանգութիւն , ընդ որդւոյն Աստուծոյ զազգականութիւն :

Ոչ զպարանոցի խնդրէ կորացումն , այլ հոգւով և ճշմարտութեամբ զերկիր պագանելն .

Յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ . — որ կրնար ըսուիլ նաև՝ առ յայսպիսի իրս անհարթս ոչ ուղիղ հայելոյ , ըստ 652 .

Ոչ գնայցեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետեւողս . — այս ինքն ընդ խոտորնակի քեզ հետեւողս , ընդ հետեւողս քեզ խոտորնակի .

661. Հայցական յատկացեալին նախդիրը շատ անգամ եւս դրուած յատկացուցիչին կը դրուի, ու յատկացեալը անորիշ հայցականի պէս կ'առնուի (354).

Պնդեցաւ զկնի նորա Ճանապարհ զեօթն աւուր. — այս ինքն զՃանապարհ եօթն աւուր.

Եթէ ոք տացէ ընկերի իւրում արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր՝ յաւանդ.

Առնել հրամայէ սեղան զխնկոցն. Առնուցուք պտուղս զգեղեցիկ ծառոց.

Թագ առնա զասխացւոց. Նմա էր յանձն հանել հարկ զաշխարհին.

Պատառս բազում հատէք զխոյ տէրութեան. Համդերձ զմեր զգեցցուք.

Քանի սակառի բարձէք զկոտորոցն լի. — այս ինքն զքանի սակառի կոտորոցն.

Ոչինչ գիտէր բանտապետն զբանտին. Ոչ ոք 'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն.

Չունին ինչ զանձանց. Ոչ խնդրեմ ինչ զձեր.
Որ առաքեալ է՝ չասէ ինչ զիւր.

Միջակ անունը ինչ վրան ամենեւին զայ նախդիր չառներ (83), բայց յատկացուցիչին վրայ կ'առնէ, ինչպէս տեսար 'ի 477, ու հիմայ հոս ալ.

662. Շատ անգամ նախդիրները եւս դրուած յատկացեալին միայն կը դրուին.

Այս ժողովուրդ է զոր Թլփատեաց Յեսու, ամենայն ժողովրդեանն ելելոց յԵգիպտոսէ զարու մանուկ. — այս ինքն զարու մանուկ ամենայն ժողովրդեանն.

Ազգի ազգի զանձիցն զթիւ իսկ եւ զհամար ոչ մարթէ ոք առնել.

Քաղաքի միոյ մեծի զիշխանութիւնն հաւատալ (եպիսկոպոսին).

Ուղիղ լողութեամբ չլսէ ուրուք զբանս.

Սորին Ասորւոյն և տաճկաստանի քաղաքացն զաշակերտութեամբ շրջել .

Ամ նոցա որպէս զմորթն զգենումք և ոչ զհասաւ , և զմին եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ զհասանէր .

Օ փիղն վառեալ՝ գնդայ գնդայ 'ի գլուխ յօրինեալ կացուցանէին .

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնն ուշ եղին .

Միոյ ոչխարի եկն 'ի խնդիր . Խաղաղութեան հասանէն յաստիճան .

Տղայական մնաց մեր յորբումն . Շատից յաչաց ելանէին .

Աստուծոյ յաչաց ելին . Հանէ զքեզ առնն յաչաց .

Արքայից արքայի 'ի ծառայութենէ մի ելանէք .
Թեթևագոյն արուեստից պակասագոյն 'ի գիտութենէն ազգք երկրածնաց .

Ազգ՝ որոյ ոչ լսիցես զլեզու նորա . Որոյ հուր յաչացն արձակիցի .

Որոյ էիր ընդ աղջկունս նորա : Որոյ զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա . Որոց 'ի խուլէն՝ այր մի սպանեալ էր .

Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին .

663 . Շատ տեղ ալ հայցական գոյականին նախդիրը՝ ետև՝ դրուած ածականին միայն կը դրուի , ու գոյականը անորոշ հայցականի պէս կ'առնուի .

Առ քեզ կինամոմն զանոյշ՝ զկէս այնորիկ . Ճանապարհ զարքունի գնասցուք .

Անհնար համարեցան առնել զիր զաշխարհահամար Հրէիցն .

Խնդրեցէք 'ի տեառնէ անձրև ըստ ժամանակաց՝ զկանուխ և զանագան .

Տացէ զուարթութիւն զմտարտումն ։ Մեծու-
թիւն բազում զհայրենի ժառանգեալ ։

Ուսեալ դպրութիւն զայն ։ Կերան հաց նեղու-
թեան զօրաբեկին ։

Զգեստ զայլին զգենուն ։ Բան զայգուլխի ոչ
հարցանէ ։

Գտին անդ այր զոմն՝ մոգ ։ Թագաւոր զոմն՝ ասեն
զՅիսուս ։

Բայց բան զայս կատարեցէք ։ Օրինակ զայս
գրել ։

Եւ կերակուրս ժանտս զայն ուտէ՝ զոր և ոչ գա-
զանք և անասունք ուտեն ։

Բաժանեաց աչս ամենեցուն զնոյն, ձեռս և ոտս
զնոյն ։

Տեղի մի և զնոյն ցուցանեն երեքեան նոքա ։

664. Երբեմն ալ առաջ դրուած ածականին չդրուիր
ու միայն ետև դրուած գոյականին կամ երկրորդ ածա-
կանին կը դրուի նախդիրը .

Բազում զայրուձի զասխացւոյն կոտեալ. — այս
ինքն զբազում այրուձի ։

Մեծամեծս ես քան զոյնս՝ ցուցանէ նմա զգործս.
— այս ինքն զգործս մեծամեծս ։

Յաղել զխոզս և խառնակ զմնասունս ։ Այլ իմն
բարձրագոյն զիրս նշանակէ ։

Եւ մեծամեծ զայգուլխի վնասանի առնելով ։ Յաղ-
թող և զնոր օրհնութիւն երգեսցուք ։

Սուրբ զարիւն իւր . սուրբ զորդին . սուրբ զկա-
նայսն ։

Շատ զոք ընդ միմեանս չփոթեաց ։ Տեսանել նոր
զոմն Աղիսեւս ։

Եւ կամ ընաւ հայ զոք թողուլ ։ Սակաւս զամսս
ընարեալ ։

՝Նոյն զաղօթսն կատարեմք՝ զոր յեկեղեցին . —
այս ինքն զնոյն աղօթսն ։

Այն զինքն ես վաճառեցի ։ Այն ինքն զՔրիստոսն ։

Այն ինքն արժանաւոր լինել զԱստուած տեսանել ։

Բազում իշխեցելոյն ՚ի բանտարկութէն զերծեալք ․ — այս ինքն ՚ի բազում իշխեցելոյն ։

Մեծաւ զօրութեամբ բարձր ՚ի ձայն աղաղակէ ․ — այս ինքն ՚ի ձայն բարձր ։

Բոլորդ ՚ի հիքութեան ընկեցայ գող ․ — այս ինքն ՚ի բոլոր հիքութեանդ գող ։

Կամ այլ ինչ ՚ի սրբութիւնս մերձենալ ․ — այս ինքն յայլ ինչ սրբութիւնս ։

Այն ինքն ՚ի հօրէ ։ Այն ինքն յինէն ։ Ամին իսկ ՚ի ցուցես ։

665 ․ Հոլովառու բառերն ալ երբեմն անհոլովին յատկացուցիչին կամ ածականին մէջը կ՚իյնան, ու շատ բառերով անկէ կը հեռանան, ու նախդիրներն կը խախտի.

Յորոյ վերայ պարսպացն Ճեմէի — այս ինքն յորոյ պարսպացն վերայ, ՚ի վերայ որոյ պարսպացն, որուն պարիսպներուն վրան ծառ կուգայ ։

Յերկուց միջոյ քրովբէիցն ․ — այս ինքն ՚ի միջոյ երկուց քրովբէիցն ։

Զուարճալից հանդերձ բերկրանօք ։ Դժնդակն հանդերձ մահու ։

Իւրեանց վասն խնդրի ։ Անարժան վասն դիմադարձութեանն ։ Բոյլնն սակս բանի ։

Այգա յորժամ անհնարին բարկութիւն գազանացն եհաս ՚ի վերայ ։

Ի տանն, յորոյ կոչեցեալ էր անուն իմ ՚ի վերայ նորա ․ — այս ինքն յորոյ վերայ ։

Ի պէսպէս փորձութեանց ՚ի մէջ անկանիցիք ։

Յամենայն նեղութեան իբրև զձեզ և աւելի քան զձեզ ՚ի մէջ եղեալք ։

Սան և ոչ մի ինչ այնուհետև խիղճ մնաց ունելոյ ։
Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր ։
Օ հետ երթիցուք խաղաղութեան ։
Օ մըր հետ ելեալ ես ։ Օ մեր կնի ոչ շրջեր ։ Առաջի կացուցին նորա ։
փոխանակ որ մինչև ցայժմ հայհոյութեանցն ։
Ընդդէմ դարձցի քո ։
Ընդ հողմոյն դէմ ։ Հանդերձ թափէր հարազատան ։

666 ․ Սակրայներէն երկու բառով եղօղները՝ միջանկեալ բառերով կը հեռանան մէկմէկէ ․

Մինչ նա դե— կամէր ։ Մուրուքն դե— տակաւին սեաւ ե— կային ։
Որ ինչ —ղջ արարեալ ։ Քան եթէ —ղլ ոք ինչ —ղջ յոք վստահ լինիցի ։
Նա ոչ այսչափ միայն, այլ և՝ —ղլ ես —ղջ ․ — այս ինքն այլազգ ես ։
Նէ և բէ—բ հնար դմա գոյր —նգ—ն մեռանել ․ — այս ինքն բիւր անգամ։

667 ․ Ամենք ալ առաջ դրուելուն տեղը՝ ետև կը դըրուին, կամ ուրիշ կերպով բնական տեղէն կը խախտին ․

Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդէր պտնկութիւն ․ — փոխանակ ըսելու ընդէր բնաւ և անուանի իսկ ։
Այլև փրկէր իսկ ընդէր զայլս արարածս ։
Նա բնաւ իսկ սուտ ընդէր կոչիցի ։ Նա գոհանայքն զխարդ ։
Նա լինի այս որպէս ։ Մեծամեծս որչափ քան ըզմարդն իցեն ։
Մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս 'ի բաց քանդի ․ — փոխանակ ըսելու յորժամ մեք ։

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ . — փոխանակ՝ յորժամ կոյր կուրի ։

Զաղջիկն յորժամ յարոյց , զձեռանէն ունէր . — փոխանակ՝ յորժամ զաղջիկն ։

Բատ որում ՚ի լերինն Սինայ և Դանիէլի յորժամ երևեցան ։

Մ՝ին մինչդեռ ընկենոյր ։ Ջերմ մինչդեռ էր ։ Նա որպէս հաւանեալ եմ ։

Կասկածէին թէ վնաս գուցէ ինչ մտանիցէ . — այս ինքն թէ գուցէ վնաս ինչ ։

Զի մի պղծիցին գուցէ . — այս ինքն մի գուցէ ։

Յաւուցեալ միշտ են ։ Ճանաչեմք զնա ամենեքին գրեթէ ։

Որոճայ ոչ . որոճիցէ ոչ . տկարանայ ինչ ոչ քեզ . գրեցաւ իսկ ոչ . եթէ սպանանիցես ոչ . բնաւ և յիշեմ իսկ ոչ . բնաւ և էր իսկ ոչ . բայց գիտէի ոչ զնա . և գիտէր իսկ ոք ոչ ։

Որ ոչն կամիցի գործել , և կերիցէ մի ։ Որ գործէ ոչ , կերիցէ մի ։ Սքանչանայք մի ։ Բնաւ և յայտնել մի ։ Լեր մի յինոյնս ապերախտից , այլ տասներորդին նմանեաց . — փոխանակ բնաւ մի լինիր ։

668 . Կամ միջանկեալ բառերով կը հեռանան բայէն.

Զերկիրս շուրջ ջուր պատէ . — այս ինքն շուրջ պատէ ։

Յորժամ , որ այժմս բանապաշտոյ խրոխտաձայն սիգացող բարձրապարանոց , անկեալ դնեմ զի անկենդան ։

Նա է ընդ այնոսիկ որ գործէն զանօրէնութիւն՝ խորտակեսցէ զնա ։

Ո՞չ այդքան մեծ քաղաք շինէր ։ Ո՞չ , որ ստեղծն զնոսա , ողորմեսցի նոցա ։

Ո՞չ , զի չեմք ակն , առաւօտ՝ թէ չեմք ՚ի մարմնոյ անտի ։

Նա ոչ ամենեւին թէ միշտ ինչ կրիցեն՝ զՓոյթն ։

Ոչ այս ոչ, ասէ, առ պարծել ինչ ասեմ. — այս ինքն ոչ առնեմ առ պարծել ։

Եթէ ոչ որ ծնցի · Մինչ ոչ որ ամաչեցուցէ · Բայց եթէ ոչ որ հնազանդեսցի · — այս ինքն եթէ որ ոչ ծնցի կամ եթէ ոչ ծնցի որ, եւն ։

Բայց ալ չ մակբայը հրամայել բային վրայ կը դրուի՝ ետեւի անորոշ դերբային դրուելու տեղը ·

Օ դրաստն անկեալ ընդ բեռամբ՝ չհրամայէ ան-տես առնել ·

Ուստոյն՝ յոր հաւսն չհրամայեաց երթալ ·

Բանիւ անգամ ոչ հրամայեն հաղորդել ընդ ա-պականեալսն ·

այս ինքն հրամայէ անտես չառնել, հրամայեաց չեր-թալ, հրամայեն ոչ հաղորդել · կամ աւելի աղէկ՝ չհրա-մայել կ՚իմացուի չտալ թոյլ, չներել, չհամարձակել ։

669 · Լաւ է . . քան, Նախ . . քան, Յառաջագոյն . . քան, մակբայ ու շաղկապները՝ շատ անգամ ներհակ կը բա-նին՝ քանը առաջ, կամ երկուքը քովէ քով · շատ տեղ ալ քանը կը ձգուի ·

Քան յանձն իւր, առաւել ՚ի նա էր յուսացեալ ։

Բաւել քան ընդ ճարտարապետութիւնն՝ ընդ համարձակութիւն անկրկնելութեանն զարմա-նայցեն ։

Նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք ։

Հեշտանայ ՚ի տեսութիւն նոցին՝ քան ՚ի կերա-կուր առնուլ ։

Յագուրդի քան քաղաքին վայել է առաւել զար-դարել ։

Նա մանաւանդ քան ամենայնի՝ խոնարհութեանն եւ ողորմածութեանն նախանձաւոր լիցուք ։

Քան զաւետիս զբօթ սիրեմք լսել · — այս ինքն առաւել զբօթ քան զաւետիս ։

670. Եւեթ մակբայը ստորադաս եւս կը դրուի. Ոտիւք ևեթ անցից. Երթիցեն այրք ևեթ. Կոչեաց ևեթ 'ի գերեզմանէն և յարոյց,

Բայց երբեմն առաջ ալ կը դրուի.

Եւեթ զբարիս խօսել. — այս ինքն զբարիս ևեթ,

Ի ծննդենէն՝ ևեթ միութեամբ լեալ. — այս ինքն միութեամբ ևեթ,

Եթէ դու՝ ևեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ. — այս ինքն առ վայր մի ևեթ,

671. Շաղկապներէն Եւ, Թէ, Եթէ, Զի, Վասն զի, Թէպէտ խօսքին սկիզբը կենալու տեղը՝ անոնք կամ մակբայէ ետև կը դրուին.

Զի մարմինն և նոցա 'ի չորից հիւթոցն կայ. — այս ինքն զի և մարմինն նոցա,

Թէ արդար միայն էր, յայտ է եթէ զարդարութեան և պատուիրանս տայր,

Արդ այս թէ ուստի սկսաւ՝ տեսցուք. — այս ինքն թէ այս ուստի սկսաւ,

Սով եթէ լինիցի յերկրի, կամ ժանտ եթէ լինիցի, լուիցես յերկնից,

Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա,

Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք, այնուհետեւ ոչ ևս պիտոյ է,

Ընդ առաւօտս եթէ սերմանեսցես, ծաղկեսցէ յամառն,

Սակաւիկ մի եթէ 'ի բաց թողացուցանէիր զփրքումն տէրութեանդ,

Իսկ ես ոչ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի են այս աւուրք երեսուն. — այս ինքն և են այս աւուրք երեսուն զի ես ոչ եմ կոչեցեալ,

Ո՛ն եկայք, և մեք զի ընդ նմա մեռցուք. — այս ինքն զի և մեք,

Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում,
գութ և սէր ունիմ ընդ աշխարհն ։

Իսկ զուրբ քահանայն վասն զի կապանօք տա-
նէին, յետ երկուց ամաց և քան աւուր հասա-
նէին ։

Զի զայն թէպէտ և ցանկութիւն շահից հնա-
րեցաւ, սակայն ևն ։

Մարմնով թէպէտ 'ի խաղաղութեան էնաւ ժա-
մանակ մի, այլ ևն ։

Բայէ ետև դնել ասոնք՝ մեր լեզուին սովորութիւն չէ ։

672. Բայց, բայց, սակայն շաղկապները Թէպէտևէն
ետքը գրուելուն տեղը՝ շատ անգամ առաջ կը գրուին.
երբեմն ալ կ'աւելցուի նորէն այլ, սակայն.

Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի,
ոչինչ զանգիտեաց զայն ։

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս
դժնեայ էին, չև էր ուրուք ձեռնարկեալ յայտնի
յեկեղեցին ։

Բայց նա թէպէտ և 'ի ներքոյ յոյժ գորովէր զնա,
այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա ։

Բայց թէպէտ և յանխնից մոլին ցաւք յաշխարհ,
սակայն են և այլ պատճառք ։

673. Սակայն, սորէն, ապա, ապաքէն, ճշմարիտ, շաղ-
կապներն ալ երբեմն ետև կը գրուին անունէ ալ, բայէ
ալ, մակբայէ ալ.

Նա սակայն ոչինչ թուլանայր ։ Տես սակայն նմին
միաբան ։

Էր սակայն և 'ի ներքս ։ Բայց մի սակայն կար-
ծիցես ։

Բայց այժմ սակայն հնկեսցուք ։

Ապա և ջուրք ուրեմն ընկլուզանէին զմեզ ։ Զի
հաստատութեամբ ուրեմն պահէին զօրէնս ։ Սպա-
նէր ուրեմն ։ Մերժեցայ ուրեմն ։

Զոր ուրեմն վաստակէի ։ Սուտ լինին ուրեմն ։

Հա յայտ է ապա, թէ ա՟ծ ։ Այս ցուցանէ ապա, թէ ա՟ծ ։

Որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ, . . արտասուս բազում հեղան ։

Գուսանաց համբերեմք մանաւանդ քան աստուածային գրոց վարդապետութեան ։

Ընդխոացեալ թէ նուաստացուցանէն մանաւանդ ։

674. Իսկ անգամ շաղկապը, որ սովորաբար եւս գրուելու է, ինչպէս, Եւ հաց անգամ չժամանէին ուտել, Եւ թաղելոյ անգամ չէին բաւական, Մինչև օձից և գազանաց անգամ երկիր պագանել, երբեմն առաջ ալ կը դրուի .

Զի անգամ ոսկերք թագաւորացն փոփոխեցան յոտարութիւն ։

Մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց ։

Այնպէս սրանալ 'ի փախչելն, որ անգամ և հետք մի երևեսցին ։

Եւ անգամ ոչ գիտէր զայլն ։ Զոր անգամ և ոչ յիշեմք երբէք զմերն ։

Ոչ տասն անգամ արդարք գտան . — այս ինքն տասն արդարք անգամ ոչ գտան ։

## ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

675. Քերականութիւնը լեզուին հաստատուն կանոնները սորվեցնելէն ետև, որ երկրորդ մասին մէջ ըրինք, ձևաւոր շարադրութեան ու հայկաբանութեան վրայօք՝ արթընցնող մը միայն կրնայ ըլլալ այսպիսի համառօտութեան մէջ. աւելին ուզողը՝ ընդարձակին մէջ կրնայ գտնել։ Բայց ալ աղէկը ու ալ աւելին սորվելու համար՝ ընտիր նախնեաց գրքերը շատ կարդալու է ուշադրութեամբ. որոնց գլխաւորներն են Աստուածաշունչը, Եզնիկը, Եղիշէն, ու անոնց նմանները։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ՆԱՐԵՒՈՐ ԻՐԱՑ

## ԸՍՏ ԹՈՒԱՀԱՄԱՐՈՑ

Ա. վերջացած անունները ինչպէս կ'առնեն գիմորոշ յօդը, 141։
Ածական անուն զինչ է, 9. ուրիշ բաղդատութեան ինչ ձեւեր կ'առնէ, 390-392. առանց բաղդատութեան չափու մէջ աւելին կամ պակասը ցուցնելու ինչ ձեւեր կ'առնէ, 393. — Ածական հասարակ անունը նախադաս ինչպէս կը բանի ըստ հոլովի, 407-413. յետադաս ամէն ածական ինչպէս. 422, 423, 425. նախադաս և յետադաս՝ ըստ թուոյ ինչպէս, 426-430. — Ածական գերանուանց նախադաս համաձայնութիւնը, 414, 417, 420, 421. յետադաս համաձայնութիւնը, 417, 422, 424, 428, 429. — Ածական գոյականի տեղ, 585. մակբայի տեղ, 306. — Ածականի համաձայնութեան բացառութիւն, 570. ածականի փոխադրութիւն, 622-626. արտադրութիւն, 648-651։
Ամենայն, 110. ըստ թուոյ համաձայնութիւնը, 430։
Ամենքեան, ամենքին, 77։
Ամէն ի—ն ամէն, 110։
Այլ. միջակ անուն, 106։
Այդքան, այսչափ, 107։
Այդքանի, 107։
Ան, ~ մասնիկներով ածականները ինչ ձեւեր կ'առնեն, 387։
Անձնիւր ի—ն անձնիւր, 108։
Աննախդիր կամ անորոշ հայցական ձեւեր, 354-356։
Անուն բայի զինչ է, 313. դիմաւոր բային ինչ հոլով կը դրուի, 327. անորոշ ու անցեալ դերբային ինչ հոլով, 328-332. — Անուն բայի զեղչումն, 513-516. փոխադրութեն, 586-692. արտադրութեն, 641։
Անցեալ ժամանակ բայի, 159. անցեալ անկատար, 159, 272. անցեալ կատարեալ, 159։
Ապաժամարդ, 494, 500։

Ապառնի ժամանակ բայի , 159 , 269 , 270 , 274 , 275 ։
Առ , առ 'ի , նախդիր , 148 ։
Առնելու , տալու բայերն ինչ խնդիր կ'առնեն , 380 ։
Առնեմ , արտուղի բայ , 239 ։
Առոգանութիւն , 486 ։
Արի , պակասաւոր բայ , 248 ։
Բաղաձայն տառք , 3 ։
Բայանուններն ինչպէս խնդիր կ'առնեն , 382-386 ։
Բայից արմատներ , 168 . 181 ծան . 203 ծան ։
Բայք որ արմատին ու յանգին մէջ ածանցական մասնիկ ունին , 168 . որոնց ան մասնիկը ձգուած է , 206 . ըմ , նըմ վերջացած բայք , 222 . բայը անուն բային ինչպէս պիտի գրուի , 327 . նոյն դէմքով շատ անուն բայիներու ինչ թիւ կը գրուի բայը , 334-337 . այլ և այլ դէմքով անուն բայիներու ինչ դէմք ու թիւ կը գրուի , 338 , 339 . Բայից զեղչումն , 340 , 516-520 . բակառութիւն , 560 , 561 . փոխագրութիւն , 593 , 594 , 607 , 608 ։
Բան կամ խօսք , 2 , 6 , 312 ։
Բառ , 2 , 5 . բառք որ կը փոխուին կամ չեն փոխուիր , 7 ։
Բարդ ու ածանցեալ անուանց բակառութիւն , 574 ։
Բացայայտիչ , 320 , 400-406 . բացայայտի բակառութիւն , 564-569 . արտուղութիւն , 647 ։
Բացառական հոլով , 56-58 . անսովոր , 68 ։
Բոլորեքեան , բոլորեքին , 77 ։
Բութ , 486 , 487 , 494 , 503 ։
Գամ , արտուղի բայ , 237 ։
Գոգցես , պակասաւոր բայ , 259 ։
Գոյական անուն զինչ է , 9 . թուի մը հետ ինչպէս կը բանի , 431-435 . ինչպէս խնդիր կ'առնէ , 389 . ածականի տեղ , 435 , 585 . Գոյական անուններին զեղչումն , 523 ։
Գործիական հոլով , 55 , 58 ։
Դերանուանական ածականք , 134-139 . ինչպէս կը համաձայնին գոյականի հետ , 414 , 418 , 420 , 428 , 429 ։
Դերանուանց (գոյական և ածական) զեղչումն , 524 . ուղղագրութիւն , 538-540 . բակառութիւն , 571-573 . հոլովի փոխագրութիւն , 627 ։
Դերբայ անորոշ , անցեալ , ապառնի , 162 . անորոշ՝ իբրև բայ , 278 , 279 . իբրև գոյական անուն , 280-283 . անցեալ՝ իբրև բայ , 284-285 . ընեմ , եմ բայերուն հետ , 287-290 . ինչ խնդիր կ'առնէ , 358 . իբրև ածական անուն , 291 , 292 . ապառնի՝ եմ բային հետ , 293 , 294 . իբրև ածական անուն , 295 . — Անորոշ դերբային զեղչումն , 521 , 522 . ուղղագրութիւն , 535 , 536 . փոխագրութիւն , 595-605 . անցեալ դերբային ուղղագրութիւն . 536 , փոխագրութիւն , 597 , 606 . դերբայից արտուղութիւն , 642 ։
Դէմք բայի , 158 . դերանուանց , 112-115 . դիմաց փոխագրութն , 607 ։

Դիմորոշ յօդք զինչ են , 140 · ս , դ ինչպէս կ՚որոշեն , ն ինչպէս , 441 · գոյականին դիմորոշ յօդը ուրիշ բառի վրայ գրուած , 446-452 · շատ գոյականներու ինչպէս կը գրուի , 453 · աւելի գրուած , 454 · ածական դերանունից հետ ինչպէս կը բանի , 455-458 · դիմորոշ յօդերուն տեղ ինչ կրնայ գրուիլ , 459 · դիմորոշ յօդ չառնող բառերն որոնք են , 461 · և անոնց տեղը ինչ ընելու է , 462-470 :
Դնել , անկանոն բայ , 241 :
Ե կամ Է , բայից կատարեալին միավանկ եզակի երրորդ դէմքին վրայ , 186 :
Եզակի անուն , 10 · եզակի չունեցող անուններ , 11 · երբ եզակի կ՚ըլլան , 72 :
Եզանակ բայի , 160 :
Ենթամնայ , 494 , 495 :
Երթամ , անկանոն բայ , 238 :
Երկար , 486 , 492 :
Երկաքանչիւր , 79 , 109 :
Երկբարբառ , 4 · որ հոլովելու ատեն կը փոխուին կամ ոչ , 17 , 18 :
Զ , նախդիր , 144 :
Զի , միջակ անուն , 80 · ու յարաբերականի տեղ , 637 :
Զինչ , 80 , 84 · Զինչ ինչ , 84 :
Էական բայ զինչ է , 163 :
Ընդ , նախդիր , 149 :
Ըստ , նախդիր , 150 :
Թիւ անուան , 10 · բայի , 158 :
Թուոյ կամ Թուական անուանք , 74 · ինչպէս կը համաձայնին գոյականի հետ , 414 , 415 , 420 , 424 , 431-434 :
Ժամանակք բայի , 159 :
Ի , նախդիր , 145 :
Իբրև նախադրութեան բացատրութիւն , 583 :
Իմն , 82 , 83 , 85 · Իմն իմն , 85 :
Ինչ , 80 , 82 , 83 · զինչ ինչ , 84 · ինչ ինչ , 75 · ոչ ինչ , 86 :
Իրերաց , 102 :
Իւրաքանչիւր , 108 :
Իք , միջակ անուն , 82 , 73 :
Իք , չէք , բայ , 180 , 332 :
Լծ վերջացած բայածական , 296 · առանց սիւնի հոլովուած , 297 , 299 · է բային հետ , 298 · ու բայածականի և անցեալ դերբայի տեղ , 299 · միանակ ինչ խնդիր կ՚առնէ , 388 · է բային հետ ինչ , 359 :
Լծորդութիւն բայից զինչ է , 167 :
Լուայ , պակասաւոր բայ , 250 :
Խնդիր բայի զինչ է , 314 · խնդիր էական բայից , 341-351 · խնդիր սեռի ներգործական բայից , 316 , 352 · կրաւորական բայից , 317 , 352 , 353 · խնդիր բնութեան ամէն բայից , 318 , 360-362 · ուղղական բնութեան խնդիր , 363-365 · բնութեան խնդիրի տեղ հայցական , 366-377 · անունէ ու բայէ մէկ եղած բայերուն խնդիրը , 357 ·

Եական բայով խոնարհած անցեալ դերբային խնդիրը, 358 · Եական բայով չի բայածականինը, 359 ։
Խնդրոյ նախդրաց և հոլովառու բառից զեղչումն, 530 · խնդրոյ բայից բարբառութիւն, 562, 563 · փոխադրութիւն, 611, 613 · դերբային խնդրոյ փոխադրութեն, 612, 613 · խնդրոց արտուղութեն, 643-646 ։
Ծանեայ, պակասաւոր բայ, 252 ։
Կէտք, 494 ։
Կրաւորական բայ զինչ է, 163 · ներգործականէն չորոշուած խոնարհմունքի վերջերը ինչ ըլլալու է, 188 · հասարակ բայի պէս, 267, 611 ։
Կրաւորակերպ չէզոք բայ, 164, 191, 192, 211, 212, 215, 216, 266 ։
Համաձայնութիւն մասանց բանի զինչ է, 324 ։
Հասարակ անուն, 8 ։
Հասարակ բայ, 165, 191-193, 210, 212, 215 ։
Հոլովառու բառք, 152 · անոնց զեղչումն, 529 · աւելադրութիւն, 551 · արտուղութիւն, 665 ։
Հոլովմունք անուանց զինչ են, 15 · քանի են, 16 · պարզ հոլովմունք, 16, 19-38 · խառն հոլովմունք, 16, 39-47 · զարտուղի հոլովմունք, 48-54 · մէկմէկու կը փոխուին, 69-72 ։
Հոլովք անուան, 12, 72 · հոլովք անուան մակբայի տեղ, 307 ։
Հրամայական եղանակ բայի, 160, 269, 271 ։
Ձայնաւոր տառք, 3 · որ հոլովելու ատեն կը փոխուին, 17 · որ չեն փոխուիր, 18 ։
Ձև շարադրութեան ինչ է ու քանի, 510, 511 ։
Մակակէտ, 494, 501 · — կամ փչիկ, 502 ։
Մակբայից զեղչումն, 531, 522 · աւելադրութիւն, 553-555 · արտուղութիւն, 666-670 ։
Մասունք բանի, 5 ։
Մարթի, անդէմ բայ, 261 ։
Մէ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան բացառական, 33, 34 ։
Մէն մի, 104 ։
Մի, թուական, 74 · անորոշ՝ ը, 103 · մի մի, 104 ։
Միմեանց, 101 ։
Միջակ կամ անորոշ անուններ ինչ խնդիր կ'առնեն, 394, 395 · անոնց համաձայնութիւնը, 414, 416, 419, 428, 429, 450 · աւելադրութիւն, 537 · հոլովի փոխադրութիւն, 627 ։
Միջակէտ, 494, 505 ։
Միւս, 105 ։
Յ, նախդիր, 13, 145, 146 ։
Յանձնեմ, արտուղի բայ, 245 ։
Յարակացուցիչ, 319, 396-399 · յարակացուցչի փոխադրութիւն, 615-621 · արտուղութիւն, 647 ։
Յատուկ անուն, 8, 20, 21-23 · ինչպէս յոգնական կ'ըլլան, 67 · ինչպէս գրելու է, 508 ։

Յարաբերական -ը եզակի յոգնակիի տեղ, 436 · յարաբերեալի տե_
ղադրութիւն, 541 · յարաբերականի ու յարաբերեալի բաղդատու_
թիւն, 575–581 · փոխադրութիւն -ը ուղղականին ամէն հոլովի
տեղ, 629 · -ը՝ նէ շաղկապին տեղ, 636:
Յոգնակի ուղղական, 10, 59, 61, 63, 65, յոգնակի չունող անուն_
ներ, 11 · յոգնակի սեռական և բացառական, 57, 58 · հայցական,
60, 61, 63, 65 · բառի մը հոլովքը յոգնակիի + ու - կ'առնեն և
ինչ կը նշանակեն, 68:
Նա, նոա, նոր գերանուանց տեղը, 628:
Նախադրութիւն, 152:
Նախդիր, 13, 142 · կրկնուած անուններուն ինչպէս դնելու է, 471 ·
յառաջացուցիչ կամ ածական ունող անունին նախդիրը ուր կը դրուի,
476, 479, 482, 483 · բացայայտիչ ունող բառին նախդիրը ուր կը
դրուի, 481 · նախդիրներու զեղչումն, 525–528 · տեղադրու_
թիւն, 543–551, 656–659 · բաղդատութիւն, 582 · ապառու_
ղութիւն, 652–655, 660–665:
Նախդրի հոլովք ինչ են, 14:
Ներգործական բայ, 163, 268 · չէզոքի պէս խնդիր առած, 379:
Ներգործակերպ չէզոք բայ, 164, 268:
Ներկայ ժամանակ բայի, 159, 272, 273:
Շաղկապաց զեղչումն, 533 · տեղադրութիւն, 556, 557 · ապառու_
ղութիւն, 669, 671–674:
Շարադրութիւն, 312–315 · պարզ, 326 · ձեւաւոր, 326 · շարադրու_
թեան բնական կարգը, 640:
Շեշտ, 486, 488–491:
Ո, ով, 87–90:
Ոլորակք, 486:
Ող կամ օղ վերջացած բայածական, 300–303:
Ոմն, 94–97:
Ո ոք, ով ոք, 98:
Ոչ ինչ, 86:
Ոչ ոք, 100:
Ոյ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, ու
-ջէ վերջով բացառական, 46, 47:
Որ, միջակ անուն, 91, 92, 125 · յարաբերական, 124, 125 · որ ինչ,
93 · որ ոք, 99:
Որպէս նախադրութեան բաղդատութիւն, 583:
Ու- վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, 33, 34:
Ունիմ, պակասաւոր բայ, 254:
Ուտեմ, ապառողի բայ, 243:
Ու-ցանեմ վերջացած բայք, 203 · ուսկից շինուած են, 203 ծան. · անցը
ինչ կրնայ ըլլալ, 204 · կրաւորականներն, 219:
Ոք, 94–100:

Չափի. կշիռքի անուններն ինչպէս խնդիր կ՚ըլլան, 381։
Չեզոք բայ, 164, 166. Ներգործականի պէս խնդիր առած, 378։
Չոգամ, անսովոր բայ, 238 ծան։
Պարոյկ, 486, 493։
Պարտիմ, պակասաւոր բայ, 257։
Պիտի, անդէմ բայ, 262։
Սահմանական եղանակ բայի, 160։
Սեռական ու տրական հոլով, 57. 58։
Ստորադասական եղանակ բայի, 160. 172 ծան. 269, 274, 275։
Ստորակէտ, 494, 504, 507։
Վանկ, 2։
Վերջակէտ, 494, 506։
Վերջահոլովք անուան, 12. վերջահոլով չունեցող անուանք, 14. երբ վերջահոլով կ՚ըլլան, 72։
Տամ, տրտուղի բայ, 234։
Տողադարձ, 495-499։
Տրոհակէտ, 494։
Տրոհութիւն, 494։
Ր, բառին բնական նուէ առաջ՝ միշտ — է, 49 ծան։
Ց, Նախդիր, 147։
Ցաւէ, անդէմ բայ, 363։
Փակագիծ, 509։
Փշիկ կամ մանկակէտ, 502։
Քանի, 107։
Քէան կամ ․ին վերջացած թուական անուններ, 75, 76։
Քերականութիւն զինչ է, 1։
Ու վերջացած բայածական. տես Ու։

ԶՏԱՐԵՐՍ ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Տեառն Հ. ԱՐՍԵՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ, յաղագս մասանցն գեղեցիկ դասաւորութեան, ոճոյն պարզութեան, և կանոնացն ճշգրտութեան, և վասն բազմահմուտ և սուր դիտողութեանցն պատկանաւոր գոլոյ ՚ի հարազատ իմացուած մատենից մերոյն նախնեաց, արժանաւոր համարիմք տպագրութեան ՚ի լոյս ընծայել ՚ի պէտս ուսման մերոյ ազգիս դպրոցաց ։

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՍ

# ԳԼԽԱՒՈՐ ՏՊԻ ՍԽԱԼՆԵՐ

| ԷՋ. | ՏՈՂ. | | ՍԽԱԼ. | ՃԻՇՏԸ |
|---|---|---|---|---|
| 3 | 25 | յառաջաբանին | -ր-- (+ի-) | -րը (+ի-) |
| 5 | 5 | | -, է, - | -, է, - |
| 24 | 19 | | հինաւուրց | ( ջնջէ այս բառը ) |
| 25 | 4 | | այծ , այծիք , -յծեր | կարծ , կարծիք , -րծի- |
| 32 | 11 | | իմ բնաւ նախագիր, չառ- նել | իմ միայն՝ բնաւ նախագիր չառնել |
| 80 | 20 | | -իրէւ-- | -իր--էւ-- |
| 114 | 15 | | Նաթեր երթալ | Նաթեր երթեալ |
| 129 | 12 | | աշխարհքին ու զարգին | Ճարտարապետին ու զար- գին |
| 140 | 33 | | այս ինքնի | այս ինքն |
| 167 | 17 | | վանս որոյ | վասն որոյ |
| 248 | 21 | | յարաբերեալին հոլովը | յարաբերականին հոլովը |

1855
III 306.



[illegible] [illegible] և [illegible]
22/կ. կոպ.